ԵՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐԸ

...Իմ դեմ անվախճան
գիշեր է,
Իսկ ես հոգնած եմ...
Ռ. ՏԱՓՈՐ

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Իմ «Մանկություն և պատանեկություն» գիրքը, որը լույս տեսավ... Ես չէի ուզում և չեմ ուզում վերադառնալ անցյալին և գրել կամ գրչով խոսել ու շատախոսել այն մասին, թե ինչ պատահեց ինձ հետ, որի պատճառով այսքան ուշացումով եմ ձեռնարկում եմ գրի առնելու իմ երիտասարդության մուտքը, նվ կարիք չկա արդարանալ իմ ընթերցողի առաջ, այսհետև այն, ինչ պատահեց ինձ հետ, քաջ հայտնի է նրան։ Նրանցից շատերը չեն էլ սպասում (ես էլ նրանց հետ...), որ մի օր կարող են տեսնել մի գիրք Օրևանի գրախանութների ցուցափեղկերում, որ՛կրի

ԿԻՍԻՆ ՄԱՀՄԱՆԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԵՍԻՆ
19... ԵՐԵՎԱՆ
ՊԵՏՀՐԱՏ

շապիկը ձախտատիպը, ին տղմյալ-մետաքսագործական պատմաններ հնարելու որ ես, այսօր, 1953 թվի մայիսի 26-ին, Կրասնոյարսկի երկրամասում գտնվող Չևրժինսկ գյուղում սկսում գրել իմ «Երիտասարդության տեսին»-ը, որն իմ հաշվով վերջանում է 1936 թվի օգոստոսի 9-ին, դիշերվա ժամի 2 անց 15 րոպեին «Մետրիստ» հյուրանոցի համարում ես տրամադրում։

Այդ մի զարմանալիորեն պայծառ և պայծառորեն զարմանալի լուսնկա գիշեր էր։ Թվում է, թե Երևանի գիշերների մասին ասված են բոլոր գեղեցիկ խոսքերը, մաշվել են բոլոր ածականները։ Ես ի՞նչ խոսքերով նկարեմ ու գրեմ, պերճախոսական ի՞նչ դարձվածքներով, նախադասությունների ի՞նչ պերճանքով երգեմ այդ անկրկնելի գիշերը։ Լուսինը նայում էր «Ինտուրիստ» հյուրանոցի տանիքից ուղիղ իմ աչքերին ու կարծես ասում,— ես եմ, գիշերային քո սիրուհին, որին դու այնքան երգել ես քո երգերում. նայի՛ր, սիրի՛ր, հիացի՛ր, շուռով ես քեզ համար հորաքույր կդառնամ, դու ինձ համար հորեղբայր, նայիր, սիրիր, հիացիր, քանի դեռ ես քեզ համար համայիլ եմ ու ջահել, քանի դու դեռ երիտասարդ ես... կանցնի քո երիտասարդությունը, ձյուն կիջնի գանգուրներիդ, նոր պռնտներ կերգեն ինձ ու քանի գոյություն ունի աշխարհը և աշխարհում մի բանաստեղծ, ես կնայեմ նրան որպես գիշերային աղջիկ ու հարսնացու, ես, լուսինս, հավիտենական սիրուհին բոլոր ժամանակների բանաստեղծ հոգիների...

Նայի՛ր, սիրիր, հիացիր, որովհետև երկար ժամանակով մենք բաժանվում ենք, իսկ ես հնարավորություն չունեմ մեկուսարանների նեղ պատուհանների երկաթե ճաղերի արանքներից ներս նայելու և զգալու իմ գոյության մասին...

Այսպես խոսում էր 1936 թվի օգոստոսի 9-ին Երևանի երկնքի վրա սահող լուսինը և Արովյանի վրա իրար մոտ կանգնած երեք բարդիներ խարշափում էին նրան համախոհ ու երբ ես բացի «Ինտուրիստ» հյուրանոց-ռեստորանի ծանր դուռ ու հայտնվեցի նրա վեհարկյուղում, ինձ թվաց, որ իմ ետևից ներս մտան լուսինն ու երեք բարդիները...

Հանդերձարանի կախարանների վրա ես տեսա մի քանի պխարկ միայն. հանդերձապահ Օհաննեսը ննջում էր նստած մուտքի մոտ, մի ձևրքը դրած հանդերձարանի ճաղերին, կարծես պխարկ ընդունելու համար։ Ես նրան չարթնացրի, կախեցի պխարկս ու մտա ռեստորան։

— Ահա և մեր գիշերային շրջմոլիկը,— լսեցի դրեթե դատարկ ռեստորանի մի անկյունից ծանոթ մի ձայն,— մեղ մո՛տ, մեզ մո՛տ...

Մի սեղանի շուրջ նստած էր մեծանուն վահրամ Փափազյանն իր դեղնցկուհի կնոջ և նորահաս աղջկա, փարիզից նոր վերադարձած դերասան Լևոն Հարությի և Հրաշյա Ներսիսյանի հետ։

— Մեզ մոտ, մեզ մոտ...

Նրանք ընթրիքը վերջացրել էին։ Սա տեղ գրավելի նրանց մոտ. իմ հոգում, ուղղում կամ գուցե սրտում, իմ ողջ էության ու արյան մեջ դեռ խոսում էր լուսինը, խարշափում էին երեք բարդինները ու այդ նիրքին արևելյանը խառնվեց ձմերուկի ու կոնյակի բուրմունքն ավելի մոտից գգալու և ճաշակելու սուր ցանկությունը։ Ես պահանջեցի մի բաժակ կոնյակ ու ձմերուկ։

— Վատ չի մտածված,— ասաց Փափազը և պահանջեց նույնը։

— Ուր երկու խնձի՝ երրորդը չի խանգարի,— հայտարարեց Հարությը և պահանջեց նույնը։

... Թևիս քայլելով ռեստորան մտավ մոտ 23—24 տարեկան մի երիտասարդ։ Ըստ ձևի նա պետք է, որ լիներ գյուղատնտեսական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանող կամ առնվազն ուսանողական ակումբի վարիչ։ Ինչպես նման մի աչքերով՝ նա նայեց շուրջը և մոտեցավ մեր սեղանին, մոտեցավ ինձ, պարբր մոտերից իմ ականջներին և քաղաքավարի, ներողություն խնդրողի տոնով շշնջաց.

— Կարելի՞ է ձեզ խնդրել մի րոպեով,— ու հետացավ սեղանից դեպի դռները։ Ես մոտեցա նրան, նայեցի նրա դեմքին և ուզեցի հարցնել,— Ի՞նչ եք կամենում,— բայց մի ակնթարթում հասկացա, որ իմ հարցը ավելորդ է։ Ինձ նայում էր մի երիտասարդ, որը ոչ մի բանով նման չէր գյուղատնտեսական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանողի, սակավ ևս ուսանողական ակումբի վարիչի. նա նայում էր այս անգամ ինձ սառն, սարդոնական դեմքի մի այտուհպատությամբ, ինչպես դեռ չէր նայել ինձ ոչ ոք։ Ես հասկացա, որ նա ներկայացուցիչ է մի հիմնարկ-ձեռնարկության, որի մասին ես հաճախ մտածել էի ու խորապես համոզված էի, որ այդ հիմնարկ ձեռնարկության հետ ես երբեք գործ չեմ կարող

ունենալ... այս անգամ ավելորդ չթվաց իմ հարցը և ես հարցրի.

— Ի՞նչ եք կամենում։

Նա ինձ պատասխանեց ուրիշ աշխարհի մի ձայնով.

— Ես ներքին գործոց...

. . . . . .

Այստեղ էլ վերջացավ իմ երիտասարդությունը։

... Ես տեսնում եմ քեզ, քո դեմքի արտահայտությունը, իմ ապագա ընթերցող, տեսնում եմ և քո տարակուսած դեմքը, ո՛վ դու իմ ապագա խստապահանջ քննադատ, ես վերնագրերի այս գլուխը «որպես նախաբան» և նրա տակ ձեզ հրամցրի մի «նախաբան», որը գրական-տրամաբանական բոլոր օրենքներով իմ «երիտասարդություն» գիրքի վերջին գլուխը պիտի լիներ, Գրիչն էլ ունի իր անհաղթելի քմահաճույքները և ահա հակառակ գրողի ցանկության, նա ես վաղից 18 տարով։ Հետ դառնանք, հետ դառնանք, քանի ուշ չէ, որովհետև ես զգում եմ, որ իմ քմահաճ գրիչը ուզում է նկարագրել, թե ինչպես հրաժեշտ տվի իմ սեղանակիցներին և մենք «ներքին գործոցի» հետ Աբուլյանի վրա հայտնվեցինք... Թե ինչպես լուսինը... Թե ինչպես բարդիները... Թե ինչպես «ներքին գործոցը»... Թե ինչպես... Թե ինչպես...

Փակենք մեր վիրիկական-հարկադրական շեղումն ու անցնենք մեր պատումին։

— —

1. ԼՈՌՅՈՄ ԵՎ ՍՏՎԵՐՆԵՐ

Օրը կիրակի էր։

Սուրենի և Խորենի հետ պատուհանից ներս մտանք մայրիկի սենյակը, որը նման էր մի փոքրիկ, քառակուսի տուփի։ Ետում եմ պատուհանից, որովհետև մայրիկի սենյակը ուրիշ մուտք չուներ։ Այստեղ մայրիկի մահճակալն էր իր անկողնով, ապա մի պահարան, որը միաժամանակ սեղանի տեղ էր ծառայում։ Մենք նստեցինք սեղանի շուրջ։ Մայրիկը մեզ հյուրասիրեց եղիպտացորենի հացով, կարտոֆիլից պատրաստված կտլետներով և թեյով։ Մայրիկը նայեց մեզ վրա երանական մի հայացքով և մի քանի անգամ ինքն իրեն ասաց.

— Փառք քեզ, աստված, մի անգամ էլ ձևլ, երեքիդ, տեսա միասին։

Եվ արտասվեց։

Նախաճաշելիս, հորենը հարցրեց ինձ.

— Դու Բաֆֆու «հեղինքը» կարդացե՞լ ես։

— Կարդացել եմ,— պատասխանեցի ես։

— Ես էլ եմ կարդացել,— ասաց Սուրենը։

— Դու դեռ չես կարդացել,— բարկացավ հորենը,— մի՛ խաբիր։

Սուրենը նայեց հորենին խղճալի մի հայացքով. ըստ երևույթին նա չէր սպասում, որ այդ հանդիսավոր հանդիպման պահին հորենն այդպես անողոք կլիներ։

— Մենք Միրանավորի որդեկոչումն ենք,— ասաց Սուրենը, ջանալով փրկել իր անհարմար դրությունը,— մեր կառավարչուհին օրիորդ Աֆրոգյանն է, մեզ շատ է սիրում։

Հիվանդանոցում մայրիկը աշխատում էր որպես հանրօգնա ձապտահուհի, նա պատուհանից ներս ու դուրս էր անում ն անհանգիստ էր։

— Զարուհին ինչո՞ւ ուշացավ։

Զարուհին հիվանդանոցի հիվանդապահուհիներից էր։

Բայց ահա Զարուհին ներս խուժեց պատուհանից, յ[illegible] սենյակը դվարթ ծիծաղով, օդևոլոնի և պուդրայի բուրմունքով, գրկից ինձ պինդ եղածից ավելի ամուր, համբուրեց ձննդյան շրթունքներով և կարկտի նման թափեց դլխիս.

— Շան տղա, ո՛ր ուշացար... էսօր-էգուց, էսօր-էգուց ... ես սի՞րտ ունեմ մորդ լաց ու շիվանը լսելու... իմը քի՞չ է... Տիկին Անուշ,— հանկարծ նա ճչալով դարձավ մորս, կարծես մայրս խուլ լիներ,— քապա մորդ եմ գոնե... Բոյով-բուսավ, բեխով-բուխով... էն ժամը... շան պես ընկել էր հետս, - պուճիս էր... մո՞ժճո պապճակոմիցայա... հո՛ղ,— ասի,— Ա՛ի՛ն պապճակոմից, բո՞ղեչ պարչադոչնի մուժ...— նա շիշխաձկան սապոկներն իրար է խփում, քուրը բռնում է կողքի ու— ամուդաձավելսավիեմ... հասկն ուվի, ասի ես, տեսաննք, բուրա կհավանի՞... այ շնն, հավաննա՝ կառնեմ, գիշերները... լսավլամ, կա՛րգի, ես վախում եմ տղեդ ինձնից շատ բան պիտի... աչքով-ունքով մի ուտի... Չհավաննա՝ չեմ առնի, կանանի գնա շներին... չէ՛, լավ էլ չէ... դե, հիմա դու խոսի... Շան տղա, խոսի չ՛... էդ ե՞փ եկար... պուճուր գատ ես... ես էլ էն մտքին էի, որ կարգին բան կլինես, քա աբա ի՞նչ անեմ... դուք չնք խոսում, ինձ էլ չնք թողնում երկու խոսք ասեմ... վա՛յ...

Ու խոսված նստեց, ոտը նետեց ոտին և նայեց գուլպաներին։

— Տիկին Անուշ,— սկսեց նա դած ձայնով,— չուլքին ձ՛ր եմ տեսել... ի՞նչ չուլքիներ... տելեսնի... մի-մի-մի ուրիշ բան... Տիկին Անուշ, ախպերդ ինձ չի՞ առնի... բա ի՞նչ անեմ, հարուստ մարդ է, չուլքուց-բանից խում կառնե՞ր... էս ավարին էլ պինվորական... չհարցրի, ուղ շատ ունի՞... է՛, է՛, է՛... քաղցած եմ, սիրտս տակնուվրա է լինում, մո՞ժճո պապճակոմիցայա... ՀՀր՛, էսքան մեջք ունի... էսքան...— Ու նա միացրեց բթամատներն ու ցուցամատները։

Դռան մեջ կանգնեցին երկու երիտասարդներ, զինվորական հնամաշ շորերով և միատեսակ ժպիտով։

— Տիկին Անուշ, տուպ պատրաստե՞ր,— ասին նրանք գրեթե միաժամանակ։

— Ը՛հ, հո՛ղ, հո՛ղ, հող մոնեք,— պայթեց Զարուհին,— երկան-երկան կռախնուց վեր են կացել եկել են թե՝ տուպ պատրաստե՞ր»... մի պղնձում եմեմ երկսիդ մեռնեյաշը, հա՛...

— Զարուհի,— հանդիմանեց մայրս,— վերջ տու, աղջի, սիրտս գնաց։

— Ապա ինչ անեմ, ի՞նչ անեմ ես սրանց հետ,— ասաց Զարուհին և ուղից վեր թռավ, անկյունից վերցրեց ավելը, հասավ նրանց ու սկսեց հարվածել։

— Էս քե՛զ, էս քե՛զ, էս քե՛զ, էս քե՛զ...

— Տիկին Անուշ,— աղաչական տոնով մորս օգնությունը հայցեցին ծեծվողները։

— Զարուհի,— նորից միջամտեց մայրս,— տահի՛կ, վերջ տու... Սարգիս, Երվանդ, գնացեք։

Նրանք վախեցած, մեկ մեկու թոթելով, շուռ եկան դեպի դուռը։

— Եան տղին նորից տեսա, —խոսեց նորից Զարուհին։

— Ո՞րտեղ,— վախեցավ մայրիկը։

— Շեյթան բաղարում։

— Խոսո՞ց։

— Եան նման ընկավ հետևից, հետո տրամվայ մտավ, ամբողջ ճանապարհին «քզի կսպանեմ, քզի կմորթեմ, դուն իմ կնիկն ես, իմ աչքի լուսն ես, ինչի՞ կթորկես զիս...», համա՛ծ, հարյա՛ծ, թյո՛ւհ...

Զարուհին թքեց պատուհանից դուրս։ Այդ միջոցին վոզից ավելց խոպոտ մի կանչ։

— Զարե՛...

— Եկավ, էլի եկավ,— խուճապային հուսահատությամբ ծունկը ծեծեց Զարուհին, նայեց աթոռին և սկսեց հեկեկալ։

Սարգիսն ու Երվանդը մնացին կարկամած, դռների մեջ, իսկ մայրս դուրս եկավ պատշգամբ։

— Զարուհին տուն չի՛...

— Ջարե՞...

— Տուն չի՛, քե կասեմ, չե՞ս լսե...

— Ջարե՞... Ջարե՞...

— Կրոդ-մա՛խ։

Մայրս հուսահատված նեռս մոտվ։

Ջարուհին նորից հարձակվեց Սարգսի ու Բրվանդի վրա։

— Հոդ դնեմ ձեզ պես տղամարդկանց, հոդ։ Քոփակներ, ձյա պինվոր են եղել։ Մի մարդ չկարողացաք մեջտեղից վերցնել... օրին հազար մարդ սպանում են... Շենի ճիրիմե... ես ի՞նչ անեմ...

Ու սկսեց լալ։

— Ջարուհի,— ասաց մայրս,— դու ասուած չունե՞ս... քո մարդն ի... շուն ի, դել ի, պիտի տաննաս։

Ջարուհին մի կատաղի շարժումով դարձավ դեպի ինձ.

— Գենացվալե՞, տես, ի՞նչ է ասում... պիտի տանե՞ս։ Ինչի՞, ես քեզ նման գաղթակա՞ն եմ, որ տանեմ... Ես քեզնից ոսոը տարի առաջ եմ փախել էդ շների երկրից։

Նա իր սպիտակ խալաթի գրպանից ծխախոտի տուփը դուրս հանեց և, ի մեծ զարմանս ինձ, մի ծխախոտ վառեց. ես իմ կյանքում առաջին անգամն էի տեսնում ծխող երիտասարդ կնոջ։

— Չե՛մ տանի, մեռնում չե՛մ տանի... պիտիից. ժալաս մարդ ես չեմ տանի... Սարգիս, գյուխդ ճաղեմ, դո՞ւ ես ուժով, թե՞ ես...

Ջարուհին հարձակվեց Սարգսի վրա։ Բրվանդն սկսեց միայն շարժումներով մասնակցել նրանց մենամարտին։ Երբ հաղթում էր Սարգիսը, ուրախանում էր նա, իսկ երբ Ջարուհին իր կատաղի բազուկներով սեղմում էր Սարգսի վիզը. Բրվանդը կծկվում էր, դադարում էր ծափահարելուց և սրտում էր ձեռները հուսահատական ընկերասիրությամբ։ Հետո Ջարուհին ձարպիկ շարժումով թռավ Բրվանդի կռնակին և հարմար կերպով տեղավորվեց։

— Երթանք, Սարգիս, քելե երթանք Շեյխան բազար,— հանգիստ յումորով ասաց Բրվանդը, ավելի հարմար շալակելով իր բեռը,— ծախենք երկու կվարթ գինով։

— Ո՞վ քեզ կուա նրկու կվարթ գինի,— նույն տոնով պատասխանեց Սարգիսը,— էդ ապրանքից հիմի շա՞տ...

Սարգիսը չկարողացավ վերջացնել խոսքը։ Զարուհին նետեց իրեն Երևանդի շալակից և հարձակվեց նրա վրա։

— Շա՛ն տղա, ինձ նման աղջիկ ո՞րտեղից կճարես... ո՞րտեղից, ո՞րտեղից...

— Էս աղջիկը ոչ ամոթ ունի, ոչ պատկառանք,— բացականչեց մայրիկը։

— Անուշ քույրիկ,— լուրջ դեմքով հարցրեց Երվանդը,— Գալալինակու մազազինները ման նկանք, Շեյթան բաղարում ինտրեցինք, չկա ու չկա... դոնե կես գրվանքա... Զարուհու համար...

— Ի՞նչ, ի՞նչ եք ուզում առնել, —հետաքրքրվեց Զարուհին, պոկվելով Սարգսից։

— Ամոթ ու պատկառանք,— պատասխանեց Երվանդը։

Բարձրացավ նոր աղմուկ։ Զարուհին կախվեց Երվանդի վզից։

— Զարի՛...— լսվեց նորից փողոցից։

Զարուհին նետ մտավ քույրերի սենյակը, վերցրեց թափանցիկ կապույտ մի շարֆ, կապեց իր գլխին և, առանց ցտեսություն ասելու, դուրս եկավ հիվանդանոցի մյուս դռնից։

Գնաց Զարուհին։

Սուրենի և Խրենի հետ միասին դուրս եկանք պատշգամբ դրոանելու։ Նրանք հագել էին միևնույն տարազի շորեր։ Խրենը մեծ տակին բռնել էր մի գիրք։

— Խրեն, էդ ի՞նչ գիրք է։

— «Ռոբինզոն Կրուզո»։

— Ես «Սասունցի Դավիթ» կարդացի,— խորին գմայլանքով նա չմնաց Սուրենը։

— «Սասունցի Դավիթ» չէր, «Մոխրատուիկ» էր,— ուղղեց Խրենը։

— Յա՛,— բողոքեց Սուրենը,— ես «Օքերոնի հրաշալի նշկյուրը» չկարդացի՞...

— Կարդաց,— հաստատեց Խրենը և ուղիղ նայեց աչքերիս մեջ։

Ես զգացի, որ ծերանում եմ։ Ահա Սուրենը, ահա Խոսե-

նր, նրանք իմ փոքր եղբայրներն են, բայց այդեն կարդում են, նրանց տարում միայն մենք բաժանվել ենք միմյանցից և որքա՞ն բան է փոխվել։

Իսկ կյանքը, կյանքը հոսում է։

Մոտեցավ մայրս և մի ընդգրկող նայվածքով պարուրեց մեզ։

Սա նայեցի մայրիկիս, նա նման էր վանքի տաճարի աստվածամոր։

— Մա, Զարուհին եկա՞վ։

— Չէ, տղա, գնաց. չեկավ։

— Ապա ե՞րբ կգա։

— Երբ կուզի թող գա... խորնեմ ինոր սիրու։

Ինչո՞ւ մայրիկն այդքան խիստ էր դեպի Զարուհին։

...Խոբենն ու Սուրենը մեկնեցին Միրանավոր։

Մենք պատկերինք քնելու։ Գիշեր է, թիֆլիսյան գիշեր։ Մեկ-մեկ լսվում են հրացանաձգության ձայներ։

— Մա, էսոնք էլ թուրքեր կան...

— Կան, քե մեռնեմ, թուրքեր էլ կան, հայեր էլ կան։

Հանկարծ միջանցքում համառ ու երկարատև զանգը դրնգաց։

— Տղա, Գուրգեն,— քնկոտ ձայնով հուշեց մայրս։

— Ի՞նչ է, մա...

— Թելեֆոնն է։

Ես չկարողացա իմ դիրքը ճշտել հանդեպ վերահիշյալը։ Զանգի ձայնը նորից կրկնվեց։

Մայրս դժգոհությամբ վեր կացավ։

— Դևի քուն են մտե։

Բարկ ոտներով մայրս անցավ միջանցք, և ես լսեցի նրա հեռախոսային զրույցը։

— Վո՞վ է... դիշե՛ր է... քներ է... Ալոն ո՞վ է... մի բռա, ականջս կխլվա... աղչի Զարուհի, դո՞ւ ես... քո սիրտ մեռնի, աղչի... Գուրգեն քներ է... մի՛ պռա... ինչ արի՞ր... խո՞պք տվիր... պատկա՞ր... աղչի, մի պռա կասեմ... ե՞փ կուզաս... աղչի, վի՞ր խնտ պատկվար... մի՛ պռա... Արշակ

վո՞վ ի... քո սիրտ մնանի, Զարուհի... հարբած ես, չի՞ս ամչնա... Քնելֆոնից գինու հոտ կփչի, աղչի, շուտ արի, ամոթ ի, ամո՛թ...

Ողջ պիշերը լսում էի ես մութ հարուստաո շնչառությունը, տեսնում էի նորին ու Սուրենի մեծացած դեմքերը, Թորինոն Արտալի անմարդաբնակ կղզում Ներքաթի հետ մոնթումբեյուն էի հաստատում և պատշգամբի տակ հոտոտ քուղի աիրնների խշշոցի միջից լսում էի Օրիոնի հրաշալի եղջյուրի ձայները

Նոկ պատշգամբի տակ, մինչև լույս հնչից միևնույն խրտպոտ ձայնը.

— Զարի՞... Զարի՞...

Միայն օրը Զարուհին չերևաց, բայց պիշերվա ժամի 11-ին Սարգսի ու Օրիոնի բարեհաճ օժանդակությամբ սանդարդներից բարձրացավ նախշուն շալվարով, սև փուշիով փաթաթված բոլոգով, մերի հատա ու բավմածալալ շալով, երկար բեղերով, անատոց, դունատ գիմքով ու սխտոր աչքերով մի անձնավորություն նա հագել էր իր տարազին բոլորովին անհամապատասխան սև կոշիկներ, մարտր, վաքսած, փայլուն կոշիկներ, որոնցից մեկի վրա միայն ցեխի մի վարկարիչ, քանձրացած ու շորացած կաթիլ՝ խախտում էր նրանց անաղի շուքը։ Օտարականը սպասիսպաո պատշգամբը մտավ, ուղղվեց աիոռի վրա, երկար ծխամորճը վառեց ու սկսեց խոսել, կարծես իր ծխամորճի հետ։

— Դո՞ր ա գացե Զարեն...

Հավաքվեցին ռուսահայ գիուքյան քույրերը, Մայրս քարոզանի ֆունկցիան վերցրեց իր վրա։

— Բաղատ է գնացե։

— Մեր գնդացի էր,— կարծես ոչ քե սկսեց, այլ շարունակեց գրույցը օտարականը, նորից իր շիրուխի հետ,— ես զանգին, արտ ու ափի տեր, էնիկ չլուս, աղքատ խոր-մոր որդի։ Խալնա՝ առու Կպավ ջանս Ռուսաստա՛ն, Ռուսաստա՛ն, էրթանք Ռուսաստա՛ն, յա՛ Ռուսաստան, յա Սուսերո՛վ եղած չելած ծախեցի, եկանք Ռուսաստան, նախշուն Զարեն ձնորցըս գնաց...

Նա ակնոց երեխի նման լալ և կողքից կախած մեծ ու կարմիր քաշկինակով արցունքները սրբել։

— Ինչի՞ կխամես, ինչի՞ կխամես,— հանդիմանեց մայրս,— որ չխամես, սիրով կապրիս...

— Չէ՛, քուրի՛կ-մորիկ, չէ՛, սեր խլասալ՝ նոր իջած արի խամել... որ չխամամ, ի՞նչ անեմ։

— Վա՛խ, վա՛խ, վա՛խ,— զգացվեց մայրս։

— Էհ, հանգստութիւն... ելնեմ էրթամ, էրթամ էլ չգամ... Ջարնի ձեռից գնաց...

Նա գնաց։

Մյուս օրը Ջարուհին եկավ վերջացնու Նա չխոսաց, չբանից ոչ ոքի։ Երկու ժամ շարունակ լուռ ու մունջ զբաղվեց հիվանդներով։ Հետո միայն առանձնացավ մայրիկիս հետ ու երկար-երկար խոսաց նրա հետ։ Փակ դռների հետևից լսվում էր միայն Ջարուհու համոզող և մայրիկիս հանդիմանող ու բողոքող ձայնը։

Թիֆլիսյան վերջալույս։

Քաղաքը ողողվել է արևահաց, նրբին փոշով Տրամվայներն ու անցորդներն ադմկում են փողոցում։ Օրիաճալայի պարտեզների ծառերը զարդարվել են ծիրանագույն փայլով։ Մի փշատենի կա կանդնած հիվանդանոցի բակում. նրա բուրմունքն այնքան հարազատ է, հուզող և հարբեցնող։

Իսկ երբ մուքն իջավ, հնչեց հիվանդանոցի դռան զանգը։

Դուրս եկավ Ջարուհին և դիմեց դեպի դռները։

— Արշակն է... դուք կորնք, գնացեք,— դարձավ նա Սարգսին ու Երվանդին,— ձեր տղը հենց ախոռն է, դիպեր-ատիր շան որդիք, գնացեք, քնեք, աֆիցերիս աչքին չերևաք։

Սարգիսն ու Երվանդն անհետացան։

Պատշգամբ մտավ Ջարուհու հետևից մի երիտասարդ։ Նեղ ճակատով, սպայական համազգեստով, երկու ատրակ-տի նման բեղիկներով։ Երբ նա ժպտում էր, նրա այտերին գոյանում էին փակագծեր։

Նա բարևեց մայրիկին և դարձավ դեպի ինձ։

— Գուրգենն է,— բացատրեց մայրիկը։

— Ա, շատ ուրախ եմ, Ջարուհին ինձ պատմել է,— իր փակագծերով ժպտաց Արշակը,— վերջապես իրար գտաք։

Շնորհավորում եմ, շնորհավորում եմ...— ասա նա ավելացրեց կամիկ հանդիսավորությամբ,— և շնորհավորում եմ ոչ պատարիկ խոսքով, այլ գործով... կոնյակով...

Նա գրպանից հանեց երկու շիշ ու թխկացրեց սեղանին։

— Էս մի շիշը մոր կնացը, էս մյուսը՝ որդու... մի խոսքով, ոնց որ «Հայր-մեր»-ում, մնաք մի փոքր փոփոխած, ոչ թե հանուն հոր և որդու, այլ հանուն մո՛ր և որդու...

Զարուհին կշկշաց, իսկ մայրիկը ժպտուն հանդիմանական նայեց Արշակին և խաչակնքց,— մեղա աստծո... Ախա Զարուհին դրեց սեղանի վրա բաժակներ, հաց, խաշած ձուկ, պանիր, թարխուն, բողկ։

Արշակը լցրեց բաժակները։

— Անուշ քույրիկ, կենացդ,— բարեմաղթեց նա,— ձաղկեր հավաքելիր, մնում է որ հասցնես ու պահես... մենք էլ բարեկամներով ու ընկերներով...

— Չարե՜, այ Չարե,— լսվեց միտյայի Արշակը բաժակը դրեց սեղանին։

— Էլի նա՞ է,— հարցրեց Արշակը կարծես սրտնեղած, որ իր վայելուն ճաղը խանգարեցին։

— Նա է,— խուլ ձայնով պատասխանեց Զարուհին, նա հոնքերի տակով նայեց Արշակի դեմքին, ուզեց էլի մի բան ասել, բայց լռեց ու մի շնչով դատարկեց բաժակը։

— Պա՞... ո՞նց ա քո բանը, աղջի՛ ջան, դուն ինձանից դուշաղ ես խմելում... ես էլ գնացի...

Ու խմեց ծանր ու մեծ ումպերով, ապա համբուրեց բաժակի շուրթը ու ավելացրեց.

— Վայ չմոռնին։

Շեյթան բազարի կողմից լսվեցին կարճ հրացանաձգության ձայներ։

— Թուրքին են,— բացատրեց Արշակը,— հանդիստ չեն տալիս Շեյթան բազարով՝ մթնով անցնել չի լինի։

— Բա դու ո՞նց եկար,— հարցրեց Զարուհին։

— Նրանք զինվորականների խաթրին չեն կպչում, հարբած, մորթած մարդկանց վրա մեծ սեր ունեն,— պատասխանեց Արշակը և ավելացրեց, ցույց տալով փողոցը,— այ սրա նմաններին։

Ու կարծես ի հաստատումն նրա խոսքի, նորից փողոցից լսվեց,— Զարե՛, մեռնիմ անունդ...— խորհրդավոր էր այդ կանչը, շարագուշակ:

— Ա՛խ կապես դու, մարդ, կապրատ կապես դու,— մրմնջաց մայրիկը և արտասվեց:

Նոր ձախատով սպան վճռական ոտքի կանգնեց, ծանրաթաթախ ոտքին հիվանդանոցի դուռը ու դուրս եկավ: Զարուհին շտապ մի բաժակ կոնյակ դատարկեց և կծկվեց, փորացավ իր տեղում: Լուսիկն վերադարձավ նոր ճակատով սպան: Զարուհին նայեց նրան ապակի աչքերով:

— Ոչա՛պա,— ասաց գինվորականը, օրորվելով ոտի վրա և սրտամոլի հարցուց,— ինքն իր ձեռո՛վ, դանակո՛վ...— նա ցուցամատն իր վզի վրա տարավ ու բերեց:

Փիշխոր հանկարծ կանգնում է, դադարում է նրա սիրուն բարախելուց, իսկ հիվանդանոցի բակում կանգնած փշատենու հետ փչում է որպես դագաղի վրա ծխացող խնկի սուր և սիրտ կեղեքող բուրմունք:

. . . . . .

. . . . . .

. . . . . .

...«Երևան—Թիֆլիս» գնացքը մոտենում է Թիֆլիսի կամաուրջին, դանդաղցնում ատիճանարար իր ընթացքը և ծանր ինչոր կանգնում: «Станция Тифлисъ»,— կարդում եմ ես կայարանի ճակատին: Ճանապարհորդները դուրս են թափվում վագոններից: Բեռնակիրներ սպասում են աղ ու ձախ ճամփորդական և անային ճամպրուկներով, կապոցներով, անդուկներով, պարկերով:

Ես կանգնել եմ արդեն դատարկ վագոնի դռանը և մտածում.— դրսանում այնքան փող կա, որ կարելի է մի ֆունտ հաց առնել, միակ բևռ աշակերտական պայուսակս է՝ մի բանի դրքերով, տետրակներով, այնտեղ է և մայրիկի հացը. «Թիֆլիս, Վարանցովյան փողց № ... քաղաքների միության հիվանդանոց, Հայկանուշ Սահմյանա», Արդեն երեկո է, Թիֆլիսը նայում է ինձ իր հազարավոր էլեկտրական աչքերով, ես ինձ՝ վան-երևանյան վրա թողնում է Վիխիտարի բազաքի տպավորության ու ինձ թվում է, որ ես ես կայարա-

ին քաղաք մտնեմ, կկորչեմ նրա տրամվայների, կառքերի, փողոց ու տների լաբիրինթոսում...

Որտե՞ղ ես, Վարդանյանի փողոց:

Մտածում է մի բնակիչ:

— Հա՞յ ես:

— Հայ եմ:

— Ի՞նչ ես շփոթել, կանգնել:

— Չգիտեմ, ո՞նց գտնեմ տրա:

— Հայցե կա՞, — շուռ է տալիս նա ուսերին:

— Կա, — պատասխանում եմ ես:

— Տեր էանց:

— Վարդանյանի փողոց, N...

— Դահ, տղես ողա, շատ հեռու ես գնել. կնայես տրամվայ համար 3, հետո համար 6, հետո համար 12... հետո...

— Ես կկորչեմ դիշերով, ես տեղ չեմ գնա, — բարկանում եմ ես, — կթնեմ կայարանում:

— Նեկյա՛, — պաշտոնական տոնով ազդարարում է նա, — ժամը 12-ին կայարանը փակվում է և բոլորին հյուր՞ք... փող ունե՞ս:

— Չունեմ, իսկ եթե ունենայի՞:

— Հյուրանոց կգնայինք:

— Հյուրանո՞ց... հետո՞ է. ես առավոտյան մորս կգրտնեմ, նրանից փող կվերցնեմ, կվճարեմ, առավոտ վկա, կվճարեմ...

— Դու ինձ մոտ ի՞նչ ես երգում առում... Գնանք քեզ յուց տամ... հետու չի:

Մենք կանգնում ենք հարյուր քայլի վրա գտնվող մի երկու հարկանի շենքի առաջ:

— Ահա՛ հյուրանոցը:

Նա տալիս եմ նրան իմ ամբողջ կապիտալը և սարիճանանվոտ վեր բարձրանում:

Հաստատուր, հաղթանդամ, հաստաթեղ հյուրանոցի տերը պարզում է ինձ մի բանալի: Նա չի խոսում, ես էլ չեմ խոսում: Փողի մասին ոչ մի խոսք: Դուրս եմ գալիս միջանցք,

որ ինձ հանդիպում է շիկահեր, երիտասարդ մի աղջիկ, ին կին։

— *Ասկո՞յ ընաճեր,— հարցնում է նա։*

Պատասխանի տեղ ես նրան տալիս եմ բանալին, նա կանդ է առնում փակ դռներից մեկի առաջ ու բանալիով բացում դուռը։ Նա ներս է մտնում, ես՝ նրա հետևից, նա բաց է անում փողոցահայաց պատուհանի փեղկերը։ Սենյակում կանգնած է նոր նկուճած հատակի նորմի սուր բուրմունքը։ Փորձիկ, հաճելի սենյակ, մահճակալ, սեղան, աթոռ, լվացարան... Նա չի խոսում, ես էլ չեմ խոսում, նա նայում է ինձ խղճոտ, կապույտ աչքերով և ցուցամատով հպում կնկտրին.

— *Ես՞նշ։*

Ես նայում եմ սեղանի վրա դրված դատարկ շրի շշին և պատասխանում.

— *Խաշու...*

— *Համեհատի է,— ասում է նա, և ինձ զարմանս ինձ, մարտր հայերենով և թեթև թայլերով հեռանում, մի քանի րոպեից նա նորս է մտնում, երկու ձեռքով բռնած սկուտեղով, սկուտեղի վրա երկու շիշ կոնյակ, հաց, խաշած ձուկ, պանիր, խարխուն և բողկ։ Այդ ամենը ես մի նշանակալից տեղ, նշանակալից պայմաններում տեսել էի, ես աշխատեցի հիշել, բայց չկարողացա։*

— *Քնելիս լույսը մարեք և երկու փակով դուռը ներսից փակեք։ Ահա լամպի կոճակը, եթե մի բան կարիք ունենաք, զանգ տվեք։ Ահա զանգի կոճակը։ Իմ անունը Զարուհի է, բարի գիշեր։*

Մի նշանակալից տեղ, նշանակալից պայմաններում ես լսել էի այդ անունը, աշխատեցի հիշել, բայց չկարողացա։

Նա գնաց, թողնելով ինձ իմ հարուստ ընթրիքի հետ։ Ուտե՞լ, թե չուտել, ահա խնդիրը։ Ուտել,— բայց առանց այն էլ ապառիկ հյուրանոցի վճարը...— Չուտել,— բայց ես քաղցած եմ, ուտել եմ ուզում, ախ, ուր ասված, ինչպես ուտել եմ ուզում, ես հանգեցի այն եզրակացության, որ չուտել չի կարելի, որտեղից որ ճարվի հյուրանոցի վարձը, այնտեղից էլ կճարվի ընթրիքի վարձը...

...Փակում եմ դուռը երկու փականով, բանալին հանում ու դնում լվացարանի վրա, հանվում եմ, լույսը մարում ու մտնում անկողին, լուսինը լայն պատուհանից լուսավորում է սենյակը: Քնել չեմ կարող, հիշում եմ հյուրանոցային արկածներ, որոնց մասին կարդացել եմ գրքերում, Շեռլոք-Հոլմս, Նաթ Պինկերտոն... քնել չի լինում:

Փիշերվա մի ժամին դուռը կամաց թակում են, տու՛կ-տու՛կ-տու՛կ. երկյուղն ու սարսափները պատում են ինձ: Ո՞վ է այս ուշ գիշերին ծեծում դուռը, ո՞վ, ի՞նչ է ուզում ինձանից: Ես չեմ բանա դուռը, թեկուզ աշխարհը կործանվի, կամ գուցե ինձ թվա՞ց, որ դուռը թակում են: Նստում եմ անկողնում և սրտում ականջներս լռություն, բաց պատուհանից լսվում է միայն գիշերային պահակների սուլոցը: Այդ էլ լոեց: Բո՛ւ-բո՛ւ-բո՛ւ,— այդ իմ սիրտն է տրոփում: Մի նշանակալից տեղ, նշանակալից պայմաններում, ես, ճիշտ այսպես, նոթից լսել եմ իմ սրտի տրոփը: Աշխատում եմ հիշել, բայց չեմ կարողանում:

— Տու՛կ-տու՛կ-տու՛կ,— թախում են նորից զգուշավոր մատներով դուռը ավելի պարզ ու որոշակի: Ես վերմակը քաշում եմ գլխիս, թողնում եմ միայն փոքրիկ մի անցք, որտեղից երևում է փակ դուռը և լուսնի տակ փայլող մարմարիոնե լվացարանի վրա ւևին ոսկե բանալին, Չեմ բանա դուռը, թեկուզ աշխարհը կործանվի:

Դուռը թակում են այս անգամ ավելի բարձր ու չղային և մի րոպե հետո, առանց բանալու չիկոցի, դուռը դանդաղ ու համր բացվում է դեպի միջանցքը: Դռների մեջ, լուսնի տակ կանգնել է մի կին, սովորականից ավելի բարձրահասակ, դանդաղ, դանդաղ դեմքով, երկար, սպիտակ գիշերազգեստով, ան մազերը փռած ուսերին, հանգած հայացքով: Ես գողում եմ ամբողջ մարմնով, ուզում եմ ճչալ, բայց չեմ կարող:

Նա դանդաղ ներս է մտնում և կանգնում է իմ մահճակալի մոտ.— մի՛ վախենա,— ասում է նա ինձ մարդու հաչիներով,— ես միայն մի րոպեով: Եկա քեզ հայտնելու մի պատմիք ու կգնամ, մի՛ վախենա...

— Ո՞վ ես դու,— ասում եմ ես տագնապահար ու խեղ-

դուկ,— դու ինչպե՞ս դուրը թացիր առանց բանալու... ի՞նչ ես ուզում ինձանից...

— Մի՛ վախեցա,— կրկնում է նա հիվանդ ու փտաքուշ,— ես այս հյուրանոցի տիրոջ կինն էլի դեռ մի քանի օր առաջ: Նա ինձ խեղդեց...

— խեղդե՞ց, ո՞վ, ո՞ւմ...

— Իմ ամուսինը՝ ինձ... խանդից ու չարությունից: Խեղդեց ու քաղից ահա այստեղ, քո մահճակալի տակ, հատակում...

— Իմ մահճակալի տակ, հատակո՞ւմ,— խոլ ճչացի ես. նա իր սառը մատները դրեց իմ վառվող շրթունքների վրա.

— Սուս, աղմուկ մի բարձրացնի, նա կիմանա... առավոտյան հայտնի ոստիկանատանը ինչ-որ բան պատմեցի... Մի՛ վախեցա, քնիր հանգիստ:

Ես ջանք թափեցի և մի անգամ էլ նայեցի նրա դեմքին, Սպիտակ էր նրա դեմքը, անարյուն, մատները սև, աչքերը հանգած, վիրը... վիրը երկար ու կապտուկ նա նույն դանդաղ քայլերով դուրս եկավ և դուրը ինքն իրեն, նրա հետևից, ծածկվեց:

Ես նևոլեցի դեսի դռները, քաշեցի դուրը ամրոզ ուժով. դուրը փակ էր: Վերցրի բանալին դողացող ձեռներով, մի կերպ բացի դուրը և կիսամերկ ինձ փողոց նետեցի:

— Խաբաղա՛յ, գարադավո՛յ,— ամպրի, անձրև փողում ես լսեցի իմ ճիշը, և մոտիկ շենքերը արձագանք տվին,— վո՛յ, վո՛յ...

Լալից սուլիշների ձայն: Ինձ մոտեցան զանազան կողմերից երեք գարադավոյ. նրանք Հայրերին ինձ ուսերին, վրացիներն և հայերեն լեզուներով.

— Ի՞նչ է պատահել:

— Այս հյուրանոցի տերը,— ասում եմ ես,— խեղդել է իր կնոջը և քաղել իմ համարում, իմ մահճակալի տակ, հատակում:

— Դու ո՞նց իմացար,— հարցնում է ինձ հայ գարադավոյը:

— Նա ինձ պատմեց:

— Ո՞վ...

— Հյուրանոցի տիրոջ կինը։

Ոսկրը վեր է քաշում, տարակուսանքով նայում է ինձ ու թարգմանում իմ հարցումը։ Նրանք քմծիծաղում են, նայում են ինձ բուռն հետաքրքրությամբ ու վրացերեն դառում են, տրամաբանում։

— Ակ տղա,— ասում է ինձ նորից հայը,— դու խում գիժ չես. բնչ ո՞վ ասաց, որ միքամ դաստինիցի տերը իր կնկան խեղդել է...

— Հենց ինքը պատմեց. նկալ ու պատմեց, վիրն էլ՝ կապած։

Թարգմանեց, զարտուղություններից մեկը մոտեցավ և մի ատամ հացրեց երեսիս, որից ականջս ընգավ։ Ես գոռացի անզոր կատաղությամբ.

— Ինչո՞ւ ես ինձ խփում, հյուրանոցի տերը խեղդել է իր կնոջը, նրա՞ն խփեք, ես ինձանից չեմ հնարում... Գնանք, ցույց տամ։

Նրանք նորից խորհրդակցեցին ու հետևեցին ինձ. ես նրանց առաջնորդելի իմ համարը։

— Ահա այստեղ է թաղել,— ցույց տվի ես իմ մահճակալի տակը։

Ցույցը վառեցին և մահճակալը քաշեցին մի կողմ. մարտը, նեղված և թանձր մոմած հատակ. նորից խոսեցին վրացերեն և տարակուսանքով նայեցին ինձ վրա։ Հարևան համարներից, զիշերապահները հավաքվեցին զանազան մարդիկ և սկսեցին վրացերեն դառել, ապացուցել, ինչ որ բանում համոզել զարտուղիներին։ Նրանց ձեռներին հայտնվեց կացին, երկաթե ձող։ Սկսեցին քանդել հատակը։ Ես չէի նայում հատակին, ես նայում էի մարդկանց դեմքերին, որոնք յարվածությամբ նայում էին հատակին, ու երբ ճռնչյունով բարձրացրին առաջին տախտակը, բոլորը ես բաշվեցին, իսկ նրանց դեմքն առացավ սարսափած արտահայտություն։ Ես մի աչքով նայեցի հատակին. իր երկար հատակով պառկել էր ինձ ծանոթ կինը՝ սպիտակ զգեստով, զունատ, անարյուն դեմքով, հանգած աչքերով, կապտած վզով...

Անմայի, լուռանահար վազոցով գնում ենք կողք-կողքի ես

և հյուրանոցի տերը, երեք զարադավոյնների ուղեկցությամբ, լուանի լույսով ևս ուշադրությամբ զննում եմ հայ զարադավոյի դեմքը. նա ատրականների նման բեղիկներ ունի, իսկ երբ ժպտում է, նրա այտերին գոյանում են փակաժներ, ինչ-որ տեղ ևս տեսել էի այդ ատրականներն ու փակաժները...

Ատիկանատանը մեզ երկար փակեցին մի խոնավ, մութ խցում, նախքան փակելը, ես խնդրեցի ատրականներից.

— Մեզ միասին մի՛ փակեք, նա ինձ կսպանի

— Բան չի կարա անի, Դուան վրա պահապան կա,— պատասխանեց նա։

Ու դուռը փակվեց, ես քաշվեցի մի անկյուն, կծկվեցի նստարանի վրա և ապատություն տվի արցունքներիս։ Հյուրանոցի տերը չէր հանդատանում. նա քայլում էր պատից պատ լուռ կատաղությամբ և փնշացնում։ Հետո կանգնեց ինձ մոտ և մրմնջաց.

— Իմաց տվեց... շուն-շան որդի... և որտեղի՞ց իմացավ... Ինչո՞ւ հապա ձենդ բեզ քաշեցիր, երբ Օրթաճալում ապանեցին... մի խոսա, է՞... ես քո... ես քեզ...

Ես զգացի, որ իմ վիրը օգակեցին նրա երկաթե մատնելու նա ինձ խեղդում է... ես շնչասպառ եմ լինում,— օդ-նությո՞ւն...

Զարթնում եմ։ Հյուրանոցում եմ. առավոտ է, փողոցից լսվում է քաղաքի աղմուկը, ինչ լավ է, որ երազ էր։ Հարկավոր է գնալ մայրիկին, հարկավոր է վճարել հյուրանոցի պարտքը։ Դուռը բացվում է, և ներս է մտնում հյուրանոցի տերը։ Ես զարմանում եմ։ Բանալին լվացարանի վրա է, ինչպե՞ս նա ներս մտավ։ Նա մոտենում է ինձ և առանց ինձ վրա նայելու, մոմոում է.

— Վճարեք 3.300.465 ռուբլի 62 կոպեկ։

— Ինչո՞ւ այդքան շատ,— սարսափում եմ ես։

— Էտեղ բազար չէ,— սրտնեղում է նա,— վճարել և ուրիշ ոչինչ։

Ես նստում եմ անկողնում և նրան բացատրում, որ ինձ մոտ ոչ մի կոպեկ փող չկա, որ նա բարի ըլող լինի, երկու ժամ ինձ ժամանակ տա, մինչև գնամ, փողը բերեմ... Նա

կարմրում է կատաղությունից, աչքերը լեցվում են արյունով, դանդաղ կերպով ձեռքը տանում է դեպի դրպանը...

— Տո, դուն ինձի մասխարի տեղ ես դրե՞լ... ե՛ս քո... ե՛ս քեղ...

Նա հանում է ատրճանակը, բռնում ուղիղ աչքերիս դեմ ու կրակում։

. . . . . .

— Գուրգեն, վեր կաց, չայ խմենք։ Զարուհի, չայ սամո-վար է... դու ինչի՞ կոտքաս... հիվա՞նդ ես...

Մայրիկի սենյակում եմ, Թիֆլիս Օրագ, երազում՝ նորից երազ։ Հարկեն, երազ է, կռշմար, պատանցանք... կյանքն էլ է երազ, ամենայն ինչ երազ է, երազ...

— Ման երազ տեսա, մայրիկ...

— Ի՞նչ տեսար, պատմի։

Պատասխանի փոխարեն ես գրկում եմ նրան ու համբուրում. մի բոպե ինձ թվաց, որ նորից երազում եմ, այս անգամ յուսավոր, երջանիկ, ոսկե երազում։

Մա՛յր, ոսկի՛ երազ...

2. ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

Նկատի բժիշկը, երկար, ամառային սև վերարկուով, սև գլխարկով, սև փողկապով, սև հոնքերով ու բեղերով, նա կրում էր սև ակնոց, որը նրա դեմքին տալիս էր խիստ արտահայտություն. սև ակնոցի վրայով նա զննեց ինձ, ապա հագավ բժշկական ձյունասպիտակ խալաթը ու ասաց մորս.

— Տիկին Անուշ, կգա Սաշան, ծանոթացրու Գուրգենի հետ։ Գնան թող քաղաք, ման գան։

Նկատի Սաշան, կապույտ աչքերով, շեկ հոնքերով ու մազերով, գիմնազիստական համազգեստով, ճոճացող կոշիկներով մոտեցավ ինձ և սեղմեց ձեռքս շեկ ժպիտով,— շեկ ժպիտո՞վ... այդ նրանից է երևի, որ նրա շրթունքներն ու ծնոտը ծածկված են շեկ ալեմազուվ։

— Գնանք քաղաք, ման գանք, լա՞վ։

— Լավ,— պատասխանեցի ես,— դու հայ գրողներին ճանաչո՞ւմ ես...

— Վա՛յ, ինչքան ասես...

— Օրինակի համա՞ր,— հարցրի ես խորին թերահավատությամբ։

— Օրինակի համա՞ր,— հարցրեց նա իր հերթին,— Գալֆինակու վրա ամեն օր քաշ են գալիս հայ գրողները։

— Դու նրանց տեսե՞լ ես...

— Փա՞հ, ինչքան ասես էդ ի՞նչ մի բան է որ...

Ես նայում եմ նրա կապույտ, փայլուն աչքերին ու մտածում. ասում էւ Այդ այն ժամանակներն էին, երբ գրողն ինձ համար աստվածության պես բան էր և նրանց տեսնելը մեծ բախտ։ Ես հիշեցի Թումանյանին Վանում, ապա էջմիածնում, Վահան Տերյանին՝ Օրևանում, իսկ հիմա...

— Սաշա,— ասում եմ ես,— դու ինձ ցույց տուր, ես ուզում եմ նրանց տեսնել։

— Փա՛հ, կուզես հենց էսօր։

Մայրս ինձ տալիս է փող՝ «ծախսերի համար», իսկ ծախսերը մեծ էին,— տրամվայի տոմս, թերթերի գնում,— «Մշակ», «Հորիզոն», «Վան-Տոսպ»,— և որ կարևորն է լագինձի «լիմոնադ», որով ես ամեի հյուրասիրեի Սաշային։ Մայրս խիստ կերպով պատվիրեց, որ տրամվայի տոմս ես գնեմ Սաշայի համար և որ «լիմոնադով» հյուրասիրեմ Սաշային։

Երբ տրամվայը շարժվեց տեղից, ինձ սիրտը լցվեց վարթաղմուկով. ես հիշեցի տխուր Օրևանը, մեր տրտանոցը, Հայաստանը, Գևորգին, Գառնիկին, ինչքա՜ն բան կա պատմելու, ինչքա՜ն ամեի զարմանան նրանք, որ ես տեսել եմ հայ գրողներին։

— Էս՝ քաղաքի ցենտրն է,— ասում է Սաշան,— Օրևանակի պլոշչադ...

— Իսկ ինչո՞ւ է կոչվում Օրևանակի,— հարցրի ես, Սաշան մտածեց ու շինց էլ ոչ մի շեկ պատասխան չտվեց։

— Ա չուտ եվս գնայես...

Հետագայում ինձ պատմեցին, որ այդ հրապարակից են մեկնել դեպի Օրևան և այնտեղից ժամանել ուղտերի ապրան-

քատար և ապրանքաթեր քարավաններըը, ֆուրգոններըը, մարդատար կառքերըը, հնում, երբ դեռ Թիֆլիսի և Երևանի միջև գոյություն չի ունեցել երկաթուղային հաղորդակցություն, Հրապարակի վրա մի կողմից իշխում է քաղաքային դումայի շենքը՝ քաղաքային մեծ ժամացույցով, իսկ մյուս կողմից՝ Թամամշևի քարվանատունն է, որի առաջ աղմկում են կոշիկ մաքրողներն ու Թերթ վաճառողներըը

— «Մշա՞կ»... «Վան-Տո՞սպ», «Հորիզո՞ն»...

Ես գնում եմ Թերթեր և այդպիսով կատարում մայրիկի երկու պատվերներըը Մնում է լիմոնադի խնդիրըը Ի՞նչ բան է այդ «լիմոնադ» կոչվածը, չգիտեի և անհարմար համարեցի հարցնել մորս. լիմոն դեռ լսել էի...

— Իսկ լիմոնադ...— ծամծմեցի ես,— ո՞րտեղ են ծախում...

— Լիմոնա՞դ ես ուզում խմել,— հարցրեց Սաշան,— գնանք, Գալալինակու վրա, ինչքան ասես...

Մենք ուղևորվեցինք դեպի Գալալինյան գլխավոր փողոցը, որն այժմ կրում է Լուսաբավելու անունըը Մեծ տպավորություն Թողեց ինձ վրա Գալալինյան փողոցն իր բազմահարկ, գեղակերտ տներով, վաճառատներով, մագազիններով, մեծ բաղաքի աղմուկով ու եռուզեռով, այն, ինչ ես մինչ այդ կարդացել էի գրքերում ու Թերթերում.

— Էս՝ փոխարքայի պալատն է,— բացատրում էր ինձ Սաշան,— հիմա էտեղ նստում է Վրաստանի մենշևիկյան կառավարությունը... Էս՝ Արամյանցի տունն է, էս «Զաշկա շայ»-ն է, այ, գրված է, տեսնո՞ւմ ես, «Մի բաժակ Թեյ». էտեղ շայ են խմում դերասաններըը, էդ քո գրողներըը, միրուն-սիրուն օրիորդներն ու տիկիններըը... Էս՝ Արտիստական Թատրոնն է, էս Տիգրան Նազարյանի տունն է, «Ազբյուր-Տարագ»-ի ու «Վան-Տոսպ»-ի խմբագրությունը... Թիֆլիսի օպերան... Մելիք-Ազարյանցի տունըը... Ինչո՞ւ չեն երևում այսօր գրողներըը,— անհանգստացավ Սաշան։

Մայթերով հոսում է ժողովուրդը։ Աչքի են ընկնում գեղեցիկ կանայք, գինվորականներ՝ փայլուն ուսադիրներով, ուսանողներ, ուսանողուհիներ։

Սաշան նկատելիորեն ջղայնացել է և նայում է անյորդ-
նելին դժգոհ աչքերով ու մրթմրթում.

— Ո՞ւր են կորել այսօր...

Իսկ ես մոածում եմ, որ այս ամենը խաղ է, նրանք չեն
կատող «քաշ ձայ» հասարակ մահկանացուների նման, նրանք
այս բոլոխ պրոպղված են, ո՞վ գիտե, ի՞նչ գործերով, պոյու-
թյուն ունի «ազգային վիշտ», «հայկական հարց», «կորած
վիլայեթներ», բայմահազար որևէ փողոցներում ու որթա-
նոցներում, դաղթականներ, թշվառներ, քաղցածներ, մաև-
դատի խնդիր...

— «Լապիձևի սատը ջրեր»,— կարդում եմ ես մի ցուցա-
նակ,— «լիմոնադ». և Սաշային առաջարկում եմ լիմոնադ
խմել՝ մի կողմից մորս երբոր պատվերը կատարելու, իսկ
մյուս կողմից՝ նրան հանելու համար անհարմար կացութ-
նից։ Ես առաջարկությունը Սաշան ընդունեց անհապաղ ։ իս-
տությամբ։

Լիմոնադ կոչվածը դուրս եկավ շաքարապանդ հաճելի, ո-
վացուցիչ խմիչք. Սաշան բաժակով ծծեց մարմարիոնի ա-
ղանը և հայտարարեց.

— Հիմա գնանք «Զաշկա-ձայ»-ի մոտերը մոն դան։
Նրանք կամ նիստում նստած կլինեն, կամ կգան չայ խմելու,
լա՞վ

Ահա և «Մի բաժակ թեյ» կաֆեն։ Փողոցի վրա նայող
վիթխարի ապակե փեղկերը ծածկված են սպիտակ վարա-
գույրներով։ Մենք սկսում ենք «քաշ ձայ» Արտիստական
Թատրոնից մինչև Ալեքսանդրյան սյուն մոտը և ընդհա-
կառակ...

...«Զաշկա-Զայ»-ի դուռ են գալիս երկու հոգի։ Սարը
չկար, որ Սաշան կանգներ, բոթեր իմ կողքը և շշնջար,—
ահա նրանք,— Ես նրանց կճանաչեի օրացույցներում և դա-
սագրքերում տեսած նկարներից։ Շիրվանզադեն բարձրահա-
ասակ, Ահարոնյանն ընդհակառակը. Ահարոնյանը ժլատ է,
Շիրվանզադեն լուրջ է. Ահարոնյանը ժլատ է, և դա ինձ
թվում է անբնական, անհարիր, ինչպես նա կարող է ժլատ,
երբ գոյություն ունի «հայկական հարց», «ազգային վիշտ»...
Նրանք քայլում են դեպի Երևանյան հրապարակը, ես ետ-

նում եմ Սաշային և հասնում եմ նրանց. ինձ հետաքրքրում է, ի՞նչի մասին կարող են խոսել նրանք, ինչի՞ մասին նրանք խոսում են, ես քայլում եմ նրանց հետևից համարյա կրնկակոխ։

— Թամարկան լավն է,— ասում է Շիրվանզադեն,— ես չեմ պատկերացնում «Զաշկա-շայ»-ն առանց Թամարկայի... ժպիտը, բոյ-բուսախը...

— Շատ գեր է,— առարկում է Ահարոնյանը,— իսկ այնպես, կարելի է... միայն թե գեր է...

— Հենց այդ էլ լավ է,— ոգևորվում է Շիրվանզադեն,— կինը որ բռնելու տեղ չունենա, քանի՞ կոպեկ արժի...

— Դու ճաշակ չունես,— ասում է Ահարոնյանը, ձեռնափայտը խփելով սալահատակին ու կանգնում. կանգ է առնում և Շիրվանզադեն, կանգ եմ առնում և ես— նրանցից քիչ հետու, ձևացնելով որպես թե դիտում եմ խանութի ցուցափեղկը,— կինը այնպես նուրբ ու թեթև պիտի լինի, որ վերցնես գրան ահա այսպես ու նկատառում մանգաս, ահա այսպես,— կրկնում է նա ձեռնափայտը հոլիգոնական դիրքում առնելով նրկու ձեռների վրա ու վեր-վեր նետելով,— իսկ որ Թամարկան. ապա փորձիր այդ փղոսկոն...

Նրանք առաջ անցան, իսկ ես մնալած մնացի իմ տեղում... Շիրվանզադե և Ահարոնյան...

Մոռացավ Սաշան ու կանգնեց դեմս իր շեկ ժպտալ. նա դեմքը փայլում էր իր պարտականությունը կատարած մարդու ինքնագոհությամբ։

— Ո՞ւ, որ՞ե ես,— հարցրեց նա։

— Լավ կլիներ եթե...

— Ի՞նչ «եթե»,— բղավում է Սաշան,— նրանք են, ուրիշ Շիրվանզադե ու Ահարոնյան չկա...

Այս պատմության շարունակությունը ընթերցողը կգտնի իմ 1932 թվի հիշողությունների մեջ, եթե միայն կարողանամ հասնել մինչև այդտեղ։ Այս վերապահությունը ավելորդ չի, եթե հաշվի առնենք իմ նեղկա կյանքի պայմաններն ու հնարավորությունները։ Երկու-երեք ամիս առաջ երկու-երեք ամսով, ես, հարգելի պատճառներով ընկա շրջանային հիվանդանոց։ Ես գրեցի իմ մտերիմներին և այս դեպքը համա-

րեցի սրամիտ դավադրություն, որ նյութեցին իմ դեմ Ալիմպիոսի ատավածները։ Բժշկական դիագնոզը շշմեցուցիչ էր,— տուբերկուլյոզ, ծոքախտ։ Ես գրեցի իմ մոերիմներին, որ այս գործը, այո, Ալիմպիոսի ատավածների գործն է. նրանք պետք եղածի չափ ապացուցված չհամարելով իմ «հուվերպուվյան ճյուին» պատկանելու փաստը, օժտեցին ինձ այն հիվանդությամբ, ինչ հիվանդությամբ տառապել ու մահացել են հայ բանաստեղծները,— Թումյանն ու Մխսար Մեծարենցը, ապա Վահան Տեքյանը։ Երբ ամիս առաջ, երբ ես ընդունում էի պենիցիլինների ու սուլֆամիդինների սրսկումներ, երբ միաժամանակ բժիշկների կողմից ես պատրաստված էի մահվան, միայն մի ափսոսանք ունեի և դա այն էր, որ ես չգրեցի իմ «Արիստարխություն» ես չմահացա, որովհետև մահը մարտի 5-ին պրոլված էր ավելի կարևոր գործերով, Բայց այդ չի նշանակում, որ նա չի անդրադառնա իմ խնդրին, այն էլ ոչ հեռավոր ապագայում...ահա թե ինչու, երբ ես կարողացա բարձրացնել գրչի ծանրություն, սկսեցի գրել իմ «Արիստարխություն», ահա թե ինչու, կամ-ակամա կասկածում եմ, թե կհասանեմ մինչև 1932 թիվը, երբ Շերլանդաղեի հետ...

Իսկ իմ գրիչը առաջ է վազում տանջող տարով. ես նրան կարգի եմ հրավիրում, ես ասում եմ նրան.— ճիշտ է, մենք գնում ենք դեպի կոմունիզմը, կոմունիզմ ենք կառուցում և ահա-ահա, կոմունիզմի շենքի պատուհանների ապակիներն են գցում, բայց փաստն այն է, որ ես քեզ դնել եմ 30 կոպեկով և դու պարտավոր ես ինձ լսել։ Գրիչ իմ, ահա 35 տարի է, որ ես քեզ հետ գործ ունեմ ու քո երեսից... ինչո՞ւ սիրում ես դառնալ և դառնացնել քեզ, դու գիտե՞ս, որ ես կարող եմ խիստ միջոցներ ձեռք առնել, կտրել քեզ և վատրանը նետել, մանավանդ որ այսօր ցուրտ է։ Քո տաքությունն ինձ չի՞ փրկի, բայց դու գիտե՞ս առածը,— «Վկան մեզը չրաղացպանին օգուտ է»,— գիտե՞ս թե չգիտես. (ծանոթություն.— այն երկրներում, որ չրաղացների փոխարեն գոյություն ունեն հողմաղացներ, այս առածը փոխվում է մոտավորապես այսպես,— ձանձի քամին հողմաղացին օգուտ է...)։ Բայց անցնենք բուն խնդրին։

Մոտեցավ Սաշան ու կանգնեց իր շեկ ժպիտով։

— Գնանք տուն, Սաշա,— առաջարկում եմ ես։

— Գնանք,— համաձայնվում է նա,— դու ինչո՞ւ հոնքերդ կիտեցիր, չեմ հասկանում։

Ես բարվոք համարեցի լռել։

— Գնանք տուն, Սաշա...

... Երևկոյան մայրիկը հարցրեց ինձ.

— Թիֆլիսին հավնա՞ր։

— Շատ, շատ հավնա, մայրիկ։

— Հայ գրողներին տեսա՞ր,— խորացավ նա։

Պատասխանի փոխարեն ես հարցրի.

— Մայրիկ, ո՞վ է գրել «Ես, իմ սրինգ, իմ բարեկամ վշտապին» բանաստեղծությունը։

— Գարեգին Պեշկյոխյուրյան,— հանդիսավոր կերպով հայտարարեց մայրիկը և սկսեց ինձ համար ամենաքաղցր ձայնով երգել «Ես, իմ սրինգս»-ը, որով և ինձ ազատեց իր հարցին պատասխանելու ծանր պարտականությունից,— հայ գրողներին տեսա՞ր, թե ոչ։

3. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԱԼՈՆՈՒՄ

Ով բախտ ունի այժմ ապրելու Թիֆլիսում, թող նայի «Ջարյա Վոստոկա» թերթի խմբագրության դեմ-դիմաց կանգնած հարուստ տեսակետից անճոռնի, չորսհարկանի, քարակ, երկար այս շենքի բոյ ու բուսաթին։ Ես չգիտեմ ինչո՞վ էին զբաղված այս շենքի երեք հարկերը, նրանցից մեկը Նազարյանցի «Հոգևոր սփոփանք մայր Հայաստանի» հարկաբաժինն էր. ի՞նչ էր ներկայացնում իրենից այդ «հոգևոր սփոփանք»-ը, չեմ հիշում և չհետաքրքրվեցի, ես բարձրացա չորրորդ հարկը։ Այս հարկում Նազարյանցի բնակարանն էր, ապա սալոնը, իսկ սալոնում՝ «Վան-Տոսպ» շաբաթաթերթի խմբագրությունը։

Ես Թիֆլիս նկա գրական «մեծ» անցյալով. արդեն լույս էր տեսել իմ առաջին բանաստեղծությունը Երևանի «Աշխատանք» թերթում, Գ. Արփունի ստորագրությամբ, երկրորդ

բանաստեղծությունը՝ «Հորիզոնում», այս անգամ Գ. Մինդրու-նի կեղծանվամբ, իսկ երրորդը՝ ամենաատրամադիր բանաս-տեղծությունը՝ լույս տեսավ «Վան-Տոսպ»-ում, «Լքում» վեր-նագրով, որն օժտված էր սիմվոլիստական գույների բոլոր ախտանիշներով. այստեղ մի կողմից Տրամաբյան արևաներր *լճուսի ան ժայռին ոսկի փաղփուն պաշտպաններով մորթում են ոսկե եղյուրներ, ծեծկրտությունը փորում է իր ամեն րե ամենն-փոսը, իսկ մյուս կողմից խոհերս վերադառնում են «Ոսկե-գույսի նավահանգիստ»... Զանգրացած «ոսկե»-ներից, այս բանաս-տեղծության տակ ես ստորագրեցի «Գ. Մահարի», կենդով բանաստեղծության մասյ ոգուց իսկ հետո, երբ նույն «Վան-Տոսպ» թերթում տպվեց Ե. Չարենցյանի հոդվածն իմ մասին, Դեռևս ստորագրությամբ, որում նա պնդում էր, որ «Քուրքոհոյ որբ գրականությունը որբ մահարինյում պիտի ծաղկի», ես հավելցի, որ ինչից իմ անմահության գանգը և պահեցի այդ կեղծանունը...*

Երբ ես բարձրացա շտապող հարկը, ոչ թեև վրս ինձ հանդիպեց բաց մի դուռ: Բաց դուռը չեն ծեծի,— հիշեցի ես ու նրա մոտ իմ գրական հարուստ անցյալը տակտն չխան-դարեց, որ ես մանեի այդ լրատվական ուռճար խոսին եր-կյուղածությամբ, ակնածությամբ և մատս ներսին:

Դա մի մեծ դահլիճ էր, կահավորված մեծ շքեղությամբ (գոնե ինձ այն ժամանակ այդպես թվաց). շուրջ պատերից նայում էին բազում լուսանկարներ, գեղարվեստական նկար-ներ, պեյզաժներ և պորտրետներ, պատվանդաններին վրա մարմարի ու բրոնզի արձաններ ու արձանիկներ, դահլիճի ճակատին «Մայր Հայաստան» մեծադիր նկարը, որն իրենից նախայացնում էր միջին տարիքի հերոսուհի մի կին, կար-ծես թատրոնական ալբոմների վրա նստած, թախծելիս: Առաջին հայացքից ինձ թվաց, որ ես դահլիճում մենակ եմ, բայց երբ խուզարկեցի դահլիճի բոլոր պատնեշները, դահ-լիճի խորքում, իզուր նայող պատուհանի մոտ, մեծ գրասե-ղանի վրա տեսա հակված մի գլուխ: Նա կարդում էր ինչ-որ թերթ, ես փորձեցի հազալ, որպեսզի նա նկատի իմ ներկա-յությունը, բայց հազս դուրս չեկավ. ես ստիպեն որոշել էի դուրս գալ և նոր ուժերով ներս մտնել, երբ նա բարձրացրեց

գլուխը և ինձ տեսավ. մի րոպե նա ինձ նայեց մտածկոտ աչքերով, հետո ես լսեցի.

— Մոսեյիր, երիտասարդ, ի՞նչ ես ցանկանում...

Ես մոտեցա Ըստ նախապես կազմած իմ ծրագրի, և պետք է հարցնեի՝ ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու,— և նկատեցի, որ գործ ունեմ «Վան-Տույք»-ի խմբագրի հետ, և պետք արտասանեի մոտավորապես հետևյալ նախադասությունը. շատ որսի եմ. ես արդեն պատիվ ունեցել եմ մի անգամ տալիս ձեր համակրելի թերթում և այժմ, թաքցնելով ձեր ուշադրությունից...

Ես գիտեի, որ «Վան-Տույք»-ի խմբագիրը Արտակ Դարբինյանն էր, անանձն էր նրա նկարը և ինձ համար պարզ էր, որ իմ դեմ նստած է նույն ինքը՝ պարոն Արտակ Դարբինյանը. իմ նախապես պատրաստած ճարտ գլխից դուրս թռավ անհայտ հարիս հետ. ես մոտեցա նրան, պարզեցի քառասալ մի թուղթ՝ երկու բանաստեղծություններով. Զարմանալի չէր լինի, եթե խմբագիրը մտածեր, որ ես եթե ոչ խուլ, գոնե համր եմ և պետք եմ խնդրագիր նպաստ կամ հոգևոր և մարմնավոր սիրուհի առնելու համար, կարծելով, որ գործ ունեմ Տիգրան Նազարյանցի հետ, ես բացեց թուղթը և.

— Ա՜... բանաստեղծությո՞ւն,— կարդաց վերնագիրը և առարկությունը,— Մահարի՞... խե՞ր ըլնի ես...

— Ո՞վ,— առարկաստանքով հարցրի ես

— Մահարին...

— Մահարին... ես եմ,— անվճռական կերպով հայտնեցի ես, քանած ցրիվ գրիչները գրպանս

— Խակա՞ն,— երևարացրեց նա և նայեց ինձ քննող հայացքով, — թեև ես կարծում էի, որ հասակով կլինես... երևանի որբերի՞ց...

— Այո

— Խակական ազգանո՞ւնդ...

— Ահնիյան

— Վանեցի՞...

— Վանեցի

— Գրիգոր Ահնիյանի բարեկամների՞ց

— Հայրս էր...

— Ի՞ս-կա՞-պի՞ս,— նորից երկարացրեց նա ակնհայտ զոհունակությամբ,— շատ ուրախ եմ, զի հայրը իմ մոտ ընկերն էր,— նա հառաչեց և մտախոհ հայացքը ուղեց պատուհանից դուրս։ Կողքի սենյակից լսվում էր դաշնամուրի նվագը։ «ա՛-ա՛-Ա՛-Ա՛...— ձայնակցում էր նրան կանացի սոպրանոն, ապա՝ նա,— Ա՛-Ա՛-ա՛-ա՛-»։

— Ձեզ հայտնի՞ է, երիտասարդ, թե ի՞նչ կուսակցության էր պատկանում ձեր հայրը։

— Հայրս արմենական էր,— հաղորդում եմ նա։

— Ակսինքն՝ ռամկավա՞ր,— տրամաբանում է նա։

— Այո,— համաձայնվում եմ ես։

Նա նորից խախծոտ հայացքով նայեց պատուհանից դուրս և հարցրեց կարծես ոչ թե ինձ, այլ կապույտ երկնքի վրա լողացող ամպի մի կտորին։

— Իսկ ձեզ հայտնի՞ է նրա վախճանը...

— Ա՛-Ա՛-ա՛-ա՛,— հնչում էր ֆալցետը կողքի սենյակից։ Ես նայեցի ամպի կտորին, որը նման էր մեկ երեխայի արձանին, որի ձեռներն ու ոտները կտրված էին։

— Ստրճանակ մարթիկա... պատահաբար... անզգուշաբար...

— Ճիշտ չէ,— խուլ ձայնով առարկեց պարոն Արտակ Դարբինյանը։— Ձեզ խաբել են։ Իրականությունն այն է, որ հայրիկիդ սպանեցին դաշնակցականները, քեռուդ ձեռքով, այո՛, Տիգրան Միրախորյանի ձեռքով...

— Ի՞նչ պատճառով,— հարցրի ես։

— Պարզ չէ՞ միթե,— պատասխանեց նա, ապա գրպանից հանեց սպիտակ թաշկինակը, սրբեց շրթունքները,— աչ ձախ, ապա բևեռները, աջ-ձախ, ապա փոքրիկ մորուքը, վեր-վար, վար-վեր, և նորից նայեց պատուհանից դուրս, ամպի կտորին, որն աճել էր և այժմ հիշեցնում էր շարացած ժեռուններ, կանգնած մի ոտի վրա,— հայրդ հեղինակավոր մարդ էր, անձնվեր գործիչ և կատաղի հակադաշնակցական... Սրիկաները անպատվաբար սպանեցին նրան, խեղդեցին նրա ձայնը։

Լռեց և կրկնեց.

— Այո՛, խեղդեցին նրա ձայնը...

Ման և համաչափ քայլերով երկու հոգի բարձրանում են սանդուղքներով, լալում է նրանց խոսակցությունը, դուստ ծխծաղը նրա են մոնում երկու պարոն, երկուսն էլ գեր և կուշտ կերպարանքով, մեկը սև, իսկ մյուսը շեկ բեղերով. ինչպես հետո պարզվեց, նրանցից մեկը Միսակ Խոստիկյանն էր, իսկ մյուսը՝ Հովհաննես Հակոբյանը, երկուսն էլ գրականագետ-լրագրողներ, նրանք բարևեցին Արտակ Դարբինյանին և վերջին մի-մի աթոռ նս կանգնած մնացին

— Կարդացի՞ք Համրարձում Առաքելյանի հոդվածը,— հարցրեց Դարբինյանը

Միսակ Խոստիկյանը բեղերի տակ ժպտաց, իսկ Հակոբյանը վանիցիական, ավելի շուտ արևմտյան շեշտված ակցենտով պատասխանեց.

— Կարդացինք... Քաշշնակցականներն նրա գլուխը կուտեն... սա ի՞նչ ավյան է, ինչ կրթություն, նաստի գրիշ...

— Ամեն ինչ կարելի է ասել,— լսելի ձայնով մոմաց Խոստիկյանը և ազմուկով խոնչաց սիտուակ քաշկինակի մեջ,— ամեն ինչ կարելի է ասել,— կրկնեց նա, քաշկինակը գրպանը խոթելով

— Նստիր, Գուրգեն,— գոռաց ինձ պարոն Դարբինյանը,— նստիր...

Երկու պարոնները միաժամանակ նայեցին ինձ հարցական հայացքով, կարծես նոր նկատելով իմ ներկայությունը, ապա՝ Դարբինյանին, կարծես հարցնելով՝ սա ի՞նչ Գուրգեն է...

— Գրիգոր Աճեմյանի որդին,— հասկանալով նրանց հարցը, պատասխանեց Դարբինյանը,— սկանակ բանասանդծ Գուրգեն Մահարի'...— նա առանձնապես շեշտեց «րի»-ի վրա և ժպտաց:

— Իսկա՞-պի՞ս...— Արտակ Դարբինյանի ձայնապրության հար և նման երգեց այս անգամ Հակոբյանը,— պարոն Գրիգորի որդի՞ն, Գուրգե՞ն... է, լսե՞ք, ինչ կընե՞ս հոս...

— Երևանի պրպանոցում սովորում է, եկել է մոր մոտ

հյուր,— իմ փոխարեն պատասխանեց Դարբինյանը,— բնավ է նոր բանաստեղծությունները...

— Սղեկ է, սղեկ... է, կուզե՞ս աշխատանք, Քոբքեն, կուզես նև վաղ առավոտյան նկ Հովնանյան դպրոց, Արևմտահայ խորհուրդ, նս քեզի համար փոքրիկ աշխատանք մը սարքեմ, Հարցուր պարոն Հովհաննես Հակոբյանին... աղե՞կ, Ջեքքա՞նք «Մի բաժակ թեյ»,— դարձավ նա խոսակցանին և Դարբինյանին:

— Գնանք,— ասաց խոսակիցը:

Նրա մոտ 22—23 տարեկան մի երիտասարդ՝ մեծ բիով, խոշոր աչքերով, երկար արտևանունքներով և մրա ձևռնկրով:

— Պարոն Արտակ, նո՛ւթ,— ժպտալով ասաց նա, հիշեցնելով երեխ Նար-Դոսի «Նոր օրերիս մեկը» պատմվածքի տպարանի տղային:

Համբարիր ավեց նրան մի քանի ձևոագիր, տպա նայեց ինձ, մակագրեց իր բանաստեղծության վրա, պարզեց նրան և ավելացրեց.

— Բանաստեղծությունը շարիք շղատաեիրով:

— Լսում եմ,— նա նայեց բանաստեղծության տպագրությանը,— ահա՜, Մահարի... ասում են այս Մահարին վանեցի է...

— Վանեցի է,— հաստատեց Դարբինյանը՝ կարդի բնությով գրաքննչանը:

— Նրանի պրոլետարական մեկում ուսուցիչ...

— Ոչ, աշակերտ է... և այժմ գնում է Թիֆլիս:

— Թիֆլի՞ս եմ,— թերահավատ հարցրեց երիտասարդ գրաշարը:

— Մի նստած է «Վան-Տոպ»-ի համբարձումանը, ահա, ծանոթացեք...

Երիտասարդ գրաշարը ինձ վրա հառեց իր սև ու խոշոր աչքերը և պարզեց ձևռքը:

— Արտահամ Գալճյան,— արտասանեց նա,— գնանք միասին տպարան... դնանք:

Ես պատրաստակամ ոտքի կանգնեցի և պատրաստվեցի հրաժեշտ տալ:

— Թուրքերին մենք կտաննք մեզ հետ «Մի բաժակ թեյ», հետո կգա տպարան,— միջամտեց Հակոբյանը։

— Նա ճանապարհը չգիտե,— առարկեց Գալճյանը. ակնհայտ զժգոհությամբ։

— Ես կբերեմ,— ասաց Դարբինյանը և վանկյ դռրոցները փորփրել բանալիով, Գալճյանը գնաց, Բոլորը ոտքի կանգնեցին դուրս գալու համար, բայց այդ միջոցին...

Նրա մտալ միջահասակ, միջին տարիքի մի մարդ, ով տարատի մեջ խոթված ապաշն ձյունապիտակ վերնաշապիկով, մաղերը ձև ևա Գոդոլ փոած վրի ու ականջների վրա, ներքևի շրթունքը անուղղո հասա, համեմատած վերին շրթունքի հետ, կարմիր այտերով ու առաջին կնճիռներով, մարդ սաիրված, անբեղ ու անմորուք մի մարդ, որ առաջացավ հասատա ու գրեթե դիվերսիոն քայլերով, կանգնեց մի քանի քայլի վրա այն դիրքով, ինչ դիրքով բոմբ վրա կանգնում են դեռատանները խոր գլուխ տալու համար Բայց նա գլուխ խոնարհելու փոխարեն նա գլուխ և նկատցավ.

— Կարա-Դարվիշ...

— Ա՛,— ժպտաց Հակոբյանը,— վիշ-վի՛շ, վիշ-վի՛շ, Կարա-Դարվի՛շ...

— Այդ հիմարությանները տարածում են իմ թշնամիները,— պնդեցնց Կարա-Դարվիշը,— ուրիշ բաներ էլ են ասում, «Կարա-Դարվիշ, կտակու դիմ», և նման բաներ, ես չեմ նեղանում, Ընդհակառակը, ես ուրախ եմ, երբ ինձ ծաղրում են ու հայհոյում, ինձ ապահով կհամարեմ ես ֆետիշիստ եմ, ֆետիշ, այդ նշանակում է ապուռ, ֆետիշիստ՝ ապուռպաշտ։ Մենք պաշտում ենք ապուռն ու ժխտում նրանք. դրանք այն քուրմերը, որոնք այսօր վայելում են փառք ու պատիվ, ապագայում կմոռացվեն, իսկ իմ արձանը կկանգնեցնեն Երևանյան հրապարակում, այո՛, կկանգնեցնե՞ն...

Այս ճառի ընթացքում ես անդից քոլոր ձևերը, շմոռանալով նաև ինձ, իսկ վերջում ամբողջից.

— Ես ամեն ինչ եմ, ես ոչինչ եմ, ես Կարա-Դարվիշն եմ...

— Ես ոչինչ եմ, այդ լավ է ասված,— ժամաց խոսակիցը։

— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել,— հարցրեց Դարբինյանը խմբագրավայել պատկածությամբ։

— Կուզենայի աշխատակցել ձեր թերթին...

— Տվեք, կնայենք...

— Բայց այժմ ես պատրաստի ոչինչ չունեմ.. Հետո կբերեմ... իսկ հիմա բարի եղեք տալ մի համեստ կանխավճար...

Տիրոց անհարմար լռություն, որը խզեց վերջապես Դարբինյանը՝ հատիկ-հատիկ արտասանելով.

— Պարոն, «Վան-Տոսպ»-ը մինչև այսօր իր աշխատակիցներին չի վճարել ոչ մի կոպեկ, միջոցների չգոյության պատճառով... վճարում էր մի ժամանակ, երբ հրատարակվում էր իր հայրենիքում՝ Վանում... հիմա... բյուջե չունի...

— Հասկանալի է, բայց բացառիկ դեպքերում...

— Բացառիկ դեպքեր չեն պատահել...

— Երթանք, երթանք,— արձագանքեց Հակոբյանը և ըստ էության հայտնվեցինք Գալավինյան պողոտայի վրա։

Ես քայլում եմ նրանց հետ և ինձ թվում է, որ ամբողջ թիֆլիսը, Գալավինյան պողոտայի բոլոր անցորդներն ինձ են նայում, առանց ոտրիքի ու սեռի խտրության, ձիշտ այս պատճառով, պետք էր ննջարել, որ լցված էր բացի ինձնից նաև Կարա-Դարվիշը. նա քայլում էր հպարտ, կուժքը դուրս ցցած, աչ ու ձախ բարևում, բարևում հայերեն, ռուսերեն, վրացերեն... նրան բարևող ծանոթներից ոմանց դեմքերի վրա կարելի էր նկատել ոտնատ քմծիծաղ, ոմանք բարևում էին նրան ներողամիտ ժպիտով, կային և այնպիսիք, որոնք բարևում ու արագացնում էին քայլերը, վախենալով կարծես, որ նա կբռնի իրենց օձիքը... Ինձ ոչ ոք չէր բարևում, բայց ինձ թվում էր, որ բոլորը ճանաչում են ինձ, նորելուկ, բայց մե՛ծ ապագա խոստացող բանաստեղծիս, գիտեն և այն, որ գրպանումս գտնում է մայրիկիս արտաձև փոքրիկ ժամացույցը, որը կամ առաջ էր վազում, կամ ետ մնում, որի համար էլ ես էի նրան օրվա մեջ մի քանի անգամ ճիշտ ժամ ցույց տալիս...

— Ո՞ւր ենք գնում, պարոններ,— հարցրեց Կարա-Դարվիշը օպերայի շենքի մոտ։

— «Մի բաժակ թեյ»,— պատասխանեց Հակոբյանը։

— Չի խանգարի, չի խանգարի,— հավանություն ավեց ֆատուրիատը,— ցավում եմ, որ չեմ կարող ընկերակցել ձեզ...

— Ինչո՞ւ,— հետաքրքրվեց Դարբինյանը։

— Սրկու պատճառով. նախ որ գրպանումս Ահարոնյանի հողմերն են լալիս և երկրորդ, որ... պարտք եմ։

— Ո՞ւմ...

— Մատուցողուհուն... Խմախրային, Այսպես ապրում են այն գրողները, որոնք պնակալիզոպիայամբ չեն զբաղվում,— ավելացրեց Կարա-Դարվիշը «Մի բաժակ թեյ»-ի մուտքի մոտ, բարկացած, հայտնի չէ, թե ում վրա՝ նա ատանց հրաժեշտ տալու անհետացավ, և մենք նեռս մտանք։

4. «ՄԻ ԲԱԺԱԿ ԹԵՅ»

Հատակը թեյի, սուրճի, կակաոյի և խմորեղենների բուրմունքով հագեցած էր «Մի բաժակ թեյ»-ի մթնոլորտը։ Թեյարանի գրեթե բոլոր սեղանները զբաղված էին։ Զինվորականներ, մատրոսականներ, մի քանի օրիորդանման տիկիններ և տիկնանման օրիորդներ, ըստ մեծի մասին հովհարներով, հաստ վզնոցով, հաստ բնեռով և ճաղատ գլուխներով, ըստ երևույթին վաճառականներ,— ահա թեյարանի այցելուների սոցիալական կազմը։ Նրանք խոսում էին՝ ոմանք բարձր, ոմանք ցած ձայնով, ոմանք զբաղված էին թեթի կարդալով, լսում էին զուսպ ծիծաղի ձայներ, իսկ սեղանների միջով ետ ու առաջ վազում էին սպիտակազգեստ մատուցողուհիներ, սկուտեղներով ծանրաբեռնված ուտելիքներով և խմելիքներով։ Մենք գրավեցինք մի ազատ սեղան, Մոտեցավ սպիտակ դեմքով և արտասովոր խիտ, թավ ու սև հոնքերով, նշաձև աչքերով, ժպտուն մատուցողուհին ու պատրաստակամ կանգնեց։ Այդպիսի հոնքերի և աչքերի մասին երևի ասել է բանաստեղծը.

Քո աչքերը երկու նշի ձևի նման,
Քո հոնքերը ծիծեռնակի թևի նման...

— Ի՞նչ կծաճիր,— հարցրեց Հակոբյանը։

— Թե՛յ,— պատասխանեց Դարբինյանը։

— Թե՛յ,— արձագանքեց Խոստիկյանը։

— Մեզի երեք բաժակ թե՛յ,— կարգադրեց Հակոբյանը,— իսկ քուրքենին կակաո... բիսկվիթ... կարկանդակ... ա-նա՞նկ է։

— Անանկ է,— ժպտաց Դարբինյանը։

Ինչ միջոցին նրա մտան չորս պարոններ. նրանց մատը պարկեշտ բոլորն ուշադրություն Շատերն ընդհատեցին խոսակցությունը, օրիորդանման տիկիններն ու տիկնանման օրիորդները հանկարծ իրենց վոքրիկ հայելիների վրա, իսկ Աթոսի Դարբինյանը նորից ժպտաց իր քաղցր ժպիտով։

Նրանք ոչ պարկեշտ մեկնից ոչ հետո. նրանցից մեկը Շիրվանզադեն էր, որին արդեն վաղուց պոետ դարձրել էին, մյուսը... մյուսն ինձ հիշայ չամուսնացը ժամի անձնավորություն իր բարձր հասակով, հայկական պիտակներով աղեցիկ արտահայտությամբ, խնամված բեղերով ու անհանգիստ, թափանցող աչքերով։ Երրորդը... երրորդը պոեզիայի կարեկ, կապույտ, հասակ աչքերով մի երիտասարդ էր, բայց, հասցե պիտակներով և ճակատով, վիտագանդար և շքեղ մարդու Հասկացվում էր նա ճաշակով, անմոտիկ ճաշակով հագնավոր երիտասարդի, որ գիտե, որ իրեն ամեն ինչ կասի... նա նայեց շուրջը, արտ վեր կացավ տեղից ու մոտեցավ մեզ.

— Ողջույն վանեցի ինտելիգենցիային։

— Ողջույն՝ նույնպես,— պատասխանեց Հակոբյանը,— նստեք խնդրեմ։

— Ի՞նչ նստել, ջանըմ, երթամ. տեսանեք ինչ կլիներ (նա ձայնը իջեցրեց). վաշան կոպեկ փող չունի, հույսը դրել է ինձ վրա, ես ունեմ մի բիշ, բայց այդ մի քիշով կոնյա՞կ կիմաքի իրեկ վաշան ուզում է կոնյակ խմել. մի երկու օրից էրզրում է գնում։ Դաշնակցականներին հայհոյում է... հայ վողովրդի վիրնամանավորն՞ր, ննիչերինն՞ր,— ես ծիծաղից ետևքր, պատից, խրխնջոցն ծիծաղալ։

Ես հասկացա, որ մեզ հետ խոսողը թոթովվոցն է, իսկ Շիրվանզադեի գեմը նստած է նույն ինքը՝ Անդրանիկ վաշան,

ոլը կոպեկ փող չունի գրպանում, ուզում է կոնյակ խմել և գաշնակցականներին հայհոյում է,— ննիշներնե՞ր...

Իսկ չորսորդը ո՞վ է, այդ չորսորդը, նիհար, գունատ, անժպիտ այդ չորսորդը։

— Ի՞նչ է երգում լուշկիկը,— հարցրեց Վարդիկյանը։

— Գլխատար վարպանյա՞նը... Ուսա՞ֆ մարդ է... գաշնակիստ, մենշևիստ, մուսաֆաթիստ, գրանց երգը երգված է,— կան,— ասացան լուշկինները, շուտով Կոլկաթը սովետական կդառնա, լենինը...

— Ինչ կուզես հաշվի, մոլոտան մարդ է,— նշմարելով Ոսկանյանը, ետևից մոտեցավ իր սեղանին։

Սակայն, ինչպես նաև համոզվեցին շատերը հետո, Վլասին ինձ։ Նա մտածեց, որ երբ փող վաստակեմ, մայրիկին, Սոսեին և Հրաչին կբերեմ այստեղ ու կհյուրասիրեմ կակաոյով և համոզվեցնեմ։

Օրում ստրուժկից խարտ վարտանդի որդին բուրմունքով Անդրանիկ վաշոյի սեղանը պարզելից լոնյակով և գաշնան խորտիկներով։ Դժվար էր ասել, թե վաշան պվասճանում էր. նրա դեմքը մոայլ էր, լարված. նա լուռ էր ու չէր խոսում ոչ ոքի հետ. լռեցին նաև նրա սեղանակիցները, մինչև անգամ վահան Թոթովենցը... այդ լռությունը ստրուժկից սեղանից սկսան և եղավ մի րոպե, երբ ամբողջ ինտերնատում մերկ լուսկյուն, Թոլոլի հայացքը գամված էր Անդրանիկի վրա. նա կարծես զգում էր այդ և չէր նայում ոչ ոքու Ով հանկարծ, ինչպես որոտ պարզ երկնքից, հնչեց Անդրանիկի ձայնը.

— Ինչո՞ւ լռեցիք, ինչո՞ւ չեք խոսում։ Անդրանիկե՞ն կբաշվեք։ Ո՞վ է Անդրանիկը, ի՞նչ է Անդրանիկը, ինչպե՞ս է Անդրանիկը։ Տաճկահայաստանի երկինքը սևացավ վտակ քաղաքների ու գյուղերի ծխից։ Յոթը գարուն, յոթը ամառ, յոթը աշուն անձրևի փոխարեն սև ջուր է թափվելու երկնքից, յոթը ձմեռ սև ձյուն է իջնելու ավերակ Հայաստանի, Վիկտո, Խարբերդի, Զեյթունի, Սասունի, Շարին-Գարահիսարի. Մուշի ու Վանի լեռների ու դաշտերի վրա։ Ո՞վ է մեղավոր. Անդրանի՞կը... խա՛չ հանեք նրան, այդ ոճրապարտ փաշա-

յին, որի մասին այնքան գեղեցիկ երգեր կան հյուսված, այրինչ՛ք այդ երգերը. արժանի չէ նա այդ երգերին...

— Դուք մեղավոր չեք, փաշա, դուք արժանի եք մեր երգերին,— լսվեց մի հուժկու ձայն թեյարանի մի անկյունից։

— Ո՞վ է այդ մեծահոգի մարդը,— կարծես ապառնական հարցրեց Անդրանիկն ու բարձրացավ տեղից,— ես չեմ տեսնում քո դեմքը... Դուք ասում եք, որ ես մեղավոր չեմ...

— Ո՛չ, դուք մեղավոր չեք,— լսվեցին բազմաթիվ բացականչություններ,— դո՛ւք չեք մեղավորը...

— Բայց մեղքը, ավելի շուտ ոճիրը, գործված է... Քափված է մեկ ու կես միլիոն հայերի՝ մանուկների ու ծերունիների, ուսուցիչի ու բռնաբարված դուստրերի արյունը... Ուր մեղք է գործված, պետք է փնտրել մեղավորին, հանցանք՝ հանցավորին, ոճիր՝ ոճրագործին։ Սխե՛ս ես չեմ մեղավորը, հապա ո՞վ է։ Փնտրե՛լ, գտնե՛լ և իսկ՛ույն հանել ոճրագործին... ես հարցնում եմ, ո՞վ է մեղավորը...

— Համբարձում Առաքելյանին պետք է հարցնել,— լսվից մի ձայն։

— Ապրես,— ժպտաց Անդրանիկը ռևպլիկայի ուղղությամբ,— Համբարձում Առաքելյանը ճի՛շտ կպատասխանի...

— Վճարենք և կամաց մը դուս գանք,— որևէ շշնջաց Հակոբյանը և համր միմիկայով կանչեց մատուցողուհուն։

Ինչով վերջացավ այս զարմանալի թեյարանային միտինգը, ես չգիտեմ, որովհետև մենք ակամաց մը դուս եկանք։

— Մի բաժակ թեյ և հարյուր մեկ տակտ քաղաքականություն,— ծիծաղեց Հակոբյանը, երբ դուս եկանք փողոց,— առանց ծանրակշիռ խնդիրներ թեյարանի մե՞ջ կլուծեն։

— Ես այդ մասին չեմ մտածում,— ասաց խոսակցանքը, որն ինձ վրա թողեց սակավախոս մարդու տպավորություն։

— Ժամանակն է տպարան հանդիպելու... Այսօր կսկսեն էջերը կապել... Դե, գը՛... Վաղ առավոտյան անցեք, Գևանը, Գուրգենն։

— Գնացեք,— հավանություն տվեց Հակոբյանը,— Գուրգեն, վաղ առավոտյան, ժամը 9-ին եկուր Հովնանյան

պարոց, հարցուր Արևմտահայ խորհուրդ՝ Հակոբյանին... քնի համար փոքրիկ աշխատանք մը կգտնեմ... գոնե թերթի և լիմոնադի դրամ կշահիս... է... ըը՛...

— Յը՛... ըը՛...

Մենք բաժանվեցինք։ Պարոն Դարբինյանի հետ մենք մտանք Ալեքսանդրյան հուշարձանը այգին։ Տպարանը հետու չէր։ Եվ ահա մենք՝ խմբագիր ու բանաստեղծ, հայտնվեցինք

5. ՏՊԱՐԱՆՈՒՄ

Տպարանը մանավոր էր և, ինչ հիշողությունս ինձ չի դավաճանում, պատկանում էր Գյոզալյանին։ Տպարանատերը, ակնոցավոր, ալեխառն, փոքրիկ մորուքով մի մարդ, իր սենյակի մոտ զրուցված էր ինչ-որ բանվորի արտադրությամբ։ Նա բնդունեց Դարբինյանի բարևը ակնոցի վրայով, զբաղված մարդու հայացքով և շարունակեց իր աշխատանքը։ Դարբինյանն անցավ առաջ և մոտեցավ տատրկների առաջ աշխատող զրաշարին, Արտահամ Գալճյանին։ Ես հետևեցի նրան։

— Թերթի «բովանդակությունը» գրիր, պարոն Կիրակ,— ասաց Գալճյանն առանց աշխատանքն ընդհատելու,— հիմա կախում էջերը կտանք։

Դարբինյանը վերցրեց մի թերթ մաքուր թուղթ և նստեց սպասողական։

— Ի՞նչ բանաստեղծություն պետք է,— զարմացավ նա ինձ մոտիկ տեսնով,— ուզո՞ւմ ես արձակությունը նայել,— և առանց սպասելու իմ պատասխանին, պարզեց ինձ մի թերթ թուղթ, որի վրա տված էին իմ երկու փոքրիկ բանաստեղծությունները՝ «Սուգ» և «Մեռելոց», էլև չեմ մխալվում, ես սկսեցի կարդալ. փոխանակ «եղնիկների» «եղնիկները կուլան, կուլան դառնադին...»։

— Այստեղ տպված է «եղսիկները», փոխանակ «եղնիկները»,— բողոքեցի ես։

Գալճյանը ծիծաղեց սրտանց, ոչ այնքան «եղսիկների», որքան իմ լացակումած բողոքի վրա։

— Վերջում ահա մատիտը, ջնջիր «ս»-ն և պոչ քաշիր մինչև մաքուր լուսանցքը ու գրիր «ն», ես դուս կթաշեմ «ս» տառը և նրա տեղը կխոթեմ «ն» տառը... այդպես էլ մյուս սխալները... Հասկացա՞ր «Զգեխինները կուլան, կուլան դառնապին»...

Նա նորից ծիծաղեց և շարունակեց տառարկղներից տառ-առառ քաղել և կուր-կուրքի շարել տառերը։

Հիմա երբ գրում եմ այս տողերը, գրում եմ ապարանի տպարանական բոլոր մեքենաները, որ ինձ վրա քաղել է Տարբինյան տպավորությունը։ Այդ նեղլի բոլոր մեքենան է, ինչ խոհանոցի բոլոր մեքենան, որ հնուց խոհարարը ճաշ է պատրաստում՝ տրորելով շորքը սխտորները համեմների բոլոր մեքենան Գուշարն, տպագրիչը դա նույն խոհարարն է, տպարանը՝ գրքի խոհանոցը, այն տարբերությամբ, որ խոհարարի աշխատանքի արդյունքը գաղտնում է ճաշակողից, իսկ տպարանական աշխատանքին՝ դրանցից Մեկը պատրաստում է մարմնավոր, իսկ մյուսը հոգևոր անուն... փառք, փառք Գուտենբերգին և Մահակ-Մեսրոպին, փառք Արրահամ Գալճյանին, գրի հնուց խոհարարներին...

Մինչեռ ես գրգռված էի այս մտքերով, շնչով տպարանի հաճելի օդը, նեղս մտավ ճաշակով հագնված մի ծերուկի՝ աշխույժ աչքերով և արագաշարժ, բամբակե նման սպիտակ մազերով, փոքրիկ մորուքով և փակագծանման բնգերով։ Նա ինչ-որ խոսքց տպարանատիրոջ հետ, ապա սեղմեց Տարբինյանի ձեռքը և նստեց նրա կողքին։ Ես չմոտցա, ինչի՞ համար էին խոսում նրանք, Տարբինյան հանդգնում էր ծերունուն ինչ-որ բանում, ծերունին առարկում էր նրան, ձախ ձեռքի բունցքը բաց ու խուփ անելով և վերջապես վեր կացավ տեղից երկու ձեռքերը վեր բարձրացնելով և այս անգամ լանլի ձայնով բացականչելով.

— Ալլահը գիտե ինչով կվերջանա։

Նա սեղմեց Տարբինյանի ձեռքը և արագ դուրս եկավ։ Արրահամ Գալճյանը հարցրեց ինձ.

— Ճանաչեցի՞ր ծերունուն...

— Առաջին անգամ եմ տեսնում։

— Համբարձում Առաքելյան...

— «Մշակ»-ի խմբագի՞րը։
— «Մշակ»-ի մշակը։
— Ախոռս, լավ չնայեցիր։
— Էլի կհանդիպես,— ասաց Գալճյանը։

Ինչպես երևում էր, Արտահատը լավ պրծած էր, բայց վատ մարդ։ Ես այնս չհանդիպեցի Համբարձում Առաքելյանին։ Շատ չանցած, մի դեղերի օր «Մշակ»-ը լուր տարավ, որ ինչ-որ բանվոր, անհայտ հարաբերության ձևով, արքանայի դեղատուն սպանված է Համբարձում Առաքելյանը ես հիշեցի Հակոբյանին։

— Թաշշհակցականները նրա գլուխը կուտե՞ն... կասպի պի՞շ...

Տպարան մտալ մի բարձրահասակ մարդ, նիհար, չոլմոլի բոյ-բուսաթով, ձյունասպիտակ ուլրաինական վերնաշապկով, մեջքին սպիտակհյուս գոտի, կախված երկար վիսաբրյունեով։ Նրա բիի մեծությունը կորչում էր յայն դեմքի և խոշոր գիմագծերի սիսուայիտում և տալիս էր նրա դեմքին ինչ-որ, այո, վեհության և մինչև անգամ գեղեցկության. ուրիշ դեմքի վրա այդ նույն բիին կարող էր թվալ ոգող և անճոռնի։ Նա ուներ երկար և կախված հոնքեր, ժպտուն և ուշադիր հայացք. սպասողին գիտարիի շրջանակից դուրս էին թափել նրա սիրասեր մատները սպանջների ու վիզ վրա, որոնք սկսել էին սպիտակել։ Նա բարևեց բոլորին գլխի շարժումով, տպա մոտեցավ տպարանատիրոջ դրասեղանին, տարատի գրպանից հանեց կարշիև սև դրամատետրը, այնտեղից դուրս քաշեց ինչ-որ թղթեր և ցույց տվեց Գարբինյանին և տպա տպարանատիրոջը, երկար ցուցամատը խրելով թղթին և ինչ-որ բան ապացուցելով։

— Այս մարդուն լավ նայիր,— ներեց ինձ Գալճյանը, իսկ ինքը արագ մոտեցավ նրանց։ Նա նայեց Գարբինյանի։ ձեռքի թղթին, հետո նայեց ինձ, նորից թղթին և կանչեց.

— Գալչին, արի հասիր...

Ես մոտեցա, զգալով, որ Գալճյանը իզուր չի կանչում ինձ, և որ նա պիտի ուզենա կամ չուզեմ անպայման մի բան

Դանիել Վարուժանի նամակը՝ հասցեագրված «Գեղարվեստ»-ի խմբագիր պարոն Գարեգին Լևոնյանին...

...Դեռ թարմ էին այսպես կոչված «Պոլսո եղեռնի» հիշողությունները, Պոլսո մտավորականների չարչարը Թուրքական արյունախում կառավարության, նախքան մասսայական կոտորածը, իրականացրից Թուրքահայ ժողովրդի դիմադումը. նա մի գիշերվա մեջ ձերբակալեց մոտ երկու հարյուր մտավորականներ՝ գրողներ, բժիշկներ, իրավաբաններ, քշեց նրանց Պոլսից դուրս աքսորելու պատրվակի տակ և ճանապարհին սրի քաշեց բոլորին։ Նահատակների շարքում գտնվում էր նաև քանքարավոր բանաստեղծ Դանիել Վարուժանը, Սիամանթոյի, Զոհրապի, Ռուբեն Սևակի և այլոց հետ Մինչև հիմա հիշողության հետ դեռ թարմ է այդ քառածայլ նամակը, Վարուժանի անսեթևեթ ձևագիրը՝ գրված սև թանաքով, Գարեգին Լևոնյանի մի քիչ դողացող ձեռքին... Ինչ երջանիկ մարդ է այդ Գարեգին Լևոնյանը. նա նամակներ է ստացել Դանիել Վարուժանից և այդ նամակներից մեկը ահա՛, ահա՛...

Հիվանդանոց վերադարձա ես՝ հոգնած ու ծանրացած օրվա բազմերանգ ու հարուստ տպավորություններից ես մայրիկին պատմելի բոլոր տեսածներիս և լսածներիս մասին, և այն, որ վաղը պիտի գնամ Հուլհանյան դպրոց, ևրևմտահայ խորհուրդ, ուր Հուլհաննես Հակոբյանը (իհարկե, պարոն...) ինձ համար «փոքրիկ աշխատանք մը պիտի սարքե»...

Մայրիկը ժպտաց երջանիկ մոր ժպիտով։

— Ասել է՝ մարդկանց շարք անցար... Դե լա՛վ է, լա՛վ... վաղը չես գնա Հուլհանյան դպրոց, քեզ Տիգրանի մոտ պիտի տանեմ, Մանուկ աղի մոտ, Սաթենիկ տատենց տուն... կուզին քեզ տեսնել։ Վաղը քեզ հետ կգնանք ման գալու, սանկ քիչ մը պտտելու,— կամիկ ծեքծեքտոմով ավելացրեց նա և հանկարծ լրջացավ ու ընդունց մտահոգ կերպարանք։

— Թուրքերի մասին բան չասի՞ն,— հարցրեց նա։

— Չէ, ի՞նչ կա որ...

— Արշակը ասում է, որ Թուրքերը մտենում են Թիֆլիսին...

Երբ մենք պատկերին քննելու, մայրիկը հորանջեց և հարցրեց.

— Տղա, Հովհաննես Հակոբյանը վանեցի՞ է...

— ԵՒյո՛, հայրիկին ճանաչում է,— պատասխանեցի ես,— խոսում է պլպահայ բարբառով...

— Հովհաննես Հակոբյան, Հովհաննես Հակոբյան...— ավելի ցած ձայնով մրմնջաց մայրիկը, կարծես հիշելու համար, և հանկարծ աշխուժացավ.

— Շևկ բեղերո՞վ...

— Շևկ բեղերով։

— Հասա-հասա մա՞րդ...

— Այո՛,— հաստատեցի ես։

— Կրոզի Հովհաննես Հակոբյան,— բացականչեց մայրիկը,— Զորթաննոց Օհանան է, Զորթանյան Օհաննսը, էլ Հակոբյանս ո՞րն է... նկան էասնդ, բոլր փոխնցին փետրներր, Պրոնք՝ Բրուտյան դարձան, Բարալ-Գյորիկենք—Բեզիդյան, Բարեկենք—Պապիկյան, Սրարացոն.ք—Սրարյան, Փալարեկենք — Հալեբյան, Մրաոնք — Մարտիկյան, ո՞ր մնին ասեմ...

Նա լռեց, մտածեց ու շարունակեց.

— Նոր փետուրներ հագան Ասա վանեցի կնիկներն ու աղջիկնե՞րը, նայի նրանց փետուրներին. Տիւա էլ Նատիկ չկա, ասոպիկները Ասյա են դարձել, Պրոնց Վերունիկ—Բրուտյան Վերա, Սրմատան— Ամալյա, Շուշանիկ— Սուսաննա, Լուսարեր— Լյուսյա, Շողիկ— Շուրա, Երանուհի—Ելենա, Սոզոմեն—Սիլվա...

— Սիրարին՞,— հարցրի ես...

— Սիրարինն էլ՝ Սիլվա,— հանդարտորեն ինձ մայրիկը...

— Բայց շատերն էլ Թոլին իրենց փետուրները,— շարունակեց մայրիկը.— Հնչակյան Արշակն ու դաշնակցական Տիգրանը միասին խանութ են բացել, առուր կանեն, ամկավաճառները ոսկի կծախեն, ապրանք կտանեն բերեն Բաթում. Հակոբ էֆենտի Տեր-Զաքարյանը, ինքը ռամկավար, հնչակյան Մհհրդատ Բրուտյանի հետ, հորաքրոջդ տղայի հետ դրամ կկուտակեն օրոս գործարան բանալու համար, Վանի

հարուստները՝ գախտամաջոնք, թերթերաշյաններ, շաղրագոյանններ ալբատոցյան, աղբատներ հարստացյան, քալուստիկ կկապեն... բոլորն էլ վոխվան...

— Մենակ մենք չվոխվանք,— ասում եմ ես, մայրիկի կարծիքը իմանալու համար

— Ինչո՞ւ,— մենք էլ վոխվանք,— եռանդով բողոքում է մայրիկը,— պետության բուլդը ինձ Հայկանուշ Գյուրջինա է ասում, այսինքն՝ Հայկանուշ, Գևորգի ալջին, դու էլ Մահարի ես դարձել, պատռ Մահարի... ողա, էդ Մահարի՞ն պոեզից իչաթ արիր...

— Կնշանուն է, մայրիկ...

— Ման է՝ Մահարին ձեռքյանից լա՞վ է...

— Ձեռքյանը բանաստեղծական չէ, մայրիկ...

— Կրոպի բանաստեղծական,— բարկանում է վերջապես մայրիկը,— Պեշիկթաշլյան, Պեշկոմբուրյան պակա՞ս բաներ են որ առանց կնշանվան...

Ես լռում եմ և խավարի մեջ ժպտում

— Դե քնենք, քնենք,— հաշտարար տոնով ասում է մայրիկը,— բարի գիշեր...

— Բարի գիշեր, մայրիկ

6. ՏԻԳՐԱՆ ԱՂԱՆ

Մյուս օրը մայրիկի հետ տրամվայ նստեցինք ու բշնցինք դեպի Շենքեան բուլար, այնտեղից էլ վորոնցովյան հրապարակը, ապա՝ Միքայելյան փողոց

Միքայելյան և Կիրիշնայա փողոցների անկյունում բարձրանում է զերմանական նկեղեցին, պարզ ու հասարակ ոճով, մեծ ժամացույցով, շրջապատված ծաղկապարտ բակով: Դեռ չհասած զերմանական նկեղեցուն, կողք-կողքի փայլում են երեք խանութներ, ապակե լայն ցուցափեղկերով և դռներով: Այդ երեք խանութներից մեկը քեռուս՝ Տիգրան ապայի խանութն էր: Ես հիշեցի «Վան-Տոսպ»-ի խմբագրատունը Դարբինյանի հետ ունեցած մեր զրույցը հորս ապանության, քեռուս մասին, և միտս ընկավ ծանր մի զգացումով,—

ամի՞թև, մի՞թև»,— հարցնում էի ինքս ինձ ու չէի կարող հավատալ, որ քնից՝ Տիգրան աղան, որն այնքան հոգատար է նկել մեր, երեք հրամայներիս հանդեպ, կարող էր իր ձեռքը բարձրել հորս սրյան մեջ։

Երբ մենք մտանք խանութը, Տիգրան աղան կանգնած էր կոնակով դեպի խանութի մուտքը և շարում էր ծխախոտի տուփեր դարակների վրա։ Նա մեզ չտեսավ, բայց լսեց մեր ներս մտնելը, առանց դիմավորելու աշխատանքը և առանց նա նայելու։

— Я слушаю,— ասաց նա, ինքնարերով, որ ներս մտնողները հաճախորդներ են։

— Բարևդիմ Տիգրան, զրուցան,— երգից մայրիկը փոխված ձայնով։

Տիգրան աղան արագ նա դարձավ, տեսավ մեզ և ժպտաց դեմքի բոլոր գծերով ու ինձհոնքերով։

— Ա՜ա՜ա՜... Գուր-կի՜ն, Գուր-կի՜ն,— բացականչեց նա՝ գրկելով ու համբուրելով ինձ,— մեծացել է, լավացել է, գեղեցկացել է... խելոկան մարդու շալակի...

Նա նայեցի բեռուս դեմքին. նա շատ լիշ էր փոխվել, շաքարված երեսի մազերի մեջ կարելի էր հաշվել սպիտակածները. շատացել էին ինձհոնքերը, որոնք ավելի աչքի էին ընկնում, երբ նա ժպտում էր։ Նման մարդիկ, որոնք ժպտելիս առանում են ավելի երիտասարդ արտահայտություն, բեռուս, ընդհակառակը, ժպիտը ծերացնում էր նա ուշուշով դիտում էի բեռուս դեմքը, ո՛չ, դա մարդասանի դեմք չէր...

— Դե դնացեք, դնացեք սենյակ,— կարգադրեց նա,— սրիամուս վարեր, ձեզ պատրաստեր, նս առավոտից բան չեմ կերել։

— Ո՞ւր է խանութդ,— հարցրեց մայրիկը։

— Փիշերը տուն չի եկել,— պատասխանեց Տիգրան աղան և մոացրվեց։

Մայրիկը ուզեց մի բան ասել, բայց կարծես ավելորդ համարելով, բարկացած բայլերն ուղղեց դեպի խանութի հետև տանող դուռը, նշան անելով ինձ, որ իրեն հետևեմ։ Խանութի հետևը բեռուս սենյակն էր։

Առաջին բանը, որ աչքս ընկավ, դա մուտքի ձախ կողմում դրված ֆորտեպիանոն էր, կամ, ինչպես վանում սուում էինք, արմոնին։ Ես հիշեցի հայրիկիս արմոնին, որը նրա մահից հետո գնեց Իշխանուհ Օրադի նման հիշեցի հորս, նստած արմոնու առաջ, դույզ ոտները նրա շնչարկի և մատները ստեղների վրա շարժելիս։ Ես երկյուղածությամբ նայեցի քեռուս արմոնու դեմ, ոտներով շարժեցի շնչարկը, և արմոնին սկսեց շնչել, ես սեղմեցի մեջքին ստեղներից մեկը,— «մե՜ե՜»,— ճչաց բարակ և աղաչալոր նոտան, ապա սեղմեցի առաջին ստեղներից մեկը,— «մր՜ոոո» ձայնեց արմոնին խոպոտ ու ապտնալան։

Նրա մոտ Տիգրան աղան և սեղանի վրա դրեց թղթի տոպրակներով բեսիլիանոր, կոնֆետ, եղշիկ ու դարձավ դեպի ինձ, ցույց տալով արմոնին.

— Քեզ համար եմ առել, նվագիր, տեսնեմ Ո՞ր դասարանումն ես...

Ես պատասխանեցի Հետո նա դարձավ մորս.

— Հարկավոր է Գուրգենին պատրաստել Ներսիսյան դպրոցի համար, ես ուսուցիչ կդանեմ...

— Գուրգենի բանաստեղծություն «Վան-Տոսպ»-ի մեջ տալիր ի,— զեկուցեց մայրիկը և սկսեց կարդի բերել քեռուս անկողինը. մահճակալի վրա դրված էր երեք բարձ, երկրորդ բարձի վրա ո՞վ է գնում,— անցավ մոքսվա

— Հա՞,— դարձավ ինձ քեռիս,— Գրիդոր աղան էլ բանաստեղծություններ կգրեր...— Հետո մոտեցավ և ավելացրեց.

— Բանաստեղծություն փոր չի կշտացնի, ջանըմ,— դառնաց նա,— ես գնամ քրտշվեմ, դամ, քեզ խոմնիք,— ու նա դուրս ելավ, ապա ես դարձավ և պատվիրեց,— խանութի դուռը ներսից փակել եմ, երբ մուշտարիները կծեծեն, մի բանաք... մինչև ես դամ...

Քեռիս դուրս եկավ իր անկյալի մյուս մուտքից. ես էլ դուրս եկա նրա հետևից և ինձ գնում գերմանական նկնդեցու բակում. մի ակնոցավոր ծերունի, սև, հնամաշ ցլինդրը գլխին, ցնցուղում էր ծաղիկները։

Մինչ այս, մինչ այն, քեռը պատրաստ էր, մայրիկը սեղան է պատրաստում։ Այդ միջոցին ներս է մտնում մի երի-

տաատրդ կին. նա շեկ մազեր ուներ, դեմքից կաթ ու արյուն էր կաթում, աոամներդ սպիտակափայլ, աչքերը մեծ-մեծ, երկնագույն. «գեղեցկուհի»,— անցավ մտքովս նա բարևեց, մոտեցավ լվացարանին և սկսեց լվացվել: Մայրս չնկատելու ովեց նրա բարևը, չամփեց նրան քննական աչքերով ոտից գլուխ, մոտեցավ նրան և հարցրեց.

— Աղչի, դիշեր դո՞ր իր,— նա նայեց աղջկա ժպտուն ու տարիքոտած դեմքին և կարծես հիշեց, որ նա հայերեն չի հասկանում,— Տի, տի... ճոշ գձե՞...

— Гуляла,— պատասխանեց աղջիկը՝ մոռնալով հայելուն

— Գուլյալ ի՞նչ ի,— գարմալ ինձ մայրիկը

— Ման գալ, գրոսնել,— Թարգմանեցի ես անիույթ

— Քո ումոս ապավեն խորհ գո գուլյալի հետ, աղջի,— տաքացավ մայրիկը,— դիշեր շատ լոս «գուլյա՛լ»... գո «լյա՛լ» ա՛յ, «գուլյա՛լ»,— ձայնը բարձրացրեց մայրիկը խինելով բարձերից մեկին,— այ, «գուլյալ» ինշքան կուզես...

Հանեց Տիգրան ապայի հագը. նա ներս մտավ մաքուր սափրված, անապմուկ հագաբաիներով Տանելով աղջկան՝ նա մոայլեց ու մոնչալ նրան: Մայրիկը մոտեցավ երկար.

— Հագը մի հարամի, հաց կերիք, նոր ինչ կուզես առ...

նա ուշադրության չարժեցրեց մայրիկի վրա

— Возьми твой чемодан и иди гуляй,— *առանձին մեզ խոչ ձայնով ասաց նա*

— Пойду, пойду,— *պատասխանեց աղջիկը,*— только без скандала...

նա մի ծխախոտ վառեց, ապա մարեց այն մոխրամանի մեջ դրված մատներով, կոպացավ, մահճակալի տակից դուրս քաշեց մի փոքրիկ պայուսակ, բացեց, նորից փակեց, վերցրեց պայուսակը և դանդաղ քայլերով քայլեց դեպի ելքը: Նա անապմուկ դուրս եկավ

Ամբողջ նախաճաշի ընթացքում ոչ ոք չխոսեց:

Մայրիկը հավարեց սեղանը: Տիգրան աղան մի ծխախոտ վառեց:

— Խելքդ գլուխդ հավաքիր,— ցած ձայնով արտասանեց

մայրիկը,— 30—35 տարեկան մարդ ես, մի վանեցի ծանրաղնիզ ալիկ պոի, բնականը կտպի, ապրի... էս քաշկինանի՞ համ է,— հարցրեց նա, սեղանի տակից բարձրացնելով մի մեսարան, բաց-կանաչ քաշկինակ

— Վանցային է,— խնդրով ասաց Տիգրան աղան, վերցրեց քաշկինակը և նրա աշքերից, սափրված այտերի վրա գտնվեցին արցունքի կաթիլներ։ Արտասվից և մայրիկը. ես էլ ուզեցի մի նրբու կաթիլ արցունք բափել, բայց որա համար բավարար հիմք չունենալու հետևանքով, նրանցի արմունտ առաջ, շարժեցի ոտներս և սենյակի ամենահեռվի տեղերից մեկը,— «մե՛ ե՛ ա»,— ճչաց արմանին բարով և աղաչավոր

Նրա մոտ քաշկինակ, գեղին կտոռն, աշխույժ բարեկամ, երեի հարգոյ նախաճաշից, նրանց բարեկամ երեսին, մոտ տեղ ուզեց և սկսեց իր կատակին տալ

— Ո՞ւ որտեղ իր, ա՛ պիտ,— դարձավ մայրիկը կատակի հասցեին,— դու չ՞ լ «գուլյայ»...

Տիգրան աղան ժպտաց կտրված ժպտով, ապա կանչեց, մեսրոպ քաշկինակով սրբեց աշքերն ու այտերը և մոտ եկավ։ Նա բացեց լոգոցի դուռը. նրա մոտ մի գեղեցկուհի, Տիգրան աղան ընտանեց նրան ուրախ ժպտով, բավարարեց նրան, վերցրեց փողը, նրանց գրամարկղը, խնդրեր գեղեցկուհին հետացավ, նա նրանց մոտքեց. ինձ թվաց, որ նրանց նա լաց կլինի, բայց այդ միջոցին նրա մոտ նոր հաճախորդներ, և նա նորից ժպտաց ուրախ և հյուրընկալ ժպտով։ Ես ամենը ես գեղեցկ սենյակի լուսաբաց դռնից։

— Երթանք,— ասաց մայրիկը,— վերցնելով իր սև մեսրոպ գլխարկը։

— Ո՞ւր,— հարցրի ես։

— Մանուկ աղին,— պատասխանեց մայրիկը,— Տիգրան աղին տեսանք, հիմա էլ Մանուկ աղին, էսօր մեր գործ աղաների հետ է,— ավելացրեց նա և ժպտաց իր արտասուքյան վրա։

Տիգրան աղային հրաժեշտ տվինք։

— Շուտ-շուտ եկեք,— պատվիրեց նա,— Արշակին որտեղ որ տեսնես, առա՛ջ ինձ մոտ... գրո՛...

— Էս էլ քեզ Արշակ,— ասաց մայրիկը, երբ մենք դուրս էինք եկել խանութից և հասել մի քանի քայլ հեռացել էինք։

Մեզ մոտեցավ յոգն ժպիտով, բարձրահասակ մի երիտասարդ, առավ ինձ թևի տակ, կացավ ու համբուրեց.

— Ինձ կհիշե՞ս, Գուրգեն...

Ես նրան հիշում էի. ինչպե՞ս կարելի էր մոռանալ հնչական այդ անունը Արշակին, քեֆերի հոգին, խնջույքների թամադա, հարսանիքների պատ-րաշխ, պարող, խմող, քեֆչի պատրոն Արշակին, որը դպրից մի տարի առաջ ամուսնացավ Բաբուշենց Սրանուհու՝ մայրիկի մորաքրոջ աղջկա հետ։ Ես հիշում էի, որ մեր տունը նրանց համար ժամադրավայրը էր, հիշում էի նրանց հաճախ «սիրահարված ևն» խորհրդավոր շշուկները, սիրահարվեցին և ամուսնացան. ես էլ այն ժամանակ «սիրահարված էի» նայելու վրա, բայց...ամուսնացա՝ նրանց ամուսնությունից հետո ծայր առան ընտանեկան անհամաձայնություններ։ Սրանուհին անիծում էր իրենց հանդիպման օրը։ Արշակը խմում էր, հաճախ պիջեներ տուն չէր գալիս, վարում էր ցոփ կյանք։ Սրանուհին խանդում էր, լալիս, անիծում, պաշտում, բողոքում... այս սիրահարությունից և ամուսնությունից ես ևիս այն համոզման, որ սիրահարվելը լավ է, իսկ ամուսնանալը՝ վատ։ Արշակի ամուսնությունից գետս հիշում եմ, որ նրա հայրը՝ հաշատուր ապան, Բոզից վանը և գնաց Սամարղ՝ բախտ որոնելու. նրանից մի նամակ սաացվեց միայն և մի լուսանկար։ Նամակ էր նա, երկու ձեռքերը գրած երկու ծնկներին. Իսրայելյան ֆետր գլխին (á la հնչակյան), բեղերը ապշահայաց արած, հայացքը գամած դեպի անորոշ հեռուները

— Արշակ,— ասաց մայրիկը,— Տիգրան քե կոպատ

— Հիմա կբերեմ,— պատասխանեց նա,— Գուրգենին բեր մեր տուն, Սրանուհին տեսնի

— Մենք բամանվելիցինք

— Սա ամաոցին կլուսն է,— բացատրում է մայրիկը հանապարհին,— սա Մերսելյան հիվանդանոցն է, սա վոսպն է...

Դևից գալիս էր մի երիտասարդ, բարձրահասակ կին։ Նրա թևերը մերկ էին, մետաքսե շրջազգեստը պրկել էր նրա բյուրեղե մարմինը, գաղնաձին քամին հպել էր շրջազգեստը նրա կատուցիկ ազդրերին, պարզ ու որոշակի գծերով գծագրելով նրա մարմնի խորհրդավոր ձևերը։ Մի բան սեղմեց սիրտս ցավագին ու դուրեկան իմ ներքին ալեկոծությունը չվրիպեց մայրիկի աչքերից։

— Տղա, ի՞նչ կնայես էդպես լարված-տարված աչքերով,— հարցրեց նա բարկացած ժպիտով, որը միայն նրան էր հատուկ։ Ասա նա ես նայեց, զննեց իմ խռովության առարկան և ասաց, կարծես ինքն իրեն.

— Ձեր սիրտ խորեմ, տղեն ի՞նչ մեղք ունի... էնպես կհագնվեն, որ...

— Մայրիկ,— հարցրի ես,— Գլխդրս աղան Թիֆլիսում եղե՞լ էր

— Իհարկե...— պատասխանեց նա, հետո նայեց ինձ մտահոգ ու խորամանկ...

— Գլխդրս աղան ժուժկալ էր, —ավելացրեց նա սեղեկու տոնով, կարծես թե ես հակառակն էի ասել։ Այն ժամանակ ես արշակի կերպով չգիտեի «ժուժկալ» բառի նշանակությունը, բայց մասամբ հորս նմանվելու, մասամբ էլ այդ բառի նշանակության տուգելու համար, ասացի.

— Ես էլ ժուժկալ եմ... կարծես...

— Կկասկածեմ,— ասաց մայրիկը,— շատ կկասկածեմ... — ու նորից ժպտաց նա բարկացած ժպիտով։

Կյանքը ցույց տվեց, որ մայրիկի կասկածներն անհիմն չէին...

7. ՄԱՆՈՒԿ ԱՂԱՅՆՅ ՏԱՆԸ

Դեռ վանում ես լսել էի, որ մի հրեղբայր ունեմ Թիֆլիսում։ Վանի ընդհանուր գաղթից տարիներ առաջ նա, հակառակ հորս և Պանտիշի ջանքերին և ցանկության, թողեց ուսումը, իրեն միայն հայտնի միջոցներով մի քիչ փող ձեռք բերեց, գնեց մի քանի կտոր անուշահոտ օճառ, ժապավեն-

ներ, գույնզգույն խելներ ու զանազան չափի ասեղներ, կոճակներ և լծակ, ուլունքներ, գրշածայրեր ու նման մանրուք, դասավորեց այս ամենը բաց, նկուղած արկղում, արկղը կաշեկապերով կախեց վրից ու դուրս եկավ շրջելու վանի փողոցներում անվարժ, բայց դիլ ձայնով կանչելով. չա՛րչի՛-խուրդա՛, ա-ռե՛ք, չա՛րչի՛-խուրդա՛, ա՛ա՛ա՛ռե՛ք...

Նա աշխատում էր որքան հնարավոր է իր առևտրական արվեստով հանդես գալ հնուվոր խաղամասերում, որպեսզի ավագ եղբայրները, երկուսն էլ ուսուցիչ, չիմանան իր առևտրական զրծունեության մասին, բայց, ավաղ, մի շաբաթից ավելի չի տևում նրա կոնսպիրացիան... զանազան աղբյուրներից անկեսկյաններ են հասնում սուն.

— Մանուկը «չարչի-խուրդա» կծախի...

Բարձրանում է ազմուկ, իրարանցում. երեկոյան, ընթրիքին Մանուկը բացակայում է, իմանալով, որ գործը բացել է Գրիգոր աղան և Պանոսիչը չեն քնում. Համրերկյամբ սպասում են նրա տան դարան, ծխում են, չեն խոսում, և միայն մերթ ընդ մերթ յուն ձայնով գոռում.

— Ի՞նչ խայտառակություն... Ի՞նչ խայտառակություն...

— Չարչի խուրդա՛... հը՛հ...

— Ընտանեկան խայտառակություն...

— Տոհմային խայտառակություն...

վերջապես երևում է Մանուկն ահել գոռոցոտի տակ, մինչև ականջները ծածկ կա-կարմիր

խոսակցությունը կարճ է լինում, բայց ազգս Հայրս մի ծանր ապտակ է հասցնում Մանուկի երեսին, «չարչի խուրդայա ազգ հարստությունն արկղով միասին վռնդան է նետվում... Նակ Մանուկը... Մանուկն անհետանում է...

Մի քանի օրից լուրեր են հասնում, որ նրան տեսնողներ են եղել Իռեսաստանի ճանապարհին, Ռուսաստան գնացող բարեկամներին հետ, բան ոմանց՝ ձիով, ուրիշների պնդումով՝ ոտով, բան երրորդ վերսիայի՝ իշով... Ձիով, ոտով, թե իշով, կարևոր չի, կարևորն այն է, որ Մանուկը հաջողությամբ Թիֆլիս է հասնում և սկսում կերպով գործակում է իր սիրած գործով՝ առևտրով նա ոչ մի նամակ չի գրում իր ավագ եղբայրներին, չնայած, որ ոչ միայն նրա հոգում չկար չարու-

Թյան զգացումի նշույլ անգամ նրանց հանդեպ, այլև Թիֆլիս նկող գնայող վանեցի վաճառականների միջոցով միշտ հետաքրքրվում ու տեղեկանում էր նրանց գործերի մասին: Նույն ճանապարհով էլ Վանում տեղեկություններ էին գալիս նրա մասին:

— Մանուկ խանութ է բացել Թիֆլիսի մեջ...

— Մանուկ մի գործ կանի...

— Մանուկ ամուսնացել է...

Հորս նկերական մահվան լուրը ցնցող տպավորություն է թողնում Մանուկի վրա: Երկու օր ու գիշեր նա պառկում է խմելով, լալիս է ու առանձնը կրճտացնում:

— Վախի՛, ես քո ուլած ապտակին մեռնեմ, զա՛րկ, մե՛կ էլ զարկ:

Երբ վանի գալիի առաջին ալիքները նավկատի ոռներին հասան, Մանուկը ուրախացավ:

— Հոլո՛ս,— ասաց նա եղբոյան խանութից ուն գալով,— վանի ժողովուրդը դես է փախչում... մերոնք գալիս են...

Երբ ես և մայրիկը վտռնցուկյան հրապարակին անցնելով մոտեցանք մի խանութի, խանութի դռների մոտ մեզ հանդիպեց բժշկական սպիտակ խալաթով, լայն, սպիտակ ճակատով, սև մաղերով, սև-սրած բնգերով և սև, խոշոր աչքերով մի մարդ: Ես հասկացա, որ դա Մանուկ աղան էր: Նա դրկից ինձ ու հայերեն արցունքոտ աչքերով: Մի ինչ-որ հարազատ և մոտիկ բան կար նրա դիմագծերում, կարծես թե ես նրան տեսել էի հազար տարի առաջ և երեկ... ես աղոտ կերպով հիշեցի հորս մշուշոտ դիմագծերը, ապա նրա լուսանկարը: Մանուկ աղան հիշեցնում էր հորս:

Ես շուրջս նայեցի: Հիշեցի Վանի նեղ, կեղտոտ մայթաճաոտներն իրենց ճանճերի ամպերով, կեղտոտ գոգնոցով մսավաճառներին, ժանգոտած կշեռքները... այստեղ ամեն ինչ մաքուր էր ու վայելուչ և թեև չկային փայլուն կեռիկներից կախված ոչխարների ու խոզերի դեր, ճարպոտ մարմիններ, կարելի էր մտածել, որ գտնվում ես հռաճելի մի սենյակում, որտեղից նոր դուրս են հանել կահ-կարասիները:

— Գնացեք տուն, Անուշ,— կարգադրեց Մանուկ աղան

կամ, ինչպես ես սկսեցի նրան անվանել, Հորեբայրը,— Հոթոսին ասա՛, թող ջայդ անի, էսօր շաբաթ է, հյուրեր են գալու...

Մինչ հրաժեշտ ասվինք Հորեբային և ուղևորվեցինք դեպի նրանց տունը Ճանապարհին ինձ մայրիկս պատմեց նրանց՝ Հորեբայի և Հոխիսիմի, կամ ինչպես ինքն էր անվանում՝ Հոթոսի, կամ ինչպես ես սկսեցի անվանել՝ Հոսի քույրիկի ամուսնության մանրամասնությունները։

Շնորհիվ իր աշխատասիրության, կարճ ժամանակում Հորեբայրը ձեռք է բերում ծանոթների լայն շրջանակ, մասնավորապես հայերի մեջ։ Իր ուրախ բնավորության և հաճելի արտաքինի շնորհիվ, նա վայելում է նոր ծանոթների համակրանքն ու բարեհաճությունը։ Շուտով երևում են «լոթի տիպը», իսկ թաս բոնողներ Հորեբայրը կարճ միջոցում առաջ է գնում երկար թռլներով։ Նա սիրում էր իր աշխատանքն և չանր չի խնայում գնելու գործն իր պատշաճ բարձրության վրա պահպանելու, սակայն ամուսնե բնական խնդրում, նա գնում, մի՝ որ հաճախորդի հետ ինչպես կարելի է վարվել, և մի անգամ նրանից մեզ գնորդ գտնում է նրա մշտական հաճախորդը։ Նա ընդարձակում է իր վաճառքի բազմությունը և վերածում է այն վաճառախանութի։ Սակ գոգ է մասնակում, բայց վաստակած փողը ոչ որ գալիս, այնպես էլ գնում է, ամեն շատ գալիս է կոպեկներով, գնում է ուրիշներով։ Հորեբայրն սկսում է մարել ամուսի երիտասարդության կյանքը։ Նրա արհեստակիցներն ու գործակիցները նրան վերցնում են իրենց «լոթի-խալաստայների գալատայա կամպանիա»-ում, և նա դառնում է Օրթաճալի բաղերի ամոան բացօթյա, իսկ ձմռան փակ ռեստորանների լրիտա հաճախորդ, վանի փակ, իր ավազ եղբայրների վերահսկողության ընթացքը նրա անդուլ ու անհետաքրքիր կյանքից հետո, նրան շատ, շատ է դուր գալիս այս բազմազան, անկախ և լուսե կյանքը։ Նա աշխատում էր ամբողջ շաբաթը, սիրաշահում, գրավում, ժպտում ու ընդառաջում էր իր հաճախորդների ցանկություններին, աշխատած փողը խնամքով պահպանում ու պահում էր շալվարի հետևի գրպանում, իսկ շաբաթ օրերը, ճաշից հետո, փակում էր խանութը, կարգով

գնում էր Շեյխան բազարի թուրքական թաղիքները, խնամքով լողանում, հագնում իր ընտիր կոստյումը, փողկապվորվում ու գլուխը ծածկում շլյապով, սափրվում ու օծվում օ-դե-կոլոնով ու կարծում սկսում դեպի Օրթաճալա պատմում են, որ այդ օրերին նրան տեսնողների մոտով անգամ չէր կարող անցնել, որ նա ոչ այլ ոք է, քան վանեցի մասվաճառ, ավելի շուտ նրան կարելի էր համարել Թամամշյանի թոռը, կամ, առնվազն, Արամյանցի եզանը, եթե ոչ Մելիք-Ազարյանի անեծքին:

Այսպես էր հորեղբայրը: Շաբաթ օր իրիկվանից մինչև կիրակի լույս երկուշաբթի լուսադեմը խմում ու զվարճանում էր նա լոթի տղերանց հետ:

Սկ ահա նման քեֆերից մեկում, հորեղբոր թասընկերներից մեկը՝ ախալցխացի Գարեգինը, նկատողներին վրդովելու համար գրպանից հանել դրամապանակը. դրամապանակից սեղանի վրա ընկավ մի լուսանկար: Հորեղբայրը, որ նստել էր նրա կողքին, բարձրացրեց լուսանկարը և նայեց. մի րոպե նա դադարեց լսել երաժշտությունը, նա դադրեց տեսնել սեղանակիցների դեմքերը, բացօթյա ռեստորան-պարտեզում տարածված խորովածի սուր բուրմունքը կարծես անհետացավ նրա համար և նա, լուսնի ու էլեկտրականության լույսի ոսկեճաշուշում, տեսավ մի աղջիկ դեմք, կուսական, համեստ դիմագծերով, համեստ, բայց ժպտացող մի դույգ մոգական, սև աչքերով ու հոնքերով...

Երբ հորեղբայրը կտրվեց վերջապես նկարից իր վառված աչքերով, նա տեսավ միայն իր կողքին ժպտալ իրեն նայող Գարեգինի դեմքը:

— Հըմ, մեր տղա, հավանեցի՞ր,— հարցրեց Գարեգինը:

Հորեղբայրը խոսք չգտավ հաղորդելու համար իր հիացմունքը. նա բռունցքը խփեց սեղանին և դառաց նվագողներին.

— Մի «Համեստ աղջիկ»...

...Շատ քեֆեր են տեսել Օրթաճալայի բաղերը, տեսակ-տեսակ խմողներ ու քեֆչիներ, բայց իմ հորեղբոր նման քեֆչի ու խմող Օրթաճալան չի տեսել...

— Վատ բան չմտածես, եղբայր Մանուկ,— ասել է Գաբրիելը,— մեծ եղբորս փոքր աղջիկն է... երեկ տատացա։

— Ո՞րտեղից,— հարցրեց հորեղբայրը։

— Ախալցխայից։

— Չէ, չէ՞,— թիֆլիսցավարի հանաքել է հորեղբայրը։

— Մա՛շ-մա՛շ,— նույնպես պատասխանել է Գաբրիելը։ Այդ միջոցին ռեստորան-պարտեզի վրա տարածվել են հայկական հին մեղեդու պարզ ու սրտառուչ հոսքերը.

Համեստ աղջիկ, ինձ մի տանջի չարաչար...»

— «Չարաչար, հոգի ջան, չարաչար»...— մռմռում է հորեղբայրը, անհետաքրքիր կերպով դուրս գալով պարտեզռեստրանից և կարք նստելուն Կարգի ազգակի միջից լսում է դեռ երգել Աղաֆոնի երգը.

«Ես հայ, դուն հայ,
Մեր մեջ չկա խորթություն...»

— «Խորթություն, անուշ ջան, խորթո՛ւթյո՛ւն»...— մրմռում է հորեղբայրը ու հարցնում ինքն իրեն.

— Ո՞ւր եմ գնում...

...Երբ հորեղբայրն Ախալցխա է հասնում, նրա միտքը դուրս է թռչում գինու ամենամերձին մշուշն անցած, ու նա այս անգամ հարց է տալիս ինքն իրեն.

— Էս ո՞ւր ենք, ինչո՞ւ ենք...

Բայց երբ, թողնելով կարքը, նա մտնում է առաջին պատահած ճաշարանը, մի քիչ ամրապնդվելու, և երբ խոտորածի առաջին կտորները դողում է առաջ, մուգ մեկ հիշողության գույնի գինով, նրա ուղեղը լուսավորվում է արևից նեղված վարպետական ամպերի նման, ու նա հասկանում է, թե ո՞ւր և ինչո՞ւ համար է եկել... Վարպետի ամպերի մշուշում, նրա երևակայության աչքերի առաջ, կանգնում է անաչա գեղեցկուհու պատկերը և այն միտքը, որ նա գտնվում է այն քաղաքում որ քաղաքում գտնվում է այդ չքնաղ «համեստ աղջիկը», հայ աղջկա վառվռուն դիմագծերով, նրա սիրտը լցվում է ուրախ անձկությամբ... Բայց ինչպե՞ս գտնել նրան։ Նրա ուղեղը գործում է արագ և անլրեալ, գինու ազդեցության տակ... Գաբրիելի ազգանունը Մալխասյան է,

Հետևարար պետք է դոնել Մալխասյաննց տունը, Գարեգինի եղբայրը խանութպան է, հետևարար պետք է շուկայում նրան փնտրել Նա արագությամբ խմում է վերջին բաժակ գինին, վճարում և դուրս է գալիս ճաշարանից։ Նրան դիմավորում է Ախալցխայի շուկան մրգեղեններն և հատկապես խնձորի ախորժելի բուրմունքով Նա չարց ու փորձով գրանում է Մալխասյանի խանութը և քիչ հետո կանգնած ուսումնասիրում խանութպանի դիմագծերը. նա՛ է, Գարեգինի մեծ եղբայրը, նրա նման թուխ-թուխ, կլոր երեսով և հայկական, իշխող քթով

Սկզբում նա որոշում է սպասել մինչև խանութինի փակումը, բայց հետո չի համբերում ու ներս է մտնում Մալխասյանի խանութը

— Բարի օր...

— Հաջար բարի

— Ես Թիֆլիսից եմ գալիս...

— Իմ աչքի վրա

— Գարեգինի մոտից...

— Գիտես վրա տնդ ունես... Նաոի, գառ չան, հիմա խանութը փակենք, գնանք տուն... Նաոի, բալա չան...

«Գառ չան, բալա չան»,— թեև արաբի և լայնուս հոյները քիչ են տպում այս ածականները, բայց այդ նրան դուր է գալիս

— Է՞...— հարցնում է Մալխասյանը,— Գարեգինն ինչպե՞ս է...

— Ողջ և առողջ...

— Գործով հաջողա՞վ...

— Գործով հաջողակ...

— Աղեկ... աղեկ... է՞, ի՞նչ գործով նկատք մեր քաղաքը... հարցնելն ավելորդ չինի...

Հոյեղբայրը հանկարծակիի է գալիս նա այդ հարցի մասին չէր մտածել...

— Ապրանք... մի քիչ բան-ման բերի, ծախեցի

— Աղեկ, աղեկ... ի՞նչ ապրանք...

Հոյեղբայրը նայեց խանութների դարակների վրա դարսված գործվածքներին, բրդեղեններին, չթելին, մետաքսե-

ղեններին, ապա հիշեց շուկան և անմտության մոմով պատասխանեց.

— Խնձոր...

— Խնձո՞ր...— հարցրեց Մալխասյանը և ժպտաց։

«Չհավատաց,— մտածեց Հրեղերդյանը,— բայց ի՞նչ կա չհավատալու...»

— Խնձո՛ր,— կրկնեց նա և պարզեց «խան-կեֆի» ծխախոտի տուփը Մալխասյանին։

— Ինչևէ,— նրից ժպտաց Մալխասյանը,— հազար բարով ես ևկել...

Մնացին։

Ներս մտավ միջահասակ մի մարդ։

— Բարիկուն, Հասիկի աղա...

— Հազար բարով, Սերոպի աղա...

— Մի վնց արշին աբրշում...

— Ի՞նչ գույնի։

— Ինչ գույնի... չեմ գիտեր ու...

— Վարդանուշի՞ համար...

— Վարդանուշի, նվարդի...

— Թող գան իրենք ընտրեն...

— Թող գան, իրենք ընտրեն,— ուրախացավ Սերոպ աղան։

— Երեսասարդ պարոնը մեր քաղաքեն չէ,— ավելացրեց նա՝ սիրալիր ժպիտով նայելով Հրեղերդը։

— Թիֆլիսեն նկած է, Գարնգինի բնկերներեն... նկած է խնձոր տանելու...

— Աղեկ, աղեկ.— հավանություն տվեց Սերոպ աղան— Այս տարի Ախալցխայի խնձորն շատ է... կտանեն ու կտաննն, վնաչ չկա... Թիֆլիս, Ալեքսանդրապոլ...

Հրեղերդը հասկացավ իր կատարած սխալը նա մրցում շնորհակալության հայտնեց Հարկի տղային, որ տպեց իր սխալը։

— Է՛, մնալ՝ նկեք,— ասաց Սերոպ աղան խանութից դուրս գալով։

— Է՛, շանկինը խանութի ու տուն նրթանք,— ասաց Հարկի աղան՝ ձեռքի թղթերն գրպանը նետելով։

նանութը վտանգելու ընթացքում հորեղբայրը ասաց.

— Անպակ աղան տաճկահայ կերևի...

— Ինչի՞ց կերևի...

— խոսակցությունից

— Իսկ ում խոսակցությունից... կերևի՞...

— Կերևի...

— Օղուլ, Ախալքալաքի, Ախալցխայի բոլոր հայերը Տաճկահայաստանից եկած են Հայոց էրզրումեն եկեր էն

— Իսկ նա՝ վանեն,— ուրախացավ հորեղբայրը

— Ակեվ, ապեվ, հայրենակիցներ ենք, ըսել էն է, ամուսնացա՞ծ նա

— Ոչ

— Պետք է ամուսնանալ,— խորհուրդ տվեց Հարեթ աղան

— Իշուն աոոր համար եկած եմ,— հարիլ չդուաց հորեղբայրը, բայց իրեն զսպեց

— Ես ալ մեր տունը,— ասաց Հարեթ աղան, կանգնելով երկհարկանի, սև, քարաշեն տան փակ դռների մոտ նա պրպանից հանեց մեծ բանալին և բացեց դուռը

Հոսի բույրիկը՝ Հարեթ աղա Մալխասյանի աղջիկը, դպրոցած է եղել Ձեռագործոցում, իսկ մայրը խոհանոցում՝ ընթրիքի պատրաստությամբ, երբ սենյակի դուռը բացվել է և նրա է մոտ Հարեթ աղան մի վայելուչ հագնված և վայելչակազմ երիտասարդի ուղեկցությամբ

— Մանոթացնք, աղջիկս է,— ասել է Հարեթ աղան,— Հոխիսիկ, հորեղբայրդ Գարեգինի ընկերն է, Թիֆլիսից

Հորեղբայրը վերցրել է իր ձեռքի մեջ, ոչ միայն լսանկարում, այլև կյանքում զեղեցիկ, «հասկաո աղջիկ» տերմինի ձևերը և երբ պրոպանից եկած էր «Մանուկ Ածեմյան», նրա ձայնը դողացել էր նրա է մոտ Հոխիսիկի մայրը՝ Թադուհին, և նույն կարդով ծանոթացել է հորեղբոր հետ— «Զոքանչա»,— անցել է հորեղբոր մտքով

Նստել են ընթրիքի: Սեփական այգու ընտիր գինին և Թադուհու վարպետ մատներով պատրաստված տոլման ու բավարարել հորեղբոր հանում են մինչև յոթերորդ ճլինքը

— Ինչ գործով եմ եկե՞լ,— ասում է հրեղբայրը,— եկել եմ ձեզ տեսնելու և բարեմաղթելու համար, հետո էլ...

— Հետո էլ Թիֆլիս խնձոր տանելու համար,— լրացրել է Հարեթ աղան

— Հա, բայց ուրիշ խնձոր,— ասել է հրեղբայրը

— Ի՞նչ խնձոր,— հետաքրքրվել է Հովիսաննն,— պարոն Սճեմյան, ի՞նչ խնձոր

— Անմահական խնձոր,— պատասխանել է հրեղբայրը

— Այդ տրտի խնձորը հնքիսթնելու մեջ լրնաս ճարել,— ժիծաղել է Հարեթ աղան

— Ես իրականության մեջ գտա, Հարեթ աղա,— ասել է հրեղբայրս և նայել է Հովիսաննի աչքերին։ Հովիսաննն խուսափել է այդ հայացքից և թեյ պատրաստելու պատրվակով ճաշասենյակից դուրս է նետվել

Երբ հրեղբայրը Թիֆլիս է հասնում, ընկերները նրան դիմավորում են ոգևորվել, հարց ու փորձել, հանդիմանանքով

— Մանահնա վանք ուխտի էի գնացել,— պատասխանում է նա բոլորին և միայն Գարեգինին «Վիմպատխա» պատմա-ռեստրանում ամենայն մանրամասնությամբ պատմում է իր արկածների մասին։ Գարեգինը սկզբում չի հավատում հրեղբոր պատմածներին, բայց երբ նա նկարագրում է Հարեթ աղային, նրա խանութը, տունը, թագուհուն, նրա տղաներն ու թոռնիկները, Հովիսաննին, նրա «Մայր Հայաստան» երգը և մանավանդ խնձորի պատմությունը, Գարեգինի համար կասկած չի մնում, որ այդ ամենը ճիշտ է, և որ Սճեմյան Մանուկը իսկապես սիրահարված է իր եղբոր աղջկա՝ Հովիսաննի Մալխասյանին, սիրուն և գովական Հովիսաննին։

Երբ տղաների վրա հայտնվում է շորորդ կվարթ կախեթյան գինին, հրեղբայրը լալիս է երեխայի նման, փաթաթվում Գարեգինի վզով, համբուրում և խնդրում է նրա օգնությունը։ Գարեգինը խոստանում է օգնել, որպեսզի հրեղբայրը հասնի իր նպատակին, և խմում են «նպաստակի» կենացը։ Հրեղբայրը հայտնում է, որ նոր իրեն հայտնի դար-

ձավ կյանքի խմաստը, և նրանք խոսում են «կյանքի խոսաստ» կնոջը. հրեղեն պնդում է, որ աշխարհում ամեն ինչ անցողական է, մշտացման և անհետացման ենթակա, որ սերն է միայն անմահ, և նրանք հոտնկայս. Բևանցուկ խոսում են «սիրո անմահության» կնոջը. առանձնով փշրում են բաժակները և պահանջում նոր բաժակներ...

— Դու էսօրվանից Մալխասյանի փեսան ես,— գոռում է Գարեգինը,— Օրիաձայի քնքերին վե՛րջ...

— Վերջին անգամ գնանք «նաղ Կուրոյ»,— խնդրում է հրեղենը,— Գարեգին, գնաց վայե, վերջի՛ն անգամ...

— Վերջին անգա՞մ...

— Վերջին անգամ,

Նրանք վճարում են, մեկը-մյուսից բռնելով ներքնահարկից բարձրանում են գետի մոտը, ապա նավում առաջին պատահած կառքը.

— «նաղ Կուրոյ»...

— Հայոց աղջիկնե՛ե՛ր, ձեր դոգուն մատա՛ց...»,— երգում է ճանապարհին հրեղենը, դրկելով Գարեգինին:

— «Երբ միտս եք գալիս, ասում եմ ես ա՛ա՛ա՛խ...»,— շարունակում է Գարեգինը, ու մի րոպե երկուսն էլ լռում են:

Կառքը անցնում է Վրոնցովյան կամուրջը և կանգ առնում «նաղ Կուրոյ» ռեստորանի մոտ: Բարեկամները վճարում ու իջնում են կառքից:

Բոլորով ռեստորանի գլխավոր մուտքը, նրանք մտնում են նեղ մի նրբանցք և ծեծում ապակեպատ մուտքի դուռը: Դուռը բացում է կամրադեմ, կլոր երեսներով, սպիտակ խալաթով մի մարդ, ըստ երևույթին ռեստորանի մատուցողը:

— Համեցեք, ձեզ մատաղ, համեցեք,— հրավիրում է հաստ մարդը՝ մի կողմ քաշվելով և ճանապարհ տալով հաճախորդներին:

— Վարշամ, ազատ կարինեա կա՞,— հարցնում է հրեղենը:

— Կա՛, մատաղ, կա՛, որքան կաբինկան ազատ է:

Նրանք մտնում են էլեկտրական լույսով լուսավորված միջանցքը, որի մի կողմի վրա տեղավորված են «նաղ Կուրոյ»

ռեստորանի առանձնասենյակները, որոնց պատուհանները նայում են Կուր գետի վրա։

Բարեկամները գրավում են երրորդ առանձնասենյակը և կանչում Վարշամին։

— Ընթրիք չորս հոգու համար...

— Աչքիս վրա...

— Ու մեկ էլ ֆայտոնով մարդ ուղարկի Անյայի հետևից... ասա՝ երկու հոգով։

— Աչքիս վրա...

Երբ առավոտյան հյուրերը գարթնում է, իրեն գտնում է Վորոնցովյան կամուրջից ոչ հեռու, «Ֆրանսիա» հյուրանոցի համարներից մեկում։

— Վոնց եմ ընկել էստե՞ղ,— հարցնում է ինքն իրեն հյուրերը, աշխատում է հիշել, բայց չի կարողանում։ Ուղեղում վատ կերպով պատկերանում է մի մոմենտ. նկուճ շրթունքներով, սև աչքերով շեկ մի կին (Ա՛նյան, Ա՛նյան... հիշում է հյուրերը) նստել նրա ծնկներին և բերել նախ ականջնիկը, ապա բիլը, ապա բնկերը Միքո արտասահմանյան այս նորը ձեր դեռ շեկավ հյուրերը, նա հնազանդ հարբած կնոջը և բացականչեց.

— Հապար ձեզպեսներ չեմ տեսել Հոլոսի մասի նզուզի հետ... Գարեգին, պնանք Ախալցխա...

Իսկ Գարեգինը պառկած էր բազմոցին, նրա կոպերին նստած էր պնչուհի Հյալոն, շոյում էր նրա բուկ կուրծքը և ասում.

— Գարեգին քանկագին, սուիին սին, որ ինձ բոլշ էյուբլյու, ես քեզ բոլշ էյուբլյու...

Ուրիշ ոչինչ չի հիշում հյուրերը։

Ուղեղի քանդր մասախուղից դուրս է ասնում Ֆոքստերիերի պատկերը, նա նայում է նրան Ֆանտաստական բերան ու կարծես ասում՝ ամոթ, ամոթ...

— Ամոթ և խայտառակություն,— մտածում է հյուրերը և վեր է կենում քնից էր շորերով և կոշիկներով. սասանվելուս նա սառչում է դրամատունքի մոտ։ Մոխրագույն գազի քանակը սկսել է վերադառնալ նրա տրամաբանական Գլուխը, կարծես, լցված ծանր սրճիով, դադարում է, տեղում

Նա լվացվում է, հայելու օգնությամբ կարգի է բերում իրեն և հյուրանոցի սանդուղքով սահում ներքև— «վճարել ե՞մ թե ոչ»— մտածում է նաև Սանդուղքի տակ, հյուրանոցի մուտքի մոտ, պրասեզանի առաջ նստած է հյուրանոցատերը, Սուլիկո Քուչիշվիլին նա մի ձևորով, թաշկինակով շփում է հոածալ ծոծրակն ու վիզը, իսկ մյուս ձևորով շախատում հաշվեհամարիչը նա բնդունում է հրեղերտ բարև լույսը և շարունակում իր աշխատանքը:— «վճարել նմա»— վճռում է, հրեղրայրը Ապա տուն է դնում, հագնում իր աշխատանքի շորերը, պատահական մի գրքանում երկու բաժակ օղով և մի քիչ վարունգով շիտրացնում խումարտային պլատցարը և առույգ տրամադրությամբ խանութը բացում։

...Այս և հետագա մանրամասնությունները ես լսել եմ հայրիկից, Հոնի բուլրիկից, հրեղրայրը պատմից զանազան դրվագներ իր քիմիական կյանքից և այն մասին, թե ինչպես վերջապես վանքի նկեղեցում Հոնի բուլրիկի հետ արտասանեցին «Մեծ այո»-ն։

— Էս՝ Չերքեզկայա փողոցն է,— հրեղրայրից մայրիկը,— էս էլ Մանուկ աղնց տուն...

Մենք մտանք ընդարձակ մի բակ՝ երեք կողմից շրջապատված պատշգամբներով։ Դա մի երեքհարկանի տուն էր, բազմաթիվ բնակարաններով. բակում և պատշգամբներում վազվզում էին երեխաներ, այստեղ կարելի էր լսել հայերեն, վրացերեն, ռուսերեն լեզուներով կանչ ու բացականչություններ։ Մենք թեքվեցինք դեպի աջ և բարձրացանք երկրորդ հարկ։ Բացվեց ապակեպատ մի դուռ, այնտեղից դուրս վազեց մի երիտասարդ կին, ավելի շուտ աղջիկ, և մի րոպե հետո ես ինձ զգացի Հոնի բուլրիկի գրկում։ Նա համբուրեց ինձ ջերմ, հարազատի համբույրներով, գուլեց, սաներց մազերս իր ճաշակով և մայրիկի հետ նեռվից խոհանոց։ Սկսվ հրեղրայրն իր ընկերներով, գնգացին բաժակները և շշերը...

Այսպես ամեն շաբաթ և կիրակի օրերը Հրեղրայրը գվարճանում է...

8. «ԱՐՎԱՄՏԱՉԱՅ ԽՈՐՀՈՒՐԴ»

Երկուշաբթի առավոտյան մայրիկն անձամբ արթնեց իմ տուայնում, բացատրեց Հովհաննյան դպրոցի ճանապարհը, ուր և տեղավորված էր Արևմտահայ խորհուրդը, պատվիրեց խոսիլ, որ աշխատանք գտան կարելի է խուսափել վանեցիական բարբառից, համբուրեց ու մինչև տրամվայի կանգառն ինձ ճանապարհ դրեց։ Ես հեշտությամբ գտա Հովհաննյան դպրոցը, կարդացի մի դռան վրա «Արևմտահայ խորհուրդ», անդուլքով վեր բարձրացա և ծնծեղի առաջին պատահած դուռը— Մանք,— լսեցի ներսից։ Ես ներս մտա։ Դա մի ընդարձակ անկյուն էր, որի միակ կահավորանքը կազմում էին երկու գրասեղան և բազմաթիվ աթոռներ։ Միջահասակ մի մարդ կանգնած էր դիմացի գրասեղանի մոտ, ձևրին յայն բացված «Մշակ» թերթը, որը ծածկել էր նրա դեմքը։

Ես կանգնեցի դռնեքի մոտ, նա շարունակեց իր ընթերցումը, միշտ ծածկված դեմքով. իմ ուշադրությունը գրավեցին նրա նորը, բարակ մատները, որոնցով նա բռնել էր թերթը։ Հանկարծակի շարժումով նա թերթը վար իջեցրեց, և ես տեսա խիստ դիմագծերով, մաքուր սափրված և մեծ ճաշակով հագնված մի ջենտլմեն (այո՛, այո՛, ջենտլմեն), սուր քթիտակ եռանկյունի, սև բնիկներով նա թուխ դեմք ուներ, սև, դեպի վեր սանրված մազեր, սև աչքեր, ժակետ և, ինչպես ինձ թվաց, շատ հայացքներ ևդ հայացքով էլ նա նայեց ինձ վրա։

— Ի՞նչ եք ցանկանում, երիտասարդ... կամ գրեթե երիտասարդ,— ու նրա եռանկյունի բնիկների վրայով կայծակի արագությամբ երեսց ու անհետացավ մի տխուր հիշեցում մի բան։

— Ես... պարոն Հովհաննես Հակոբյանին...

— Ա՛, եռանկյո՛ւն,— նա նայեց դատարկ գրասեղանին և ակնթարթում,— նա հիմա կգա։

Արագ, ցատկոտ քայլերով մոտեցավ իր բազկաթոռին, մի քիչ ևս քաշեց ու նստեց։ Ապա ծալեց «Մշակ»-ը, դրեց մի կողմ ու վերցրեց մի ուրիշ թերթ— «Վան-Տոսպ», իմ սիրտն

ականց տագնապահար բարախել։ Այնտեղ պետք է որ տրված լինեին իմ երկու բանաստեղծությունները։

Նա ականց թերթել և կարդալ, կարդալ և թերթել երկու անգամ նա ժպտաց իր կայծակի ժպիտով, հետո մռայլվեց, նորից թերթեց, նորից մռայլվեց, կարծես բարկացավ... Ես ուշադրությամբ հետևում էի նրա դեմքի արտահայտությանը. ես ամեն ինչ կուզի, միայն թե տեսնեի, դեմքի ի՞նչ արտահայտությամբ նա կարդում է իմ բանաստեղծությունները... Բայց այդ անհնարին էր, գրասենյակը հետու էր ինձանից։

Դռների մեջ երևաց պարոն Հովհաննես Հակոբյանը, ոգեվոնից «բարի լույսով» և դարձավ ինձ.

— Ես քեզի պետ եկել Վապաանի, Գուրգին... լավ որ եկար։ Հիմա քեզի բացատրեմ ընելիքդ։ Պարոն Մատենճյան, ահա իմ երկրի ընկերներից մեկի, ուրախության մահով մահացած Ամեմյան Գրիգորի որդին է, սկսնակ բանաստեղծ Գուրգեն Մահարին։

Մատենճյանը նայեց ինձ իր շոր ու չար հայացքով և նորից վերցրեց «Վան-Տոսպ» թերթը, շուռ տվեց մի քանի էջ և սկսեց կարդալ, մեջընդմեջ նայելով ինձ վրա։ Կասկած չկար, որ նա կարդում էր իմ բանաստեղծությունները։ Նորից ինձ ծանոթ կայծակ-ժպիտը երևաց նրա շրթունքների վրա և անհետացավ։

Ճաշի բաժանումը վերջացավ։ Բակը դատարկվեց ու պատրաստվում եմ հրաժեշտ տալ խոհարարին. նա ոչ մի տարեկանից չվերցնող տոնով ասում է.

— Միասին կճաշենք, հետո՝ դասիդանիչ...

Նա սեղանի վրա դնում է սպիտակ հաց, փոքր օջախի վրա եռացող փոքր կաթսայից լցնում է երկու պնակ կերակուր, դնում է երկու դդալ և հրավիրում ինձ.

— Պաժալստա...

Ճաշն ինձ դուր եկավ։ Պատրաստված էր սուր համեմունքով և խոհարարական արվեստի նրբություններով Օրկորդը, մի տեսակ կարկա, վերադանցից առաջինին ես դրվեցի իմ սեղանակցի խոհարարական հմտությունը

Նա արեց իր հատ բեղերը և ժպտաց ինքնագոհ ժպիտով.

— Սա ինչ է որ... տակ սերև... ես Սեյլանովի պոլկն եմ եղել, վեցը տարի... այ, էն ժամանակ տեսնեիր իմ բյուրները... «Օրիանու» ռեստորանում շեֆ-պոլկ եմ եղել... տասներկու տեսակ կարկա պիտի պատրաստել... բա... հաշվի...,— կարկա ոսրյանի, կարկա աղբիլցոյ, կարկա պաժարսկի, կարկա վարշավսկի, կարկա ֆանտազիա, կարկա ապետիտ, կարկա Պուշկին, կարկա Պրա-Արտեր, կարկա մադրիկա, կարկա Արարատ— էս քեզ տա՞սից կարկա բարի լուս, կարկա շայկա, էս քեզ տասներկո՞ւս... էլ չեմ հաշիվ կարկա կարապետը...

— Էդ ի՞նչ կարապետ է,— հարցրի ես

— Կարապետ էդ ես եմ... էդ կարկաը իմ հոնարն է, ես եմ հնարել...

Ես հրաժեշտ առի վարպետ կարապետին ու քայլերս ուղղեցի դեպի տուն, բայց տրամադրությամբ

Էսպես բանե՞ր, պարոն Գուրգեն

18. ԵՐԵՒՈՒՆ ԵՒ ԳԻՇԵՐԸ

Պարոն Օսիպովի ծառան նոյնպէս ինքնաւորը դրեց սեղանի վրա և հեռացաւ նկատի առնելով պարոն Կարապետեանը, տղուն ու դժգոհ դեմքով ինքնաւորի վրա նա նետեց քուրջին, քշնամական հայացքով մեզանից դրեթէ մեկի էր Հաց, պանիր, շարաւաման, մի քանի կտոր շարաւոզ... պարոն Օսիպովը, լսած երեսփոխին, հետաքրքիր հայ ուսանողի իր դերը վերջացած համարեց և դադարեցրեց իր շռայլ հետաքրքրութիւնը։

Տիկին Նոյեմզարն սկսեց քիչ լացնել՝ աչքը չհեռացնելով ամուսնուց։ Պարոն Կարապետեանը աշխատում էր խուսափել նրա հայացքից։ Բայց ահա, պարոն Կարապետեանը դարձավ ինձ.

— Ի՞նչպես է աշխատանքդ, Գուրգեն...

— Ո՞ր աշխատանքը,— հարցրի ես։

— Պարոն Հակոբեանի հանձնարարած աշխատանքը։

Բոլորը զարմացած նայեցին ինձ։ Ոչ ոք չգիտեր իմ վարձատրութեան և նոր նշանակման մասին։

— Լաւ աշխատանք է։

— Դու պարոն Օսիպովին հայտնեցի՞ր...

— Ո՛չ։

— Պետք էր հայտնել։

— Ձեր աշխատանքն ի՞նչ է,— դարձաւ ես Կարապետեանին ու Սոսաննին նրանք անուշադիր, ոչինչ չասող հայացքով նայեցին հորը։

— Գործակատարութիւն, պարզ չէ՞ միթե,— տրտմածոյն տիկին Նոյեմզարը։ Պարոն Կարապետեանը շտկեց ակնոցը։

— Դուն քո մասին պատմե, Արեւմտահայ խորհրդի պարոն վարչութեան անդամ։ Գոնէ թեզի, ախմախդ բաշեցին տարան, ո՞ւր տարան, ի՞նչ ըսին, չպատմե՞ս...

— Կնի՛կ, ջիղերուս հետ մի խաղար...

Բարեբախտաբար այդ րոպէին դուռը բացվեց, և ներս մտնող ծառան հայտնեց, որ պարոն Օսիպովն ուզում է տեսնել պարոն Կարապետեանին։ Անհայտ չիմաութեամբ պարոն Կարապետեանը դուրս եկաւ սենեակից։

Տիկին Նոյեմզարը պարծանք ինձ.

— Ինչո՞ւ չես ուսնր, Գուրգենս

Ես առիթից օգտվելով պատճենի իմ աշխատանքի մասին, իմ պարտականությունների (թատրի վրա նշանակել) և իրավունքների մասին (Հինգ ռանմ՝ խոհարարը հինգ շրթնի է լցնում, տասնհինգ ռանմ՝ տասնհինգ շերեփ...), րոպեր լսեցին ինձ ուշադրությամբ և որքան ինձ թվաց, մինչև անգամ ակնածությամբ, ես ասացի, որ այնուհետև ընթրեցի խոհարարի հետ, այնպես որ ախորժակ չունեմ

Առաջնորդյաց պարոն Կարապետը վերադարձավ նկատելի կերպով հոգնած ու դժգոհ, նա շատից սենյակի լայնքը երկու անգամ, մի ծխախոտ վառեց և լսելի ձայնով մոմոաց.

— Ախորժակի՞ն նայե... իշշո՛ւ գլուխ...

— Ի՞նչ է ուզածը,— հարցրեց սիկին Նոյեմզարը անցավայից տոնով։

— Տղաք, այսինքն՝ Գուրգենը, շատից աշխատել, մկրտման անգործ մնաց, վատն առավոտյան կկ, նատիր մեքենայի վրա... (չախկ-չո՛ւխկ,— հիշեցի ես)։

— Դուն ինչ պատահական ավիր,— շարունակեց իր հարցաքննությունը սիկին Նոյեմզարը։

— Ինչ որ պետքն էր, բախ...

— Ի՞նչ բախը, բան մենք ալ իմանանք...

— Հախ որ... (պարոն Կարապետը բարձրացրեց ձայնը) հախ որ, հասարակական աշխատանքով ծանրաբեռնված մարդ եմ, որ կյանքի պատիվանական անդամոց պունկտի կառավարիչն եմ... որ...

— Գաղթականական անդամոց պունկտի վարիչ բան՞ր...

— Այո՛, խանում, չհամենցա՞ր...

— Խոհարարին «հինգ» ըսես, հինգ շերեփ կլցնի, տասնհինգ» ըսես՝ տասնհինգ... ա՞յս է որ կառավարչությունը...

Պարոն Կարապետը բարկությամբ և տարակուսանքով նայեց սիկին Նոյեմզարին։

— Հա՛, ա՞յդ է, չէ՝ նե ուրիշ գործ է...

— Այդ է,— խոստովանեց պարոն Կարապետը և խոսակ-

ցուիցուն փոխելու համար ալեյացրեց,— դուք ընթրեք, ինձ մի՛ նայեք, ես կուշտ եմ...

— Խոհարարի՞ն ընթրելու,— անողոքաբար գործը մինչև վերջ տարավ տիկին Նոյեմբերը, ապա ավելացրեց,— մաշշալա քեզի, քո դիրքին ու տարիքին, Դոլլենի հետ քեզի մեկ տախտակի վրա են պրծը...

Ես նստել էի բայց պատուհանի մոտ, լուռ ամիսամատանց նայում էի փողոցի անցորդներին։ Մի ծանոթ դեմք, կարծես ուրիշ մի աշխարհից, կանգնեց մեր պատուհանի մոտ, ժպտաց ինձ սպիտակ ատամների ժպիտով և ձեռքով նշան արավ,— ևկ...

Ես հիշեցի նրան։ Դա պինկերտոնական Սարգիսն էր։

— Դուն խելոք չոնի՞ս,— պատից պատռն Կարապետը։

Ես դուրս ելա փողոց, իսկ սենյակի բաց պատուհանից լսվում էր պատռն Կարապետի ցասկոտ ձայնը.

— Ի՞նչ կուզիր, բան նայինք, ուպածդ ի՞նչ է, որ ինձի վլատիկավկազի քաղաքացու հոչակին, կամ նահանգապե՞տ, չէ՞ նն նարուզոնոտոր սրբա...

Սարգիսը մոռացավ ինձ և հին ծանոթի պես ֆեանդոսի պատվ

— Գնանք նրանի ֆանար...

— Ընտանեկան կրչանութեան համար երեք պատմանկա,— հասան իմ ականջին նարտակյանի վերջին խոսքերը,— առաջինը...

Բայց մենք արդեն հեռանում էինք մեր անցակի բաց պատուհաններից ու, ես երկարաբ անգամ լինելով, բաց ինչի ձևերից ընտանեկան կրչանութեան համար անհրաժեշտ երեք պատմաններին իմանալու կրճանիկ ուժիր։

Որ մեջնում էր Գլխավոր փողոցի մայթերը բազմամարդ էին ու ամենուր Հարավային չէին զնդեցիկ կանայք և աղջիկներ։

— Սրանք ինչ են որ... ենասուդյաշչի կանայք. այ, նրանի ֆանարումն են։

— Իսկ ի՞նչ է էդ նրանի ֆանարը,— հարցրի ես։

— Կտեսնես,— անորոշ կերպով պատասխանեց իմ ուղե-

Վիցն ու տասնորդը և անապատի կեսով կանգնեց,— մոտաց հարցնեմ, Հաշից հետո դու ո՞ր կողմ:

Ես նրան պատմեցի իմ նոր աշխատանքի մասին:

— Լավ տեղ ես ընկել,— ուշադրությամբ ինձ լսելուց հետո եզրափակեց Սարոխյանը

Կինոյի շենքի առաջ մեծ աշխուժություն էր տիրում: Ոմեղ պատի մեջ հագնված մի ինչ տարօրինակ կրակում էր մի վիճակագրական նկատառության վրա, հատրտելով մի գոյգ, մոտյան ավտոյի առաջամասում շիներն տեղ նստած մի ցինդրավեր և մոդելատար կտրիկ, քաքերով բռնած գնկը— Վինո-ռեկլամ:

— Կռանցի ֆանա՞ր,— հարցրի նա:

Իմ չիշերանն ծիծաղեց:

— Գնանք,— ասաց նա,— ա՛ն ինչ կռանցի ֆանար է որ... ա՛ն պիծանների համար է...

Գլխավոր մուտքից մենք թևակոխեցինք դեպի ձախ, ապա՝ դեպի աջ, հետո ուղիշ մի նոր մուտք, ուր գտնվում էր մի ստվարաչին նրմնկոտության և լուսավորության նկատմամբ կանի մի շենքի առաջ կանգնեց իմ ուղեկիցը:

— Կռանցի ֆանար,— ասաց նա ցած ձայնով:

Ու նայեցի շենքի ֆասադին: Փողոցի վրա նայող պատուհանները ծածկված էին վարագույրով և լուսավորված էին մեղմաղաղ լույսով: Ներսում լսելի էին դաշնամուրի նվագածության թեթև հնչյուններ: Սարոխյանը սեղմեց դռան կոճակը երեք անգամ: Ներսից լսվեցին մոտեցող ոտնաձայներ:

— Ո՞վ է,— հարցրեց կանացի զգոն մի ձայն ներսից:

— Նորին Իլյուշը,— պատասխանեց Սարոխյանը:

— Քանի՞ ոտով.— հարցրեց նույն ձայնը, այս անգամ ավելի մեղմ:

— Չորս...

Դուռը բացվեց, ու մենք ներս մտանք:

Թույլ լուսավորված միջանցքում զգուշորեն հագցնում, միջին տարիքի մի կնոջ, ոչ բարի զգացմունքներ ներշնչող կերպարանքը: Նա դուռը փակեց և իր ծանրության տակ համառած՝ թեթև քայլերով առաջ անցավ: Սարոխյանը հետևեց

նրան, եւ՝ Սարգսին։ Սպա նա բացեց դիմացի դուռը, մեզ ներս թողեց ու մեր հետեւից ինքը ներս մտավ՝ ծածկելով դուռը։

— Ծանոթացեք իմ հայրենակցի հետ, Իսիդոս Անտոնովնա,— նկարագրեց ինձ իմ շինականն։

Դահլիճը, բավական ընդարձակ դահլիճը կահավորված էր զանազան ոճի սիրոնախով, դիվաններով ու կանապեներով։ Պաշտամորի մոտ նստած էր մի կարմիր բիմով եւ դունատ, ներս ընկած աչքերով երիտասարդ Բարակ, երկար մատներով նա ծեծում էր պաշտամորի ստեղները եւ երկար, շեկ մազերը հետեւից բի փոած ստեղների վրա, քեռահարում էր աջ ու ձախ Պաշտամորի մոտ դրված ձաշասեղաններից մի քանին պրպտված էին մոմկալներ ազատ տեղաններից մեկը։

— Իմոնա,— պատերից Սարգիս մտնցող մատուցողներն— Իսկ ո՞ր են «նաստոյաշչի խանայք»,— անցավ մտրակս. տեղաններն շուրջը նստած էին բացառապես տղամարդիկ՝ երեք պինդուկներ, մի քանի շահեհաս փեսաներ, քան երեսփին ատեղապահներ, մի տեղի մոտ նստած էր կանաչ, շիրիմական համապետաով, պաշտպանվ, ան փափախավոր մի երիտասարդ՝ փայլուն, երկարաճիտ կոշիկները իրար վրա գցած, ցուցամատը դրած ճակատին ու արմունկով հենված տեղին, կարծես բուլվարային լուսնկարչական ատելյեի առաջ. մյուսների նման նա ոչ պատասխան էր ուտում, ոչ էլ խոսում իմոտ, սև, արտահայտիչ ու շատ աշխույժ նայում էր մի կետի ու կարծես մտածում,— որի՞ն տրիճամ...

Պաշտամորը վերջին անգամ երկու ձեռքով խփեց ստեղներին, նորից կրկնեց, երրորդ անգամ պոզից ու հատուածից և, շարժական կլոր նստարանի վրա պտտվելով, դարձավ դեպի ոչ բազմամարդ հատվածը։ Պարզվեց, որ ոչ ոք չի խոսում և ոչ ոք չի ուզում խոսել լուռ Պաշտամորը մանկական, զարմացած աչքերով նայեց բոլորին, մի անգամ էլ պտտվեց պտտվող նստարանի վրա և բարձրացնելով ձեռները, մի քանի անգամ ծափահարեց։ Հավեցին դուռ

ծիծաղի ու հատ ու կենտ ծափի ձայներ։ Նա ոտի կանգնեց, մեծ արժանապատվությամբ գլուխ տվեց և դուրս նկավ դահլիճից։

Մի քանի րոպեից նա նորս մտավ աշխույժ ու թեթև քայլերով, գրեթե վազելով մոտեցավ իր դաշնամուրին, նստեց ու սկսեց նվագել մի թեթև վարսանման մարշ կամ մարշանման վալս։ Դուրը բացվեց, և դաշնամուրի տակից համաչափ քայլերով նորս մտան իրար հետևից փիսամերկ կանայք. նրանք կլոր շրջան գոյացրին սեղանների վրա։

Սեղանների վրա հայտնվեցին գինու և զանազան խմիչքների շշեր, ոսկիներ, խմորեղեն։

— Ա՛խ, խմի՛ր,— գոռում է Սարգիսը աճող ագռավի միջից, ձևերը խախելով ուսից,— դու նաստյաշկի պիժոն ես... էս քաղցր փիլոտը քեզ համար է... խմի՛ր...

Նա լցնում է փորին, նրկարտոն ըմպանակի մեջ ինչ-որ կանաչավուն խմիչքր։ Ես առանց ինձ հաշիվ տալու, կուլ եմ տալիս։

— Մալադե՛ց,— ասում է նա,— մեն էլ... սավ-սե՛մ մալադեց... մի՛ն էլ...

...Դահլիճը, լուսերը, պոռոտ զույգերը խառնվում են, մոտենում են ու հեռանում, մեծանում է ու փոքրանում, դաշնակոհարը ծիծաղ է սոսկում մոլեգին կատաղությամբ։ Վիթխարին, կանաչ վիթխոի պես պատվում է կանաչ շերտերով հագած խոհարարուհին, շերտերկարի վերջը լայն բացած, կիսամերկ մի աղջիկ, կարմիր նման թռչում է ծղնկներիս։

— Դանր, պարնր,— ասում է նա։

— Ես... պարկ չգիտեմ,— ասում եմ ես և ուզում եմ պրի կանչել։

— Վերցրե ինձ,— ասում է նա,— ես լավն եմ...

— Դե... ո՞վ ես,— հարցնում եմ ես։

— Ե՞ս,— հարցնում է նա ու ծիծաղում.

— «Я цыганка молодая...»

— Մի՛ արգի,— գոռում եմ ես ու ոտքի կանգնում։

— Ինչո՞ւ,— ձգում է աղջիկը ու վերցնում իմ թևը։

— Ախր քնել չի տաղում,— ասում եմ ես և ազատում իմ թևը։

— Հրամայիր, ի՞նչ անեմ,— հարցնում է նա թևիս քաշելով։

— Լա՛ր, — գոռում եմ ես ոչ իմ ձայնով։ Աղջիկն անհանգստանում է Որ-որ անհետացավ նաև Արտիկը՝ իր փոքրիկ քրոջ ննջելին հետ։— Կարմիր բաստոն,— գոռում եմ ես ոչ անհասատատ բայլերով դիմում դեպի դռները Հետ և միչանդրը ես բացում եմ փողոցի դուռը ես փողոցումն եմ։

— Լա՛ր, Արտաշեսի կանաչը,— ասում եմ ես բարձրաձայն, և դիշերային անմարդ փողոցը արձագանքում է.— կանաչը... ո՞րտեղ եմ կորցրել,— մտածում եմ ես ու չեմ հիշում,— լա՛ր, օ՛, լա՛ր, Արտաշեսի կանաչը...

Քարը օդն աշխուժացնում է ինձ, բայց ոտիկներն արդեն պարտվել է իմ ողջ էությունը Ախ է ուրևէն հարբածությունը. ուրևէն ես հարբած եմ...

— Ես հարբա՞ծ եմ,— ասում եմ ես բարձրաձայն...

— Բա՞յ եմ...— արձագանքում է ամայի փողոցը Այդ ինձ դուր է գալիս Բանաստեղծություն,— ես հարբած եմ. հոգով բայ եմ... լա՛ր, օ, լա՛ր, Արտաշեսի՛ կանաչը...

Ահա և գիմային փողոցը Ամայի ու անմարդ է նաև այսոնց Ամբողջ վլադիվավկայը քնած է, բացի ինձնից և իմ արձագանքից։

Իմ քայլերն ինձ տանում են գնալի բաղարային բուլվարը։ Ես նստում եմ առաջին պատահած նստարանի վրա, գլուխս նստարանի հենքը և նիրհում։

Ցուրշ քայլերով մոտենում է մի տակի ես բացում եմ աչքերս ես տեղ է գրավում իմ նստարանի վրա, վառում է լուցկին և ծխում։ Մի պահ լուսավորվում է նրա դեմքս, նորդ գիմագծերով գեմքը Արիստարդ Լին է։

— Դու ո՞վ ես,— հարցնում եմ ես

— Դո՞ւ ո՞վ ես,— հարցնում է նա առանց իմ վրա նայելու։

— Ե՞ս,— պատասխանում եմ ես,— ես՝ ես եմ...

— Իսկ ես՝ ես չեմ,— ասում է նա,— մի ժամանակ ես էլ ես էի, բայց հիմա... ես չգիտեմ, թե ես ով եմ... Փոշ ունե՞ս, մարդ...

— Ոչ,— ասում եմ ես

Նա վառում է լույսին, մոտենում իմ դեմքին, հետո մարում է ու մի կողմ նետում

— Թու դեռ լակոտ ես,— նա վեր է կենում և դանդաղ քայլերով հեռանում

— Գնա «Կրասնի Ֆանարա»,— գոռում եմ նրա հետևից

Նա կանգնում է

— Ինչպես չէր ամաչում,— ասում է նա անկեղծ և դառը հանդիմանանքով

— Միևնույնը չէ՞,— ասում եմ ես չարախնդությամբ,— բուլվարո՞ւմ թե «Կրասնի Ֆանարա»-ում...

— Օ, ոչ, մի ասնր,— խնդրում է նա,— այնտեղ սարսափելի է... ես երբեք, երբեք այնտեղ չեմ դնա...

— Իսկ ես այնտեղից եմ գալիս,— ասում եմ ես

— Ասում ես,— բղավակնշում է նա ու լուծվում խավարի մեջ հետ

Ես պառկում եմ կոնաչ նստարանին և քնում խորը քնով

19. ԱՆՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ԸՆԱԾՔՆԵՏ

...Ինչ որ բան այրում է իմ ծոծրակը Ես ձեռքով ծածկում եմ իմ ծոծրակը Այս անգամ ինչ-որ բան այրում է իմ ձեռքը Ես բացում եմ աչքերս Գլուխս եմ ես իմ կուրծքը առնում է առավոտյան թարմ օդից Այդ արևն է ծակում իմ ծոծրակը, տաղտկախիտ ծառերի միջից տեղ-տեղ ամիններին նման թափանցող արևը Ես հիշում եմ գիշերվա անցուդարձի մանրամասնությունները ակամից լապտեր... Ինչո՞ւ ծկարիչը լապտեր.— անցնում է մտքովս, այնտեղ ոչ մի դույնի լապտեր չկար Հետո հիշում եմ կիսամերկ աղջիկներին.— Նաստասյաշչի կանայք,— ասում է Մարգիտը Ուրեմն քանի՞ տեսակ կանայք կան աշխարհում Իսկ այն ծխող կինը,

որ գիշերը միայնակ շրջում էր պուրակում նա չհավատաց, որ ես եղել եմ այնտեղ, որ այնտեղից եմ գալիս... այս էլ մի նոր տեսակի կին...

Ես նստում եմ ու նայում շուրջս։ Մի քանի նստարան այն կողմ. կանաչ նստարանի վրա, թեք է մնում։ Մոտենում եմ զգույշ քայլերով և կանգնում նրա մոտ։ Նա պառկած է կրունակի վրա, նրա ձեռները խնամքով զարսած փորի վրա, կեսին դրած կրծքին, գլխի տակ՝ ամառային վերարկուս։ Երեխա կինը չէ, որովհետև ոչ միայն նա ապամարդ է, այլև քնածի դիմագծերն ինձ ծանոթ են։ Դա ոչ այլ ոք է, եթե ոչ Աբրահամ Գալչյանը։

Ես նստում եմ նրա գլխի մոտ։ Նա բաց է անում իր կլոր, սև, խոշոր աչքերը։

— Վա՞, — զարմանում է նա, — դու ո՞ր երկնքից ընկար էստեղ, — և առանց պատասխանի սպասելու նստում է, հռթռանջում ու ծիծաղում, — լա՛վ քնեցի, սրան կասեն մարդ մեխքի քուն... չէ՛, դու մի ասա, նախկին և ապագա բանաստեղծ, առավոտ կանուխ ի՞նչ գործ ունես քաղաքային բուլվարում։ Եթե ինձ կհարցնես, իմ բանն ուրիշ է, ես իմ ննջարանն է... ես միշտ էստեղ եմ քնում... լավ է լսանել, մաքուր օդ, գիշերային արկածներ...

— Ի՞նչ արկածներ, — հարցնում եմ ես։

— Էդ քեզ չի կարելի ասել, — ժպտում է նա, — գաղտնիք ես տակավին, — ցիտում է նա մանկական բանաստեղծություն։

— Գիշերը ես «Կրասնի Փանտրա»-ումն էի, հետո նկատեցի ու քնեցի ահա այն նստարանի վրա, — առաջին ես անգամ առնում Աբրահամի մեծ աչքերը ավելի մեծացած, հետո ծիծաղեց ու ցուցամատով խփեց ինձ, — դու կոմիկ ես եղել, ես՝ բանից բեխաբար... մեր քննադատներից մեկը մի հոդվածում... (նա նորից հռթռանջեց) հա... ասում է, որ էլ ստրավինսկի տիպար բանաստեղծություններ գրողները կյանքում կոմիկ են... ճիշտ է ասում, — ու նորից ծիծաղեց։

Հետո նա վեր կացավ, ամառային վերարկուն նետեց ուսերին ու ասաց, — գնանք նախաճաշենք։

Նա ինձ առաջնորդեց այդու բնակարանը։ Առաջին հա-

խորհները մենք էինք։ Ես նրան նախապատրաստի, որ ես փող չունեմ։

— Առանց քո ասելուն էլ գիտեմ,— ծիծաղեց նա,— խնկանի բանաստեղծը փող շատը է ունենա։

— Գլուխս ինչե՞ր ուրտեմ է,— գանգատվեցի ես։

— Ինչի՞ց է, ինչ ես կարծում,— հարցրեց նա։

— «Կապարմիր լապտեր»-ում ես մի քիչ խմեցի..., ինչ-որ քաղցր, կանաչ լիկյոր...

Նա նայեց ինձ մոահոգ լրջությամբ։

— Դու ո՞րջ ես ասում,— հարցրեց նա։

Ես ամենայն մանրամասնությամբ նրան պատմեցի դինեդրծարանի իմ աշխատանքի, ապա Սարդսի հետ կատարած մեր արշավանքի ու իմ երկրորդ փախուստի մասին։

— Այդ Սարդիսը սրիկայի մեկն է,— ճչաց Աբրահամ Գալճյանը, ապա լռեց և ավելացրեց,— ասենք, դրողը, բանաստեղծը պետք է ամեն ոնդ լինի, ամեն ինչ ուսումնասիրի, բայց քեզ համար դու շատ է... կկորչես...

Սփոփակ, առույջ առամնալով նա ոչնչացրեց երկրորդ բուկին և խմեց երկրորդ բաժակ մուգ գինը։

— Պետք է աշխատել սովից այսուհից... դեպի հյուսիս, Մոսկվա... Դու ուզո՞ւմ ես, որ օդապոլներ չինեն աշխարհում իրենց սարսափելի դինեդրծարաններով։

— Ուզում եմ...

— Դու ուզո՞ւմ ես, որ աշխարհում «Երասնի ֆանար»-ներ չինենն

— Ուզում եմ...

— Գնանք Մոսկվա, միասնանք բոլշևիկներին։

— Ես երևան եմ ուզում գնալ,— ասացի ես,— ի՞նչ են ուզում բոլշևիկները։

— Իշխանությունը բանվորներին և գյուղացիներին, հասկացա՞ր, հարուստներին՝ վերջ։

— Ես երևան եմ ուզում գնալ,— պնդեցի ես։

— Դու Վահան Տերյանին սիրո՞ւմ ես,— հարցրեց նա, խորամանկ ժպտալով։

— Սիրում եմ...

— Այ, Տերյանը բոլշևիկ է։

— Իսկ Թումանյա՞նը,— հարցրեցի ես։

Նա լռեց, մոածեց ու ասաց.

— Թումանյանը բոլշևիկ չէ, բայց կդառնա... այ, կոնյակ... Ի՞նչ Թումանյան, ամբողջ աշխարհը բոլշևիկյան կդառնա...

Քաղաքային այգու մոտ նա սեղմեց իմ ձեռքը։

— Մենք այսօր ես գուրս գամ վլադիկավկազից Կարմիր Բանակը հնուռ չէ, կդանեմ... Իսկ դու գնա քո երեանը... Մենք դեռ կհանդիպանք... Լավ բաներ գրիր, տխուր բաներին վերջ տուր...

— Իսկ Տերյա՞նը,— ասում եմ ես,— դու ասում ես նա բոլշևիկ է, ինչո՞ւ տխուր բաներ է գրում...

— Մոսկվայում հանդիպելիս կհարցնեմ...—նա լռեց և աչքերից,— երևի բոլշևիկներն էլ իրավունք ունեն տխրելու...

Մենք բաժանվեցինք։

20. ՎԵՐԱԴԱՐՁ

Վլադիկավկազից Թիֆլիս սրընթաց գնացքը ևարս կայարանում առանց կանգ առնելու շարունակեց իր ճանապարհը երևաց և արագորեն անհետացավ «երանուհյան բլուրը» ես հիշեցի Սրբահամ Գալճյանին։

...Նրա մեկնումից հետո, մի քանի օր անց, տեղական «Թերեք» թերթում մանր տառերով տպված էր մի կարճ հաղորդագրություն, ըստ որի Թիֆլիսում հայտնվել էին գերմանական զորագնդեր Բոլշևյան, նրբ բոլոր պահանջները կատարել ու Տոյեմզաբր վերջապես տակ հետևյալ հարցանդման ուղղեց իր ամուսնուն.

— Գերմանական զորքերը Թիֆլիս են մտել ևսկե կարելի՞ է հետևցնել, որ...

Նա մի րոպե լռեց. ըստ երևույթին նրան անհանգստացրին մլակները Պարոն Կաքավյանը, լիտով չայի ադրեն քնած, կարծելով որ հարցը տրված է, շուտպեց համաձայնվել։

— Կարելի է, հարկա՞վ...

— Ի՞նչ կարելի է,— հարցրեց արտասած տիկին Նոյեմբարը:

— Հաած,— պատասխանեց պարոն Կարապետյանը:

— Բայց ես դեռ բան մը չըսի...

— Ինչ որ ըսես, ես համաձայն եմ, կնի՛կ,— նահատակի տոնով ձայնեց պարոն Կարապետյանը:

— Պատմեմ, կարելի՞ է հետևցնել, որ թուրքական վտանգը վերացված է:

— Կարելի է...

— Ուրեմն ինչ դերք պիտի ըսեիք,— հարցրեց տիկին Նոյեմբարը կիսաբերան ուղղով պարոն Կարապետյանը բնազդել զգաց, որ այսուհետ «այո» կամ «ոչ»-ով, «կարելի է», «չէ կարելի»-ով չի կարելի օձիքը ազատել: Հարկավոր է պատասխանել ըստ էության Բայց նա հարցը չէր լսել. նա լարեց իր վերջին ուժերը և հարցրեց.

— Ի՞նչ ըսիր, չհասկցա...

— Ես հարցուցի, ի՞նչ դերք պիտի ըսեիք...

«Ինչ ասիթով դերք պիտի բսեիք»,— մտածեց պարոն Կարապետյանը և ոչ մի եղրակացության չգալով, ուղեց կարճ կապել:

— Դերք չպիտի ըսեինք, պիտի քնեինք...

— Մա՛րդ,— բղավեց տիկին Նոյեմբարը,— վերջապես ճշտեք, անանկ քնեինք...

— Ես հոգնած եմ,— բղավեց Կարապետյանը:

— Կուզե՞ս իմ կարծիքն իմանալ,— շեշտահատվեց տիկին Նոյեմբարը:

— Կուզեմ...

— Իմ կարծիքով մենք դերքնիս չպիտի փոխենք: Այս երկրի համը փոխում, պետք է արտասահման անցնենք... Համաձա՞յն ես... (լռություն) Հիմա կրնաս բնանալ... դուն արդեն քնա՞ծ ես, մարդ, քեզի եմ...

Պ ա ր ո ն Կ ա ր ա պ ե տ յ ա ն.— (արթնանալով) ի՞նչ կա, ինչո՞ւ արթնցուցիր ինս...

Տ ի կ ի ն Ն ո յ ե մ բ ա ր.— Կըսեմ, հիմա կրնաս քնանալ:

Պ ա ր ո ն Կ ա ր ա պ ե տ յ ա ն.— Վա՛յ հերիսիկս, վա՛յ բար-

բարու, արքունցուց որպեսի լսե, թե հիմա կրնաս գնանալ... վա՛յ սարսափելի կին...

Նա վեր կացավ, մի քանակ ջուր խմեց, մի ծխախոտ վառեց, հետո նորից պառկեց

— Քունս փախցուց... վա՛յ սմբուրիշտ... Բնհնդուղի ծնունդ, վա՛յ...

Երկար շուռումուռ եկավ պարոն Կարապետը: Տիկին Նազիքարը գնել էր Բաղտոհս գնալ վերջապես նա էլ գնաց— է՛, պարոն Գուրգեն,— մտածեցի ես,— չի խանգարի, եթե դու էլ քո գերթը ճշտես· Գնդամանացինները մոկ են Թիֆլիս, Բորբալան վառանը վերցված է, իսկ դու, որքան ես գիտեմ, գնդամանացիների հետ ոչ մի սկզբունքային տարաձայնություն չունես... Շիլլեր, Գյոթե, Հայնե... օր առաջ հարկավոր է Թիֆլիս վերադառնալ, իսկ հիմա... «վրնաս գնանալ»

Մյուս օրը պարոն Հակոբյանից ես խնդրեցի իմ երկու շարաթվա աշխատավարձը՝ նա վճարեց ինձ և ասաց.

— Վաղիվաղուն մի հետևս... Ես քեզի հետ Պոլիս կառնեմ...

Բայց հաջորդ օրը ես գաղտնի կերպով պատմանավորվեցի մի Ֆուրգոնչու հետ և վաղ առավոտյան, առանց որևէ մեկին հրաժեշտ տալու, դուրս ելա Վլադիվադկաից

Ֆուրգոնում, բացի ինձանից, ևս գումից 15—16 տարեկան մի ուս աղջիկ. նա հազիվ էր կանաչ, հասարակ վերնազգեստ, կանաչ գլխաշորի տակից երևում էին նրա սևիկապույտ մազերը Ամբողջ ճանապարհին նա ոչ մի անգամ չծագեց ինձ վրա և կենդանության նշան ցույց էր տալիս միայն այն ժամանակ, երբ ֆուրգոնն անցնում էր որևէ տուֆի միջով: Այն ժամանակ նա անհանգստանում էր, նայում աջ ու ձախ, արագ-արագ խաչակնքում և նորից անշարժանում էր նորից քիթ ուներ և այդ տալիս էր նրա դեմքին անօգնական արտահայտություն: Մի անգամ ես փորձեցի նրա հետ խոսակցության բռնվել: Նա խուսափեց ակնհայտ չհամարձակվեցավ, և ես այլևս նրան չանհանգստացրի:— «Այս էլ մի ուրիշ տեսակի կին,— մտածեցի ես, նայելով Կովկասյան լեռնաշղթ-

Թային,— քանի՞ տեսակ կին կա վերջ ի վերջո աշխարհում... երևույթ կիմանա՞մ արդյոք...»

— Ոչ, չես իմանա,— ասում եմ ես հիմա, երբ արդեն հիսուն տարեկան եմ,— և չես իմանա, եթե ապրես ևս հարյուր հիսուն տարի—ես հաճախ հիշում եմ սիրած կամ պատահական կանանց դեմքերը։ Նրանք արտաբինով դեռ ունեն որոշ նմանություն, որովհետև բոլորն էլ անխուսափ ունեն երկու աչքեր, երկու ականջներ, մի բերան, մի քիթ... իսկ ներքինով... ներքինով նրանք ոչ մի բանով նման չեն եղել...

Թիֆլիս հասնելուց մոտավորապես երկու ամիս հետո, աշնանային սով մի երեկոյան ես ուրախ էի վերադառնում կինոյից և անցնում Վորոնցովյան կամուրջով։ Գեղեցիկ է աշնանային Թիֆլիսը, հաճելի են նրա երեկոները։ Կամուրջի վրա ինձ կանգնեցրեց նեղլված շրթունքներով, արհամարհական կերպով ևս քաշած, մեկն որի նման հոնքերով չափել մի աղջիկ, մեռարան կատուցա վերևպրնում և լայնորեն ծռան պետությունն ինձ չլիներ նրա անօրինական մորթիկ քիթը, ես նրան չէի ճանաչի... սիրուն աստվածներով նա բոնել էր մի ծխախոտ։ Ես ինձնից լուսի խնդրեց։ Ես նրան տվեցի, որ ես չեմ ծխում։ Նա բոնեց իմ գրուց և սաց հայտարարեց ծանոթի մոնրոմեցյամբ,— գնանք վերադարձյան այդին, քեզնից էժան կվերցնեմ...— ես կատակներս գեռևս չընկա, որովհետև իմ գրպանների հետ համեմատած՝ կատակներս գեռևս ընկնելը մեծ էր հիմարություն...— Լավ,— ասացի ես.— դու ինձ չե՞ս հիշում...— Նա լուրջ դեմք առցավ և պատասխանեց՝ ո՛չ։— Մենք քեզ հետ երկու ամիս առաջ միասին, մի ֆոտոգոնով վարձելիավտից Թիֆլիս եկանք,— հիշեցրի ես նրան, ժպտալով։ Նրա դիմագծերը ծռվեցին լաց լինելու պատրաստվող երեխայի դիմագծերի նման, նա արագ-արագ խաչակնքեց և համարյա ինձ վազելով հեռացավ ու անհետացավ իմ տեսողությունից...

21. ՆՇԱՆԱՎՈՐ ԱՌԻՎՏՐԱՆՆ

Մայրամուտից առաջ ես Թիֆլիս հասա և շտապեցի Մթքայելյան փողոցի ուղղությամբ ալացող տրամվայներից մե-

կում տեղ գրավել Տրամվայի պատուհանից Թիֆլիսը ինձ ավելի գրավիչ ու աղմկոտ Գերմանական ելիզեյան դիմաց ես իջա և շտապեցի գնալ քեռուս մագազինը Քեռիս ինձ ընդունեց իրեն հատուկ տխուր, կոտրված ժպտուն նա ուրախ էր, որ ես վերադարձա

— Օդումլոյ խուճապից, ես գնեցի ես մի տոքրիկ խանութ,— ասաց նա,— այդ խանութում Արշակին եմ դրել, բայց նա սոխալած է ժամերով վաճել խանութը և գնալ ապրանքներ գնելու Ես կնատես այդ խանութում Այդտեղ ժամանակը կարող ես կորցրել, գրել...

Քեռիս վաճից մոգոպինը, և մենք ուղղվեցինք դեպի նոր խանութը, որ գտնվում էր ամառային ակումբի կողքին, մագազինից հետո գալի վրա Բաց խանութի առաջամասում դարսված էին զանազան չուխա արկղներ՝ լցոն տանձով, դեղձով, խնձորով, խակ նարնջ, գարակների վրա, դարսված էին զանազան տեսակի պաղլոտաներ, լուցկի, լիմոնադով լցոն շշեր և ուրիշ մանրուքներ խանութում նստած էր հնչակյան պատոն Արշակը... ինձ տեսնելով նա ոտքի թռավ

— Փառք քեզ, աստված, օգնական եկավ...

— Գուրգեն նշանակեր տեսուչական պիտի գաղնա,— ծիծաղեց քեռիս, հետո մոածեց և ավելացրեց.— քեզ հարկավոր է պատրաստել ներկայան գրողի համար, ուզո՞ւմ ես ներկայանում սովրել...

— Ես երեսն եմ ուզում գնալ,— ասացի ես

— Որերի, գոլիմականների քաղաք,— ժպտաց քեռիս,— զահլեդ չգնա՞ց

Արշակը մի մեծ դեղձ պատեց ինձ.— կե՛ր, Գուրգեն,— մի խնձոր կտրեց և բաժանեց քեռուս հետ Դեղձին շատ ուրախ աստմ էին Վանում ես այն մեծ հաճույքով ճաշակեցի Ոչ թե դեղձը, այլ շարժառիթը...

— Ես գնամ մայրիկի մոտ, — ասացի ես

— Ո՞ւր,— հարցրեց քեռիս

— Հիվանդանոց,— պատասխանեցի ես

Նրանք ծիծաղեցին Պարզվեց, որ հիվանդանոցը լուծարքի է ենթարկվել, և մայրիկը հիմա ապրում է պատոն Արշա-

կանց տանըւ Այսանդից պետք էր ննջատրել, որ ես էլ պետք է ապրեմ պարոն Արշակենց տանըւ

— Ներս արի, Գուրգեն,— ասաց պարոն Արշակը,— քիչ հետո խանութը կփակեմ, կդնանք տուն։

Քեռիս գնաց ինչ- որ առնի, ինչ- որ գործով պարոն Արշակը ծանոթացրեց ինձ ապրանքներին, նրանց գնելի հետ, այլև մի քանի պատահական կարդաց այն մասին, թե ինչպես պետք է վարվել հաճախորդների հետ, որ հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել հաճախորդի արտաքինի վրա, առանձնապես կանանց,— որքան լավ են նրանք հագնված, այնքան նրանց հետ հարգանքով պետք է վարվել և անարգ կերպով խարեն Մղեր հարկավոր է պատվերին այնպես, որ հաճախորդը տեսնի միայն մղերի քանակը ու առաջ շարքը։ Փչացած մղերը միայն դու պիտի տեսնես կշռելիս, մի քանի փչացած մեջ աննկատելի կերպով տեղադր քեզ ատրակի մեջ, ապա պատվերը նրանց վրա առաջ մղերը։ Քեզ հաճախորդը հայ է, պատշաճը, որ քեզ չխարի, իսկ եթե ոուս է, դու կարող ես խարել. ուսները մանրուքի հետևից ընկնող չեն։

Մինչ այս, մինչ այն, օրը միտում էր Մի հաճախորդ հարցրեց խնձորի գինը.

— Ջո՛ւխրի չի՛պեայա՛ս,— պատասխանեց պարոն Արշակը, և այդ «ջո՛ւխրի չիպեայա՛ս»-ը մնաց հնչում է ականջիս...

22. ԳՆՆԱՓՈՐ ՏԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Ռուֆիսյան մոխրագույն վորոնցով-Դաշկուլը իր ուժին չափող աչքերով կանգնել է պատվանդանի վրա և ուժին չափող աչքերով նայում է գնդի մոդցի հետևից։ Արձանի հետևը վորոնցովյան կամուրջն է, ձախ կողմը «Կաֆե Բորժոմ»-ը, աջից՝ «Նափ-կուրոյ» ռեստորանի ուղղությամբ, խորանում է մի նեղ և տխուր նրբանցք։ Պարոն Արշակը մտալ այդ նրբանցքը, ես՝ նրա հետևից։ Նեղ ու երկար մի գրան մոտ Արշակը կանգնեց, դուռը բացեց ու ներս մտավ։ Սխալ է

ան լ, որ նա, տնտ ես նիրս մտանք, որովհետև մենք ոչ թե նիրս մտանք, այլ նիրս իջանք... այո՛, քարե սատիճաններով մենք վար իջանք և հայտնվեցինք քառակուսի մի բակում։ Աջ թևի վրա, մի բաց դռնից նիրս մտալ պարոն Արշակը, ես նրա հետևից ես շուրջս նայելի և ոչինչ չկարողացա դանդաղանել։ Սենյակում սիրում էր բացարձակ խավար։ Բայց ահա, այդ խավարում, լուսավոր աիրի նման, իմ ականջին հասավ մոր ձայնը.

— Ախո՛ր, ես ջ աչքերաց մեռնիմ... Գոքգեն եկավ...

— Քա էս Գոքգե՞նն ի,— լսեցի ես մի ուրիշ, կարծես թե ծանոթ կանացի ձայն։ Պարոն Արշակը լամպը վառեց, և դանդիսման հոգսմունքները հանդարտվեցին, երանուհի քույրիկը թողեց ինձ և մոտեցավ օրորցին։ Ես թիչ էր փոխվել. նույն նիրսամոտ թուխ գիմքը, ու մազերն ու սև աչքերը, խոշոր, սպիտակ ատամներ, նույն երան քույրիկը՝ խանդոտ աչքերով հետևում ամուսնու՝ պարոն Արշակի բոլոր շարժումներին։

— Պատմի տեսնիմ,— ասաց մայրիկը,— գո՞հ ես, որ գնացիր աշխարհ տեսար...

— Գո՛հ եմ,— ասացի ես,— ես այնտեղ գաղիական անդամտու կյանքի վարժ էի... ինձ «երանի ֆանար» ում։

Իմ այս հայտարարությունը ոչ մի տպավորություն չթողեց մայրիկի և երան քույրիկի վրա այն պատճառով, որ նրանք գաղափար չունեին այդ հիմնարկ-ձեռնարկության մասին, սակայն պարոն Արշակը...Օ՜, պարոն Արշակը... ես նայեց ինձ զայրացած ծիծաղով, հետո յուրաքանչյուրին (մոր՛ը, անպիտանին...), ապա խոսակցությունը փոխելու համար, ասաց.

— Սեղան պատրաստեք... ես հիմա կգամ, —ես ուղղվեց դեպի դուռը։

— Ո՞ւր,— դռների մեջ կանգնեց երան քույրիկը։

— Ջահնամի ծոց,— վրդովվեց պարոն Արշակը։

— Երանի չէ՞ր,— ասաց երան քույրիկը,— բայց դու ջահնամի ծոց գնացողը չես, դիտես վիր ծոց կերթաս, ներս մտիր

— Ամոթ է, կալմակյալ մի անի... երկու րոպեից կգամ...

— Ինչի՞ չես ասե, ո՞ւր կերթաս, ասա՝ մենք էլ իմանանք։

— Մի շիշ պինդ բերեմ, Գուրգենի պատու առթիվ...

— Ոչինչ հարկավոր չի,— լսվեց քեռուս ձայնը,— ես բերել եմ, մեկի տեղ՝ երեք շիշ...

Նստս մտավ Տիգրան ապեն, դինու շշերը դրեց սեղանի վրա, նայեց ինձ ու ժպտաց իր սխտոր ժպիտով։ Արշակի դեմքը փայլեց, Երան քույրիկը վերացրեց պաշտոնական դրությունը, իսկ մայրիկը սկսեց սեղան պատրաստել։

...Սեղանը մոտենում էր իր վախճանին։ Երան քույրիկը քնելու ակնհայտ նշաններ էր ցույց տալիս։ Մայրիկը հավաքեց սեղանը և պատրաստեց անկողիններըւ Անցակում ոչ մի մահճակալ չկար։ Բոլորը քնում էին հատակին։ Երան քույրիկը քնեց առանց հանվելու։

— Քնիր, Գուրգեն, ճանապարհից հոգնած ես,— ասաց մայրիկը։ Ես հանվեցի ու պառկեցի։

Պառկած տեղից ես նայեցի նախկին հատուկտակաան տրժիշնների դեմքերին։ Տիգրան ապեն գունատ էր, սև, բարակ բեղերով և սև հոնքերով, փորքիկ, սև, շարժուն աչքերով։ Պարոն Արշակը, ընդհակառակը, լայն ճակատով ու առատ դիմածներով. թուխ, թավ հոնքերի տակից նայում էին նրա աշխույժ, խուժ, խոշոր աչքերը, մանկական չարաճճիությամբ։ Ես հիշեցի պարոն Կարապետին և սիրեցի նորեմպրոն. նրանք էլ նրան հետ խնդիրներ են լուծում, վիրքորոշվում են, գաղում, կշռում, կշռադատում։

...Արքա՞ն էի քննել, քնե՞լ էի, թե ոչ, դժվար է ասել, իմ ականջին հասավ պարոն Արշակի ձայնը.

— Խանասորյան արշականք կոչվածը շանթած է և հիմարություն։

Ես բացի աչքերս։ Գիմս շշերը դատարկ էին. պարոն Արշակը մի բուռնցքը դրել էր ծնկին, մյուսը՝ սեղանի վրա, կարմիր՝ մինչև ականջների ծայրը, նայում էր քեռուս հոգնած դեմքին։

— Կան արբուքյուններ, որոնց չի կարելի դիպչել,— հնչեց Տիգրան ապեի դանգատավոր ձայնը։

Երկրորդ անգամ ես զարթնեցի Երան քույրիկի ձայնից։

— Անուշ, Անուշ։
— Ի՞նչ ի, Երան։
— Արշակ գնաց։
— Ո՞ւր։
— Ես ի՞նչ գիտեմ, չկա՞։
— «Չկա՞»,— Երանի նման լացակումած ժպրթց մայրիկը,— Արշակին գելեր կուտե՞ն։
— Դու չես գիտի, Անուշ, կերթա վաս անե։
— Վաս անե ո՞րն ի,— հարցրեց մայրիկը։
— Դու չես գիտե, դու չես գիտե,— արտնղեց Երան քույրիկը և արտասվեց։
«Կարմիր լապտեր»,— անցավ մտքովս ես բացի աչքերս և բացի Քանձր խավարից ոչինչ չտեսա։ Տիրան աղան ու պարոն Արշակը գնացել էին, ո՞ւր, մայրիկը ոչինչ չի իմանում, Երան քույրիկը ննջատում է, իսկ ես, օ՛, ես հասատատ գիտեմ։

Երան քույրիկը լավ է։ (Լացե՛ք, օ, լացե՛ք, Երեսաղեմի՛ կանայք)։

Ես նորից քնելի խոր քնով։

23. ԱՌԱՎՏՐԱԿԱՆ ԱՇՈՐՅԱ

Ես դուրս եմ գալիս Երան քույրիկենց տնից և ուղևորվում դեպի խանութը։ Պարոն Արշակը գնաց «ապրանք առնելու»։ Խանութի բանալին ինձ մոտ է։

Վորոնցովյան հրապարակից թիքվում եմ դեպի Միքայելյան փողոցը։ Ահա փոստը, դեղատունը, Միքայելյան հիվանդանոցը, արհեստավորաց ակումբը, լուսանկարչատունը, ամառային ակումբը, իսկ ամառային ակումբից տասը քայլի վրա՝ խանութը։

Ես բացում եմ խանութի դուռը, տխա փեղկերը, ջուր եմ ցանում խանութի հատակին և խանութի առաջ և սկսում եմ ավել։ Մտանում է մի գինվորական։

— Հիմոնադ,— ասում է նա։

Ես թխթխել սառցարկղից հանում եմ մի շիշ լիմոնադ,

յցահանով բացում ու բաժակի հետ դնում եմ դինվորականի առաջ։ Նա խմում է ու խոժոռում դեմքը։

— Լավ լիմոնադ է,— գոլում է նա։

— Էլ ինչո՞ւ է խոժոռում դեմքը, —մտածում եմ ես։

Նա պահանջում է երկու ֆունտ դեղձ։ Ես կշռում ու տոպրակով տալիս եմ նրան։ Նա վճռցնում է դեղձերից մեկը.

— Փշացած է, —ասում է նա ու ժպտում։

— Էլ ինչո՞ւ է ժպտում,— մտածում եմ ես...

Նա վճարում է ու հեռանում։— Տարօրինակ գնորդ,— մտածում եմ ես։

Ես նստում եմ ու սկսում եմ գրել։ Ի՞նչ էի գրում ես այն ժամանակ, հիմա չեմ հիշում, բայց պետք է, նիթատրել, որ գրում էի մեծ ոգևորությամբ, որովհետև հիմա գրելիս մտածում էին գնորդները, ես նրանց քշում էի մեկ ռուբլիանոց տպրանքը երկու ռուբլի հայտարարելով։ Ահա և պարոն Արշակը։ Մեկ ձիանի սայլակով նա բերել է մրգերի արկղներ, ծխախոտ, լիմոնադ և ուրիշ ապրանքներ։ Սիեե - հնարավոր լիներ, ես պարոն Արշակին էլ կքշեի, բայց ստիպված եմ ընդունել ապրանքները, դասավորել, կարգավորել...

Նորից ես մենակ եմ։ Ես անձնատուր եմ լինում իմ հուշերին, հիշում եմ վանը, ապա Երևանը։

— Երեք տուփ «հան-կեֆի»,— ասում է մի ակնոցավոր երիտասարդ։ Սիեե նրա ակնոցը չլիներ, նա շատ նման կլիներ դամասական նկարիչների պատերից նայող Գարրիել Հրեշտակապետին։

— Չկա,— ասում եմ ես՝ տարված իմ մտքերով։

— Երկու տուփ «հան-կեֆի», —ասում է մի գեղեցիկ հագնված տիկին Մարիամ Մագթաղինացի, օդեկոլոնի բուրմունքի առատությանից ամպերից։ Ես արտզում եմ նրան երկու տուփ ծխախոտ,— «հան-կեֆի»։

— Ասում էիր չկա,— գանգատվում է ակնոցավոր Գարրիել Հրեշտակապետը։

— Դուք «հան-կեֆի՞» եք ուզում... խնդրե՞մ, որքան ցանկանաք։

Նա վճարում է, վերցնում տուփերը և հեռանում,— «տարօրինակ առևտրականը»,— երևի մտածում է նա։

Գալիս է Տիգրան աղան։

— Ինչպե՞ս են գործերդ։

— Ո-չի՛նչ...— ձգում եմ ես։ Նա նայում է դրամարկղը և որոշում։

— Վա՜տ են գործերդ...

— Երբ որ Արշակը կգա, դու կարող ես գնալ, զրոսնել... երեկոյան կարող ես գնալ Թատրոն, կինոյ Տոմսի համար փող վերցրու Ճաշին կգնաս տուն ճաշ կրներս, միասին կճաշենք։

Ու գնաց։

Մոտեցավ 15—16 տարեկան մի աղջիկ, հենվեց խանութի փեղկին ու սև խաղողի ՝նման աչքերով նայեց դարակներին, հետո ինձ։

— Ի՞նչ եք ցանկանում, օրիորդ,— հարցնում եմ ես։

— Ես սիրուն չեմ,— պատասխանում է նա։

— Բայց ես չասացի սիրուն, ես ասացի՝ օրիորդ...

— Օրիորդները սիրուն են լինում։

Ես բացատրեցի, որ օրիորդը կարող է լինել և՛ ազնվ, և՛ գեղեցիկ։

— Ոչ,—համառեց նա,—բոլոր օրիորդները գեղեցիկ են...

— Լավ,— համաձայնվեցի ես,— իսկ դու ի՞նչ ես։

— Աղջիկ,— պատասխանեց նա, մազերի շագանակագույն հյուսը առաջից ետ նետելով և անմեղ կերպով ժպտալով։ Նա մինչև անգամ գեղեցիկ էր։

— Դու գեղեցիկ աղջիկ ես, —ասում եմ ես։

— Առաջին անգամ եմ լսում,— ասում է նա խորին լրջությամբ։— Դու ինձ տասը հատ խրխ կտա՞ս։

— Ամենայն սիրով...

— Փողը հետո կբերեմ,— ասում է նա,— մենք հարևան ենք. իմ հայրը ամառային ակումբի պահակն է, ամառային ակումբի բակումն էլ մենք ապրում ենք,— ուզում է հեռանալ, բայց կանգնում է ու ետ դառնալով՝ ասում.

— Այսօր «Արշին-մալ-ալան» է գնում Գյուլշատի դերում՝ Արտա Ոսկանյանն է... Ալբերտը պարելու է... Կգա՞ս...

— Կգամ,— ասում եմ ես,— իսկ ո՞վ է Ալբերտը...

— Բալեամեյսաներ,— պատասխանում է նա,— պարող... Իսկ Արուս Ոսկանյանը արտիստկա է... տեսնես՝ կսիրահարվես...

— Ես արդեն սիրահարվել եմ,— ասում եմ ես,— երկրորդ անգամ չեմ կարող սիրահարվել...

— Ո՞մը,— հարցնում է նա, մանր, սպիտակ ատամներով կծելով իրիսը:

— Քեզ,— պատասխանում եմ ես ամենայն լրջությամբ:

Նա կարմրում է, հետո ցուցամատով սպառնում է ինձ ու հեռանում:

24. ԱՐՈՒՍ ՈՍԿԱՆՅԱՆ

Այդ տարին Հովսեփ Ոսկանյանը ամառային ակումբի թատրոնում ծավալել էր իր գործունեությունը: Թատրոնի ռեպերտուարը ուշադրություն էր գրավում իր խայտաճամուկությամբ: «Արշին-մալ-ալան», «Տրիլբի», «Ուշ լինի, նուշ լինի» և «Քին», «Թաթոս Իվանիչ» և Արցիբաշևի «Խանդը», «Աշուղ Ղարիբ» և «Դավաճանություն»... ավելորդ է նշելը, որ Հովսեփ Ոսկանյանն ամառային թատրոնի բեմի վրա ավելի հմուտ առևտրական էր, քան ես՝ դեռուս խանութում: Կապվելով նման խայտաբղետ խաղացանկի, նա դեպի իրեն քաշեց Թիֆլիսի խայտաբղետ, թատրոնասեր հասարակությունը:

Ասվածի հետ, ես չէ, որ պիտի զբաղվեմ թատերագիտության և քննության առնեմ Հովսեփ Ոսկանյանի թատերախմբի այդ սեզոնի ռեպերտուարի դեղարվեստական և սոցիալական արժեքը: Կարևորն այդ չէ: Կարևորն այն է, որ երբ ես առաջին անգամ բեմի վրա տեսա Արուս Ոսկանյանին, ինձ համար անհերքելի իրողություն դարձավ, որ, առաջինը՝ Արուս Ոսկանյանը հայկական թատրոնի երկնակամարի վրա շողացող մի կախարդական աստղ է և երկրորդը՝ որ ես սիրահարված եմ նրան:

— Իսկ Սիրարփի՞ն,— պետք է հարցնի ընթերցողը:

— Իսկ Սիրարփի՞ն,— հարցրի ես ինձ այն ժամանակ, իսկ էմմա՞ն, որին ես սրտեն հավատացրել էի, որ միայն նրան եմ սիրում... ես խիստ քննության ենթարկեցի ինքս ինձ և, ավա՞ղ, դուս, որ նրանք մազաչափ անգամ իրար չեն խանդարում, և որ ես սիրում եմ նրանց այնպես, ինչպես կարող եմ սիրել վարդը, մեխակը, մանուշակը, առանձին-առանձին և միասին։

Երբ Արուս Ոսկանյանը բեմ մտավ և արտասանեց առաջին նախադասությունները Տրիլբիի դերում, ես մոռացա, թե ուր եմ գտնվում և ով է նստած իմ կողքին։ Ինձ թվաց, որ, իսկապես, նրա աջ ոտքի նման գնդեցիկ ոտք միայն մի ոտք կա և այդ՝ նրա ձախ ոտքն է և որ նրա նման գնդեցիկ կին աշխարհում չի եղել, չկա և չի լինի...

Ես զգացի ինձ վրա երկու աչքերի այրող ջերմության իմ կողքին նստած էր էմման. այդ նա էր նայում ինձ վրա այրող ու խանդոտ աչքերով։ Արուս Ոսկանյան-Տրիլբին ծիծաղեց հնչուն, հատակ ծիծաղով, և նրա ծիծաղը հազարավոր արծաթի դանգակների նման զնգաց իմ ողջ էության մեջ։

— Սիրահարվեցի՞ր,— շշնջում է ականջներիս մոտ էմման։

— Մի՛ խանգարի,— բողոքում եմ ես։

— Բայց նա քեզ վրա չի էլ նայի...

— Թող չնայի,— ասում եմ ես, —ես կինացիմ նրա վրա։

— Նա ամուսին ունի...

— Ի՞նձ ինչ, թող ունենա։

— Դու խելքի ես,— նորից շշնջում է էմման՝ ցավեցնելու աստիճան սեղմելով իմ ձեռքը։

— Շատ հնարավոր է,— ասում եմ ես։

...Միջնադարյան Դահլիճը ծիւում է ծափահարություններից, ալեկոծվում։— Ոսկանյա՛ն,— կանչում է դահլիճը. վարագույրը բացվում է, և Հովսեփ Ոսկանյանը բեմ է մտնում ու գլուխ տալիս հասարակությանը։— Արուս Ոսկանյան,— ուղղում է դահլիճն իր սխալը։ Բեմ է վազում Արուս Ոսկանյանը։ Ծափահարությունները ու բարձրանշությունները կրկնապատկվում են։ Դահլիճից բեմ են թռչում ծաղկեփնջեր։ Արուս Ոսկանյանը վերցնում է ծաղկեփնջերից մեկը, սեղմում

կրծքին, դուխը խոնարհած է, նկատելի կերպով ժպտալով տատին կարգերի հաստատությանը նա քարձրանում ևմ անկյուն ու նայում, ուրքե՞ր են նստած տատին կարգում՝ ծաղատ, վարդագույն ու սպիտակ դուխներ, կարճ ու ալեկոծ վիզեր, սև ժիլետներ, ոսկի շղթաներով,— «Թիֆլիսի օպերայինները,— անցնում է մտքովս,— բոլորին էլ կախարդան...»

Օվացիաները վերջանում են։ Հաստատությունը դահլիճից դուրս է գալիս ամառային այգին։ Ես նայում եմ շուրջս էմման չկա։ Ե՞րբ դուրս եկավ, ես չեմ նկատել։ Ես քայլերս ուղղում եմ դեպի այն ծառուղին, ուր վերջին օրերը հանդիպում էինք էմմայի հետ և խոսում էինք, խոսում ու խոսում, առանց պիտի, ինչի մասին։ Ես չեմ սխալվում. նստել է նա մեր նստարանի վրա, ծնոտը երկու ափերի մեջ առած, արմունկները ծնկներին։ Ես մոտենում եմ նրան նա լուռ է։ Ես ուզում եմ գրավել նրա կողքին, ծնոտս առնում ափերիս մեջ և արմունկները հենում ծնկներիս։ Մոտենալու շատ բան կա։

Ակյանա, մինուտն դիրքում մենք նստած ենք հինգ րոպե, գոյն տասը րոպե... Ես գիտեմ, ինչ ինչ է մոտծում էմման, իսկ էմման չգիտի, ինչ ես ինչ եմ մոտածում, ինչո՞ւ ես տրխրել, սայծատ աղջիկ, վճիտ աչքերով էմմա, ինչո՞ւ ես խանդում։ Մի՞թե դու կարծում ես, որ Արուս Ոսկանյանը քեզ վոնդեց իմ սրտից։ Մի՞թե դու դուրս վանդեցիր Միրարիսան իմ սրտից ո՛չ, էմմա, ապրում եր դուք, ինչպես երեք մարմարիոնն չքնաղ, կենդանի կուռքեր իմ հոգու սաճարում ու ես, պատանի քուրմ կամ երիտասարդ աբեղա, աղոթում եմ ձեր դեմ ծնկաչոք ու գլխաբաց, ծխելով սիրտս որպես խունկ, սիրտս որպես խունկ...

Ես ինքս էլ չիմացա, թե ինչպես հայտնվեցի էմմայի առաջ ծնկաչոք, գլուխս դրած նրա ծնկներին, դառն արցունքներով լալիս ես լալիս էի ու մոտծում Միրարիսու մասին, Արուս Ոսկանյանի մասին ու կրկնում, պնդում,— էմմա, ես քեզ սիրում եմ...— ես մոտծում էի, որ եթե երբևէ կամ Միրարիսու ծնկների վրա, ապա միտի հիշեմ էմմային ու Արուսին, իսկ եթե Արուսի ծնկների վրա արտասվեմ, անկասկած, պիտի մոտծեմ Միրարիսու և էմմայի մասին,—

էմմա, ես քեզ սիրում եմ...— Սիրարփուն ես ճկուքթով անգամ չեմ դիպել, Արուսի ծնկներից ես հեռու եմ երևի հազարավոր ծուխերով, դո՛ւ միայն թույլ տվիր, որ գրկեմ քեզ ու շնչեմ քո մեջ, մանկական ծնկների արևարույր բուրմունքը էմմա, ես սիրում եմ քեզ...

Նա վեր կացավ, կարդի բերեց իր մազերը և շշնջաց ինձ համար միայն լսելի ձայնով.

— Գնանք, երդարդ պանգը, քեզ հետ ես վախենում եմ...

...Վերջին միջնադարի ժամանակ, երբ ես դուրս եկա դահլիճից էմմայի խիստ հսկողության տակ, մութի մոտ լսեցի հետևյալ խոսակցությունը, երկու երիտասարդների միջև.

— Կոլյա, գնանք ծաղիկներ գնենք ու երբ դուրս գա Արուս Ոսկանյանը՝ տանք իրեն:

— Գնանք, Սաշա, որ ճիշտ ես ասում, անձամբ տանք իրեն... Բեմ դցելը հիմարություն է:

Ես էմմային ասացի,— հիմա ես կգամ,— ու հետևյալ երկու ասպետներին ես չդիտեի, թե ո՞ւր է գոնվում ծաղկավաճառուհին:

Բայց ահա և ծաղկավաճառուհի: Նրանք պատվիրում են իրենց «բուկետները», ես՝ իմ ծաղկավաճառ նրանք դուրս են գալիս իրենց բուկետներով, ես հետևում եմ նրանց իմ ծաղկեվաճառով:

Թատրոնի մոտի մոտ կանգնել է էմման: Նա սեղմ աչքերով նայեց իմ ծաղկավաճառին և անհամ միացավ ինձ: Հնչեց երդարդ պանգը, և մենք մտանք դահլիճը:

Երբ վերջին գործողությունը վերջացավ, և վարագույրը փակվեց, դահլիճը վերջնականապես կորցրեց զուսպ. «Բի՛ս», «բրավո՛», «բրավիսիմո», «Արուս Ոսկանյա՛ն», «Արո՛ւո՛ս»... հասարակությունը խոնվեց բեմի առաջ: Վարագույրը բացվեց, և բեմի վրա երևաց Արուս Ոսկանյանը: Օվացիան կրկնապատկվեց և եռապատկվեց:

Ես մնացել էի իմ աթոռին և, բացի Արուս Ոսկանյանից ոչինչ չէի տեսնում: Նա լողում էր ու ժպտում ծաղիկների գույնզգույն ամպերում: Իմ կողքին նստած էր էմման. նա

չէր նայում բեմին, նա նայում էր ինձ իր մեծ, վճիտ հայացքով։

— Ինչո՞ւ չես նեռում քո ծաղիկները,— հարցնում է նա սվացիանների աղմուկի միջից։

— Դա հիմարություն է,— ասում եմ ես,— ես անձամբ կուտամ նրան։

Վարագույրը վերջնականապես փակվեց. հասարակությունը սկսեց դուրս գալ։

Դուրս եկանք և մենք, էմմայի հետ միասին։

Դեպի այգու ելքը տանող գլխավոր ծառուղու նստարաններից մեկի վրա նստել էին ինձ ծանոթ երկու հերոսներն իրենց **բուկետներով**։ Ես որոշում եմ հանդիս գալ վերջում։

Գլխավոր ծառուղին ամայացավ։ Անցնում են միայն դերասան-դերասանուհիները փորձից, կեշկե պայուսակներով, փորձի խմբերով, դույզերով կամ առանձին-առանձին։

— Գալիս են,— ասում է երկու ասպետներից մեկը Ծառուղու վրա, էլեկտրական լույսով ողողված, երևում է Արտ Ոսկանյանը, սպիտակ, ամառային զգեստով, նույնքան դյութիչ ու գեղեցիկ, որքան բեմի վրա։ Նա գալիս է թեթև կերպով հենված ամուսնուն, որը նույնպես սպիտակ էր հագած, գլխարաց, գլխարկը բռնած ձեռքին։

Երկու ասպետներն իրենց **բուկետներով** վեր կացան, մոտեցան նրանց և պարզեցին ծաղիկները Ոսկանյան Արուսին նա ժպտաց բեմական ժպիտով և նայեց ամուսնուն,— ինչպե՞ս վարվել։

Հովսեփ Ոսկանյանը չկորցրեց իրեն.

— Մխալվում եք, երիտասարդներ, այդ ծաղիկները որքան ես գիտեմ Տրիլբիին են պատկանում։

— Այո՛,— անհամատեղ ձայնով հաստատեցին գերասանները։

— Տրիլբին մնաց այնտեղ, բեմի վրա,— աջ ուսի վրայով, բեմասում ցույց տվեց նա,— այնտեղ էլ հարկավոր էր նվիրել... իսկ հիմա ձեր առջև կանգնած է (նա բաց ձեռքով ցույց տվեց Արուսին՝ գլխից մինչև ոտները թեթև շարժումով) իմ ամուսինը և ընտանիքի մայրը, որի հետ դուք ծանոթ

չեք կամ կապված չեք ազգակցական կապով... Գնանք, Արուս,— ու նա իր աջ ձեռքը նետեց Արուսի աջ ուսի վրա ու տարավ նրան, ինչպես հոգնած գարիին հրեշտակապետը տանում է այն աշխարհը իր գնդեցիկ գոհին...

Երկու ասպետները խորտակված նետվեցին ամենամոտ նստարանի վրա։ Էմման մոռացավ ինձ, ինչպես ինձ թվաց, շատ ժպիտով, իսկ ես... օ, ես ցույց տվի, որ նրան չեմ նկատում և հետևեցի սպիտակագեստ գույգին։ Նրանք դուրս եկան փողոց, ես՝ նրանց հետևից։

Հոլսեի Ոսկանյանի սուր աչքից չվրիպեցի ես. նա նետեց ինձ վրա և նկատեց ծաղիկիունջը, որը ես ամեն կերպ աշխատում էի անկատելի դարձնել։

— Ещё один цветоносец,— ,— *ասաց նա քմծիծաղով Արուս Ոսկանյանը նայեց ինձ վրա երկնադույն, շողող աչքերով և, ըստ երևույթին, պատրաստվեց ամուսնուն ինչ-որ բան ասել, բայց այդ րոպեին արագընթաց կառքը կանգնեց ակումբի առաջ, նրանց մոտ։*

Երբ կառքը պատրաստվեց շարժվել իր տեղից, ես մոտեցա կառքին և ծաղկեփունջն ամբողջ թաղով շպրտեցի կառքի մեջ։ Կառքը շարժվեց «նոյ հյուրանոցի ուղղությամբ, և իմ ժպրախտ ծաղկեփունջը դուրս թռավ կառքից ու կպավ հառաչելով ընկավ ասֆալտե մայթին։

Երբ ես բարձրացրի ծաղկեփունջը, իմ դիմաց կանգնած տեսա Էմմային. նա դունատ էր, շնչում էր խոր և արագ, հուզմունքից նրա կուրծքը բարձրանում էր ու իջնում։ Ես ափրնցի ծաղկեփունջը Էմմային։ Վերին հարմար բան չկարողացա մտածել։

Նա արագ վերցրեց, գրեթե խլեց իմ ձեռքից ծաղկեփունջը, ջղային մատներով պրպատեց ծաղիկները, նետեց մայթի վրա, ոտքով իր ամառային սպիտակ կոշիկներով վերտրահանված ու բազմաշարշար ծաղկեփունջը ու դիմեց դեպի տուն։ Մի քանի քայլ անելուց հետո, նա կանգնեց, դարձավ դեպի ինձ պրոֆիլով և խեղդված ձայնով ասաց.

— Բարի գիշեր։ Մենք այլևս ծանոթներ չենք...

Ու արագացրեց քայլերը։

— Էմմա,— կանչեցի ես։ Նա ետ չնայեց։

— Էմմա,— կրկնեցի ես։ Նա թեքվեց գլխավոր ծառուղուց դեպի իրենց տնակը և անհետացավ։

Ինձ մայթի վրա ես մենակ մնացի՝ ողողված լուսնի ու էլեկտրական լամպերի լույսով։

Ինձանից ոտն երկրորդ ուրվի պատուհաններից մեկը բացվեց ազմուկով, և փողոց խուժեցին երկտող խմբերգի մելամաղձոտ հնչյուններ.

Դու էլ գնա, նոր սեր արա,
Այսպես է կարգն աշխարհի...

Բայց ես «նոր սեր անելուս կարիք չունեմ, ես ունեմ իմ սերը, իմ հին սերը։ Հիմա երևանում գիշեր էր։ Նույն այս լուսինը կանգնած է երկրորդ ուրբանոցի վրա։ Բակում բոլորում են հասմիկները ու յասամանները, իսկ Սիրարփին քնել է հրեշտակային քնով։

Իմ հին սեր, ես քեզ սիրում եմ նոր սիրով...

25. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Օրերից մի օր, երբ ես առավոտյան բացել էի խանութը (փակածի մեջ ասած, որի գործերը արագ թալկում եւ-եւ էին գնում) և պրպտված էի խանութի առաջը ավլելով, ժրտտալով կանգնեց իմ դեմ Երևանի իմ ծանոթներից մեկը՝ վանեցի Համլետ Մարուքյանը։ Նրա մեծ եղբայրը՝ Մանվել Մարուքյանը, մեծ ապագա խոստացող երիտասարդ գերասան էր, իսկ Համլետը նշանավոր էր նրանով, որ ինքնաշխատությամբ յուրացրել էր ֆրանսերենը և ֆրանսերեն լեզվով վեպեր էր գրում։ Իսկ այդ վեպերը նշանավոր էին նրանով, որ նրանց ֆրանսիացի, անպայման իտրիղյան ծագում ունեցող հերոսները դիշեր-ցերեկ խմում էին ու գլարճանում իտրիղյան կոկնտուհիների հետ և անհասկանալի էր, թե որտեղի՞ց, ի՞նչ աղբյուրներից էին նրանց եկամուտները և ինչպե՞ս չէին վերջանում այդ ժաների, էմիլների, լեոնների, արտուրների ֆրանկները։ Հիմա ես չեմ հիշում, թե ինչի՞ մասին մենք խոսեցինք և ցույն ավելորդ լիներ հիշել այդ ոչնչով նշա-

նավար հանդիպումը, եթե հնարավոր լիներ իրար հետ երիտասարդական լուսավոր հուշերով, եթե նա հնարավոր չլիներ իմ առաջին գրքի հրատարակիչը։ Մի քանի օր առաջ ես նամակ ստացա նրանից. նա ծանուցում էր, որ 1952 թվի փետրվարի 14-ին իր ծննդյան հիսնամյակն է։ Ես այսօր անպայման մի բայկով պիտի շնորհավորեմ նրա 50-ամյակը, և պիտի անվիճայնեմ, որ այսօր ևս գրեցի մեր քիֆլիայան ոչ մի բանով նշանավոր հանդիպման մասին, երեսունվեց տարի առաջ։ Այո, երեսունվեց տարի առաջ, մի անգամ ևս պիտի կրկնեմ— երեսունվեց տարի առաջ։

Իմ այդ շրջանի հանդիպումների մեջ ես չեմ կարող մոռանալ մի հանդիպում ևս Երևանյան հրապարակի մոտ ես հանդիպեցի երիտասարդների, թևերի տակ առած նոր լույս տեսած գրքույկների կապոցներ։ Ես հետևեցի նրանց, և երբ նրանք կանգնեցին մատուռներից մեկի մոտ, ես կարողացա տեսնել գրքի շապիկը,— Սեն-Գաո, «Մրմունջներ»։ Նրանցից մեկը նկատեց իմ հետաքրքրությունը, ժպտաց և ասաց.

— Սեն-գաո— «Մրմունջներ»։

— Կարելի՞ է գնել։

— Կարելի է։ Գնանք հետս «Գուտաններում» գրախանութը, մենք կհանձնենք, իսկ դու գնիր։

— Իսկ Սեն-Գաոը ո՞վ է։

— Ահա Սեն-Գաոը,— ցույց տվեց ինձ կլակով՝ երիտասարդը,— ծանոթացեք։

Շևկ, պնդանման, պիտաց, մեծ, ժպտուն բերանով Սեն-Գաոը կարճ պատկց իր ձեռքը, գրքի կապոցը տեղափոխելով թևի տակ։

— Իսկ դուք սիրո՞ւմ եք բանաստեղծություններ,— հարցրեց ինձ բանաստեղծի ընկերը։

— Այո։

— Գրո՞ւմ եք։

— Այո։

— Տպի՞լ եք։

— Առանձին գրքով— ո՛չ։

— Թերթերո՞ւմ։

— «Վան-Տոպ»-ում։

— Ահա՜. հիմա ես գիտեմ ով եք դուք... Գուրգեն Մահարի... Կարոցել ենք, կարոցել։

Պետք էր, որ իմ դեմքը յուղականին հիմար արտահայտություն ունենար, շոյված էր իմ ինքնասիրությունը, հանաք բան չէր, մարդին ինձ գիտեն, առանց ինձ հետ անձամբ ծանոթ լինելու...

Գրախանութում նրանք չթողին, որ ես գնամ գիրքը Սեն-Գաոլ մատուցից իր գրի վրա, նվիրից ինձ, և մենք բաժանվեցինք։

Սեն-Գաոին ես այլևս չհանդիպեցի, ոչ կյանքում, ոչ էլ պրականության մեջ։ Ի՞նչ եղավ նա, խեղդվե՞ց Կուռ գետում, թե՞ քնատարանքը նրան կերան, անհայտ մնաց ինձ համար ես չեմ հիշում նրա բանաստեղծությունները, բայց չեմ կասկածում, որ Մարքել Պաոենճյանը նրա պես չէր շոյ... Նրա ընկերը, ինչպես հետո պարզվեց, Սարոխա Մելիքեթյանն էր, որը մի քանի տարի բնմի վրա բայլից, հետո պրականության ասպարեզում դուսից և վերջը դարձավ բանաստեղծ և քննադատ։

Իսկ Սեն-Գաոլ... ես չհանդիպեցի նրան այլևս և չլսեցի նրա մասին Բրևի Պաոենճյանը կերավ նրան։

Ախ՜ Սեն-Գաո, խե՜ղճ «Պրոմոնջնեթ»...

26. ՄԻ ՀԻՇԱՐԺԱՆ ՀԱՎԱՔՈՒՅԹ

Մի կիրակի օր, առավոտյան, մայրիկը հայտնեց, որ այդ օրը մենք ճաշի ենք հրավիրված հորաքրոջս՝ Սաթենիկ տատենց տանը, որոնք երևանից փոխադրվել էին Թիֆլիս Սաթենս տատս մոտ ապրում էին այրի հարսը, գեղեցիկ Հռիփսիմեն, Ահեմ-խաչատենց աղջիկը և այրի աղջիկը՝ Նոյեմիկը։ Ես նրանց չճանաչեցի, նրանք ածել էին, գեղեցկացել ես հիշեցի նրանց վանում, երբ նրանք պզտիկ մատերով ալի ալյուսը էին քաշում իրենց ամուսինների դագաղների վրա։ Այս ժամուն, յալ հագնված կանայք ամենևին նման չէին նրանց։ Նրանք ևս իրենց հերթին գոան, որ ես իսկա-

կան տղամարդ եմ դարձել։ Սաթենն տատի մյուս որդին՝ պարոն Միհրդատը, պարոն Արտահամի միջի եղբայրը, չմոռանալով հանդերձ, որ նա հնչակյան շեֆի կրտսեր եղբայրն է, ամկավար Հակոբ էֆենդի Տեր-Զաքարյանի հետ առևտրով էր զբաղվում։ Ճանապարհին մայրիկը հայտնեց ինձ, որ ամենայն հավանականությամբ նոյեմիկը Հակոբ էֆենդու հետ պիտի ամուսնանա, եթե այդեն չեն ամուսնացել... Մեզ դիմավորեց նաև Սաթենն տատի մյուս աղջիկը՝ Վարոնիկը, որի համար նույնպես նախատեսված էր փեսացու, Տժկանց Արմենակը, որը դարձել էր բժիշկյան Արմենակ...

Ներս մտան Հակոբ էֆենդին և պարոն Միհրդատը։ Հակոբ էֆենդին հաղթանդամ մի մարդ էր, լայն ուսերով ու կրծքով, հայկական խոշոր և պղեցիկ դիմագծերով, հասո, ոլորուն ևս բնկերուվ։ Նա պատկառանքով հայրենց Սաթենն տատի ձեռքը և ասաց.

— Ես նկա, մարե՛։

— Հազա՛ր բարի, Հակոբ էֆենդի։

— Ինձի էֆենդի մի՛ ըսեր, մարե՛,— բացց Հակոբ էֆենդին,— ես քո ղավակն եմ... ինչո՞ւ Միհրդատին՝ Միհրդատ փաշա չես ըսեր։

Բոլորը ծիծաղեցին, ծիծաղեց և Հակոբ էֆենդին՝ նայելով Միհրդատին. իսկապես որ ծիծաղելի էր նրան անվանել «Միհրդատ փաշա», ի ծնե ծուռ էր նրա վիզը։ Միակ գրավիչ մասը նրա դեմքի, աչքերն էին, բարությամբ լեցուն, կարծես միշտ արտասվելու պատրաստ աչքերը։

— Շնորհավորանքներս, տիկին Անուշ,— շարունակեց Հակոբ էֆենդին՝ սեղմելով մայրիկի ձեռքը,— որդիդ հրաշքներ կգործե, չնայած որ դեռ ածելին չի դիպել երեսներուն. այդ տարիքին մեջ մենք վեց կիսապային և ոսկեվոն կիլոցանինք... Գուրգեն, կորչուս, բարև։

Թե որքան նա նման էի կորչունի, հայտնի չէ, բայց որ Հակոբ էֆենդի Տեր-Զաքարյանի մեջ կար ինչ-որ առյուծային բան, դա կասկածից դուրս էր։

— Միհրդատ,— դարձավ նա, մի հատ պատիրաս վա-

ոլում և կորչելով ծխի թուլանալում,— փարթի մը նարդի հատա՞ք, մինչև սեղան նստելը։

Մինչդեռ պարոն Միհրդատը պրաղված էր նարդու քարերը դասավորելով, Հակոբ էֆենդին մռայլած վառվռուն աչքերով և փարթամ կազմվածքով նոյեմիկին ու հարցրեց.

— Ինչպե՞ս ես, ջա՛նս

— Շնորհակալ եմ, Հակոբ էֆենդի

— Տրե՞ն էֆենդի՛. կուզես որ ականջներդ կարե՞մ։

Նոյեմիկը ժպտաց և շշնջաց, հազիվ լսելի ձայնով.

— Հակոբի՞կ։

— Օ՜հ, աստղ պես չեմ... Դյու-շե՛շ,— նետեց Հակոբ էֆենդին, և խաղն սկսվեց։

Դուռը բացվեց, ու ներս մտան հորեղբայրն ու Հռեփ քույրիկը։

— Աա՜... հազա՛ր բարի, հազա՛ր բարի,— լսվեցին երկար բացականչություններ։

— Հազար բարին իր հերթին,— ձայնեց հորեղբայրը՝ Մանուկ աղան,— բայց որ սեղանը պատրաստ չէ, դրա համար տուգա՛նք Սաթենիկ տատին, ի պատիժ՝ վեր կաց, պարի... և նա մոռցավ, իր ուժեղ ձեռներով բարձրացրեց փոքրիկ պառավին՝ Սաթենիկ տատին, ու սկսեց վեր-վեր թռցնել։

— Թող, Մանո՛ւկ, ասուլած սիրես՝ թող, անհամություն մի անի,— բողոքում է Սաթենիկ տատան և աշխատում է ազատվել Մանուկ աղայի գրկից։

Բոլորը ծիծաղում են, ծիծաղում է անգամ Միհրդատն իր խոնավ աչքերով։

Մինչ այս, մինչ այն, սեղանը սկսում են պատրաստել, գնդում են պնակներ, բաժակներ, դանակներ ու պատառաքաղներ։

— Փանչ ու սև՛...,— հավաքում է վերջին քարերը Հակոբ էֆենդին։

— Օյի՛ն,— ասում է պարոն Միհրդատը։

Բոլորը նստում են սեղանին։ Այդ միջոցին դուռը բացվում է, ու ներս է մտնում վարպետուհին, ճչացող փողկապով և օսլայած օձիքով մի... Արմենակ Բժիշկյան, փոքրիկ մորու-

քով, փոքրիկ բեղերով, մազերը խնամքով սանրած ծախից աջ... նա ամեն ջանք թափել էր արդարացնելու համար իր ազգանվան բարեհոռչակությունը,— է՛ր Տժկանց Արմենակ և դարձավ Արմենակ Բժիշկյա՛ն...

— Բոճ ժուռ, մյուռու,— նեռից նա իր ընդհանուր բարևը, անուռ առնելով մազամներին ու մազմազնիներին և ըստ սրևուչքին կարծելով, որ այդ նշանակում է «բարև ձեզ»։

Մոռնցավ նրա հարռնացուն՝ վերոնիկը, և ցած ձայնով կշռամբնց.

— Մարդավարի բարև տալ չգիտե՞ս...

— Ինչռե՞ս, ես...

— Էլ չլսե՞մ քո «բոճժուռ-մոճժուռը»։

— Փառոն։

— Փառոճն էլ հետը, նառիս։

— Պարոն Արմենակ, ո՞րտեղ սովրեր եք ֆրանսերեն,— լավնց Հակոբ էֆենդու հարցը, ինքն քմծիծաղով համճռված. այդ առնով հարց կարելի է տալ միայն երեխային,— Լևոնիկ, այդ աչիկները ո՞րտեղից ես ճարել։

Սակայն պարոն Արմենակը չհասկացավ այդ. նա լուրջ կիրպարանք առացավ և պատասխանեց.

— 1913 թվին Փարիզեն վառ եկավ...

— Լա՛վ, պարոն Արմենակ, մի ուրի՞շ անգամ,— ընդհատեց հորեղբայրը պարոն Արմենակի ելույթը, որից շատ գոհ մնաց Վերոնիկը,— խնդրեմ, ընտրել թամադա։

— Հակոբ էֆենդի՛,— առաջարկնց Միհրդատը։

— Հակոբ էֆենդի՛. Հակոբ էֆենդի՛,— ժպիտհարեցին բոլորը։

— Բաժանները լեցնել,— հրամայնց Հակոբ էֆենդին ու տաքն կանգնեց։

Տիրնց լռություն. Հակոբ էֆենդին, հատ մատներով բարձրացրեց իր բաժակը և ուշադրությամբ նայելով սեղանակիցների դեմքերին, մեծ խնամքով ընտրելով բառերը, հետևյալ ճառն արտասանեց.

— Սեղանակիցներ, այս սեղանի շուրջ նստած են մնացորդները այն մեծ ժողովրդի, որ դեռ գնաց թուրքական ար-

յանուն յաթաղանին և որու ոսկորները մնացին յոթ վիպեթիներու հողերուն վրա ցան ու ցրիվ...

Սաթեն դուդուն արտասվեց, նրա օրինակին հետևեց մայրիկը: Աբրահամ Բրուտյանի ապրին՝ Հռիփսիմեն, երազեն և մեծ աշքերով հայացքը հառել էր պատուհանից դուրս, որտեղից երևում էր Թիֆլիսի պանորաման, Վերոնիկը կըսմրթեց իր փնտացուի՝ Արամեանի Բժիշկյանի թևը, որն ուշադրությամբ լսելու վտիտարին, շարունակ ուղղում էր իր օսյած օձիքը, վրի անհարմար դրությունը մեղմացնելու համար:

— Պետեն մինչև վան,— շարունակեց թամադան,— վիլիսյեն մինչև Տրապիզոն տարածվեց պատմության ահեղ ահազանդը, ահազանգ՝ մոտավոր ազգային ոչնչացման վերահաս վտանգի, ահազանգ՝ չափավորության, զգոնության, զգուշավորության...

Հորեղբայրը բոլոցքը խփեց սեղանին. դժվար էր ասել, դա ցասման ու դավակցության նշա՞ն էր միևնոյն ու կես գոհնի հասցնելին, թե՞ անհամբերության արտահայտության հետևյալ նշանակությամբ,— ա՛լ երկար ըրիր, Հակոր էֆենդի, թող որ խմենք...

— Սեղանակիցնե՛ր,— ավելի ցած, բայց ավելի խոր բասով եղբայրակից Հակոր էֆենդին,— հոսնկաց հարգենք միևոն ու կես գոհնի անմահ հիշատակը, բաժակները պարպելով ցմրուր...

Բոլորը ոտքի կանգնեցին: Տղամարդիկ խմեցին իրենց բաժակները «ցմրուր»: Սերվիսի կերակուրի բազմազանությունից անձյակը:

— Անո՛ւշ արեք,— խնդրում էր Սաթեն դուդուն,— վանի սերվիսով կերակուրն է...

— Այս կենացի առթիվ մի ե՛րգ,— հրամայում է թամադան:

Բոլորը նայում են իրար: Հորեղբայրը ժպտում է բեղերի մեջ և նայում է Հռնփ բուլղիկին.

— Երգիր, քա ջան:

Հռնփ բուլղիկն ինքնասաստարում, ինչպես հետագայում պարզվեց, մի երգ կար միայն: Այդ երգը զուրկ չէր որոշ

հետաքրքրությունից։ Միրանի ծառը երգում է ինքն իր մասին։

Ես հիմա մոռացել եմ այդ երգի խոսքերը, հիշում եմ, որ երգի տողերը վերաբերում են այն բանին, որ եղել են ինչ-որ թշնամիներ (և կան), որոնք բազում անգամ սղոցել են (և սղոցում են) իմ ճյուղերը, բայց ես աճել և աճում եմ և որ իմ անունն է «Մայր Հայաստան», Ընդհանրապես երգի ֆինալը ունկնդիրների վրա մեծ տպավորություն թողեց։

Հակոբ էֆենդու մոտ լսել բաժակաճառից հետո այս երգը հուսո շողերով լուսավորում է հայ ժողովրդի ճակատագրի մոտյալ երկնակամարը, ունկնդիրները ժպտում են կարծես տխրությանն ու ամպերից. իր հիացմունքը չի կարող զսպել անգամ Արմենակ Բժիշկյանը և բացականչում է.

— Բրա՛վո, բրա՛վո...

— Բաժակները լցնել,— հրամայում է խամադան ու ոտքի կանգնում։

— Սեղանակիցներ,— ասում է նա,— Ադամ և Նվան դժբախտ էին ոչ թե նրանով, որ մեղաքան զգեստներու փոխարեն թզենու տերևներով ծածկեցին իրենց մերկությունը, ոչ Մեծ դժբախտություն չէր և այն, որ Տհուլան նրանց դուրս վռնդեց դրախտից, Ո՞րն էր նրանց մեծագույն դժբախտություն Հանձին Տհուլայի՝ նրանք տեսան և ճանաչեցին իրենց երկնային հորը, նրանք ամուսնացան և ունեցան զավակներ Բայց նրանք չունեին մայր, նրանք չզգացին մոր սերն ու գորգուրանքը, նրանք անմայր էին և սա էր նրանց ահավոր դժբախտություն Մայր՝ դա հավիտենական արբույթյուն է, նա իր արգանդին մեջ կրեր է և կկրե այն, ինչ-որ կկոչվի մարդկություն, Այս սեղանի շուրջ ես կտեսնեմ երկու բազմաշարչար մայրերի՝ Սաթենիկ մարևին, տիկին Անուշին։ Ես կառաջարկեմ խմել երկու մայրերի քաղցր կենացը, մաղթելով, որ միասին սևին պատկանող և այս սեղանը զարդարող մնացած նկարագրիչները արժանանան մայր կոչվելու վիճակը ու պատվին... մայրերի կենացը։

Բաժակները ղնգացին, հորնդեր դեմքը մոայլվեց. երբոր տարին է, որ նա ամուսնացած է ու երեխա չունի Հոնի քույրիկը ժպտում է մեղավոր ժպիտով և խփում է իր

բաժակը մյուս սեղանակիցների բաժակներին,— Բրա՛վո,— լսվում է Արմենակ Բժիշկյանի բացականչությունը։ Բոլորը խմում են, Սեղանը աշխուժանում է, Ծրևում են նոր խոստիկներ։

— Անո՛ւշ արեք, աստվա՛ծ սիրեք,— խնդրում է Սաթենիկ դուդուն,— Վանի Թավա-քյաբաբն է...

Վերոնիկը երգում է Վանում իր ժամանակին տարածված «Սեպուհի մոր երգը», որն ավելի նման է լացի, հեկեկանքի, քան երգի.

Ցարալու սիրտս, յարաբ, ե՞րբ ժրի,
Իմ ագիզ բալիկ խաբար ո՞վ բերի...

Բոլոր կանայք ձայնակցեցին Վերոնիկին, և երգը վերածվեց ողբի։ Հակոբ էֆենդին ճկույթով աջ աչքի խորքից դուրս հանեց մի կաթիլ արցունք ու բթամատի օգնությամբ թափ տվեց անձեռոցիկի վրա։ Նրա ճկույթի վրա փայլում էր թանկարժեք մատանին, Հորևորայրը նրից բռունցքը խփեց սեղանին և անհամականալի էր, թե ինչո՞ւ համար,— արդյոք այն առթիվ, որ երգողը տարին է, որ ամուսնացած է և երեխա չունի՞, թե՞ Հակոբ էֆենդու մի կաթիլ արցունքը։

Երգը վերջացավ։ Կանայք սրբեցին իրենց աչքերը, տղամարդիկ խոժոռեցին իրենց դեմքերը, միայն Արմենակ Բժիշկյանն էր նստել անտարբեր, փայտ կուլ տվածի պես, ոչինչ չարտահայտող դեմքով։

— Դու անզգա՞ ես,— կամթելով Արմենակի ծունկը շշնջաց Վերոնիկը։

— Ինչո՞ւ, ջա՛նս,— բողոքց պարոն Արմենակը նույնպես ցած ձայնով։

— Բոլորը տխրեցին, դու ինչո՞ւ չես տխրեր...

Պարոն Արմենակը Վերոնիկի ականջին լսելի ձայնով հայտարարեց.

— Ես չեղբոնների կուսակցության կպատկանեմ, ջա՛նս։

— Բաժակները լեցնել,— բոլորի համար անսպասելի կերպով ժպտաց Թամադան։ Նա մտածեց, որ սեղանը բավականաչափ, կամ գուցե պետք եղածից ավելի տոգորվեց ազգային-սոցիալական վշտով ու մորմոքով և որ հարկավոր է

անցնել որևէ զվարթ ու թեթև թեմայի։ Նա թավշե հայացքով նայեց Նոյեմիկին, Հռևի քույրիկին, Հռիփսիմեին և Վերոնիկին, վերցրեց բաժակը և ոտքի կանգնեց։

— Սեղանավիճնե՛ր,— սկսեց նա իր հերթական բաժակաճառը,— նայեք երկնքին. որքան տխուր տեսք կունենար երկինքը, եթե ցերեկը արևը շողար և գիշերը չծածկվեր աստղերով։ Ի՞նչ է ծովի գեղեցկությունը. երբ նա փռված է իր մոնոտոն մեռյալ կապույտով, ո՛չ. ծովը գեղեցիկ է սիկոծության պահին, ի՞նչ է ծովն առանց ալեկոծության։ Ոչի՛նչ է ծովն առանց ալեկոծության... Ամեն, ամեն ասեմ ձեզ, ծառն առանց տերևների նույնքան տգեղ է ու ծիծաղելի, որքան մարդկային կմախքը, և կանաչ մարգագետինների գեղեցկությունը նրանց պարպարող ծաղիկներն են։ (— Ո՞ւ. ավետարանի պես կխոսի,— շշնջաց Արմենակ Բժիշկյանը Վերոնիկի ականջին։— Սո՛ւս,— լռեցրեց նրան Վերոնիկը, չկարողանալով կտրվել Հակոբ էֆենդու դեմքից)։ Կապրի՛ր Ադամը դրախտի մեջ, լիության մեջ, հրեշտակներուն հետ կապրեր ու կտխրեր։ Տխուր էր Ադամը. նա երկինք էր առանց արևի ու աստղերի, ծո՛վ էր նա առանց ալեկոծության, ծա՛ռ էր առանց տերևների և էր մարդագետին առանց ծաղիկների։ Իհարկե,— ժպտաց նա,— եթե ես լինեի Ադամի տեղը, չէի հուսահատվի և քիթս չէի կախի, ես կսկսեի սանկ, մանրամասն սիրաբանություններ արդունքի հասած իգական սեռին պատկանող հրեշտակներու հետ... (բարձրացավ հոմերական ծիծաղ,— վա՛յ, Հակոբ էֆենդի, վա՛յ,— ձեռքը ծունկին խփելով բացականչեց Միհրդատը։— Սատա՛նկ խոսքն, կուզե կլացուն, կուզե կխնդացնե,— չկարողանալով իր չնորքությունը չհախտել, հայտարարեց պարոն Բժիշկյանը։— Մեղա՛ աստծու, մեղա աստծու,— երեսը խաչակնքեց Սաթենիկ դուռուն, այնուամենայնիվ չկարողանալով դադել իր ծիծաղը։ Ջէր ծիծաղում միայն ինքը՝ Հակոբ էֆենդին, և նրա լրջությունը ավելի և ավելի հրահրում էր ծիծաղը։ Վերջապես բոլորը հանդարտվեցին)։ Եթե մենք՝ հասարակ մահկանացուներս, նայենք Ադամի վրա, երևի պիտի մտածենք, որ տխուր է նա, որովհետև զուրկ է միջնակարգ կրթությունից կամ ապրելու վշտերով կուռապի... բայց Եհովան հասկացավ նրա

տխրության բուն պատճառը և իրեն միայն հայտնի միջոցներով սուեղծել Եվային։ Եվ Ադամը առաջին անգամ լինելով ժպտաց՝ նայելով Եվայի վրա։ Ադամը արևի լույսով ողողված և աստղերով զարդարված երկինք դարձավ, դարձավ ալեկոծ ծո՛վ, սներևներով զարդարված ծա՛ռ և ծաղիկների մեջ ժպտացող մարգագետին... ի՞նչ է մարդկային կյանքը առանց կնոջ, պատասխանո՛ւն. ի՛նչ է իմաստը մարդկային կյանքի։ Ուստի թույլ տվեք առաջարկել այս բաժակը մեր սեղանի շուրջ նստած փափուկ սեռի ներկայացուցիչների կենացը։ Համբո՛ւր։

— Ցմրո՛ւր, ցմրո՛ւր,— բացականչեցին տղամարդիկ և ոտքի կանգնեցին՝ խինլով իրենց բաժակները փափուկ սեռի ներկայացուցիչների փոքրիկ բաժակներին։ Հետո բոլորը միասին սկսեցին երգել վանեցիական սիրային երգը, բացի Արամեանկ Բժիշկյանից, որը չմասնակցեց իմբնրգին, հայտնի չէ, քաղաքական, թե անձնական նկատառումներով.

Վարդ մի բացվի Վանա քաղքի էգեատար,
Ասուված սիրես մեյ մ'որոիկի ինձի տար։
Վարդ մի բացվի առավոտա շաղերով,
Իմ յար բախշեն վա՛րդ կքաղի մադերով,
Քա, խորոտիկ, քա մազերով, դու վի՞րն ես,
Աշխարհ դիտի, ալամ դիտի, դու իմն ես։
Վարդ մի ծաղկե վարդավարի կիրակին,
Քո սերն ընկավ մեջ իմ սրտի պուրակին...

— Չե մնոնեմ, անո՛ւշ արեք,— լսվեց Սաֆենիկ դուդուի աղաչավոր ձայնը,— Վանի տղան տղամարդի՛ն է...

— Բաժակները լցնե՛լ,— հրամայեց Թամադան։

. . . . . .

27. ԴԵՊԻ ՏՈՒՆ

... Տո՛ւն, տո՛ւն, դեպի տուն...
Հովհ. Թումանյան

Ես նայում եմ պատուհանից, Թիֆլիսի պանորաման ճոճվում է իմ դիմաց, իմ դիմաց նստել են մի քանի գյուղացիներ ու երգում են.

Յար գյուլա, պարախոդը պերվի,
Տո շան տղա, կրակուվս էրվի
Ծար դյուլա, ձեր օթախի փեշը,
Յարիս տարան պատերազմի մեջը..

...Գնում եմ «տուն»։ Թողած մորս, եղբայրներիս, բարեկամներիս, Թիֆլիսը, վոքրիկ իսանութը լացուն մրգերով, մայրիկի և Երան քույրիկի համով ճաշերը, գնում եմ «տուն», Երևան, որբանոց, ննում եմ ինձ նորից ցրտի ու քաղցի ճանկը։ Բայց այնտեղ Հայաստանն է, Գառնիկը, Գևորգը, այնտեղ Սիրարփին է, այնտեղ Երևանն է, հասկանո՞ւմ եք, թե ինչ է նշանակում Երևան...

Գնացքը շարժվում է առաջ ու առաջ, անհաստատ, կարծես ակամա։ Հետևում մնացին Թիֆլիսն ու նավթայուղը, ետ մնաց մի ամբողջ Թիֆլիս։ Ան-Գառը երևի բանաստեղծություններ է գրում հիմա, իսկ պարոն Արշակը խանութում նստած պատասխանում է հաճախորդին.

— Ջե՛ռելի շիդիլա՛տ...

Չի կարելի ասել, որ Տիգրան աղան ոչ մի ջանք չթափեց, որպեսզի ես հիմնավորվեմ Թիֆլիսում և մոռանամ Երևանը։ Նա մինչև անգամ ուսուցիչ վարձեց, որպեսզի պատրաստի ինձ ներսիսյան դպրոցի համար։ Իմ ուսուցչի սննյակում ես մի անգամ եղա։ Նրա սեղանի վրա դրված էր Կարլ Մարքսի նկարը, հենված պատին։

Երբ ես նեյս մտա, նա լվացվում էր։ Նա խնդրեց, որ ես նստեմ։ Ես տեղ գրավեցի նրա գրասեղանի մոտ, աչքս չհեռացնելով Կարլ Մարքսից։

— Ճանաչո՞ւմ ես,— հարցրեց իմ ուսուցիչը՝ սրբելով, չորացնելով մազերը, շփելով ականջները։

— Ո՛չ,— ասում եմ ես։

— Ամոթ է,— ասում է նա,— ժամանակն է, որ նրան բոլորը ճանաչեն... Կարլ Մարքս։

— Այդ ես գիտեմ։

— Սոցիալիզմի և կոմունիզմի վարդապետ,— բացատրում է նա։

Հետո նա ինձ հարցաքննեց զանազան առարկաներից և

գտավ, որ մենք պետք է պատրաստենք դիմավորարար մաթեմատիկայից։

Ես նայեցի իմ ուսուցչի դեմքին և մտածեցի, որ ես նրան տեսնում եմ առաջին և վերջին անգամ։ Մաթեմատիկա... ես պատրաստ էի լեռներ շուռ տալ, Դաղրաշյան բառարան անգիր անել, վոլեր կլլել, միայն թե գործ չունենալ այդ մաթեմատիկայի հետ։

Որ ես հրաժեշտ տվի իմ ուսուցչին, նրան ոչինչ չասացի և խոստացա հաջորդ օրը, որպված ժամին ներկայանալ պարապմունքի, բայց Տիգրան աղան երեկոյան ինձ հարցրեց, թե ինչ տպավորություն թողեց ինձ վրա իմ ռեպետիտորը, ես վճռականապես հայտնեցի, որ ինձ հարկավոր չէ, որ ինձ հարկավոր է օր առաջ Երևան հասնել։

Տիգրան աղան ուսերը թափ տվեց, մորթին արտասվեց, ու երկու օր հետո ես հրաժեշտ տվի նրանց ու մտա Թիֆլիս—Ջուլֆա գնացքի երրորդ կարգի վագոններից մեկը։

Գնում եմ «տուն»։

Ճանապարհորդների ձնշող մեծամասնությունը գյուղացի կանայք են, տղա երեխաներ, ծերուներ, մի երկու տանտյակ միջին տարիքի տղամարդիկ։ Ես անցա բոլոր վագոնները ու ոչ մի ծանոթ չգտա։ Երեխաները դուռատ են ու նիհար, վալերացված ու հաստատված բաղդի կնիքով։ Ճանապարհորդները շատ են, անպիջում, բծախնդիր ու կռվարար։ Այդ նշանակում է, որ նրանք քաղցած են։ Կայարաններից մեկում գնացքը կանգնեց ու երկար ժամանակ կանգնած մնաց։ Պարզվեց, որ շոգեքարշի հնոցում ածուխի տեղ փայտ է վառվում և որ փայտը վերջացավ։ Հետո նորից գնացքը շարժվեց, հարյուր մարդու անհատատ ընթացքով։

Կայարանների բուֆետները դատարկ են։ Սադախլուից այն կողմ դեռ կարելի էր ճարել մի բաժակ դինի ու թթու վարունգ։ Սադախլուից այս կողմը այդ էլ չկար։ Արդեն հայտնի էր, բայց Ղարաքիլիսա կայարանում մարդիկ սկսեցին բարձրաձայն խոսել ու պատել այն մասին, որ Ալեքսանդրապոլը գտնվում է թուրքերի ձեռքին, և որ թուրք ասկյարները խուզարկում են մեկնող և ժամանող գնացքներն ու տղամարդկանց գերի են տանում։

Կայարանի երկաթե ցանկապատին հենված՝ կանգնել էր մի մաքուր սափրված, կիսապինվորական տարազով երիտասարդ, ամենայն հավանականությամբ կայարանի պաշտոնյաներից։ Նա մոտեցա նրան.

— Ասացեք խնդրեմ, ճի՞շտ է, որ Ալեքսանդրապոլը... Նա չթողեց, որ ես վերջացնեմ.

— Այո՛, այո՛, Ալեքսանդրապոլը թուրքերի ձեռքին է։

— Ճի՞շտ է, որ կայարանում թուրք ասկյարները...

— Այո՛, այո՛, թուրք ասկյարները խուզարկում են վագոններն ու տղամարդկանց վար են իջեցնում։

— Կարո՞ղ են նրանք ինձ...— հարցրի նորից ես և չվերջացրի նախադասությունը, նկատելով, որ նա հասկանում է խոսակցին նախադասության կնսից։

— Ք՛ե՞զ...— նա նայեց ինձ ու մռայնց,— կարող են և իջեցնել...— հետո վճռեց,— կիջեցնե՛ն, անպայմա՛ն կիջեցնեն... ահա թե ինչ, դու փող ունե՞ս։

— Ունեմ,— ասացի ես ցույց տալով իմ ողջ հարստությունը։ Նա վերցրեց թղթադրամներից մեկը և դրեց իր գրպանը։

— Հասկացա՞ր,— հարցրեց նա։

— Առայժմ ոչ,— պատասխանեցի ես։

— Երևա՞ն ես գնում։

— Այո՛։

— Ասում ես, որ Ալեքսանդրապոլում թուրքերը քեզ չիջեցնեն...

— Այո՛։

— Էլ ի՞նչ կա չհասկանալու... ևկ ինձ հետ։

Նա առաջ անցավ, քայլեց վագոնների երկարությամբ։ Ես հետևեցի նրան։

Շոգեքարշի մոտ նա կանգ առավ։

— Սանասա՛ր...

Շոգեքարշի մեջ երևաց մրոտ ծնոտով, գունատ մի երիտասարդ, ըստ երևույթին մեքենավարը։

— Վերցրո՛ւ կս տղին, հագցրո՛ւ ֆարթուկ ու անցկացրու։

— Մայա կա՞,— հարցրեց մեքենավարը։

— Ա՛ռ, կա՛,— հանգստացրեց նրան իմ բարերարը և դարձավ ինձ։

— Բարձրացիր... Հիմա հասկացա՞ր,— հարցրեց նա, երբ ես արդեն շոգեքարշի միջից նայում էի նրա վրա։

Ես արդեն հասկացել էի։

Երբոր գնաց։ Գնացքը շարժվեց։

— Հարի՛ր,— հնոցի եռացող կաթսայի և անիվների ամուսի միջից գոռաց մեքենավարը, պարզելով ինձ կապույտ, կիսամաշ մի ֆարթուկ։ Ես մի կերպ հարա. նա կապեց գոտին վարժ մատներով, հետո դրա ձեռներով շրեց երեսներս և ծիծաղեց.

— Խակա՛ն...

Նա վերցրեց պարակի վրայից ջարդված հայելու եռանկյունի մի բեկոր և մոտեցրեց քթիս։ Հայելուց ինձ վրա նայում էր կապույտ գոգնոցով, մրոտ դիմքով մեքենավարի աշակերտ-օգնականը.— խակա՛ն,— մտածեցի ես։

— Մի՛ վախի, Բուրքերին կխարե՛նք,— նորից գոռաց մեքենավարը։

...«Ախթանդրատոր» կայարանի մոտ մեքենավարը ես շարժեց ինչ-որ շարժիչներ, սեղմեց ինչ-որ պատանակներ, գնացքը դանդաղեցրեց իր ընթացքը և կանգ առավ։ Տիրում էր շարագուշակ լռություն։ Բայց ահա կառամատույցի վրա երևացին ես ու առաջ վազող Բուրբ ասկյարներ։ Ինչ-որ մեկը հրամայեց, մեկ ուրիշը սկսեց ինչ-որ պնդել և ապացուցել ու նորից լռություն։ Մեքենավարը կանգնել էր շոգեքարշի դռների մոտ և դիտում էր դրսի անցուդարձը։

— Մեկին իջեցրին ու տանում են... ա՛յ-վա՛յ... մեկին էլ իջեցնում են... Լինարմա՛ո, արմանք ու պարմանք, տղամարդ կինարմատ շորերով... անխելք, բեղերը թրաշեր, էլի մի բանի նման կլիներ... ծը՛, ծը՛, ծը՛... պլատշորի տակից բեղերը ցի՛ց, ցի՛ց... աչ-վա՛յ... հայի խե՛լք։

— Էտոնց չե՞ն դա,— հարցրի ես։

— Դան էլ, դնան էլ,— եղավ պատասխանը։

Այդպես էլ եղավ։ Երկու Բուրբ ասկյարներ բարձրացան շոգեքարշը, նայեցին աջ ու ձախ, որոնող, խուզարկող աչքե-

յրով ու առանց մեզ հետ կամ իրար հետ խոսելու, վար իջան ու գնացին։

— Գան էլ, գնան էլ,— կրկնեց մեքենավարը ժպտալով։

Գնացքը շարժվեց, և ես ապատ շունչ քաշեցի։

— Դու Պողոզ Մուկուչին կճանչնա՞ս,— հարցրեց Սանասարը շոգեքարշի աղմուկի միջից։

— Ո՛չ,— պատասխանեցի ես։

— Յա՞,— զարմացավ նա անկեղծ զարմանքով,— մա՞րդ էլ Պողոզ Մուկուչին չճանչնա։

— Ո՞վ է այդ Մուկուչը,— հարցրի ես։

— Պողոզ Մուկուչը մե օրըմ...

Նա ականջ ինձ ինչ-որ բան պատմել, իսկ իմ մտքերը թռել էին հեռու-հեռու։

28. ԳԱՇՏՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ

Հեռու հեռվում կանդնեցին հպարտ Մասիսները։
Գնացքը չի սլանում, չի էլ վազում, գնացքը պարզապես քայլում է Արարատյան դաշտով։

Ահա մի պատանի վար թռավ վագոնից, արագ-արագ մի քանի վայրկյան կակաշներ քաղեց ու նորից բարձրացավ վագոնը։

— Տը՛կը-տրկը-տը՛կը-տրկը...

Քայլում է գնացքն Արարատյան դաշտով։

Կայարաններից մեկում ես հանձնեցի իմ գոգնոցը Սանասարին, դուրս թռա շոգեքարշից, լվացի երեսս մուրը ու մտա վագոններից մեկը։

Ճանապարհորդների ճնշող մեծամասնությունը կանայք էին, երեխաներ։ Ծծկեր երեխաների ճիչը խանգարում էր լռությունը։ Կանայք չէին խոսում իրար հետ, իսկ եթե խոսում էին, խոսում էին շշուկով։

Ես տեղ գրավեցի ապակին ջարդված պատուհանի մոտ՝ դիտելու համար Արարատյան դաշտը և չեզոքացնելու, գոնե մեղմացնելու համար վագոնի անախորժ հոտը։

— Ժը՛ժժժ... ճը՛հ-ճը՛հ... տը՛կը-տը՛կը... տը՛կը-տը՛կը։

ճչաց սովիլը, և գնացքը շարժվեց տեղից, Արարատյան դաշտ, մայրահոդ Հայաստանի։

...Սուր, աղեկտուր, կանացի մի ճիչ լսվեց մեր վագոնի կողքի բաժանմունքից, ջնաժները զարթնեցին, արթուն ճանապարհորդները երկարացրին իրենց վզերը, ի՞նչ պատահեց։

Ցնցոտիապատ, գզգզված մազերով մի կին, մի աչքում վիշտ, մյուսում սարսափ, մղված ու խորշումած կրծքի վրա սեղմած իր դունատ մանկան, ճչաց երկրորդ անգամ զարհուրանքի ճիչով, թափ տալով մանկանը, կարծես զարթնեցնելու համար.

— Մինուճա՛յս... Թաղան բալես, պատի՛կ բալես...

Ծանոթ է ինձ այս մայրը, ցավագին կերպով ծանոթ։ Որտե՞ղ եմ տեսել ես նրան, Բերկրու ճանապարհի՞ն, էջմիածնի պատերի տա՞կ, ուտես հնթուխթների՞ց եմ հիշում, «Հասկեր» մանկական ամսագրի՞ց։ Բայց այն Մայրը երիտասարդ էր, սև, փառահեղ մազեր ուներ ուսերին թափված, մեռած երեխա չուներ կրծքին սեղմած, վագոնում չէր նստել նա... Բայց տխուր էր նա, նաած լալիս էր։

Ես հիշեցի։

«Մայր Հայաստան» նկարը։

Նստած լալիս էր նա, լալիս ալեբախների վրա։ Հետո հիշեցի ուտես երգը.

«Անի քաղաք նստեր կուլա,
Ջկա ասող մի՛ լա, մի՛ լա...»

Լա՛ց, Մայր, լա՛ց, մա՛յր Հայաստան, լա՛ց, Անի՛...
Ոչ ոք չի խոսում, ոչ ոք չի արձագանքում, նայում են բոլորը քութ, ոչինչ չարտահայտող կավե արձանների աչքերով, նրանց նման անշարժ, անմիտ։

...Թորշոմած, կախված երկու դատարկ ստինքները, ցնցոտիներ, վշտից աղավաղված դիմագծեր, քաղցի, տառապանքով և մահվան սարսափով լեցուն աչքեր, մի գարուն և մի ամառ տեսած անշնչացած երեխայի դիակը ոսկրացած բազուկների վրա,— Մա՛յր, ես չեմ մոռանա քեզ։

Դա՛շտ Արարատյան, մայրահո՛ղ Հայաստանի։

29. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՐԲԱՆՈՑ

Զանգու գետի կամուրջին չհասած, ան, քարաշեն մի շինք է բարձրանում։

Շինքը երկհարկանի է, ճարտարապետական ոճը՝ զորանոցային, անհրապույր։

Այս՝ տղանների հինգերորդ որբանոցն է։ Հայաստանը (այդ նա է՝ Հայերը), Գևորգն ու Գառնիկն ինձ ընդունեցին գրկաբաց։ Հատկապես սրտառուչ էր մեր հանդիպումը Հայաստանի հետ։ Ես պատմեցի նրան Թիֆլիսից, Վլադիկավկազից։ Նա ասաց, որ մենք հիմա Հայաստան ունենք, այո՛, թեպետ ոչ մեծ, բայց մի տեսակ իսկական Հայաստան։ Ցավալի է սակայն, որ այդ Հայաստանի կառավարության մեջ նստած են դաշնակցականները. դաշնակցական խմբապետներն հանգիստ չեն տալիս ժողովրդին, բայց ահա Անդրանիկը հրաժարվեց դաշնակցությունից և տվեց ազդանշան.— ազնիվ մարդիկ գործ չունեն դաշնակցական կուսակցության մեջ։

— Ավելի վատ,— դատեցի ես,— ազնիվ մարդիկ կհեռանան և կառավարությունը կմնա անազնիվ մարդկանց ձեռքին...

— Այն ժամանակ...— մտածեց Հայաստանը,— ժողովուրդը ոտի կկանգնի և կոտապալի անազնիվների կառավարությունը։

Մենք ձեռք ձեռքի տվինք ու իջանք Զանգվի ձորը։ Մենավոր մի ակացիա կանգնել էր գետի աջ ափին. մենք նստեցինք նրա հովանու տակ և ազատություն տվինք մեր խոհերին։

Այդ ծառի հովանին զարձավ մեր ամենօրյա հանգստի վայրը։ Հայաստանի մոտ որտեղից որտեղ հայտնվեց մի տուփ «խան-կնճիթ» ծխախոտ։ Ծխում էինք միայն ակացիայի տակ, միայն մեկ ծխախոտ։

— Սիրարփի՞ն,— հարցրեցի ես...

— Ա՛, քո Սիրարփին,— ծիծաղեց նա,— հըմ, քո Սիրարփին...

Ես զգացի, որ լավ բան չեմ լսի «իմ» Սիրարփիի մասին և նոր հարցով անցա հարձակողականի.

— Իսկ քո՞նը...

— Ի՞մը... ուզո՞ւմ ես լսել իմ բանաստեղծությունն «իմ»-ի մասին։

— Ուզում եմ։

— Դե, լսիր...

Թերևս հիմա խորհում ես դու,
Սրապում ես մեկի մասին,
Որ կանչում է ուրիշ մեկին,
Որն էլ ուրիշ մեկն է կանչում,
Թերևս հիմա հույզերը քո,
Անուրջները քո կարկաչուն,
Դու հյուսել ես մեկի համար,
Որին երբեք չես ճանաչում...

Ես էլ քո դեմ մի բույլ ձգտում,
Երբեք այդ դու չես նկատում,
Մեկն էլ գուցե ինձ է փարում
Իր իղձերի հիր աշխարհում,
Մեկն ինձ, ես քեզ, դու ուրիշին,
Սրապում ենք, տանջվում հավետ,
Ու մնում ենք մենակ ու հեզ
Մեր անհագուրդ կարոտի հետ...

Իսր տպավորություն թողեց ինձ վրա Հայաստանի այս բանաստեղծությունը, բայց ավելի ինձ ցնցեց նրա հոգեկան կացությունը. Նա բանաստեղծությունն արտասանելուց հետո լռեց, ընկավ մտածմունքների մեջ, ապա սկսեց խոսել կարծես ինքն իրեն.

— Ես ոգեղ եմ, աշխարհի բոլոր հայելինները վկա... ինչո՞ւ նա ինձ պիտի սիրի... ո՛չ միայն նա, ինձ ոչ ոք, ոչ ոք չի սիրի։

Ես նայեցի Հայաստանի դեմքին։ Գեղեցկությամբ հիրավի չէր կարող պարծենալ Հայաստանը կամ դիմանալ թեկուզ ամենաթույլ քննադատության. բարձր, լայն, ուռուցիկ ճակատ, փոքրիկ, նեղ աչքեր, փոքրիկ քիթ, հուժկու ծնոտ և առնական բերան։ Նա ճկուն միմիկայով ներկայացնում է

ջայլամի պատկերը, որը տեսել է կինոյում. նա զգում է, որ դրանով ավելի ոգեղացնում է իրեն, բայց անում է, և զգում ես, որ նա այդ ամենից ստանում է գեղարվեստական հաճույք։

Այդպես է Հայաստանը։

— Կ'ուրտ,— ասում է նա,— ինձ չեն սիրում գեղեցիկները, ես էլ ոգեղներին կսիրեմ։

— Օրիորդ Ռնթենկայի՞ն,— հարցնում եմ ես։

— Ոչ, հաղար անգամ ոչ։

— Տիկին Անգինի՞ն...

— Ինքնասպանությո՞ւն։

— Ուրի՞մն։

— Դժվար է,— մղաց Հայաստանը և պատկեց, ձգեց ոտներն ու ձեռները, ժամկոտաց, չնստ շուտ եկավ ու ընկավ գորի վրա։

Մի հով անցավ, խշխշաց ակացիան. Զանգվի աղմուկը դարձավ ավելի խուլ ու թանձր։

— Գուրգեն,— մռռաց Հայաստանը։

— Ը՛...

— Լսո՞ւմ ես։

— Լսում եմ։

— Գեղեցիկ է, չէ՞, բնությունը։

— Ո՞ր բնությունը։

— Առհասարակ բնությունը։

Ես հիշեցի Բերկրու կիրճը. այնտեղ էլ գետ էր հոսում, ժառեր կային բնական և բնությունը բնական բնություն էր... Բայց... դու հիշո՞ւմ ես Բերկրու կիրճը... գետ... պուրակ... բլուր...

— Հասկանում եմ,— ասում է Հայաստանը,— բայց ես ասում եմ բնության մասին... Ձենց Բերկրու կիրճը. այս րոպեիս այնտեղ չկան ո՛չ գաղթականներ, ո՛չ էլ հարձակվող թուրքական հրոսակներ... Մի՞թե գեղեցիկ չէ մինչև անգամ Բերկրու կիրճն առանց գաղթականների...

Նա խոսում է կարծես ինքնամոռաց։

— Բնությունը... դու հասկանո՞ւմ ես, թե ինչ ահավոր, հիասքանչ, չքնաղ ու զարհուրելի ու... ինչպես ասեմ, ան-

ահման, ուղղակի անսահման գեղեցկություն է... Թող ինձ չսիրեն գեղեցիկ աղջիկները, տգեղ աղջիկներին էլ ես չեմ սիրի... իսկ բնությունը... բնությունն իմն է...

Ես նայեցի Հայաստանին. Նա պառկել էր փորի վրա, ձեռները խաչարած, ոտները մկրատած, ակացիայի խաղացկուն ստվերի տակ և թվում էր, որ նա էլ մի մասն է Զանգվի ափի քարաթմբերի, քար ու կոշտի, լույս ու ստվերների...

— Քո գործը լավ է,— մրմնջում է Հայաստանը,— դու գեղեցիկ ես, հետո գիշական վարվեցողություն ունես աղջիկների հանդեպ, կարող ես գաշնել գեսի քեզ... տրամադրել, քո շկոլան մի զարմանալի շկոլա է։ Դու գիտե՞ս, որ և՛ Սիրարփին, և որ ավելի սարսափելի է, և՛ նրա ընկերուհիները զահլես տարել են... միշտ հարցնում են քո մասին... բախտավոր աստղի տակ ես ծնվել դու, Գուրգեն... իսկ ե՞ս...

Լռեց Հայաստանը։ Օգտվելով նրա լռությունից ես ուզում էի ասել, որ դու, Հայաստան, թերագնահատում ես քեզ, որ այն բանաստեղծությունը, որը կարդացիր դու ինձ, դա իսկական բանաստեղծի բանաստեղծություն է, որ նա, ով կարող է գրել այդպիսի բանաստեղծություն, իրավունք ունի ոչ միայն այն աղջիկների վրա, որոնք այսօր որպես ընկերների պատուհանների առաջ նստած լրնդց մալկին են սանրում...

— Իսկ ես, ահա,— շարունակեց Հայաստանը,— այսպես պառկել եմ և ինձ թվում է, որ բնությունը իմ սիրած աղջիկն է, Գիտե՞ս թե սա ինչ բաղդր... զգացողություն է... բնությունը... այս ակացիան նրա մազերն են, այս հողը... նրա մարմինը... Զանգուն նրա ձայնը... Երկինքը նրա աչքերը... լսիր, դու քաղցած չե՞ս...

Անցումը շափազանց կտրուկ էր ու հասու. ես չկարողացա արագորեն վերակառուցվել ու դուրս գալ պոետիկական այն կախարդական և հիրավի հրապուրիչ շրջագծից, որը գծել էր իմ շուրջը Հայաստանը։

— Իսկ բլուրնե՞րը,— շարունակում եմ ես։

— Ի՞նչ բլուրներ,— հարցնում է Հայաստանը դժգոհությամբ, նստում է, հորանջում ու քրթմնջում,— բլուրները,

Էլ՛մ, բլուրները... բլուրներն ինձ հիշեցնում են հիմա հացի կլոր բուխանկաններ... կուտեի ,ախ, ինչպես կուտեի... չորս-հինգ բլուր... իրար հետևից, Այլյո՜ւ:

Նա վեր կացավ տեղից, ձեռներն ուղղահայաց պարզեց վեր, հորանջեց լայն ու ձայնավոր և ասաց.

— Վեր կաց, գնանք... ինչ գնով ուզում է լինի, պետք է կշտանալ... կշտանալ այնպես, որ բլուրներն ինձ չհիշեցնեն հացի կլոր բուխանկաններ... սա խայտառակություն է:

Մենք դուրս եկանք Զանգվի ձորից և բարձրացանք դեպի մեր որթանոցը: Ճանապարհին Հայաստանն ինձ հաղորդեց.

— Մի հին վերարկու ունեմ. գուցե մի բանով փոխենք... Աշունը հետու է:

Մենք մտանք որթանոց, Հայաստանը վերցրեց իր հնամաշ վերարկուն, և մենք արշավեցինք դեպի քաղաք:

30. ԽՄՈՐԸ

— Շուտով կոնյակի ղավոդը,— ասում է Հայաստանը:

— Երևանի քաղաքային բանտը,— ասում եմ ես, ցույց տալով, որ ես էլ պակաս երևանագետ չեմ:

— Զարմանալի զուգադիպություն,— ասում է Հայաստանը,— իրար դեմ դիմաց՝ կոնյակի գործարանն ու բանտը:

Բանտ կոչվածը միհարկանի, երկարավուն մի շենք է, 10—12 երկաթապատ, բարձր, փոքրիկ պատուհաններով: Շենքի երկայնքով անցուդարձ է անում մի պահակ, իր պատռտոնի նման մռայլ դիմադծերով:

— Ովքե՞ր են նստած բանտում,— հարցնում եմ ես:

— Խզոր Հալայանը,— պատասխանում է Հայաստանը,— մի կոմիսարի խփեց... Մի՞թե Թիֆլիսի թերթերում չես կարդացել...

— Խզո՞ր,— ասում եմ ես,— Հալայա՞ն...

— Բա՞ս... դու Թիֆլիսումն էիր...

Խզոր Հալայան... այդ նա է, ուրիշ Խզոր չի կարող լինել: Ու ես հիշեցի:

...Վանի ամեռային խաղաղ երևկոն իջնում է մերկացած այգեստաններին վրա։

Տատիս հետ նստել ենք թոնրի վրա։ Մենք կախել ենք մեր ոտները թոնրի մեջ, թոնրի կլոր քարն սալը կիսով չափ դեռ հրած և թոնրի կլոր քարե սալն ու մեր ծնկները ծածկած տաք, արդեն իր գույնը կորցրած վերմակով։ Սյունի վրա պլպլում է ձեթի ճրագը։ Մեզ լուսավորում է նաև նավթի լամպը, որը կախված է մեր գլխի վերևը, տանատան սև պատից։ Տատս ինչ-որ կարում է նստղով, մեկ-մեկ կտրվում է կարից, նայում է շուրջը և մրմնջում.

— Որտե՞ղ մնաց էսա եթիմ...

Քեռուս ենք սպասում։

Ես բարձրացնում եմ վերմակը, թոնրի խորքից լսվում է հողե ամանների, պուտուկների փխփխոցը, և կերակուրի բուրմունքը շոյում է քիթս։ Սպասում ենք քեռուս, որ դա, ընթրենք։ Վերմակի կենտրոնում, որչը ոտքս մինչև քիթը, տռում է վանի սպիտակ, ոսկեգին կաուսն, որի մի աչքը դեղին է, մյուսը կապույտ։ Այդ պատճառով էլ նա կոչվում է «բարգույզ»։ Երեկից ձյուն է իջնում փաթիլ-փաթիլ և նեկան ավելի խորանում է, լայնանում, ձգվում է այգեստաններից դեպի Մհերի դուռը, Սուրբ Խաչի բլուրը, Վանա ծովից շուր Վարագա սար։

Ես անգիր եմ անում վարվա դասը։

«Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, բնաւանի իմ հոգու համար»։

Տատս պարզում է ինձ թեև և ասեղ։ Վատ է տեսնում տատիկը, նրա ասեղները ես եմ թելում։

— Մեռնեմ իմ Գուրիսի աչքերուց,— մրմնջում է տատս՝ վերցնելով ձեռքից թելած ասեղը։

Փողոցից լսվում է, որ հարևանների դռներ մեկ-մեկ ծեծում են։

— Հնդստանցոց Համազասպն էլ տուն նկալ,— ասում է տատս,— էս էլ հանկինց մխանան պան... Վերձկենց Մերուն... Հարութ... ո՞րտեղ մնաց էսա եթիմ...

Ինչպե՞ս էր իմանում տատս, տանը, թոնրի շուրթին նրաստած, ո՞վ է ծեծում դուռը և ո՞ր դուռն են ծեծում, ես այդ

գիտեի։ Վանի բոլոր փողոցի դռները փակ էին և ունեին իրենց երկաթի ճկիկները. նրանք իրար նման չէին և կախված էին մեխված կլոր, ուռուցիկ եղկաթների վրա։ Դուռ ծեծողը կրաքրացներ ճկիկը և մի քանի անգամ կխփեր մեխված երկաթին, և ամեն դուռ ուներ իր ուրույն ձայնը, և ամեն խփողը՝ իր ուրույն ձևը։

— Չխ՛կ։ Չխ՛կ-չխկչխ՛կ։

Այս արդեն մեր դուռն էր, իսկ խփողը՝ քեռուս։ Այս սովորություն էր, որ դարձավ իմ առաջին քանաստեղծության պատճառը, որը տույս տվավ 1917 թվին, Օրմանում լույս տեսնող «Աշխատանք» թերթում, Գ. Արփուհի ստորագրությամբ։ Ահա այդ քանաստեղծությունը.

Անաչ օրով, ձիգան ու նայուն
Կքաշվի ձյուն մեր բոլ երդիկն,
Քուխ կերպակ մեր պատով կաստն,
Ու քուներին մեզ պատմական կերգեն,

Ձնի ճրագը այսն մնջին կպած,
Սերուկ կատվին պես խոր կքաշի բուն,
Մինչ կիլնա ձյուն մեր երդիկն բաց,—
Քուները տարուկ, տարուկ մեր տանուտեր։

— Չո՛խկ-չո՛խկ,— կծևանն մեր դուռ ահա,—
Հոյ-ներ, գնաք է բակդում ձանձկված,
Մինչ պատով կատուն բոլս կիորթա,
Ու կիլնա ձյուն մեր երդիկն բաց...

— Եթիմն նկատի,— ասում է տատս, թողնում է կարը, արագ ոտքի է կանգնում և մանր ու արագ-արագ քայլերով վազում է դուռը բանալու։ Այնուհետև ևս լսում եմ քեռուս ոռնաձայնը և էլի ուրիշ մի մարդու ոռնաձայնը, դնդի երկրորդ հարկը տանող աստիճանների վրա է վազում տատս և ինձ հաղորդում է, որ Տիգրան աղի հետ հյուր կա և որ նրանք պիտի ընթրեն վերին սենյակում։ Ես գիտեմ, որ այս պատիվն արվում է բացառիկ հյուրերին։

— Ա՛խ յաչինջուլ, ա՛խ տիաւխուլ, ա՛խ պատիկ մորուսուլ մարդ ի,— նկարագրում է տատս։ Ես այրվում եմ անծանոթ հյուրին տեսնելու ցանկությամբ։ Տատս կարծես գուշակում է այդ։

— Էլ ի՞նչ մնաց,— հարցնում է նա, հայտնի չէ ի՞նձ, թե՞ ինքն իրեն,— իմ Գուրիսին ասեմ, առնի գինու սյուրահին, նա՝ կեր-խբրակուլ, նրթանք։

Ես վերցնում եմ Շահբաղու կարմիր գինով լիր սրվակը և գնում եմ առաջից, վերի օդեն ոդոլած է առաստաղից կախված «օրթի լամպա» լույսով։ Այս էլ է ապացույցում, որ Գյուրը սովրական հյուրերից չէ, որովհետև բնիս շատ քիչ անգամ է վառում «օրթի լամպը», իսկ երբ վառում է, իմ սիրտը լեցվում է առնական բերկրանքով։

Առաջին բանը, որ աչքիս ընկնում է, դա կանոփտի վրա նետված հսկայական սև յաղուռջին է, յաղուռջս վրա սև վոտիները, իսկ սև վոտիների վրա մատերն առանց պատյանի քիռիս վառարանը վառել է և նրա դեմ նստած թերթ է կարդում, իսկ այդ թերթը կոչվում է «Կռատամատոս», իսկ «Կռատամատոս-ի շտրատը էլի վրա ամեն օր կարելի է կարդալ.

«Ֆեյլ, բեյ. բեյ. բեյ.

Խոնեցեք

Միայն Նազոյանի բեյ»։

Գյուրը չափում է անկյակի երկայնքը համաչափ, նա ու առաջ քայլելով կարճհասակ է նա՝ ան, վայլուն, երկարաձիտ կոշիկներով։ Նա ուշադիր ու սևեռուն հայացքով նայում է իր առջև, կարծես մի բան է փնտրում, հետո հանում է թաշկինակը և մեծ խռինչով մաքրում է քիթը։ Թվում է, թե նա չի սեսնում ոչ քեռուս, ոչ տատիս, ոչ էլ մանավանդ ինձ։

Վերջը պատրաստ է։

— Հյամմե՛ք,— ասում է տատս։ Տիգրան աղան ծալում է թերթը և մոտենում է սեղանին։

— Նախը, Նզոր,— ասում է նա և տատիս աչքով անում, — գնացե՛ք։

Տատս բռնում է իմ ձեռքից, և մենք վար ենք իջնում։ Ընթրում ենք միասին։ Տատս լուռ է և մտախոհ։

— Նզոր,— քրթմնջում է նա,— էսպես անուն չի լսե։

Այդ օրվանից Սգոռն ապրեց քեռանց տանը։ Նա տնից դուրս չէր գալիս, իսկ եթե գնում էր, գնում էր փիշերով և փիշերով էլ տուն գալիս։ Առավոտից մինչև իրիկուն նա գնում գալիս, շափում էր սենյակի լայնքն ու երկայնքը և միշտ նայում էր իր առաջ, պորտի վրա մի բան որոնողի հայացքով։ Նա չէր նայում ոչ ոքի և ոչ ոքի հետ չէր խոսում, բացի Տիգրան աղայից, որի հետ փոխանակում էր մի երկու խոսք, այն էլ շշուկով, առանց նրա երեսին նայելու նրա երեսին, առանց ընդհատելու իր երթևեկը։

Ճաշի ժամանակ, երբ քեռիս տանը չէր լինում, տատս ինձ էր հանձնարարում գնալ և նրան ճաշի կանչել։ Նա չէր նկատում իմ ներս մտնելը։

— Մայրիկը... ճաշի գնանք...— թոթովում էի ես, շփոթված նրա վայրկենական սուր հայացքից։

— Ո՞նց,— հարցնում է նա։

— ճաշի,— կրկնում եմ ես։

— Հենց հիմի՞,— հարցնում է նա, և ես չդիտեմ, ինչ պատասխանեմ, հետո նա խոնչում է սև թաշկինակի մեջ և ասում.

— Գալիս եմ։

Ես ինչ տեսակ է խոսում պարոն Սգորը, «հենց», «ոնց», «գալիս»։

Ես թևթևացած դուրս եմ թռչում և գալիս, զեկուցում եմ տատիս.

— Հենց գալիս է։

Գալիս է Սգորը և նստում է ճաշի, նա ուտում է դանդաղ, ակամա, մի տեսակ լուռ վիճելով, կռվելով իր կերածի հետ։ Երբ նա վերջացնում էր, տատս հարցնում էր.

— էլ կուզե՞ս, Իգո՛ր։

— Բոլ ա, մայրիկ,— կպատասխաներ Սգորը և ոտքի կկանգներ։

Մի անգամ էլ տատս հարցրեց.

— Դու ո՞րտեղացի ես, Իգոր։

Պարոն Սգորը լռեց, աջ ձեռքի ճկույթի եղունգով մաքրեց ձախ ձեռքի ճկույթը և ցած, հազիվ լսելի ձայնով պատասխանեց.

— Ջանգըդուրցի։

— Ռուսատանո՞,— համառեց տատիկ։

— Ա-հո՛,— համաձայնվեց պարոն Եգորը,— կովկասից։

— Ի՞նչ գործ կանիր էնտեղ, Իգոր,— շարունակում է տատիկ։

Իսկ պարոն Եգորը նայում է տատիկին այնպիսի հայացքով, որ կարծես ուզում է հիշել, իսկապես ի՞նչ գործի տակ է ինքը. հետո նայում է պատին և ասում է.

— Սեփական ջրաղացներ ունեին։

Ըստ երևույթին այդ օրը տատիս խոսելացավը բռնել էր, երևում էր, որ նա մոաժում էր, էլի ի՞նչ հարցներ։

Գաալէ։

— Երեա՞ն ի խորոտ, քե՞ մեր վան,— հարցրեց նա և նայեց ինձ բազմախորհուրդ ժպտալէ։

— Չեր վանը սիրուն ա, մայրիկ,— պատասխանեց պարոն Եգորը և շտապ դուրս նկաւ, կարծես խուսափելու համար տատիս հետագա հարցերից։

— Տեսնես էս մարդ իսկի կծծռա՞,— բարձրաձայն մտածեց տատս և սկսեց սեղանը հավաքել։ Քիչ հետո լսելի եղավ պարոն Եգորի համաչափ ոտնաձայնը վերի օդից։

— Կերթա-կուգա, կերթա-կուգա, կմտածի... ի՞նչ կմտածի,— տարակուսեց տատս, հետո լռեց, նորից մտածեց և ընդունեց համապատասխան բանաձև.

— Գետնին նայող մարդուց վախեցիր։

Մի օր էլ, երբ պարոն Եգորն ըստ սովորության կերթար, կուգար, կմտածեր, փողոցի դուռը ծեծեցին։ Ես վազեցի, դուռը բացի։ Ներս մտավ քեռիս, հետևից քարշ տալով մի ևս ձի։ Նա ձին կապեց դրսի բակի փոքրիկ ծածկի սյունից և բարձրացավ, կանչեց Եգորին։ Ամդուղքներից վար իջավ Եգորը, երեք քայլ հետավորության վրա կանգնեց, գետնին ձիուն թախծոտ աչքերով, հետո մոտեցավ, իփեց ձիու մեջքին, սահեցրեց ձեռքը վզից մինչև պոչը, ապա նայեց ձիու դեմքին, ատամներին ու մռմռաց.

— Լավ ա... բա քա՞մբը...

Քեռիս լուռ, ցուցամատը պարզեց դեպի սանդուղքի տա-

կը։ Ինձնանդ, դատարկ աւիկի վրա դրված էին երկու քամբ իրենց սարքով։

— Ողջոյն վերցրու։

Իսկ առավօտյան, երբ ես զարթնեցի, քամբերից մեկն անհետացել էր սև ձիու ու ծղոթի հետ միասին։ Ես նրանցի քամբը ձիու վրա, ծղոթին քամբի վրա, սև փափախով, սև յափունջով, սև մատուկը ձեռին՝ արշավելիս։

— Պարոն ծղոթ ո՞ւր գնաց,— հարցրի ես շշուկով տատիս։ Ես չպատասխանեց։

— Իպոն ի՞նչ ելավ,— հարցրեց տատս քեռուս, նախաճաշի ժամանակ։ Քեռիս չպատասխանեց և շարունակեց ուտել։

— Գրողի ծոց երթա,— բարկամտքից տատս, ինձ համար միայն լսելի ձայնով։ Ու ես նորից երեսակայեցի՝ քամբը ձիու վրա, ծղոթ՝ քամբի վրա, սև յափունջով, սև փափախով, սև մատուկը ձեռին պրոզի ծոց արշավելիս։ Ես չկարողացա միայն որոշակի կերպով պատկերացնել «դրոզի ծոց» կոչվածը։

Հետո լսվեց, որ Գալաշի Քո՞մոի կայմագործին տանել են Ո՞վ է սպանել,— իմարկե, ոչ Քուրքերը։ Դրան հաջորդեց Իշտունիքում դարձիլ Իսֆոյանի սպանության լուրը, ո՞վ է սպանել,— իհարկե, ոչ հայերը։ Մի օր էլ հաշ-փողոցից Ավարք ձգվող պողոտան բոնեց դյուզայիությունը։ Գալիս էին նրանք շալով ու լայն շալվարներով, քյաղախիկներով ու սև քյոզաններով, ի նշան սուգի՝ սև քյոզանների վրա սև փուշի, գալիս էին նրանք դինված ու անդին, ոմանք խրոխտ քայլերով, ոմանք մեծ աշքերով, ոմանք մի աշքով ցամաքած, իսկ մյուս աշքով վրնժխանդիր արցունք, գալիս էին նրանք համաշափ և կարգապահ, որովհետև վիշտն էր նրանց ընդհանուր հրամանատարը, վեց հոգի դեպի վեր պարզած ձեռների վրա կրում էին պարզ տախտակներից շինված, չներկված բաց դագաղը։ Ես վազում եմ հուղարկավորների հակայական բազմության հետ և ուզում եմ տեսնել սպանվածի դեմքը։ Բայց այդ հնարավոր չէ։ Լայն պողոտայի երկու կողմը եզերող երկհարկանի տափակ, հողե կտուրներով տների պատուհաններից նայում են ժերեր, երիտասարդներ,

կանայք և աղջիկներ նայում են տղամարդիկ մտայլ ու շար, իսկ կանայք թաշկինակներով սրբում են արցունքները։ Սահակ բեյի տանը չհասած, կանգնած է անգլիական կոնսուլի երեքհարկանի գեղեցիկ, սպիտակ շենքը։ Նրա երրորդ հարկի պատուհաններից նայում են երկտես գլուխներ՝ տղերկ հիւանդոտականներով։ Իսկ բակում ընտելացրած, գեղեցիկ գլխով և խախուտ աչքերով նիհիկը բարձր բռնած վզով զարմացած նայում է փողոցի անասելոր բազմութեանը։ Բազմութեանը խռնվում է Արարատց եկեղեցու ընդարձակ բակը, իսկ սպանվածի դագաղը տեղավորում են եկեղեցում։ Մեծ դժվարութեամբ ես, ժողովրդի ոռնոցի արանքով, մտնում եմ եկեղեցի և մի կերպ հասնում դագաղին։ Դագաղում պառկած է հասարակ շորերով մի գյուղացի երիտասարդ, գունատ, բայց դեմքով, լայն ճակատով և նորածիլ բեղերով։ Նրա աչքերը բաց են և կարծես զարմացած է, ինչո՞ւ են շրջապատել իրեն, թվում է, թե նա ուզում է մի բան ասել, բայց չի ուզում, կամ չի կարող։

Իսկ հետո ճառեր ասին. զամբանախոսներից մեկն իր ճառը վերջացրեց այսպես.

— Ապստութեան ժամը հնչած է, պարի՛ր, անգութ, պաշտելի Ռաֆայել... իսկ Ռաֆայելը չի լսեր, կքնանա՞, կքնանա՞... է, թող քնանա...

Թող քնանա։ Բայց ես շատ զարմանալի բաներ լսեցի մեր տանը, Պանտիչենց սենյակում։ Այնտեղ նստած էին Ղևոնդ էֆենդին, Ռուբեն էֆենդին և Կարապետ աղա Աճեմհաշյանը։ Ես և վարդանը զբաղված էինք նամակների դրոշմանիշներով, երբ հանկարծ ականջուլս լսեցի Սգոր կոչված սինդրոմն իրեն արհնաւոր զրած է,— ասում է Ղևոնդ էֆենդին,— Կուկասին մեջ ռուս պաշտոնյաներ պարկել, վան փախչել, հոս թուրք պաշտոնյաներու տեղ լնել—թողնել փախչել Կուկաս։ Ասոր արդյո՞ւնքը, ահա քեզի Ռաֆայելի սպանությունը... աս ալ գո՞րծ է։

— Գևորին անցնի,— ասում է Ռուբեն էֆենդի Շուշորյանը,— հնարքրքրական է, որո՞ւ մոտ կգիշերին։

— Տիգրան Միրախորյանի մոտ,— պատասխանում է Կարապետ աղան։

— Նման՝ գնման,— երդվեցնում է Պանտիչը խուլ հառաչանքով։

Երբ ես մյուս օրը քեռանց տուն գնացի, ամենայն մանրամասնությամբ պատմեցի տատիս՝ լսածներիս մասին, նա լսեց ինձ ամենայն ուշադրությամբ և մի քանի տուգող հարցեր տվեց, հավաստիանալու համար, որ չեմ փչում։

Ես հարցրի տատիս.

— Նման գնման ի՞նչ ասել է...

— Խուսի գլուխն, գոն պատուկ,— թարգմանեց տատս։ Նա մոահոդ և տխուր դեմք ստացավ Հետո խաչակնքից և ամփոփեց դրությունը մի նախադասությամբ։

— Տնր, որն ի բարին, դու էն կատարես... ամենակարող աստված...

Բայց բարին չկատարվեց։ Մի օր ես մտա քեռանց տուն և դռա դրսի ու ներսի բակերի մի քանի պատերը քանդված, աղյուսները դուրս քաշված ու թափված, այստեղ-այնտեղ փորած, փորփրած, իսկ տատիս քոնրի մոտ պառկած, որբ-որբալիս։

— Մեռնեմ իմ Գուրիսին, — ասաց տատս,— եկավ, հասավ։ Հաց կեր, բաղարջ կա, փոխինդ կա... Մեռնեմ իմ Գու... ամա՜ն-ամա՜ն-ամա՜ն...

— Ի՞նչ է պատահել, մայրիկ։

Ես տատս ինձ պատմեց.

— Գուրը ծեծեցին,— ո՞վ պիտի էլնի, էդպես ճկճկոց ես չի լսի... միամիտ գնացի, դուռ բացի։ Ներս մտան երեք թուրք՝ մեկ փուլիս, երկու ասկյար։

— Ծգոր ես՞ղա,— հարցրին։

Ես ասի՝

— Թուրքերեն չգիտեմ։

— Ծգոր ո՞րտեղ,— հարցրին։

Ես ասի՝

— Էդ ի՞նչ իգոր-միգոր ի, չգիտեմ։

Տարավ-պիրեց՝ մեկ հատ մեջքիս։

— Ասա։

Ես ասի՝

— Ամոթ ի, պառավին չեն զարկի,— մե՛կ էլ զարկեց, մե՛կ էլ...— Տիգրա՞ն որտեղ ի...

Ես ասի՝

— Տիգրան գեղն ի... ցանքսերայ վերեն, իակ էդ իդորին չեմ գիտե...

— Որտե՞ղ են պահն թվանք, մատեր,— հարցուց փոխս,— լեզիս պառավ Սիրո, հրթիանոցի մեջ, խոտերայ տակ՝ երեք սնդուկ գենք կար պահած...

— Աստ, որտեղ են գնդեր,— կասեն ու կտիեն... Ես «համան» ասի ու մնաս էլ ինչ հարցուցին, էլ ինչքան տվին, ձեն չհանի, էլան, գնս ու գեն փորերին, ուշանց տվին, բոդին ջահնամվան, գնացին։ Ամոթս էր, աիստ չմտան։

— Շա՞տ կցավա,— հարցրի ես տատիս։

— Վիր-վիշտիդ, փար-փաչես, մեջք-միջոնքս կապատե,— պնդեցնց տատս, հետո ծիծաղից ու հարցրեց.

— Հաց կերա՞ր։

Ես չգիտեի արտասվե՞մ, թե՞ ծիծաղեմ։ Հիշեցի Սպրին։ Ավելի լավ չէ՞ր լինի, որ թուրքերը Սպրին բռնեին ու ծեծեին։ Ես նստեցի տատիս մոտ ու հարցրի.

— Պարոն Սպոր էլ կուգա՞ վեր...

Պատասխանելու փոխարեն տատս սկսեց.

— Սեղի, ինձ մեկ հատ իրիկ,
Էն իրիկի հետ մեկ հատ կնիկ...

— Պարոն Սպոր էլ կուգա՞ վեր,— կրկնեցի ես իմ հարցը։

Տատս նորից չկսեց ուժից.

— Կշինեն քիմն տնիկ,
Սալին, կիտրոնն, կոտնեն կոր սիրիկ,
Տանեն, կոտան չամչի...

— Մա,— համառեցի ես,— պարոն Սպոր էլ կուգա՞ վեր։

— Գրողի, մահու մոտ գա,— բարկացավ տատս,— ամեն-ամեն-ամեն...

Բայց ես լսում, նկատում տատից նախապաշարմունքն ու տատից պչեակությունը։

Գարնանային մի նրկար, երբ մեզ քամին փչում էր

Սուրբ հաշա սարից և լսում էր Վանա ծովի ալիքների խուլ և հեռավոր խշշոցը, ես նստած էի մայրիկենց տանը և չգիտեմ ինչով էի զբաղված։ Դուրս ծեծեցին անծանոթ ձեռքով ես վազեցի և դուռը բացի։ Մի մարդ, ձին հեռվից քաշելով, նստ մոտ և հարցրեց.

— Տիգրանը տա՞նն ա։

Եգորն էր

Ես ուղեցի նրան նմանվելու համար պատասխանել, որ «Տիգրանը տանը չա՛», բայց չուզեցի փորձության ենթարկել հայերենն ու պատասխանեցի.

— Ո՛չ։

— Գյուղո՞ւմն ա...

— Ո՛չ։

— Էդ լավ ա։

Նա տեղավորից ձին ախոռում, և քիչ հետո մենք լսեցինք նրա համաչափ ոռնաձայնը վերի օդից։

— Կերթա-կուգա,— մրմնջաց ուստա,— գետնին նայող մարդուց՝ վախեցի...

Տատս սկսեց դուլպա գործել և երգել սպանված Իսֆահանի մասին նոր հյուսված ժողովրդական երգը.

Նպատակը բարի, որ ապին հերս,
Իշխանյաց ցնծի կարճ մարտերս...

Սկավ քնեխ։

Տատս ցած ձայնով պնդուցից, որ Եգորը նկել է, էլի «կերթա-կուգա» վերի սենյակում և որ նա՝ ուստա, վճռականորեն հրաժարվում է «մարդասպանին իրմով անելուց», այնինքն՝ ծառայելուց։ Քնեխ նախ ծիծաղից, հետո բարկացավ և ասաց.

— Եգոր մարդասպան չի, զորավարական ուստա է...

— Զորավար-մարդավար նա չեմ գիտե,— ընդհատեցավ ուստա,— իմ ձեռներ արնոտ են։

Տատս չխոհեց իր վճիռը։ Հաջորդ օր Եգորը հեծավ իր ձին ու գնաց։

Ո՞ւր գնաց։ Ես ուստիս հարցրի այդ մասին, և նա պատասխանեց առանց ուսումնվելու.

— Հանդամի ծոց գնաց։

Տաղս պատասխանը լիովին բավարարից ինձ։

Ես հարցնում եմ Հայաստանին.

— Լավ, Եգոր ինչո՞ւ խփեց այդ կոմիսարին։

— Սատանան գիտի,— պատասխանից Հայաստանը,— ինքն էլ դաշնակցական, կոմիսարն էլ... վերցրից ու խփեց։ Դատապանում հայտարարել է, որ բոլոր դաշնակցական շեֆերին պիտի խփի... որովհետև նրանք հանձնեցին Վարդ։

Սարսափելի՞ Եգոր։

31. ՎԱՆԹԱՐԸ

Երևան, հարուստ բազար...
Վ. Բակունց

Մայրաքաղաքիս այսօրվա հարյուր հազարավոր բնակիչներից շատ քչերը գիտեն նրանից, որ այնտեղ, ուր գտնվում է այժմ Կիրովի անվան մանկական սպարթախիտ պրոսպեկտին, այն ժամանակ ազմկում էր Երևանի միակ բազարային շուկան, որը կոչվում էր Վանթար։

Վարշեն մի ծածկ էր Վանթար կոչվածը. կամարակապ, բարձր մուտքերով, ազմուկ-աղաղակով, ամառն հանճարի բկոն ամպերով, ձմռան՝ ձյան նետ սավառնող փոթիլներով. Երևան մայրաքաղքի հռչակավոր Վանթարը։

— Ժաժիկ, ժաժիկ, համով ժաժիկ, Վանա ժաժիկ,— գոռում են վանեցիները իրենց ապրանքը։

— Տժլժիկ,— ձգվում է ու-որ մի մանկական ձայն։

Պարեններն ունեն իրենց շարքը։ Սհա կանաչեղենների շարքը. այստեղ խրձիկներով ծախում են թարխուն, դինձ կարոտ, վիրնիկ, սոխ։ Կաթնամթերքների շարքին հաջորդում է մրգեղենի, ապա մսի բաժինը։ Ճոճվում են ոչխարի, երինջի կիսակները, նիհար, արյունոտ, անհրապույր։

— Ոչխարի միսն ի՞նչ արժե,— հարցնում է մի պառավ կին։

— Հարյուր քսան հատը,— պատասխանում է մասնաճառը։

— Երեկ հարյուր հազար էր,— առարկում է պառավը
— Երեկն անցավ, այ մեր,— պատասխանում է Համազասպը

Մենք մոտեցավ մեզ, անտեղյակ Հայաստանի վերաբերյալ առաջարկից երկու միլիոն ու կես, մենք գնահատեցինք չորս միլիոն, նա՝ երեք, մենք՝ չորս, նա՝ երեք միլիոն երեք հարյուր հազար, մենք մնացինք անորոշելի— չորս միլիոն ութսի, և առևտուր չկայացավ

— Քիչ էր մնացել միլիոնատեր դառնայինք,— ասում է Հայաստանը

Տնային իրերի վաճառման բաժնում կարելի է գտնել ամեն ինչ. պանդան գույնի ինքնաներ, գորգեր, մահճակալներ, պրամոֆոններ, ձևավոր ժանյակներ, խորովածի շամփուրներ, բարձեր, նարդի, խոհանոցի, ճաշի պարագաներ, հյուրասենյակի հանգամանքներ, ասեղներ ու պահարաններ, կոճակներ ու կախարաններ, խցահան ու գրասեղան, Գրամոֆոններըը նվագում են «Լուսին չկար», «Ինչպես պետք է ելնել սոլմա», «Ամառ գոկտոր», «Որսկան ախպեր», «Քալե, մանչս, քալե», «Վնվոգ ես, շիտես», «Մարգարիտ ջան, դու ճաղի լաց, չի խոռոզը ձեռից գնայ» Համարները:

Նոան բազմությունը շրջապատել է երևանյան հին տրակտորի մոտից մի կնոջ, նա դրել է մի վանդակ սեղանի վրա, իսկ վանդակի միջից նայում է թութակը: Թութակի դեմքը շատ է, քան երևույթին նա քաղցած է, կինը ազավորի պես ձեռները կցած, տխրությամբ նայում է ցանկում թռչունին:

— Մի միլիո՛ն, մի միլիո՛ն,— ցավով պատասխանում է նա միայն հետաքրքրությունից դրդված գինը հարցնողներին:
— Տասը միլիոնի էլ չէի ծախի... վոլ ա պետք:

— Մեկ միլիոն՝ մեկ կոպի՛կ,— ճշում է թութակը վանդակի միջից, և ժողովուրդը քահ-քահ ծիծաղում է:

— Էս մի սոխա է տանում բիլում ես քյասիբ դուշին, տեսնում ես մի միլիոն ուլոր չկա, դե դու էլ իջիր, էլի,— ասում է կապույտ ակնոցով, պինդրական շինելով, կարճահասակ, բարակ, ծիպլի Վասոյի ձայնով մի կուսիկ:

— Մի տարի կտանեմ, կբերեմ, քաղցած կատակացնեմ,

միլիոնից չեմ իջնի,— ասում է պատավոր բարկացկոտ ու դառնացած։

— Մի՛ բարկանա, այ քիր,— համոզում է վինվորական չինելը,— նրա համար եմ ասում, որ դու ղուշից պատռվես, ղուշն՝ քեզնից...

Չեչոտ, նիհար, սուր դեմքով մի մարդ իր ձեռքով չինած սանրեր է ծախում, մյուս ձեռքում՝ էջմիածնի օրացույցները.

— Սա՜նր... օրացո՜ւյց...

Այդ նշանավոր վանեցի Մարտրոն է. նա նրան ճանաչում եմ։ Նա մի քիչ խանդարված է և այդ արտահայտվում է միայն մի բանում. նա հաստատ համոզված է, որ «Հին ամավածնները» ինքն է գրել, իսկ Շանթը գողացել է իրենից։

— Սա՜նր... օրացո՜ւյց...

— Մարտրո՛,— խոսեցնում է նրան մեկը,— սանրերդ ի՞նչ կոտոշից են։

Մի մարդ երկու ձեռքում շորս մոմակալ բռնած, շխկշխկացնելով առաջ է շարժվում.

— Շամդա՜ն, շամդա՜ն...

— Մոմ կա՞, որ շամդան կծախես,— հարցնում է մի պատավ։

— Մոմ որ լիներ, էլ շամդաններս ինչի՞ կծախեի,— լինում է պատասխանը։

Ուղակի դեմքի վրա նայել է բաշանձև, դեղին մորեքույր մի թոթք, նրա դեմ պատել է երկար, սև բեղերով մի հայ և սեր, բարակ դանակով քերթում է նահատակ թոթքի գլուխը։ Երբ քերթվում է գլուխը և արյունը վազում, կախարդ սանրիչը կողքին թաղված զանազան թզթերից մի կտոր կտրում, թրջում ու փակցնում է ապետյալ կետի վրա։

— Վախ շատ ես կտրում, է՛,— միջամտում է հանդիսանականների մեկը, որն իսո երևույթին ուզում է իր գլուխը դնել սանրիչի մոգական դանակի տակ։

— Ես մնգատոր չեմ,— արդարանում է սանրիչը,— ինձնից առաջ թրաշողը ֆելֆուս է արել։

Ոչ որ չի հասկանում, թե ի՞նչ «ֆելֆուս» է, բայց բոլորն էլ համաձայնվում են, շուռնալով. ցույց տալ իրենց տպավորությունը։

— Իսկ ի՞նչ բան է այդ «ֆելֆորը»,— հարցնում է մի հանդուգն տեսու: Սափրիչը նայում է նրան մի ոչնչացնող հայացքով, հետո ժպտում է հանդիսատեսներին:

— Յախշի՛, յախշի՛,— հաշտարար տոնով հանգստացնում է նահատակ Թոքթը, չսպասելով, որ իր դուխը դառնա պատերազմական գործողությունների առիթ: Պատճառ չուներ խնդիրը վախենալու, որովհետև, երբ սափրիչը վերջացրեց իր ծանր, մասնագիտական, նուրբ աշխատանքը, նրա դեմքն առանց այն էլ վերածվել էր պորտալի՝ հրվանդանների, չրանցքների, ինքակղինների և ուշն-ուշն մեքսիկանների ու չիքուատաբլների, և այս ամենը ցողված արյունով:

Այստեղ էլ երկու հոգի, քան երեսուն վանեցիներ, նրատած նարդի են խաղում:

— Մեյ խատ խի-բիր,— ամրոց հոգով թախանձում է խաղացողներից մեկը, նիհար մի երիտասարդ՝ գարնը նետելով, կարմրած և ջղային խաղի կրքից:

— Վե քա դու,— դանդաղ ու հանգիստ պատասխանում է ավելի հասակավոր և պատկառելի խաղակիցը,— էս՝ ահ, քա դո՞ւճ...

— Խաղա՛, ջանըմ, շուտ արա, հայկական հարց դարձրիր,— շտապեցնում է երիտասարդը:

— Մի շտապի, էս էլ դու, սա նարդի է, Զանգիբասարի քյալան չի:

— Խի-բիր... քյո՛ւհ քո գարի մեջը... եկավ, երբ պետք չի՝ քար չի գա, խո գտնվել չի՞:

— Օյին,— դանդաղ ու հանգիստ հայտարարում է պատկառելին, նույն տեմպով մի ծխախոտ վառելով, և ավելացնում է,— քարը մարտնեին կուգա, բարեկամ:

— Էլ չեմ խաղա, քար կրռնես, ես քուշշդի մարդու հետ թավլու չեմ խաղա:

— Չես խաղա՝ երեսս քարով, պատվռա ինշո՞ւ կդիպչես...

Բազմությունը ձևդիսով առաջ է անցնում մի երիտասարդ: Կարճ շալվարից դուրս են ընկել և շտապում են նրա սրաքիթ կոշիկները, ժիլետն ապիտակ է, գլխին ճմրթված, տանջված ու չարչարված մի շլյապա: Սա

ամերիկյան կոմիտեի հին շտերի «այուկ»-երի տարան է, անշատ տարածված և միշտ ծիծաղի առարկա։

— Մատր Բարեզամ, ո՞նց են գործերդ։

— Կամաց-կամաց, միլիոններին հետ կիսատանք։

— Միտս Ակրատո՞ն ինչպես է։

— Տան-տեղաց վերեն, նայիա... Կուդ-բայ։

— Ապատ, մատր Բարեզամ, մի բան պիտի հարցնեմ, դու ամերիկյան «այուկ»-երի հետ գործ ունես, կիմանաս... (աչքով է անում լսողներին) էս ամերիկյան մանդատի խնդիր ի՞նչ եղավ։

Բարեզամը լուրջ կեցվածք է ընդունում, բեմամասները խոթում է ժիլետի փոքրիկ գրպաններն մեջ և հաղորդում.

— Միջազգային դրության քիչ մը ապաթալա է։ Մի բան պիտի անեն։ Տաճկաստան կրակի խեռ կիսաղա, իսկ Բալքաններ կարող են մեջ փախնել։ Կամենգաս Շահխոխունու արածն իմացա՞ր։

— Չէ։

— Չին կրշի, կմտնի «Օրիանս» ռեստորան, տասը պորցի պրնձով, չամչով փլավ կառնի, կկերցնի ձիուն... լուր կուտան ֆրանսիական բոնատին... Անդրանիկ՝ դաշնակցականներից կխռովի, կանցնի Նախջևան... Էնպես որ միջազգային դրության փոշմիշ կելնի... Էս երեք օր է, ոչ ուտել գիտեմ, ոչ խմել...

Դանիարի հարուստային կոշիկից զանգակներ են հնչում։ Անցնում է ուղտերի մի փոքրիկ քարավան։ Առաջ են շարժվում ուղտերը, կապված մեկը մյուսից, հանդիսավոր տխրությամբ, լայնարձակ անապատների թախիծն իրենց աչքերում, Օդի մեջ նրանց ոտները փոքր են, իսկ երբ դնում են գետնին, լայնանում են, գառնում են մեծանիստ ու ծավալուն, ուղտաներ գնում է առաջից, մանր ու արագ քայլերով։ Երեխ նա այդքան էլ կարճահասակ չէ, բայց ուղտերի առաջից գնում է նա ինչպես թռուկ։

Վառում է Երևանի արևը Երևանի վրա։ Շոգ է։ Փոքրիկ, մոխրագույն դևմքերով, ցնցոտիապատ երեխաներ ջուր են ծախում, նրանցից մեկը քայլում է, փարչն ու բաժակը մի ձեռքում, իսկ մյուսում շաքարե կարմիր ապուպոշը։ Գնում է

նա ու մեկ նայում է իր վարշին, մեկ՝ շաքարե աքաղաղին և կարծես պարզացել է, որ ջրից աքաղաղ դուրս կգար. նա մի առումով կրծում է աքաղաղի գլուխը և ոլոր կանշում.

— Սարի մարդ՞ւր ջուրը խմ-ողը՞ւ

Ահա «Անտառի պատմը», ինչո՞ւ է կոչվել այդ հատվածը մարդն «Անտառի պատմ», հայտնի չէ։ Այդպես նրան կանչում են ջուր ծախողները, խուժանները, մինչև անգամ դպրոցականները։ Բարկանում է նա, հայհոյում, բայ է նետում երեխաների վրա։

— Անտառի պատմ՞ւ։

Սև, բառակուսի տախտակի շրջանակի վրա քաշված է սև կտավ կամ տաֆտա։ Սև կտավի կամ տաֆտայի վրա սպիտակ ներկով նկարված են մի քանի բարդիներ, բարդիներից վեր՝ ամպերի բույներ, իսկ ամպերի բույների միջից նայում է մի խորապես լուրջ, ակադեմիական լուսին։ Գալիճն շարժվում, լայնատիճ լցվում, բարակիրան, նիզ, ան փոփոխում մի ցահել կանգնել է այս իդիլիական ֆոնի վրա և ոռնել է աքոռի հնարքը։ Նա հանում է փոփոխը, դնում է, աքոռին ու դիրք բռնում, հետո նորից դնում է գլխին և դեմքին տալիս է խիստ արտահայտության լուսանկարիչը համբերությամբ սպասում է, իսկ ոտքն ոչ մի կերպ չի կարող կողմնորոշվել և դիմում է նկարչին.

— Փափախո՞վ, թե՞ անփափախ,— հարցնում է նա ժպտալով,— ո՞րն ավելի քոնդ ա դուրս գյամ...

— Էնպես էլ ա քոնդ, էնպես էլ... բեզ հանեմ թե՛ փափախով, թե՛ առանց փափախի... անֆա՛ս...

— Ճիշտ-ճիշտ,— ուրախանում է ջահելը,— պի, չէ՞ կացրո՞ւ...

Այսանդ-այնանդ վառվում են փորրիկ օջախներ. վառվող կրաքարերը երկու կողմից եկրված են քարերով, իսկ քարերի վրա դրված է երկարատարշ մի թավա, որի մեջ ոժվժում են արտի, եղիկամանքների, խոթի, հասատպիքի կարոնները։ Շուկայի վրա բռնել է ծուխն ու ճնճղուկոտը։ Սա Երևանի հռչակավոր ոժվժիկն է։ Շատ-շատերի կարծիքով, աշխարհի երեսին երկու բան կա զուլական՝ վանա ժաժիկն ու Երևանի ոժվժիկը։

Ահա և դրքերի բաժինը. այստեղ, ուղղակի գետնի վրա կոզբ-կոզբի դարսված են պոթատրքեր, աստվածաշունչ, հին և նոր կտակարան, Աբրպետի «Ալմաստ» ու «Չավահիր» վեպերը, Արտախանյանի «Մուրճ»-ը, «Խաթարտալա» երգիծաթերթի համարներ, Արծրունու «Էվելինա»-ն, Խաչհակյանի «Երգեր ու վերքեր»-ը, Դեմիրճյանի բանաստեղծություններն ժողովածուն, Առանձարի «Վշտի ծիծաղ»-ը, Վշտունու «Արտիլարիեն» բանաստեղծությունների գրքույկը, Երիմյանի «Սիրտ և Սամվել»-ը, ու գրքեր, նորից գրքեր գետնատան չափի, գետնատան գույնի շապիկներով, կապած և անկապ, մոտացող և անմոտաց, արդեն մահացած և անմահ գրքեր:

Բաց շուկայի հյուսիս-արևելյան անկյունում կանգնած է մի ավերակոտոր, նիհար և բարձրահասակ մարդ, նա շրջապատված է գետնատան մեծության յուղաներկ, գրաֆիկ և պեստիսաների նկարներով, կան և մեծացրած լուսանկարներ: Բարձրահասակ մարդը ծխում է լուրջ և հանդիսավոր, անցնում է նկարների մոտով նա ու առաջ, վերամբարձ է նկարներից մեկն ու մեկի տակը և ավելի լրջանում: Քիթը հասարակ թևկոթով Աբովյանի բիլին, ուշադրությամբ նայում է նրան, վշտում է, վոշտ մի հյուսի թողնելու համար նրան, և շտապում է քայլել նա ու առաջ: Երիմյան հայրիկը նայել է կաթողիկական դահին, իսկ հառաչին, դրսի վրա, ընկած է ճամփան, պատառոտված մի թուղթ: Նա ցարի հրամանն է նկատցական կարմածներ հանձնելու մասին: Երիմյանը խիստ բարկացած է, Ծծվար չէ նրա շրթունքների վրա կարդալ վանեցիական մի մայրական հայհոյանք ցարի հասցեին: Սահակ-Մեսրոպի կողքից Անդրանիկն է նայում, իսկ Վարդան Մամիկոնյանն ու Սեբեոսոս Նալբանդը կարծես պատրաստ նայում են իրար: Ահա և «Մայր Հայաստանը», «Մայր Հայաստանը» նոր մի վարիանտ, լրիվ տուալետով, գրեթե նկարված շրթունքներով, կարմրաթված և առաջ, կարծես նոր է վերարարձել ամառանոցից: Նա չի լալիս, պարզապես նայել ու նկարվել է: Իսկ նրա կողքին մի հսկա որսորդ հսկայական հրացանից կրակում է մի փոքրիկ նապաստակի վրա: Նապաստակը կանգնել է կանաչ խոտերի մեջ, հետևի ոտներին, դեմքը դեպի որսորդը, լսում և հանդուգն արտա-

հայուհյամբ իսկ Միքայել Նալբանդյանը թախծոտ հայացքով նայում է կարծես կապույտ ովկիանին, քրիստոսը, նստած մի սիրունատես ավանակի վրա, մոնում է Երուսաղեմ, իսկ նրա կողքին Բաֆֆին է նայում բարկացած, ակնոցի միջից։ Հետո սպիտակ կարապներ են լողում փոքրիկ, կապույտ լճում, իսկ լճափին, կանաչ նստարանին նստած է մի երիտասարդ, եվրոպական տարազով, փոքրիկ մորուքով և ակնոցով։ Նրա կողքին հարմար կերպով տեղավորված է բանակ, խիտ բարակ իրանով, սպիտակ, լայն, ուռուցիկ շրջապտասով մի աղջիկ։ Նրանք ձեռք-ձեռքի են տվել և նայում են ուղիղ իրար աչքերի պաճուճիկ և սենտիմենտալ նայվածքով։ Ջյուն է գալիս, իսկ սև կատուն պատուհանի գոգում նստած նայում է երկնքին, կատվի վիզը պարզարված է վարդագույն մի ժապավենով, ահա մի սև մարդ. նա երկու ձեռքով բռնել է գլուխը, կատաղի դեմք ունի և դուրս թռած աչքեր։ Նրա հետև կանգնել է մեկ ուրիշը, ձեռքը դրած սրի կոթին և նայում է սև մարդուն լայրշ աչքերով, հևգնանքով և կարծես հարցնում է,— «Ո՞ւմ կուռնգուս...»։ Պետք է ենթադրել, որ դրանցից մեկը Օթելլոն է, իսկ մյուսը՝ Յագոն։ Ահա և փոքրիկ մի նկար, որն իրենից ներկայացնում է դանագան մրցերով լեցուն մի վագոն։ Նկարի տակը գրված է «նաստրմորդիկ»։ Մի ֆրանկավոր և փողկապավոր կապիկ բևի վրա, նստած աթոռին, վիրոնչել է նվագում, իսկ դահլիճում նրա տած են դանագան տարազով հագնված դազաններ. դինվորական վագրեր և առյուծներ ինքնագոհ ու հպարտ նայում են օձյակներից։ Ահա հասարակ, ֆրանկավոր և փողկապավոր արջեր, գայլեր, բորենիներ, ամա լայն դլխարով, ռեդինգոտներով, հավհարևներով կովեր, ոչխարներ, եղնիկներ...

Կապույտ ովկիանի մինարեթից հնչում է ձիգ ու մելամաղձոտ ապանը, հետո դրդում են քաղաքի վրա իշխող ոսմանյան եկեղեցու զանգերը, իսկ նա ու Հայաստանը դուրս են գալիս Զանթարից որպես երկու անբախտ վաճառականներ,

Չէ՛, մայրաքաղաքին այսօրվա հարյուր հազարավոր բնակիչների մեջ անգամ չի կարող անցնել, որ այժմ «Վևան» հյուրանոցի տեղում և նրա դիմաց կողք-կողքի շարված էին քյաթաբխանաներ, չայխանաներ, ճաշարաններ, արձաթանաներ և դադաղագործների արհեստանոցներ, ճաշարանից դուրս են հորդում արևելյան երաժշտության մեղմամուլճոտ հնչյունները, իսկ դադաղագործ կոնդեցի Մուղդուսի հասլիկը մուրճով ամրացնում է մի դադաղի միխերը։ Նրա խանութի դռան առաջ շարված են դանազան չափի, ոճի, ձաշակի և արժեքի դադաղներ։ Մոտ է դադաղագործի դեմքը. նա խանութում երբեք չի ժպտում, որովհետև բան առին է, ինչ պետք է այս գործով և դեռ երբեք չի տեսել ժպտացող մի հաճախորդ։ Նրանք բոլորն էլ տխուր են, արցունքոտ աչքերով, ջղային, ագահ, կարծես իրենց համար են պատվիրում ու գնում դադաղներ։

— Այս նրա համար է,— պատում է Հայաստանը,— որպեսզի երբ մարդիկ հարբած ու հղփացած դուրս գան ճաշարանից, տեսնեն այս դադաղներն ու հիշեն, որ վերջը մահ է։

— Սա ընդհակառակը,— մտածում եմ ես,— մարդը կարող է առանց հետին դիտավորությունների անցնել այս հանգստությունների միջով, տեսնել այս սարսափելի դադաղները և մտածել.— Ի՛նչ որ մեռնել կա, մեռնենք մի երկու շիշ խմելո...

— Այդպես էլ կարող է պատահել,— համաձայնվում է Հայաստանը։

Առաջ ենք բացում Գայթակղության այս շարքի վերջում, մի դռան ցուցանակում պրված են մի բանի խորհրդավոր գլուխներ։ Մենք նայում ենք իրար և առանց սխալի կարդում ենք իրար մտքերը։ Բայց ահա դռան դռան մեջ կանգնել են երկու հոգի և պրոցում են։

— Էսա բեզնես կկտրեմ, Բե նորից վան չերթանք,— ասում է մեկը։

— Վան մեռնի, Նշան ապա, բան կա, բան ասա,— հառաչում է մյուս խոսակիցը։

— Հաչ փողոցի վերջին էնպես մի մագազին բանամ, որ Աֆրիկով մա՛թ մնա,— ետևդով պնդում է առաջինը։

— Դարտակ խո-ան՞մ քա-մին տանի՛...— երգում է երկրորդ խոսակիցը։

— Ընանից վան շամբնորֆրտով պիտի երթամ,— ավելի տաքանում է առաջինը։

— Մենակ ֆնդ նայի, գլուխդ վագոնի փենջարից դուս շհաննա, Օրգոֆի մոտ ցուրտ ի, խորնցում կրնկնես։

Վերջինիս դեմքը ծանոթ է ինձ. ես փորփրում եմ հիշողությունս։ Հիշում եմ Արաբաջոնց Նշան աղային, նրա հյուսանիքը, հարևանցու հրշալույսի կապույտ աչքերն ու անսովոր երկար հասակը։ Երկաթե հյուսերով լեցուն մեծ անոյակի մեջտեղ բազկաթոռ դրին, իսկ բազկաթոռի վրա փնասյին նասեցրին Մոսեցավ բարբար Աֆիսան իր փոքրիկ, սիրուն արկղով, փոքրիկ բանալիով բացեց այն և հանեց ու գրգի վրա դասավորեց իր՝ վարսավիրի իրերն համբրներն ու քամբրները։ Ակավեց «մեծ թրաշի» արարողություն, որը տևում է մի ժամից ավելի։ Սափրիչը ցույց է տալիս իր արվեստի բոլոր նրբություններն ու բոլոր նրբությունների նրբությունը։ «Մեծ թրաշի» արարողության ամբողջ ընթացքում, կուշտի չալկին նվագում է մեղմ եղանակներ, այնքան մեղմ, որ լսելի է սափրիչի մկրատի չխկչխկոցը։ Բոլորի երեսուն նայվածքները անոյակի շուրս կողմերից և անկյուններից ձգտում են դեպի օրվա ուշադրության կենտրոնը և նրա բոլորի նայվածքները հրաշքով վերածվելին վարդագույն, կանաչ, կապույտ թելերի, ապա մեր վոսնանային նորը մի ժանյակ, որի կենտրոնում ինքն է՝ նորահնա Նշան աղա Արաբաջյանը, և սափրիչ Սաֆարը։

Պատկարության հանդեսը տևել ունեցավ նորաշենի մայր եկեղեցում, որի արևելահայաց պատի վրա փորագրված էր.

Զարթ հիշեցող
Խորոց որ ննջես,
Զանազ հիշատակ
Թե անվանդ, քե քնդ,
Պերճ Մարգիս ազա,
Վեհափառ իշխան,

Դու հասուն պատճառ
Տաճարի շինման

Այսպես, այսպես։

Կարքերին թիվ չկար, հարսանքավորներին՝ համարյա Տեր-Խորենն այդ օրը հավնվել էր առանձին շուքով։ Կղպաբաշի Արշակը վառվռուն մոմերի վահանակը բռնել էր նորահարսի և նորափեսայի գլխին, Հասավ «մեծ այո»-ի ժամը։ Կա հիվանդության և ձախորդության կյանքում, աքսոր և պանդխտության, կուրանալ և կաղալ, բայց դիպքերում ան՞ր ևս։

— Այո՛,— արտասանեց նշան պաճ իր «մեծ այո»-ու նորահարսը գլխով հավանության նշան արավ և արտասվեց։ Նորահարսի արտասուքը միշտ համաձայնության նշան է համարվել։

Այնուհետև, երբ նորապսակներին եկեղեցուց դուրս բերին, բոլոր հարսանքավորները նրանցին «Դե հայրենյաց պատակավոր»-ը։

Ասում իջիր ի Հայաստան,
Հայոց քաջիր պահիլ...

Այս դեռ ոչինչ։ Ասմունքը հասկացավ իջել է Հայաստանի հողի վրա, մի միտքայլ,— հայոց քաջերին պահելու համար։ Հաճելի է։ Բայց իմ հոգին տագնապով լցնում են նույն երգի ուրիշ տողերը։

Ասում իջիր ի Հայաստան,
Հայոց արյուն հառաչիլ...

Այս արդեն սարսափելի է։

Ասածս այս արտերն ամենևին չէր համապատասխանում այն ասածս կերպարին, որն իմ տատն էր ստեղծել ինձ համար... այդ ժամանակ ինձ համար անհասկանալի մնաց ասածս այդ նոր և չար տողերը։

Իսկ հիմա, հիմա ես հասկանում եմ...

. . . . . .

— Նշա՛ն աղա...

Նա նայեց ինձ զարմացած և բարեհամբույր։

— Դու որի՞ տղեն ես,— հարցրեց նա։

— Ամմոնց,— պատասխանեցի։

— Վա՞յ,— ավելի զարմացավ նա,— Գրիգորի, Անուշի աղան նա... Ներս նկնք, ներս նկնք, որդի ձագունենք, էս էլ քո ընկե՞րն ի... Ներս նկնք, հաց կնրնք... Ամմոնց Գրիգորին կճանչնի՞ր...

— Կճանչնի,— պատասխանեց խոսակիցը՝ գույնզգույն քարերն երկու ափերի մեջ տրորելով,— քառման օր՝ պատկէ բան... է, երանի էն օր...

— Երանի՞,— զոդորմեմ է նշան աղան,— ասա՝ ան լիներ էն օրը։

— Չէ. էդ չէի ուզեր ասել,— ախրում է խոսակիցը,— կուզեմ ասել, որ ջահել էինք, դեռ արյուն կնստար։

— Էն էլ ինչի կնստար,— համաձայնվում է նշան աղան։

Մինչ այս, մինչ այդ, մենք ուղղվեցինք «Հառաջ» քարքոլ ծածկված մի սեղանի շուրջ, իսկ նշան աղան սեղանի վրա դրեց երկու կտոր սև, քնիթա հաց ու ամեն մեկիս առաջ մի-մի ուշաղի գրուխ կյանքիս մեջ ոչ մի խորտիկ այդպես համով չէր թվացել ինձ. նույն տպավորությունը գժվար չէր կարդալ Հայաստանի աչքերում։ Ցնդող տպավորություն քաղց մանավանդ գիտակցելու Ես հաստատ որշում ընդունեցի, որ երբ մեծանամ, շատ փող ունենամ, օրական 20—30 ուշաղի գլուխ ուտեմ։

Երբ հացի կտորից ոչ մի փշրանք չէր մնացել սեղանի վրա և ուշաղի գլխի ոսկորները մշակված էին ամենայն մանրամասնությամբ և բծախնդրությամբ, մենք մի մարդու նման ոտքի կանգնեցինք և պատրաստվեցինք հրաժեշտ տալու։

— Նշան աղա,— հառաջաբան ու տարակուսյուն չվերցնող տոնով դիմեց Հայաստանը նրան,— վերցրեք այս վերարկուն, մենք փող չունենք, հետո կհաշվենք...

— Ինչո՞ւ համար,— կմկմաց նշան աղան վերցնելով վերարկուն և պնդելով,— ի՞նչ տարբերություն... Դե, որ կուզեք, թող ձեր ասածը լինի... կուզաք, հաց կուտեք, կամաց-կամաց կհաշվենք... Չէ, վանի հանգամանք ծանր հանգամանք է,— դարձավ նա իր խոսակցին, կարծես շարունակելով ընդհատված զրույցը։

Մենք ինքնագոհ ու երջանիկ փողոց նռալեցինք։ Բարձրացանք վեր, Կրովյանի, այն ժամանակ Աստաֆյան փողոցի ասլտրկած մասով։

33. ԱՆԺՈՒՏ ՊԱՊՈՒՆ, ԿՐՔԻՐԻ ԵՎ ՆՈՒՐՑ ՔԱՂՑԻ ՄԱՍԻՆ

Դեմից իջնում էր մեր հայոց լեզվի ուսուցիչը՝ պարոն Արանն Տերտերյանը։ Երբ դեռ մենք սովորում էինք, մի ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, Հայաստանն իր հուշատետրում մի անգամ միայն նշեց. «Այսօր պարոն Տերտերյանը ժպտաց»։ Բայց մենք սիրում էինք նրան, այդ մասլ և անժպիտ պարոն Տերտերյանին, որն օժտված էր ինչ-որ անհասկանալի հմայքով։ Ինչո՞ւմն էր կայանում նրա հմայքը, դժվար էր ասել։ Բարձրահասակ էր նա, խոշոր, ապուշիկ դիմագծերով, մեծ-մեծ, թախտնոտ աչքերով, տիրական բիուլ ու լայն ճակատով, սեփ-սև ընշանքի առնական կնիքով։ Ինչո՞ւմն էր կայանում նրա հմայքը։ Այս հանելուկը մենք լուծեցինք հետագայում, երբ մեծացանք, կյանք մտանք և երբ արդեն ընկեր Տերտերյանի հետ սեղան նստեցինք ու բաժակ բարձրացրինք, Պարույրս, որ այդ դասարանում և ամբողջ մոտ մասլ ու անժպիտ մարդը ոչ այլ ոք է, եթե ոչ մի կննատրախ, քեֆչի, ուռոլ-խմոլ, գարդիման մի անձնավորություն։ Այս հատկությունները նա պահեց մինչև խորին ծերություն, մինչև իր մահը։ Այժմ մեր պանթեոնում կանգնած է նրա կիսանդրին։ Չկա իսկական Տերտերյանը. այս կիսանդրին այն ուսուցչական և պրոֆեսորական ամբոխի մոտ կանգնած, պաշտոնական, ակադեմիական Տերտերյանն է։

Փոխանակ բարևելու և անցնելու, կանգնեց նա և իր Բալշային բառով հարցրեց.

— Ո՞նց եք։

— . . . . . .

— Սո՛ւտ կացեք։ Երևի պարոցները շատով վերարտալնն։ Գիրք ընկնո՞ւմ է ձեռներդ։ Ասենք հիմա մարդիկ ոչ այնքան բանի մասին են մտածում, որքան հարյո...

— Մենք կուշտ ենք, պարոն Տերտերյան,— հպարտու. Թյամբ ասաց Հայաստանը։

— Բո՛, — բասեց Տերտերյանը,— դա մեծ բան է։— Նա պրպանից ։անկց երկու բանալի.— ահա ձեզ թեմական դպրոցի գրադարանի բանալինները։ Գնացեք, բացեք, կարդացեք ու լիլի փակեք, բանալինները դրեք ջնջեղում։ Չկորցնեք։ Յլ՛։

Մենք շոյված ու թևավորված այս մեծ պատվից ու վստահությունից, քոանք դեպի թեմական դպրոցը։

...Թեմական դպրոց։

Աշակերտները չեն տղմկում նրա բակում և միջանցքերում։ Չի անցնում պարոն Վարդան Մամաջանյանը զանգը ձեռին, և սիրված ու խստապահանջ պարոն Հովսեփ Պարոնյանի քայլ ոտը չի լսվում դասարանում։ Սերը Սարգիս եկեղեցու պատի տակ խաղված դպրոցի տեսուչ Արշակ Չիլինգարյանի հողին հավասար շերմի վրա խոտ է բուսել, իսկ նկողնոց շուրջը, դպրոցի բակում, դպրոցի երկարաձիգ միջանցքում և դասարաններում լցվել են գաղթականներ,— կին, ծեր, պառավ, երեխաներ,— թաղցած, մերկ, անօթ ու անտրտունջ, անտեր ու անօգնական։

Երբ մենք մտանք դպրոցի գրադարանին, անմիջապես հայտնի դարձավ մի բան, որ պարոն Տերտերյանի տված բանալիները միանգամայն ավելորդ էին։ Բաց պատշգամբի վրա նայող գրադարանի երկու պատուհանները բաց էին, ապակիները հանված։ Մենք առանց նկատվելու տալու բանալիներին՝ պատուհանից ներս մտանք։

Ահա։

«Խոժո՛ռ գիրքեր, մե՛ծ գրքեր»...

— Ո՞վ է ասել։— Դանիել Վարուժանն է ասել։

Ես հիշեցի Վանի գրադարանները,— «Ալեփոյան» գրադարան, «Մարտիկ» գրադարան, «Ազատության լույս» գրադարան։ Եվ բոլոր գրադարանները միատեսակ, հաճելի բուրմունք ունեն։ Գրքերի բուրմունք, Զարմանալի կախարդական. մոգական բուրմունք։ «Վիլհելմ Տել», Րաֆֆի՝ «Կայծեր», «Ջալալեդին»։

— Հայաստան, «հևոցը»։

Հայաստանը վերցրել է մի հսկայական հատոր, իր փոք-

րիկ քիթը մխրճել է բացված էջերի վրա և հանդիսավոր կնոպոլ կարդում է.

Графиня Эмилия,
Более чем линия...

— Պուշկի՛ն,— գոռում է նա անկեղծ հրճվանքով։

Թևական դպրոցի բակում, այնտեղ, որտեղ թաղված է Արշակ Չիլինգարյանը, Սուրբ Սարգիս եկեղեցու պատի տակ, ուր դամբանական ճառով հանդես եկավ դպրոցի աշակերտ Աղասին, և որը հիմա նստած է բանտում... Ո՛ւխ է բարձրանում Թևական դպրոցի տնտես Արշակ Չիլինգարյանի հիմի մոխիր։ Յնդոսխաստան մի պյուպցի նստել է ծխացող օջախի մոտ, Թիֆլիզ մի ամանի մեջ եռում է պղտոր մի ջուր, մեջը ինչ-որ... ինչ-որ ինչ...

Ոտքս

նակ այդ ծուխը... պատկառելի գրքեր են վառում, գրքեր, այն գրադարանի գրքերը, որի բանալիները այնքան խնամքով հանձնել էին Արտեն Տերտերյանը։

— Ի՞նչ ես եփում,— գոռում է Հայաստանը, գրքեն ինձ բվաց, ոչ իր ձայնով։

— Տրեխս,— պատասխանում է պյուպցին, առանց մեր նայելու։

— Նակ...— Հայաստանի ձայնն իջնում է, ես գիտեմ, որ նա այս անգամ պետք հարցնի արդեն իր ձայնով... Բայց նա կոանում է, նայում վառվող օջախին և հարցնում է ոչ ավել և ոչ պակաս՝ ձեռով Օհանի ձայնով.

— Ի՞նչ ես վառում...

— «Կայծեր»,— պատասխանում է պյուպցին։

— Էլ բան չգտա՞ր վառելու,— ճչում է Հայաստանը ոչ իր, ոչ էլ ձեռով Օհանի ձայնով։

— Մի՛ գոռգոռա, ջահել տղա,— ծխի մեջ կորած ասում է պյուպցին, ճիտուկ կոթով խառնելով թիֆլեղի ամանի պղտոր բաղադրությունը,— ես էլ գրքի սևն ու սպիտակը գիտեմ, ինչով չմնաց։ Ահա՛ն, ծծկեր երեխես, ահա՛ն, մերը, մեկ էլ ես... իմ տրեխներով։ Տրեխն ինձ ու մորը, ջուրը վեց ամսական բալիս էլ ո՞ւմ գրքով եփեմ էս զահրումարը։

Բաֆֆին մեծ է, Բաֆֆին սուրբ է... Իցցե ֆե նրա «Կալծեր»-ով...

Իջնում էր ծանր, մղձավանջային երեկոն,

34. ՆԱԻԾՆ ՉԱՐԵՆՑ

... Հարը դո՛ւռ ես տալու,
Ո՛ւ սիրտը պիտք է տա,
Թե հարը գոնեա կյանքում,
Գիտցիր, քո հարն է դա...
(Ն. Զարեց.— անտիպ)

Դու մարդարե պիտի լինես,
հալածվիր ու մարտիրոս,
հարուկ ու խաչ պիտի ելնես,
Ոչ իրր սովոկ, այլ հերոս:
(Վ. Տերյան.— նրա սիրած բառյակը)

ԱՒԱՅՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ամառային մի շոգ օր էր: Երևան քաղաքի, նախկին դաշնակցական մայրաքաղաքի վրա, արևը շիկացած պղնձի նման հալվում էր ու թափվում: Մայթերը, շենքերի պատերը չեմում էին տաք թոնրի նման, քաղաքային ժամացույցը երկու անգամ խփեց շոգից խուլ և շնչասպառ, այդ էլ լսեց: Մնաց՝ «Անմիշկի ժարինն, կոպիծե բարինի», սպա՝ պապրո՛ս «Խան-կեֆի՛», «Նգիպետակի՛», «Սալիդնի՛»... ավելի խոպ՝ «Նարի մաքո՛ւր ջուրը խմողը՛». ջրավաճառ ու պապրոսավաճառ տղաների կանչերը:

Տխուր, գավառական քաղաք: Անշարժ են ծառերի տերևները, անշարժ է պառլամենտի շենքի վրա կանգնած եռագույնը: Որքանոցից դուրս նկա և մոլոր ու տապակացած՝ բոլշարի նատարաններից մեկի վրա նստեցի:

Ինչպես մի ուս ժամանակակից գրող ասել է, այդ այն ժամանակներն էին, երբ ամեն ոք միլիոնատեր էր: Ես հիսուն ռուբլով մի փոքրիկ բաժակ սեմիշկա գնեցի և որպես «բարինա», սկսեցի շրթել:

Սեմիշկան ոչ միայն հաճույք էր ինձ համար, այլև սուրհանդակ։ Ով այդպես, ես սկսեցի անվել և հաճույք ստանալ։

Դիտե՞լ եք երբևէ սեմիշկա ուտողներին։ Նրանք ուտում են և անդադար նայում են աջ, հետո ուտում են և անդադար նայում են ձախ, հետո էլի են ուտում և նայում են իրենց դիմաց։ Ջնդում են, ուտում դանդաղ, բայց մի տեսակ լուրջ և կարևորության տալով իրենց գործին, կենտրոնացած, խորհուրդ և ծանրակշիռ։

Իմ կողքին նստած էր մի թիմականցի և քիթը պճկրտելով «Հառաջ» էր կարդում, սպա նկու վանեցիներ, որոնց մեջ հետևյալ երեսը տեղի ունեցավ.

— Տաճիկն եկավ, տղա՛...

— Քյո տուն շինվի, ռուս մնա՞ց...

— Ոտան էլ եկավ...

— Ճախրակն ի՞նչես է...

— Ջանըմ, ճախրակն էլ մարդահաշի՞վ է...

Նոքա ուժգնական, ռուսական ոսկու և նահեյանի վտղերի մասին էին։ Վերջինս վրա նստած էր հայ կինը և ամաչակ էր մանում։

Մի տուփ լուցկին 50 ռուբլի արժեր մոտավորապես։ Դժվար չէ գուշակել, որ ամեն քաղաքցի, օրական միլիոններ շրջանառության ուներ։ Մոսավորապես։

Երեք հայը այդքան հարուստ չէր եղել։ Հասարակ ջութ ձախողի օրական վաստակը հազար ռուբլուց պակաս չէր։ Այս էլ մոսավորապես։

Բայց ամբողջ երկում սավառնում էր քաղցն ու սովը։ Սովը նայում էր ամեն տեղից, մինչև անգամ թղթախաղաների զարդանկարների միջից։

Իմ դիմացի նստարաններից մեկի վրա տեղ բռնեց մի երիտասարդ, անշուք, թափթփված, անիուղթ։ Կեռ քիթ և գնող աչքեր։ Նա սեմիշկա դնեց և սկսեց ուտել մաղձոտ և դժգոհ դեմքով։

Այդ երիտասարդը Ղուրենցն էր։

— «Հան-կնֆի՞»... «Սա-լիդ-նի՞»... պապիրո՞ս...

Մի քիչ ես... «Երբ մի լուրջ բնագիտ մի օր,
Սերսեմով Փաշլիան ու Յոհեն, Ավետիք Աւրոզ
Աշեհարշեն, ու ծնվել է նոր մի պոես...»:

Ժժգուն էր և ազգաւո դաշնակցական Հայաստանի Պատնաւոլ: Դաշնակցական Պատնան այդ դժվար տարինեւրին բռնված էր գինարբուքով և քղթախաղով:

Որբանոցային «գրական աշխարհուամ» սիրված էր Վահագնը, որն ստեղծել էր մի տևսակ գաղթականական պոեզիա

Ոսկե աշուն է նստել մեր մոխրացած տան բոլոր,
Ոսկեդեղին տերևներ նազով թափվել են պարտեզ...

Ոատանիկը յրևն նման կարճ ու թևթև բաներ էր գրում, Ցնորքսր ճոռոմ ու կեղծ կլասիցիզմով նարիկացիութիւն էր անում: Արմենուհին իր սահարինի յրիվոմով սիր էր ճրագվողում...

Ան գորշ ֆոնի վրա Չարենցի անունը պայթից ռումբի նման:

Դաւահոսութիւնից հետո ևս մի շարաթ կարողացա ապրել բերված ցիտաններով, հետո սկսեցի որոնել գրքերը: Գտա «Երեք երգը», «Ամբոխներըս» ապա «Սոման», «Դանթևականը»...

ԱՐՈՒՆԱԿԱՆ ՇԵՂՈՒՄ

Այն ժամանակ էլ ես գրում էի.

«Իմ անուրախ երկրի վրա կիրպե խաղաղ մի ակացիա,
Քաղցր է հիմա քեզ սպասել,
Իմ տխրություն, իմ խեղճ գաղել...

Իր տխրաշունչ ու թավշե շնչով ինձ օրորել էր Վահան Տիրյանը, և անձրևով ու մշուշով լցվել էի ես, որբանոցը, Երևանը, աշխարհը:

Սիամանթոյի ահարկու տեսիլներով էի հուզվում, Վարուժանն էր ինձ տանում մինչև հնթանոսականը, թափառում էի Մեծարենցի «ճամփաներուն վրա». ինձ գրավում էր Թեքեյանի «Հանդերձը», Կնուտ Համսունի՝ «Պան»-ը:

Ու ես տեսա, Հանաչեցի Զարենցին
Նոր էր այդ աշխարհը, իրերը, ոիթմը, պատկերները, գույները ու տավերները։

Հետո մոտիկ ընկերներին, աշխարհներին, ու բևեռներին,
Հրանման հոգիներին,—
Բոլոր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,
Բոլոր նրանց հոգիներին արևավառ,—
Կյանքի, մահի այս ամեհի ազդամուղում՝
Ազգակիզվող հոգիներին — ազգո՛ւյն, ազգո՛ւյն։—
... Թվում է Հիմա կյանքը իմ հոգուն
Մի ոակի տևող,
Ինչ լավ է, Աստա, որ կյանքի հոգուն
Հիմա եմ հասել,
Ինչ լավ է, Աստա, որ ջո կրակում
Վառվում եմ ես էլ...

Նոր էր աշխարհը, առնական, խորհուրդ։
Հեղափոխությունը ես՝ Եղիշե Զարենցով ընդունեցի այն ժամանակ։
Լեցվեցի ես, որպանոցը, երևանը, ամբողջ աշխարհը՝
Շնոր երգերով և աղմուկներով:

ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գարնան ոչնուշ ազմուկով...
Վ. Տ ե ր յ ա ն

Մեծ է ուրախությունը այն մարդու, որը հանդիպում է իր սիրած հեղինակին։ Մանավանդ այն ժամանակ, երբ ինձ թվում էր, որ բանաստեղծները չեն ուտում, չեն խմում և որ նրանց խորթ է այն ամենը, ինչ մարդկային է և աոօրյա։

Իսկ Զարենցին ես օժտել էի Տոլք-Անգեղյան ֆիզիկական ուժեղությամբ և կազմվածքով, բացառիկ տեսքով և ճաճանչափայլ աչքերով։

Մեծ եղավ իմ պարմանքը, երբ լսեցի, որ Եղիշե Զարենցը պաշտոնավարում է տղանների որբանոցում՝ հասարակ դաստիարակի պաշտոնով։ Հանդիպեցի որբանոցի կառավարչին։

— Եղիշե Զարենցը ձեզ մո՞տ է պաշտոնավարում։

— Այո,— ասաց նա անփույթ,— մեզ մոտ է։

— Ի՞նչ տևական մարդ է։

— Մարդ է, էլի, ծառայող, ռոճիկը մի օրվա մեջ ծախսում է, մնացած ժամանակը անլուծ նստում։

— Գամ կծանոթացնե՞ս...

— Ի՞նչ մեծ բան է որ... արի...

Ել գնացի, ծանոթացա։

Կարճ, կևո քիվ, սուր աչքեր... Համարյա ծանոթ... ապասիր, ես նրան տեսել եմ...

Հիշեցի.— այն օրվա լուսնատում նստած սեմիշկա շրթուզը... Նրա առաջին հարցը.

— Այ տղա, գրո՞ւմ ես...

— Գրում եմ։

— Ի՞նչ ես գրում, հայրնի՞ք ես գովում...

— Չէ, սիրային...

— Սիրահարվա՞ծ ես...

Ես գլխով արի,— հա՛...

— Էդ լավ է,— ասաց նա, գլուխը շարժելով, ինձ ամննին չսազող խորին լրջությամբ։

— Բան-ման բերե՞լ ես, կարդանք...

Ես գլխով արի,— ոչ...

— Բա ինչո՞ւ չես բերել,— հոքանչեց նա,— մյուս անգամ կբերես... ո՞րտեղացի ես...

— Վանեցի...

— Վանեցի՞... Ես Վանում հղել եմ։

Թղթերը խառնեց և մեքենայով տպված մի տետրակ քաշեց դուրս։

— Ուզո՞ւմ ես քեզ համար բանաստեղծություններ կարդամ, ուզո՞ւմ ես...

— Ուզում եմ։

Ու նա սկսեց կարդալ իր «Ոչնչակիղվող կրակ» անտիսներբը, գրավիչ և երգուն տոներով, ինձ համար միանգամայն անծանոթ և նոր չափերով։

Բրոնզ ես, հատր ես,
Բրոնզե սուր ես,
Բրոնզե փառք ես,
Բրոնզե փայլ,

Բայց դու զուր ես,
Ախ, իզուր ես
Կոտրում սուրս
Կրնաս...

Որքան քաղցր են զրական զարթոնքի հետ կապված զրական հիշողությունները։ Ես դուրս եկա հարթած և լեցված Զարենցի ընթերցանությամբ.

Թռչում են, թռչում են անվերջ, արնթաց
Կարմիր նժույգներ, բաշերը — փրփուր,
Վառում, հրդեհվում են հետքերը նրանց—
Կարմիր նժույգներ հրեհ են ու հուր...

որքանոցում ես հպարտությամբ հայտարարեցի, որ ծանոթացել եմ Ծղիշե Զարենցի հետ, Շատ քչերը հասկացան ինձ և խնդակից զարձան, քչերի մեջ՝ Հայաստան Սղխապարյանը, որին հետո Զարենցը կնքեց նախրի Զարյան։

Քաջալերված նրա օրինակով, տարիներ հետո մի զրողի էլ ես կնքեցի։ Այդ Գեղամ Բաղդասարյանն էր, որի «Բաղդա»-ն դեռ գցկինք և նզաւ Գեղամ Սարյան։

Այս՝ ի միջի այլոց։

ՀԻՄԻՆ ԱՅՍՕՐՎԱ ԳԱՂՏԻ

Ես կարդացի Զարենցի «Մորս համար գոպել» զրվածքը և հիացա, ոնց որ ասում են, մինչև ականջներս։

Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ և անգին,
Լույս խորշոմներ ու գծեր, մայր իմ անուշ և անգին,
Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենին
Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ և անգին։
... Ով արցունքներ դառնագի ահա քնկնում են մեկ-մեկ
Քո ձեռների վրա ծեր, մայր իմ անուշ և անգին...

Աշուն պիտի լիներ և օրամուտ։ Մենք նստել էինք բակ-վարում։ Ես ասացի, որ գոպելը շատ գեղեցիկ էր։

— Ի՞նչ գոպել։

— Մոր մասին։

— Ի՞նչ գոպելի վախտ է... հիսուն գոպել էի գրել, հիսունն էլ վառեցի... Ուրիշ բան է հարկավոր հիմի, այ տղա,

այ, էս աղրաները երդի, քաղաքները, մարդկանց, այ քե ինչ...

— Ուրեմն գաղել չի՞ կարելի գրել...

Գաղելն ի՞նչ է որ... մեկ է քե՝ ապիշկա վառես, գցես... պաժա՛ռ կարա՞ս տալ, պաժա՛ռ

Ես չհասկացա, քե ի՞նչ կապ ունեն «աղրա»-ները բռնաասեղծության հետ, բայց մինչև հիմա այդ գրույցից մի պատրանք մնաց, որ Չարենցի հիասն-գաղկները ամենապենցիկ գրվածքներն են, որոնք երբևիցե... ես չեմ կարդացել...

Աշուն պիտի լիներ և օրամուտ։

«ՎԱՂԱՐԱՆՑ ՇԱՆ ԱՐԵՒՆ»

— Ո՞ւր ես գնում, Գուրգեն։

Չարենցն էր, գլխարկը դրած վորին, մյուս ձևոքով շիտակ էր գլուխը։

— Որդանց։

— Ի՞նչ որդանցի վախտ է, արի մանք գանք արևի տակ։

Ասատֆյան փողոցի վրա հանդիպեց Ամերիկյան ասոցիացիայից մեկը՝ պարոն Նշանը։

— Բարև, պարոն Նշշան,— ասաց Չարենցը «շ»-ն շնշտելով և կանգնեց։ Կանգնեց և պարոն Նշշանը։

— Ո՞նց են ազգի գործերը։

— Որ ձեզի թողնք, վատ կըլլա։

— Ո՞նց։

— Ամբողջ Ռուսաստանը քանդեցիք, բավական չէ, հիմա Հայաստա՞նը կուզեք ավերել։

— Ո՞նց թե։

— Հասծս իրողություն չէ՞։

— Դե հիմա ես ո՞նց մտցնեմ քո գլուխը, որ մեր երկրի փրկությունը Ռուսաստանի հեղափոխության հետ միանալու մեջն է,— պայթեց Չարենցը։

— Լլալիք բան չէ՛,— պնդեց պարոն Նշանը,— մեծ պետություննները...

— Վարժապետ շանորդի,— եղրափակեց Չարենցը, երբ

նրանից արդեն բաժանվել էինք:— Վարժապետ չան որդի,— լրկնից,— պարոն նշշան...

— Դու... բոլշևի՞կ ես, Ջարնից,— հարցրի ես։

— Բա ի՞նչ եմ,— պատասխանից նա, հետո նայից իմ որթանոցային շաւերին, աֆաթին, շորերին և ձեռքը խփից ձեռքին.

— Այ ուլա, էս որթերին ո՞վ հնարից։

Ո՞վ հնարից...

Մի քանի քայլ առաջ անցանք։ Յարակի փողոյով դուրս եկավ որթերի դաշտ և դունատ մի շարք, միատեսակ քայլվածքով, գլուխների մեծությամբ, հասակով և մանավանդ շորերով։

Մնացածը Ջարնից լրացրից.

— Քո կարծիքով սրանց անուններըը ի՞նչ կլինի։

Ես մտածից. դե՝ որթեր են, մեկը Վարպետ, մյուսը Տիգրան, երրորդը Սարգիս...

— Տիգրան, Վարպետ, Սարգիս...

— Սխալվում ես... բոլորի անունն էլ Կարապետ է... այ. 2, 4, 8, 10, 24, 32, ութսուներկուսն էլ Կարապետ են։

Ով մանկական ուրախությամբ ծիծաղից իր արխուրության վրա։

— Ակսինքն, Գուրգեն, բնչ մի բան ասեմ,— խորհրդավոր կերպով ինձ հաղորդից Ջարնից, երբ մենք արդեն բաժանվում էինք,— Հայաստանում բացի բոլշևիկներից բոլորն էլ Կարապետ են... ըը՛...

— Յը՛...

Կարապետս որթանոց դնաց։

Հայաստանին տնկվացրի իմ հանրիպման մասին, նա լսից խորին ուշադրությամբ, ու երբ ես նայից նրան, նա իր լարված դեմքով անշափ նման էր... Կարապետին։

Հետո ինձնեն բաժակներով ու չամիշով թեյ խմեցինք և ես իմ բաժակում, թեյի հայելում, տեսա իմ կերպարանքը Կարապետից ոչ մի տարբերություն...

Ինչպե՞ս էր, չգիտեմ, բայց իմ և Նաիրու ամենօրյա գրական պրպտցնելը, մեծ մասամբ միտքս թափառելիս, հաճախ և շատ հաճախ կանգնում էին Չարենցի տրքանոցի առաջ։

Չարենցը, միշտ անմիջական իր նկատողություններն և գրական պրպտցնելն ցնցմունքով, համակում էր մեզ։

Չարենցը ռուսահայ այն գրողներից է, որոնք իրենց գրական արշալույսին քաջ գիտեին արևմտահայ բառանաստեղծներին։ Ծանոթ լինելը չափազանց է հատկանալ բառացիորեն։ Չարենցից առաջ շատերը ռուսահայ հասուն գրողներից եղել են Պոլսում, Փարիզում, արևմտահայ հեղինակների հետ(նրանք մի ժամանակ դեռ ապրում էին) մինչև անգամ աբոնող են խմել, կաֆեներում են եղել, բայց չեն ճանաչել և չեն դնահատել նրանց առնձագործությունը... Չարենցը ճանաչում էր դեռ այն օրերին Մեծարենցից մինչև Թևքեյան, Սիամանթո, Վարուժան, Զոհրապ, Ալիշան...

Յայն այն էր, որ անգիր գիտեր։

Սարսափով լսեցինք մենք, որ Չարենցը Վարուժանին չի սիրում։

— Նա ինչ պոետ է որ... Ա՛յ... Սիամանթոն.

Հուսահատորեն ու պանդխտորեն անտառը վերադարձա,
Իմ վախճանած թարիկաս համբուրելու համար։

— Էդ բոլորը հեչ... հիմի դուք, նաղդի ի՞նչ եք գրում... Նաիրին կարդաց իրը.

«Մի աղջիկ, մի անգամ,
Առավ շքեղ մի բուֆետ,
Նայեցի ու անկամ
Ոս էլ մտա նրա հետ...
Նստեցի քիչ հետու,
Ամբոխի հետ, նրա դեմ.
Ու նրա աչքերու
Խրճին հուրը կը գիտեմ.
Բլրև դին, գինիի,
Գրավ դրի վիրտիկոս,
Խմեցի, նայեցի
Ու գլխիկոր եյա դուրս։

— Այ տղա, հիանալի սարքել ես,— անկեղծ հիացմունքով բացականչեց Ջարենցը։

Նախրին ոգևորվեց։

— Ես,— ասաց Նախրին,— մի ուրիշ բան էլ ունեմ. «Արտիստին վիժվեց»։

— Դե, ասա, լսենք։

Նախրին ապատասխանեց իր ավյունով և պատանեկան ոգևորությամբ լեցուն բանաստեղծությունը...

«Արտիստին վիժվեց», ահա նա, արձակի վերածված. հերոսը... սիրում է մի աղջիկ, աղջիկը հերոսին չի սիրում, Հերոսը գնում և դերասան է դառնում։ Աղջիկն իր ամուսնու հետ նորից է լինում հերոսի դերասանական դեբյուտին։ Այդ օրը հերոսը խաղում է մի պիեսում, որի մեջ հերոսուհին պետք է ասել «տասը մարդու», նրան էլ է տալիս, «տասնամեկին», բայց հերոսը բեմի վրայից այնպես է քրքջում, որ իր սիրուհին (որն իր ամուսնու հետ նորից է հերոսի բեմական դեբյուտին) թողնում է և փախչում։ Բանաստեղծության վերջին տողերը վերջանում են «խայտառակ» վանկրկռտով.

Անուանացուծ սիրած այրի
Իմ հմայքո՛վ պիտի այրի...

Ջարենցը դնդձ էր ուտում։ Մի րոպե ընդհատեց.

— Դու խաղո՞ւմ ես, Հայաստա՛ն...

— խաղում եմ, մեկ-մեկ... Գուրգենն էլ է խաղում։

— Ի՞նչ դերում ես հանդես եկել։

— «Բալդասար ախպարդ. «Բոնի ամուսնություն»...

— Դա՞... Պարոնյանը մեծ երգիծարան է... Գուրգեն, դու ի՞նչ ես գրում...

Ես ուզի նրան մի տեսլ։ Անհամբեր և ջղային կարգաց, շուռ տվեց, էլի կարդաց, շտավանիդ, անցավ, կրկնեց և մատը դրեց մեկի վրա.

— Այ, այս մեկը լավ է...

Արտասանեց առաջին «տունը»։

Փոխ եմ ու կապույտ նազանքների մասում,
Ինչ որ խզուր ու պուր ցրել եմ ու քոչել
Ձին ցլուղերի ճամփին, ճակիսանների փոշում...

— Իսկ դու խաղացե՞լ ես,— հարցրեց Զարինցը։
— Խաղացել եմ...
— Ի՞նչ ես խաղացել,— հարցրեց նա։
— Փաստարան...
Միծաղեց և մոմաց.
— Հին գյուղերի ճամփին, ճամփանների փոշում...

ՆՈՐԻՑ ՄԻ ՆԱՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Զարինցն ամուսնացել է։ Նրա կինը որբանոցում է աշխատում, Արփիկը։
Վերջին տողը։
Հիմա ավելի հեշտ է Զարինցին շուտ-շուտ տեսնելը։
Վերջին փողոցը մոտ էր։
Գնում ենք Հայաստանի հետ։ Զարինցը պրակված է որբուհիներին շուրջպարի կոչելուն։
Ոգևորվում է, ինքն էլ է երգում, ինքն էլ է պարում, բայց ոչ երգել գիտե, ոչ պարել։

Գութանը մանի, մանի,
Շեկ ադռիկ խաց կտանի,
Ոտ մի քելա, տաս կայնի,
Մարդու ախկըլ կը տանի...

— Տղերք,— դառնում է մեզ,— ապառնիք, չդնաք, կբարձրանանք, կխոսանք։
— Դե հերիք, Զարինց,— քաշում է Արփիկը,— դնանք...
— Լոյ, լոյ-լոյ-լո, վայ լո...
Աններդաշնակ երգում է Զարինցը, և մենք վեր ենք բարձրանում։
— Տղերք, Գևորգ Արուվի անունը լսած կա՞ք։
Մենք բացասաբար գլուխներս շարժում ենք։
— Պահ, հետաքրքիր պոետ է...
Նա գրքերի արանքից դուրս է քաշում մի բրոշյուր։
— Ահա.— «Միայն կինը»... հետաքրքիր դրող է...
Անշուք բրոշյուր։ Հայաստանը կարդում է, տալիս է ինձ, ես կարդում եմ, տալիս եմ Հայաստանին, բայց չգիտենք,

ի՞նչն է այսօր հետաքրքիր։ Անմիտ թվացող կից-կտուր տողեր։

Օրաժշտական լսողությունից դուրկ Զարենցը վերցնում է գրքույկը և կարդում է մի քանի բանաստեղծություն Գևորգ Աբովից, ամեն մի քառյակից հետո ասուգելով.

— Հիանալի է, չէ՞...

Բայ իսկապես հետաքրքիր էր.

Որ որ ծովը սիպ է, սիպ կարապ թևի պես,
Որ երկինքը բիլ է, բիլ քո աչքերի պես,
Բիլ ծովից հարսալ դաս, գորշավազ մի ափ կա,
Հենց մի փոքր անցնում ես...

ինչ-որ անուան է...

Նու, «բիլ կարապ թևի պես», թե «սիպ քո աչքերի պես» այս քառյակը ես բերի մոտավորապես, բայց աղճատությունը մեծ էր.

Գիշերնները քո շուրթերը հալած բրոնզ են,
Բրոնզե ատամ,
Բրոնզե ատաղ են, բրոնզ, ե՞ռ-կաթ են,
Բրոնզ երկաթ,

Այս քառյակն էլ մոտավոր ճշտությամբ... կլինեն վրիպակներ..

— Օրիգինալ պրոլ է,— նկատացրեց Զարենցը, գրելիս բոլոր բանաստեղծությունները կարդալուց հետո։

— Օրիգինալ։

Ես և նախրին մյուս օրը բառարանը թերթեցինք։

Օրիգինալ.— նշանակում է ինքնատիպ, ինքնուրույն։

Բրոնզե կաթ...

ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄ

Գիշերը քոռ էր, քաց էր...
Վ. Նարեկացի

Հատատալից Հայաստանում խորհրդային իշխանություն, հատնակ օրերից մնկը։ Կարծեմ երրորդ, թե չորրորդ օրը։ Խորհրդի ակումբի առաջ հանդիպեցի Զարենցին։ Խորհրդի ակումբը հիմա չկա, նրա տեղում կանգնած է նո-

բաշխն պետական բանկը։ Բայց ո՞վ չի հիշում խոյատեսուհի ակումբը, որը թվում է, որ հիմա էլ կանգնած է իր տեղում։

Զարենցը...

Արտակարգ տարօրինակ, աշնանային եղանակին՝ ձմեռային պատկեր, քաղաքացիական շրջրով քան ամենայնի, պատի վրայից կախված պատվավոր մատուռը։

— Ո՞ւր ես գնում, տեսա՞ր, ոնց պրավեցինք երկիրը, բա՛ս՞, էանց է աշխարքի բանը։

Քեֆը լավ էր։

— Դե, բարի գիշեր, —ասաց նա, չնայած որ ժամը 6-ն էր.— որտանո՞ց ես գնում. բարի գիշեր։ Լավ բաներ դրի, էն մեկը լավն էր, ճամփանդի փուշում... բարի գիշեր...

Հեռացավ։

Ես նայեցի Զարենցի հետևից։ Գնում էր դիմիկոր, մի ուսը բարձր, մյուսը ցած, մատևքը կախած պատուի վրա։

Բամբասանք չինի, մատուռի պատյանն էր միայն կախել, դուցե մատուռը պահել էր ուրի՞շ տեղ, չկարողացա սուզել։

— Ճամփանդի փուշում... Բարի գիշեր...

35. ՊՈՒՀԱՆ ԷՋԵՐ ՀՈՒՇԱՏԵՏՐԻՑ

. . . . . .

Ուռա՛, ուռա՛, ուռա՛...

— Ի՞նչ պատահեց, րաբեկամ։

— Ուռա՛, ուռա՛... կեցցե, կորչի՛...

— Ի՞նչ պատահեց, որքեր այսօր կո՞ւշտ են։

— Ո՛չ, ուռա՛, ուռա՛։

— «Աշխատանք» թերթում առանց փշոցի մի հոդվա՞ծ կարդացիր...

— Ո՛չ... այնուամենայնիվ՝ ուռա՛։

— Բանասուղծ Ջեննիքսի ռուանավորների մեջ իմա՞ստ գտար ուրեմն։

— Ո՛չ, բայց և այնպես՝ ուռա՛։

— Կես ֆունտ շաքա՞ր տուր։

— Ո՛չ, ո՛չ, ցա՛րը դահլնկից եղավ։

— Մարդ աստծո, այդպես աաա, ուտա՛, ուտա՛։

. . . . . .

Հասարակական-քաղաքական տեսակետից միտի գրեմ, որ երեկ Հայաստանը հարցրել էր Թևմականի ուսուցիչ պարոն Ստեփան Արտազյանին, թե ի՞նչ է բուշևիկների ծրագիրը, և պարոն Ստեփան Արտազյանը պատասխանել էր, որ նրանց ծրագիրը շատ պարզ է, բայց շատ էլ բարդ է, որ նրանք ասում են, ոնչ որ քոնն է, իմն է, ինչ որ իմն է... իմն է»։

— Ուրեմն ինչ-որ քոնն է, իմն է, ինչ-որ իմն է, էն է՞լ իմն է։

— Այո։

— Էդ չեղավ,— ասում եմ ես։

— Եղավ-չեղավ՝ էդպես է։

Հետո Հայաստանն այն կարծիքը հայտնեց, որ մեզ հարկավոր է մտնել մի որևէ հուսակցության աշակերտական միության մեջ, ուսումնասիրելու համար բոլոր կուսակցությունների ծրագրերը։

Անձնական տեսակետից միտի ասեմ, որ տրամադրություն լավ չէր։ Գրնցի մի բանաստեղծություն՝

Որերը մրսում են,
Որերը տխուր են,
Օ, նրանք պրսում են,
Սպասում են դեռ...

Բանաստեղծ պարոն Ոստանիկը կարդաց, շատ հավանեց, բայց նշեց, որ «սպասում են դեռ»-ից կարելի է անցանկալի եզրակացություններ հանել։

— Ի՞նչ եզրակացություններ,— հարցրեցի ես։

Նա վառեց «Ման-կնֆի» ծխախոտը, լուցկին նետեց որբանոցի պատշգամբից ներքև և ասաց.

— Շատ պարզ, «Սպասում են դեռ». պատասխանիր, ինչի՞ն են սպասում։

— Ճաշին, նախաճաշին։

Պարոն Ոստանիկը ծիծաղեց։

— Քնելուն, զարթնելուն... այո՞։

— Դիցուք թե։

— Իսկ ես այլ կերպ եմ հասկանում,— ասաց նա լուրջ դեմք ընդունելով,— որբերը մրսում են, նրանք դրսումն են, սպասում են դեռ... ես ընդգծում եմ— դեռ... սպասում են դեռ հեղափոխությանը և այն ժամանակ... մնացյալը հասկանալի է... այն ժամանակ նրանք այլևս չեն սպասի... կբարձրանան ու մեր հերը կանիծեն։

Ես շշմած մնացի իմ բանաստեղծության հեղափոխական-քաղաքական-սոցիալական ոգուց։ Այո՛, այո՛, հենց այդ է, որ կա, հենց այդ է, որ ես ուզել եմ ասել, նրանք, որբերը դրսումն են, մրսում են, սպասում են դեռ... հենց որ պայթի հեղափոխությունը...

Ես Հայաստանին լրտղտի և թացատրեցի իմ քանաստեղծության սոցիալական ոգու էությունը, բայց չգիտեմ ինչու, նա պարոն Ոսականիկի անասկնտը համարեց «եռանդա»...

. . . . . .

Այսպես թե այնպես, հարկավոր է տեսակետ ունենալ, քաղաքական այս կամ այն ուղղության և ճանապարհ, իսկ մենք զուրկ ենք դրանցից։ Մի բան պարզ է,— մենք հակադաշնակցական ենք, ուրիմն, անկի՛ դաշնակցությունը, մնացածը կպարզվի։

. . . . . .

Երվանդ Զրանդյանը հայ փիլիսոփա։ Ես կարդացի նրա մի հոդվածը, բայց բան չհասկացա։ Ինչ է ընդհանրապես փիլիսոփայությունը։ Անցյալ օրը ես ասացի մեր պահեստապետին, որ ևթե որբերին հատկացված պարենամթերքը նույնությամբ հասներ որբերին, որոնք քաղցած չէին լինի։ Նա ինձ ասաց,— դու լավ կլինի, որ փիլիսոփայություն չանես։

— Ուրիմն ես փիլիսոփայությո՞ւն արի,— հարցրի ես ուրախացած։— Այո,— պատասխանեց նա։ Հետո պրլտական մի տարեցույցում կարդացի, որ փիլիսոփա բառը կազմված է «ֆիլո»—իմաստ և «սոֆիա»—սեր բառերից։ Իմաստասեր,— ահա ուրեմն փիլիսոփայի հայերեն թարգմանությունը։ Ես էլ եմ իմաստասիրություն սիրում և պետի աշխատեմ իմաստուն լինել։ Ուրեմն... Ուրեմն, ես էլ փիլիսոփա եմ։

Պետք է աոուգել այս պարագան, Պետք է փնտրել, գըտնել այդ պատոն Երվանդ Ֆրանգյանին և հարցնել,— ես փիլիսոփա՞ եմ, նշաններ կան, այո, բայց անաոուդ, առավոտվա ժամանակներ են, երեկոյան հանդիսատ արտով կարող ես քնել, ապահով, որ փիլիսոփա ես, իսկ առավոտյան կպարզվի, որ ոչ Քե դու, այլ դրացիդ է փիլիսոփա...

. . . . . .

Այսօր խաղացինք «ի՞նչ է սերը» խաղը։ Ամեն մեկին տրվում է մի-մի թերթ սպիտակ թուղթ, ուր խաղի մասնակիցները կնշված, անճանաչելի ձեռագրով պատասխանում են «ինչ է սերը» հարցին, պատճեն պահելով իրենց մոտ։ Վերջում հավաքում են բոլոր պատասխանները, և երեք հոգանոց ժյուրին պարզաբանում է ամենահայող պատասխանվածին։ Վերջինս իրավունք է ստանում խաղի մասնակիցներին հրամայելու՝ պարել, երգել, գլուխը քարով տալ, երեսը՝ պատռել։

Ես ընտրվեցի ժյուրիի անդամ։ Հավաքեցինք բոլոր պատասխաններն ու դրինք քննության։

«Ի՞նչ է սերը,— գրում է մեկը,— այս հարցի ճիշտ պատասխանը կարող են տալ միայն երկու հոգի՝ Գառնիկ հաշտարյանը և Իսկուհի Խանիկյանը»։

Մարգարե լինելու կարիք չկա գուշակելու համար, որ այս ապուալի ճանկերի հետև թաքնված է ոչ այլ ոք, եթե ոչ ինքը՝ Գառնիկ հաշտարյանը, որը հատուկենտ կարծիք է ստեղծում իր և Իսկուհու մասո շուրջը։

«Սերը աստվածների երգն է»,— պատասխանում է հերթական թերթիկը։ Այս արդեն Հայաստանն է. նա միտում է Զարիկին պատոնական սրտով, և Զարիկը նրան թվում է աշխարհի ամենադեղեցիկ աղջիկը։ Իսկ այդ Զարիկը ափաշկարա կևրպով ծուռ աչքեր ունի, փոքրիկ քիթ և ոչ մի բառնուլ աչքի ընկնող կազմվածք։ Մի անգամ ես Հայաստանին նկատացրի Զարիկին, ինչպես նա կաո նա լսեց ինձ զարմացած, անկեղծ ցավակցությամբ և ասաց.

— Ահա թե ինչ, բարեկամ, դու կույր ես։

«Ա՛խ»,— գրված է մի թերթիկի վրա և գրված բաղում կախման կետեր։ Պահնատապետ Յուլիկը ժպտում է, իսկ

խաղին մասնակցողները քահ-քահ ծիծաղում, Տևից պոկվում է պատռված օրիորդ Անդինը և թաշկինակն աչքերին սեղմած դուրս թռչում։ Տիրում է լռություն։ Ահա թե ինչ է սերը։

«Սերը թվաբանություն է հոս դործողությամբ,— դրում է Հրանտ Բոռոլանյանը,— հիմարություն՝ դումարած դատարկություն, հանած ողջախոհություն, բազմապատկված անտրամաբանականությամբ և անկայունությամբ— արդյունքը բաժանված անհաջող բանաստեղծություններ դրողների վրա»։

— Ես ևս եմ վերցնում իմ դրածը, ես ախալվել եմ,— հայտարարում է Հրանտը,— ըստ երևույթին ադրված օրիորդ Անդինի արցունքներից։

«Սերը խաղ մե, որուն կմասնակցին երկու հոգի։ Այս խաղին մեջ տանող չկա, երկուան ալ կտարվին։ Տանողը երրորդն է, որը կխաղնվի խաղին, երբ խաղը... վերջացած է»։

Բարձրացավ ծիծաղ և ազմուկ։ Սրա հետևանքը կարող է մրցանակը տանել։ Ներս մտավ պարոն Ասատանիկը, և խաղն ընդհատվեց։ Պարոն Ասատանիկը հայտնեց, որ որբանոցում համերգ կան։

. . . . . .

Կարդացի երեք Շուշանհատների, Նիցշեի և վաղան Տերյանի մասին, Պարզ է, որ Տերյանը բոլորից մեծ է։

. . . . . .

Այսօր ես և Հայաստանը, ըստ մեր սովորության, իջանք Զանգվի ձորը, նստեցինք մեր սիրած ակացիայի տակ, խոսեցինք բանաստեղծության, բանաստեղծների և մեր ապագայի մասին, Ի՞նչ պիտի դառնանք ապագայում։ Եվ որոշեցինք դառնալ պոետ-գյուղատնտես, բնության հետ և բնության մեջ լինելու համար։ Հետո սկսեցինք ձանձրանալ։

— Եկ միասին մի բանաստեղծություն գրենք... Կարելի՞ է երկուսով մի բանաստեղծություն գրել։

— Մեն երկու հոգով կարելի է ձանձրանալ, ինչո՞ւ երկու հոգով չի կարելի բանաստեղծություն գրել,— պատասխանեց Հայաստանը հորանջելով։

— Ուրեմն, ինչի՞ մասին։

— Հենց ձանձրույթի մասին։ Գրիր մի տող դու, մի տող ես...

Ու դուրս եկավ ահա այս բանաստեղծությունը։

Ձանձրույթի երգերից

Գետափին ձանձրացել ենք.
Նստել՝ ես ու դու,
Նստում ենք ու ձանձրույթով
Լսում մեկ-մեկու.
Մեր դիմին ձանձրանում է
Մաղկած աքասին,
Ու խորհում նույր խոհերով
Ձանձրույթի մասին։

Ձանձրույթն է ծանր նասել
Ոույլ ու բանդրալիք.
Ձանձրույթ է երկիլ, այսօր.
Ձանձրույթ և գալիք.
Ձանձրույթ է հիշել ձանձրույթի,
Ձանձրալի ու սին,
Ձանձրույթ է և ժոռանալ
Ձանձրույթի մասին...

Ահա է այսօրվա վաստակը և կարծեմ բավականին տխուր և ձանձրալի վաստակ է, հե՞...

* * * * * * * * * * *

Իսկ խմորումն այն է, որ Ռոստովից երկրորդ ննջարանում հայտնվեց մի Տիգրան Շենիկյան, որն իր ասելով ինքը սասունցի է, գաղթել է Երևան, Թիֆլիս, Վլադիկավկազ, Ռոստով... իսկ Ռոստովում թևրթավաճառ է նղել։ Ահա ի՞նչ խմորում է որ...

Բայց նա պատմում է, թե ինչպես կարմիր բանակը մտավ Ռոստով.

— Էկան ու էկան ու էկան, էկան... ձիավոր, ոտավոր, սրատոպոդ գիսարկով, գլխարկների վրա կարմիր աստղերով էկան... գինվորներից հևտո թուփ ու պուլիմյոտ, պուլիմյոտ ու թուփ ու էկան ու էկան...

Ա՞յս է խմորումը։

— Չէ, դու ասա,— միջամտում է Վահրամ Շառոյանը,— կարմիր բանակը ո՞ւմ բանակն է։

— Բոլշևիկների։

— Բոլշևիկների մեծը ո՞վ է,— նորից հարցնում է Վահրամը ու ժպտում, նա մի աշքով կույր է, իսկ կույր աչքը միշտ ծածկված է վիրակապով։

— Լենին,— պատասխանում է Տիգրանը և շարունակում,— էկան ու էկան ու էկան...

— Իսկ ի՞նչ է բոլշևիկների ծրագիրը,— ընդհատում է նորից Վահրամը, նկատում է, որ նա գիտե իր հարցերի ճիշտ պատասխանը և հարցաքննում է Տիգրանին։

— Ինչ որ քոնն է, իմն է, ինչ որ իմն է, իմն է,— ասում եմ նա։

— Սո՛ւտ է,— բարկանում է Վահրամը։

— Քաղաքի բոլոր շենքերի պատերի վրա գրված էր ռուսերեն լեզվով. «Ամբողջ իշխանությունը Սովետներին, «Ներցե բանվորների և գյուղացիների իշխանությունը»,— հիշում է Տիգրանը։

— Այդպես,— ասում է Վահրամը թեթևացած։

Բայց ահա որոնցի դարպասից հանդարտ քայլ է մտնում մի ավտո, որի փայլը վազուց է կորել։ Ավտոյում, շիֆոր, նստած է ամերիկուհի միսս Շեյնը, իսկ նրա կողքին՝ Վանիկ Այազյանը։ Վերջինս կրում է անգլիական սպայի տարազ, զեղչկատիկ է նա, կապույտ, հանդուգն աչքերով, հաճելի քաղաքավարի։ Նա դուրս է թռչում ավտոյից և օգնում է միսս Շեյնին իջնելու։ Ամերիկուհին նույնպես կրում է սպայական տարազ։ Անհոգստություն է, ձերմակ, անարյուն դեմքով և կարճ խուզած մազերով։ Նա հետևում է Վանիկ Այազյանի ուսին և գույգ, փորիկ ոտներով ցատկում է ավտոյից վար։

. . . . . .

Այո, այն ինչ պատահեց երեկ, իսկական իմաստով էր Սկսվեց նրանից, որ Վանիկ Այազյանի կարգադրությամբ որբերը հավաքվեցին որոնոցի ընդարձակ բակում, իսկ պատշգամբում հավաքվեց որոնոցի վարչակազմը։ Այնտեղ էր պարոն Արշակը, նրա օգնական պարոն Ասատիկը,

պատրոն Սուրենը, դաստիարակչուհիներ, դաստիարակներ։ Շրախմբի կենտրոնում կանգնել էին միսս Շեյնն ու Վանիկ Այապյանը։ Վերջինս մի ճատ արտասանից և դարձյացրեց այն մխաքը, որ մոմենտը լուրջ է և որ նկատվում է որերի մեջ վատնգավոր խմորումներ, և որ քաղաքականությունը և քաղաքականությամբ զբաղվող մարդիկ որբանոցում գործ չունեն։

— Որբանոցի կառավարիչը դաշնակցական է, հեռացնե՛լ նրան,— լսվեց որերի բազմության միջից Վահրամ Շահազյանի ձայնը։

— Օգնականը նույնպես,— հաստատեց Միսաք Աբաջյանը։

Բարձրացավ անասելի աղմուկ և ազապակ։ Միսս Շեյնը անգլերեն ինչ-որ ծղրտաց և վազեց դրասենյակ։ Շրախումբը հետևեց նրան, որերը թեր և դեմ վիճելով ցրվեցին այս ու այն կողմ, բայց խմորումը չվերջացավ։ Սա ժամ հետո նորից հնչեց զանգը, և նորից հավաքվեցին որբերը։ Շրախումբը պատշգամբ դուրս եկավ։ Այս անգամ խոսեց կառավարիչ պարոն Արշակը։ Նա ասաց, որ հայրենիքը վտանգի մեջ է, որ Զանգիբասարում և Բոյուք-Վեդիում թուրքերն ապստամբել են և որ հարկավոր է նրանց ճնշել և որբերից քանդինգ հոգի, վանիկ Այապյանի գլխավորությամբ, ճակատ պիտի մեկնեն։ Հետո կարդաց ցուցակը։ Դժվար չէր նկատել, որ ցուցակը նոր էր կազմված և ցուցակի մեջ մտել էին բոլոր «անպարկեշտ տարրերը»։

Այսօր առավոտյան պարզվեց, որ ցուցակում նշված քանդինգ որբերից տասներեքը փախել են գիտական որբանոցից։ Ըստ երևույթին այնտեղ քաղաքականությունը և սոցիոլոգիան ազատ են...

. . . . . .

Զանիխլատյանի թատրոնում Զարիֆյան-Արելյան թատրախումբը ներկայացումներ է տալիս։ Հայաստանի և Գահիրեի հետ եղանք «Շլյուկ և Նահուա», «Շեռլոկ-Հոմս» և ուրիշ ներկայացումներին։ Այստեղ էր նաև վարպետը, Զարիֆյանը և Արելյանը իրենք իրենց գերազանցնելին, խաղում էր նաև մի երիտասարդ դերասան, որն ապագա է խոստանում։ Դա

Ավետ Ավետիսյանն էր վարպետը նրա անունը դրեց «հուպվող տղան»։ Հետո Վարդանն ու Հայաստանը որոշեցին դպրոցում դասեր տալ ես Հայաստանին հիշեցրի մեր որոշումը՝ բանաստեղծ-դյուզատոնտես դառնալու մասին։ Նա ինձ հանգստացրեց, ասելով, որ դպրոցում դասերը ժամանակավոր բնույթ ունի իր սիրային գործերը կարգի բերելու համար, որից հետո մեր որոշումը ուժում է։

. . . . . .

Հայաստանի և Գառնիկի հետ մոտիկ ծանոթ համկավար աշակերտական միության մեջ։ Այս կոոպերատիվի ղեկավարներն են պարոն Արտակ Դարբինյանը և Մանվել Մալոյանը։ Շրջանում էլ կարգի հանձնաժողովականներ են։ «Հայաստանի ձայն» թերթում ես Արտակը պաշտոնական հայտարարության դեմ մի սարսափելի հոդված տպեց. հոդվածը վիրավորում էր այսպես. «Դուք, արվեստասերներ, դուք հին և նոր օրերի լրտեսած ենիշխիններ»։

Այս խոսքերը մեր սոցիալական կարծիքներին համապատասխան էին։

Համկավար աշակերտական միության անդամ լինելը ինձ և Հայաստանի համար հարմար է նաև այն տեսակետից, որ համկավարների «Հայրենիք» տպարանը երկրորդ որթանոցիդ տանհինգ քայլի վրա է։ Մենք հաճախ գնում ենք տպարան, Սիրարփուն և Զարիկին տեսնելու հույսով։

. . . . . .

Արտաահմանից նրանց ժամանից արևմտահայ բանաստեղծ Վահան Թեքեյանը։ Հիշում եմ նրա մասին գրված հրվու տողը, տպված պոլսական տարեցույցներից մեկում.

Վահան Թեքեյան,
Բանաստեղծության մեջ թեք է ան...

«Թեք»— նշանակում է մի հատիկ, երկրորդը չունեցող։ Ես հիշեցի նրա «Հանդիմ»-ը։

... Ներքա հանդիմ այսպես հարիսոնն հոլիսոն,
Մթնցնելով ամենքդ ու դյութելով երևիսն.
Պղտոր ոգին խռովուտուկ, անքննիկ՝ ախտալի՝...

Ախ, այս «ախտալի» բառը։ Ինչ հիանալի, տեղին է գործածված։

«Հայաստանի ձայն» թերթում լույս տեսավ իմ մի բանաստեղծությունը «Այգնկուն» խորագրով և մակագրված,— «Բարեկամիս՝ Վահան Թեքեյանին», ոմանք զոնում էին, որ սա իմ կողմից աններելի հանդգնություն է... Բայց եղածը եղած է։

. . . . . .

Նորքի ձորում բացօթյա ճաշասեղան կազմակերպվեց ի պատիվ Վահան Թեքեյանի։ Ներկա էին նաև Սիրարիին ու Զարիկը։ Անհերթելի փաստով հերթիկս այն մեղադրանքը, որ ես անտակտ եմ եղել մակագրելով բանաստեղծությունս՝ «Բարեկամիս՝ Վահան Թեքեյանին», երբ «բարեկամս» ինձ տեսավ, ժպտաց ու ասաց.

— Բարև բանաստեղծ բարեկամիս։

Սվ բոլորը ծիծաղեցին, ինչո՞ւ ծիծաղեցին, չհասկացա։

Ինտուիտան ես հեռացա ալարճացող խմբից, նստեցի մի ծառի վրա և սկսեցի քանծել, աչքի տակով հետևելով Սիրարիին։ Նա խոսում և ծիծաղում է պարոն Օգանն Սարյանի, պարոն Մանվել Մալոյանի, վահրամ Բեղնալյանի հետ, նորից ծիծաղում է բարձր ու հնչուն ծիծաղով և բոլոր նշաններից երևում է, որ նա դոյություն չունիմ նրա համար։ Տեր աստված, որքան դժբախտ եմ ես։ Ահա նա նորից ծիծաղում է «Ախչալի՞»,— հիշում եմ ես և նայում եմ Թեքեյանին, ել մոածել, որ այս մարդը, որ ահա վերջից հաց ու պանիր և սկսց ուտել, ահա այս մարդը նամակ ու գրել է «Հանրամ»-ը կամ «Հայ լինելու, ինչ կսիրեմ մրգաստանի մը նման» չքնաղ բանաստեղծությունները... Եթե Սիրարիին ինձ սիրեր, երևի ես էլ այնպիսի ուժեղ բաներ կգրեի... կամ գուցե ընդհակառակը, եթե ես նման լավ բաներ գրեի, այն ժամանակ գուցե Սիրարիին ինձ սիրեր... Ու ես հաստատ կերտում ահա որոշում եմ դառնալ մեծ, այնքան մեծ բանաստեղծ, որ Սիրարիին, ստոզված դրությունից դուրս գալու համար, միայն մի ելք ունենա,— սիրել ինձ...

. . . . . .

Գարզվեց, որ վանիկ Այտյանը տաքներկու հոդով Զանգիբասար մեկնեց և այնտեղ բոլորը ցրվեցին, Բոլորը վերադարձան և պատմեցին, որ Վանիկ Այտյանը գրաղվել է

Քալանով Չվերադարձավ վահրամ Շատոյանը վերադարձողները հավատացնում են, որ վահրամին սպանել է վանիկ Այազյանը Սա սարսափելի է։

Չգիտեմ ինչ մտածեմ։

. . . . . .

Հայաստանի հետ եղանք «Հայրենիքը» տպարանում։ Այնտեղ հանդիպեցինք ֆուտուրիստ Կարա-Դարվիշին։ Գրաշարատեսետ Օղիազար Կարուզյանը մեզ ցույց տվեց իր գրաշարեղբորը՝ վահրամին, և ասաց, որ նա էլ բանաստեղծություններ է գրում։ Սա նախանձելի նրան, որ նա կարող է գրել և շարել իր գրածը։ Սա ուզեցի Հայաստանին ասել, որ լավ կլինի, եթե դառնանք գրաշար-բանաստեղծ, փոխանակ գյուղատնտես-բանաստեղծի, բայց մտածեցի, որ այդ դեպքում կկտրվենք ընթերցուհիներ Իսկ առանց ընթերցանի՝ բանաստեղծ չի լինի։

Հետո լսեցինք, որ Կարա-Դարվիշը մի նոր անրնդ-անմոռուկ ֆուտուրիստ է գտել Երևանում, դա ոչ այլ որ է, եթե ոչ Լեմվել Մարությանը։ Ասում են, որ նա մի դասախոսություն է տվել Շիրվանզադեի մասին և շատ բարկացել է, որ Շիրվանզադեն ֆուտուրիստ չէ։

. . . . . .

Պարոն Արշակը ամեն օր գրություններ է կպցնում որբանոցի պատշգամբի պատին, որոնք նկարագրում են բոլշևիկների գազանությունները Թուրաստանում և Թուրաստանում տիրող սովի մասին։ Այսօր այդ թերթիկներն տակ մեկը կարմիր մատիտով, մեծ-մեծ տառերով գրել է,— «Սուտ է»։

Իսկ պարոն Մատանիկը հայտարարեց, որ իմորումները շարունակվում են։

. . . . . .

Անդրանիկը հայտարարեց, որ ներկա Հայաստանի կեսը հիվանդանոց է, կեսը գերեզմանոց, իմ կարծիքով այս բաժանումը կարող է մասնակի փոփոխության և ճշտման Հարց,— գոյություն ունեցող մինիստրները ո՞ր բաժնումն են, հիվանդանոցո՞ւմ, թե՞ գերեզմանոցում. և ոչ միայն մինիստրները,— նրանց հետ նաև նրանց տնեղակալներն ու բնատանիքները, զոքանչ-խնամիները, այնուհետև խմբապետ-

ներն ու լիապորնները, էմխաարնները, կոմխաարնները, քյոխվանեն ու քահանաները, վաճառականները, ուևտրականները, Գյունազարյանը և Աֆրիկյանը, խոբեն եպիսկոպոսը,— սրանք, իհարկե, ոչ հիվանդանոցումն են, ոչ գերեզմանատանը:

Ապա որտե՞ղ են:

Պետք է հարցնել «Հառաջ» թերթի կամ «Աշխատանք»-ի խմբագիր Հմ. Մանուկյանին, հանձնարարելով, որ վերջին մի խմբագրական գրի մոտավորապես այս վերնագրով,— «Ի՞նչ կանցնի և կդառնա հիվանդանոցն ու գերեզմանոցն դուրս»:

. . . . . .

Մեր որբանոցի որբերից մեկն է ի ծնե կույր Մարգար Պետրոսյանը: Ապրում է Մարգարը խավարի մեջ և չի տեսել ոչինչ՝ ո՛չ արև, ո՛չ լուսին, ո՛չ ծաղիկներ, ո՛չ իր մոր դեմքը, ո՛չ երկինք, ոչ գետին, ոչի՛նչ, ոչի՛նչ չի տեսել Մարգարը, մի·ճանճ, մի աանդ անգամ չի տեսել: Նա այսօր վանկի աչքերս և մոտենցի, որ մինչև մահս այսպես պիտի մնամ և արագ բացի աչքերս, որովհետև ինձ թվաց, որ կարող եմ խնդացրվել: Ալ երբ բացի աչքերս, իմ դեմ կանգնել էր Մարգարը, նա մի բանի բայլի վրա կանգնած, պատրաստ, որ դեմը մարդ կա. հետո նա պարզեց իր երկու ձեռները, շշմեցնց ուսերս, հետո դեմքս և ժպտաց իր բարի և անուշ ժպիտով.

— Գուրգի՞ն:

Նա ինձ ճանաչում է առանց դժվարության, որովհետև մենք վաղուցվա ծանոթներ ենք: Մենք դեռ վանից... Նորաշեն դպրոցում դասընկերներ ենք եղել:

— Ինչպե՞ս ես, Մարգար,— հարցնում եմ ես:

— Լա՞վ,— ժպտում է նա,— Տարուն է... գարունը լավ է:

— Ի՞նչ տարերքության,— ասում եմ ես,— գարուն, ձմեռ...— Ալ որպեսզի նա չնեղանա, որ ես ակնարկում եմ նրա կուրության, ավելացնում եմ,— որբերի համար բոլոր եղանակներն էլ մեկ են:

— Ոչ,— ասում է Մարգարը,— և՛ որբերի, և՛ կույրերի համար գարունը լավ է... մարդիկ մեր մասին ասում են.

«կույրի համար այստեղ թե բաղդատ, մեկ դաշիվ էր», բայց սխալ է...

— Մարգար, ծրևա՞նն է գեղնցիկ, թե՞ վանը,— հարցնում եմ ես։

— Վանը՞... իհարկե, վանը։ Դու չգիտե՞ս, որ հարցնում ես։

— Ինչո՞վ, ինչո՞վ,— հետապնդում եմ ես։

— Ինչո՞վ...— նա լռում է, հանում է գրպանից քաշկինակի նման մի բան, շիտում է աչքերը և ըստ երևույթին մտածում էր։

— Վանը... գեղեցիկ է,— մրմնջում է նա։

Տխրում է լուրթյուն։ Լսվում է միայն խոհանոցի կատրին նստած ճնճղուկների ճռվողյունը։

— Վանի ճնճղուկների ձայնն ավելի ուրախ էր։ Ծրևի այստեղի ճնճղուկներն էլ մեզ նման անօթի են։ Հետո գարնան հոլը... ավելի քաղցր էր։ Մանավանդ երբ ծովից էր փչում։ Տեսողները չէին լսում դուցե, բայց ես գիշեր-ցերեկ լսում էի ծովի խշշոցը։ Մանավանդ գիշերները։ Հետո այստեղ ծաղիկ չկա, ես չեմ տեսել...

— Դու չե՞ս տեսել։

— Այո, վանում մինչև անգամ փողոցներում ես դեռ էի ծաղիկների բուրմունքը... իսկ այստեղ... ասենք որքանտյում ի՞նչ ծաղիկ... Չգիտեմ, այս երկրում, ծրևանում ծաղիկ կա՞...

— Ոչ, Մարգար,— ասում եմ ես տխրությամբ,— այս երկրում հիմա ծաղիկ չկա...

Լռություն։

— Հետո, այնտեղի արևը... ավելի լավն էր, ավելի ուրախ, չէ՞, այդպես չէ՞...

— Իսկ ասողն՞րը, լուսի՞նը,— հարցնում եմ ես։

— Չգիտեմ,— մռայլվում է Մարգարը,— ինչ-որ չգիտեմ՝ չգիտեմ։

Լռություն։

— Մայրիկիդ հիշո՞ւմ ես, Մարգար,— հարցնում եմ ես, նրա դեմքը լուսավորվում է։

— Հիշո՞ւմ... Ես նրան տեսնում եմ, տեսնում եմ ամեն

ար։ Ա՛յ, եղբոր՝ Ավետին, քեզ, ասլոլիկ չեմ տեսնում, բայց մորս... տեսնում եմ։

— Ջնս տեսնում,— ասում եմ ես,— ուժեղ կերպով պատկերացնում ես, հիշում...

— Տեսնում եմ,— ներքուստ է Մարգարը,— դու չես հասկանում... այ, եթե հիմա նա երևար այս րոպեում... կամ մանր որևանց, ես նրան կտեսնեի, այո՞,— պնդում է նա,— ես նրան կտեսնեի՞... ես քեզ նման չեմ տեսնում, դու էլ ինձ նման չես տեսնում... Ես մորս ամեն օր տեսնում եմ...

— Հիշում ես,— այս անգամ համաձայնում եմ ես,— ուժով կերպով զգում և հիշում ես։

— Զգալ... հիշել... հիշել...— կրկնում է նա զզոհ,— այդ այն չէ... ես տեսնում եմ, տեսնում եմ նրան։

Լռում է նա, լռում եմ ես։

— Դե ասա,— լռությունը խզում եմ ես,— մայրիկիդ աչքերն ի՞նչ գույն ունեին։

Մարգարի դիմագծերը լարվում են, ջղաձգվում, նա ջանք է թափում պատասխանել, նա հիմա կասի իր մոր աչքերի գույնը և կդինաթափի ինձ։

Ա՛յդ փոխարեն նա լալիս է, լալիս շոր, անարցունք, հեկեկանքով։

— Այդպիսի հարցեր մի տա... մենք իրար չենք հասկանա... ես... ես մորս տեսնում եմ...

. . . . . .

Ով այսպես, սույն թվի հունվարի 23-ին, ժամը 12 անց 15 րոպեին լորդ Քերզոնը «ոչ ֆաքիո» ճանաչեց Հայաստանին, Հայոնի բան է, որ երբ երկու հոգի իրար ճանաչում են, հանդիպելիս բարևում են, Հայոնի չէ, թե լորդ Քերզոնը որտե՞ղ պիտի հանդիպի Հայաստանին, բայց եթե հանդիպի, ինչպե՞ս պիտի բարևի, հոնքերի շարժումո՞վ պիտի բարևի, թե՞ դիմարկը պիտի հանի երկյուղածությամբ և պատկառանքով, ձեռքը պիտի անգամի, թե՞, որ ավելի հնարավոր է, զարմացած տևաք պիտի ընդունի և ասի.

— Ներեցեք, չեմ հիշում...

— Բայց դուք ինձ ճանաչել եք,— պիտի բղթմնջա Հայաստանը։

— Դուք ո՞վ եք,— պիտի հարցնի նորին բրիտանական վերապանցությունը՝ լորդ Քերզոնը։

— Ես Հայաստանն եմ,— պիտի պատասխանե Հայաստանը, քիթը սրբելով։

— Ա՜,— պիտի հիշի լորդը,— ես քեզ «ոչ ֆարքս» եմ ճանաչել, բայց այս ճանաչումը չի պարտադրում անպայման բարևել։

— Իսկ ե՞րբ պիտի բարևեք,— պիտի բողոքե Հայաստանը։

— Երբ ճանաչեմ նաև «Դե յուրե»։

— Իսկ ե՞րբ պիտի այդ ասածդ պես ճանաչես...

— Շատ երկարացրիր,— պիտի բարկանա Քերզոնը և մանի մտիկ ճաշարանը մի կատր տապակած նոր Զելանդիա կլլելու համար։

. . . . . .

Մեծ աղմուկ բարձրացրեց մեր նախկին սիրված դաստիարակ և բանաստեղծ Օգսեն Սարյանի մի արձակ բանաստեղծությունը, որը կրում է շնչասպառ սիրային բնույթ։— «Ինչ նկար և այլևս չես երթար...»— սկսվում է այսպես և վերջանում է՝ «Այլ պետք է լռությունը լցվա նախերգանքը սիրո»։ Այս պնդումը շատ խախուտ է, որովհետև հայտնի է, որ պարոն Օգանը սիրում է որդուհի Մարթա Մուրադյանին անխոհապարծ, անհույս սիրով։ Ճիշտ է, պարոն Օգանի բանաստեղծության տակ տրված է նաև Մարթայի բանաստեղծությունը, որը վերջանում է «Ու թևերուդ մեջ՝ հանդիստ հանդչիմ» տողով, բայց հայտնի չէ, խոսքը վերաբերում է Օգանի՞, թե՞ մի ուրիշի թևերին։ Մինչև անգամ շատ հնարավոր է, որ պարոն Օգանի սիրո նախերգանքը «լռությունը լցվա», բայց շատ հնարավոր է նաև, որ այս սիրո վերջաբանը խիստ աղմկոտ լինի։

. . . . . .

«Հառաջ» թերթում տպվեց ինչ-որ նայիրյանի հոդվածը նորկա գրականության մասին, որի մեջ նշված են միայն դաշնակցական Պատնաի և նրան մոտ գրվերի անունները։ «Հայաստանի ձայն»-ի էջերում հանդես եկավ Օ. Սարյանը և բողոքեց այս աշատության դեմ։ «Ինչո՞ւ չի հիշատակված Թո-

թուլանցի, Լեռ-Կամսարի, Վշտունու, Պահարեի, Մահարու անուններըն»,— ցասումով ազաղակում էր Օ. Սարյանը Գ. Նալբյանի երևան ի վեր։

Ի՞նչ ոտավորություն պիտի թողնի Սիրարխու վրա այս փաստը, երբ կարդա իմ անունը գրողների շարքում, Մի՞թե չպիտի խոնարհի նա իր գեղեցիկ գլուխն իմ փառքի առաջ։ Ըստ երևույթին իմ սիրտ ունջ ոչ թե «լռությունը պիտի լլա նախերգանքը սիրո», ինչպես Օ. Սարյանի մոտ, այլ մեծ ղալատալը...

Չէ, ես զգրախտ եմ։

«Փակեցինք դռներ, փեղկերն ալ բոլոր,
Հոգիս չի սրտիս այսօր ոչ որ...»։

. . . . . .

Մայիսի մեկին մայրաքաղաքում տեղի ունեցան ցույցեր, միտինգներ։ Մասնակցում են բոլոր կուսակցությունները գրեթե։ Դաշնակցականներն էլ հրապարակ են բանվորական լոզունգներով։ Վարդանն ասում է, որ Աղասու կարծիքով այդ բոլորը կնզիք է ու սուտ։ Դաշնակցականները ոչ մի կապ չունեն բանվոր դասակարգի հետ։ Բանվորության և գյուղացիության միակ կուսակցությունը բոլշևիկների կուսակցությունն է, որը Հայաստանում Սպիրտակյան շարժում է կոչվում։ Մայիսի մեկին ճաում հանդես եկավ Տեր-Միմոնյանը, որը հայտարարեց, որ Հայաստանի խորհրդայնացումն անխուսափելի է։ Դաշնակցականներն ու ռամկավարները շփոթանց բարկացած են։

Նույն Վարդանի ասելով, Կոնդում, ինչ-որ տեղ գյուղ ունի Սպիրտակյան դաղտնի տպարան, այո, որը գրում է դիշերները։ Իսկ ցերեկները տպագրական գործիքը, տառերն իջեցնում են նեղբնատանը փորված հորի մեջ, իսկ հորի բերանը ծածկում են թիթեղի կափարիչով, թիթեղի կափարիչի վրա մոխիր են լցնում և կրակ են վառում, Մի ծիրանի նատած է կրակի մոտ ու շուռումուռ է տալիս կրակը։ Մի քանի անդամ միլիցիան ներքին Գործերի մինիստրության ցուցմունքով խուզարկել է այդ տունն ու ներքնահարկը և ոչինչ չի գտել։

— Ավ, ի՞նչ են տալում նրանք,— հարցնում եմ ես,— քնքնո՞ւ

— Ոչ, քոռացիկներ,— շշնջում է նա,— Ազաման իր ընկերոջ նույնպես խաբնված էլ կառավարությունը նրանց փնտրում է:

Այս ամենը չափազանց հետաքրքիր է և խորհրդավոր:

. . . . . .

Քնքշում լուռ տեսակ մի հայտարարություն, որը ծանուցում է, որ միլիցիան մի անտես ել է գտել Աբովյան փողի վրա և ձերբակալել նրցնողին խնդրվում է անցնել միլիցիատուն:

Պատմենք իրադարձման մեջ է: Երեկ երեկոյան նիստում քար ցուցակի կատարվել է պատմենի անդամների խիստ ստուգում:

Ստուգման արդյունքները դեռ հայտնի չեն

. . . . . .

36. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԻՑ ԿԱՄ ԱՊԱԳԱ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՄ ՆՅՈՒԹԵՐ

I

— Ռուա՞... — լսվեցին շարքերից մի քանի խուսոտ և դժվար բացականչություններ,— ուռա՞,— արձագանքեցին վարի շարքերն ավելի նոսր,— ուռա՞,— խղդոց նիհար մի դիմոտ, շարքի ամենավերջինը, ու սիրեց լռեցին:

— Իսկ ինչ վերաբերում է...— նվ օրվա ճառախոս պատոն Դաշունին շարունակեց իր ճառը:

Էր առավոտ: Գունատ արեը լուսավորում էր Արարատյան հանրապետության մայրաքաղաքի տանիքները, մայթերը, հետիոտնները, խռնացած ցուցափեղկերն ու ցուցանակները: Գարնանային հովը խաղում էր փողոցներում և շարքի մանկան պես հարկություն էր վնտրում շարունակելու համար իր խաղը, բայց հուսահատ քարուքանդ փողոցներից ու խորդուբորդ մայթերից նա սլանում էր քաղաքից դուրս, կամ, ո՞վ գիտի, իջնում հորում-Բուլաղ, տանելով իր հետ

պատան-բաղաքական-ազգային կարևորագույն խոր, որոնց ունկնդիր, խորամ-Բուզանդ ծառերը,— ոչխաս տակառ քիթն էր,— օրորվելին պիտի ու զարմանքով խարխափելին, ալալային,— ահա քե ի՞նչ, ահա քե ի՞նչ...

Պարոն Դաշտենին անցավ նորակազմությունների. հայ ժողովուրդը, հայ պետականությունը պետք է որ այրին. նա է, հայ ժողովուրդը, Արևելքում միակ ջահակիրը լուսավորության ու քաղաքակրթության. Սրանից բացի կան էլի մի շարք հարցեր պատճառներ, որոնցից ոչ մեկը չմոռնանք թշնամին՞ը, իհարկե, նրանք կան և քնած չեն, ո՞ր լուսավոր ազգը թշնամիներ չի ունեցել, մինչև անգամ այդ վիրավորական կլիներ բայց հայի վրեժխնդիր սառծ և պատմության հզոր տերությունների օգնությամբ, մենք...

Ալանիարանցի պինդոր Սիմոնը լսում էր ականջի ծայրով, բայց ամբողջ ուշադրությամբ նա կենտրոնացել էր իր առաջ կանգնած Հակոբի վրա։ Այդ Սիմոնն քան հրամանի նայելու ուղիղ իր առաջ կանգնածի՝ Հակոբի ծոծրակին, այնտեղ մի սպիտակ, չարժան կետ տեսավ։ Շարժվեց այդ կետը մի համառ և զեվային մարշրուտով դեպի պինդորի ուսը, ապա ուսի և հրացանի միացման գծով շարժվեց հրացանի փողի վրա, դեպի սվինը։ Ով գիտե, թերի Դաշտենին խոսում էր սվինների ծայրով հանրապետության անկախության պահպանման մասին, սպիտակ կետը հասել էր այդ սվինի ծայրին և մոտենում էր սվինների բաժինները արդեն ուղիղ արևին։ Պինդոր Սիմոնը վաշտապետի հետ միևնույն ժամանակ իր փոքրոցը, վաշտապետի հետ նրան էլ հանկարծակի նկատ իր փոքրոցից և տակից մեկով, այս անգամ առանց վաշտապետի, վերջինիս ցուցող հայացքի ձնշման տակ։

Սիմոնը վերջապես վերջացավ, բայց չվերջացավ առաջին Դաշտենու բնախոսական հեկեկանքը։ Նա (հեկեկանքը) հետևից նրան (պարոն Դաշտենուն), մինչև որ նա (պարոն Դաշտենին) մտավ իր բնակարանը։ Տիկին Նվարդիհա Պարսամյանն նույն ինքը՝ տիկին Դաշտենին (սա մի կին էր, որ պոեզիկ կոչվելու համար բավարար չափով ոտիզ էր, բայց ոչ մի կոնկրետ ապացույց չէր գոնե նրա դիմքի վրա, նրան, առանց նրբին խղճահարության, ոտիզ համարելու համար։

Ղուկան, ինչպե՞ս կարելի է բնորոշել տիկին Դաշունուն, նա... մեր կարծիքով, ոչ գեղեցիկ է, ոչ տգեղ։ Ոսկի աներ գրավի՞շ... Հետու չգնալու համար մենք լիովին համաձայն ենք այս որակման հետ, մանավանդ, որ գրական անխնիկայի էջերիկան չի թույլատրում ուշիմ պատմարանի կամ ընթերցողի ուշադրությունը երկար ժամանակով տակագծերի մեջ պահել (...), ուրեմն տիկին Եկատերինա Պարսամովնան գրաված նախաճաշիկ պատրաստելով, նա, մի ձեռքը ինքնաեռի կափարիչին, աջ ձեռքը բռնած եռ դարձած ու աշքով չափեց իր ամուսնուն ոտից գլուխ և ընդհակառակը. պարոն Դաշունին իր կրթին նայեց կողակցի դեմքին (որը, ինչպես արդեն նշվեցինք, ոչ գեղեցիկ էր, ոչ տգեղ, և մի կերպ համաձայնվեցինք նրան գրավիչ համարել), ուրեմն, նայեց կողակցի դեմքին և վերջից այնտեղ օրերի իմաստությունը, այլև անհրաժեշտ համարեց մոմենտի լրջության ըմբռնման։ Այս ամենը տևեց ոչ երկար, քան երեք րոպե, որից հետո նրանք ունեցան մի մեղրամսային խոսակցություն։

Մենք այստեղ չէինք բերի այդ խոսակցությունը, եթե պատմական չունենար պատմական խոշոր նշանակություն Արարատյան հանրապետության ոսկի տարեգրության մեջ։ Բայց ժամանակներն ուրիշ են. հիմա ամեն ինչ, մինչև անգամ ճանճի գոռոցը պատմական նշանակություն ունի, ավելին, ճանճի գոռալն անգամ է պատմական, է բախտորոշ և նշանակալից։

Մինչև անգամ։

Իսկ մենք, ոչ մի կերպ չուզենալով զրկվել անցյալ պատմարանի շոյող կոչումից, մեր քաղաքացիական պարտականությունը համարեցինք արձանագրել այդ սրամտախոսությունն այնպես, ինչպես այդ տեղի ունեցավ։

Տիկին Դաշունի.— (Տերի վրա բերուշ շեշտելով) Տեր աստված, հոգնել եմ, ուզում քնել էլ։

Տեր Դաշունի.

Քոան տվերը հնուտա գաշտին,
Հասան չոր ի Մուշ, Բիթլիս ու Բասեն...

Տիկին Դաշունի.— (նույն բնեշուքյամբ) Դե, հանգստացիր, հանգստացիր... Տանը մի՛ զրույցի պետական գործերով։

Տեր Դաշոյեն.

Դարձյալ փայլեց Սասնա գլխին պատուիրյան դրոշակ...

Տիկին Դաշոյեն.— (Նա՛յեն, ես՛յեն ընկերուհյաւմբ) Գիւանամ, պիտանամ... հայտնի է նաև, որ կեցցե հայրենիք գոչելով բարձրացրին աղաղակ... Գուրգեն, վահան...

Տեր Դաշոյեն.— Լավ հիշեցիր, կատյուշա, դու լսե՞լ ես Գուրգեն վահանյանի մասին,

Տիկ. Դաշոյեն.— Ի՞նչ է պատահել

Տեր Դաշոյեն.— 10.000։

Տիկ. Դաշոյեն.— Ի՞նչ

Տեր Դաշոյեն.— Փութ։

Տիկ. Դաշոյեն.— Ո՞ն, ճախատրա՞կ։

Տեր Դաշոյեն.— Ոչ, բամբակ։

Տիկին Դաշոյեն.— Հեռո՞,

Տեր Դաշոյեն.— Կեցցե՛ կ։

Տիկին Դաշոյեն.— Տեր աստված, պրանոլ խոմ նուկատոլ է ֆարթիկա բաց անել։

Տեր Դաշոյեն.— Է, ինչ բաց անի... արդյունաբերության գործարանատեր և մտանոտր ձեռնարկության խրախուսման տեսակետից վատ չի, բայց աստանան տանի, պատուհյան պրիստավից մի բիչ մեջտեղն է... աստր ինձ մի բաժակ թեյ տա պետ, ինչ նկատ ձեր «Զարկա չայ»-ի խնդիրը։

Տիկին Դաշոյեն.— Ի՞նչ... չայ չեն գնում։

Տեր Դաշոյեն.— Ոնկո՞ւ

Տիկին Դաշոյեն.— Գրիպ չայնելու։

Տեր Դաշոյեն.— Օ-հո՞։

Տիկին Դաշոյեն.— (Գաղտագրի ուշադրությամբ նայում հանձնում տիկին Դաշոյեն այս վերջին նամակը խոցված հրապարակի քաղաքականության կատողությունն բնորոշող սկզբունքների ամփոփանատրոշման գործում: Աստղատոյան ձեռնարկությունն անշուշտ հատուած էր տիկին Դաշոյենս նման քաղաքացիկ մտածողներով): Պրեսիկացիր, խնամատարության, գաղթականության և պահեստների մինիստրին կիներ,— Անթառամը, Գաղութը, մին էլ Սարկիր,— պնդում են, որ «Զարկա

չայ-ում կանայք միսի աշխատանն, ես, պրոգնոզ մինիսթրի կինը, էլեոնորան ու էլի ուրիշները կարծում ենք, որ... դու ասա, էլ մենք ինչացո՞ւ ենք, որ էնտեղ կանայք աշխատենն. Տղամարդիկ и баста... մինուսի պահանջը չեն ըմբռնո՞ւմ...

Տ և ր Դ ա շ ո ւ ն ի.— (խորագույն բասով) *Պառմական ամիսներ, շաբաթներ, օրեր, ժամեր, րոպեներ, վայրկյաններ և երկվայրկյաններ ենք ապրում, Եկատերինա Պարսամովնա, հարգեք այդ, ակբունքային, ճիշտ է. կարևոր ատրաձյուԹյուններ և լծվե՛ք, լծվե՛ք... մեք մոռանա, հայրենիքը վտանգի մեջ է...*

Տ իկ ի ն Դ ա շ ո ւ ն ի.— *Սիրտս լցված է միս, սի՞րտ են քողնում... ոչ լիներ էս քաղաքություն:*

Տ և ր Դ ա շ ո ւ ն ի.— *Անկախություն, Եկատերինա Պարսամովնա, անկախություն... Հանրապետություն, դեմոկրատիա, պառլամենտ ու մամուլի ազատություն,— քայլում ենք Մեծ Բրիտանիայի հետ ուս-ուսի... Նո՛ւ, սպասո՞ւմ էիր, որ մինչև այստեղ պիտի հասնեմ ես...*

Տ իկ ի ն Դ ա շ ո ւ ն ի.— *Ին... փալնքոտի մեկն էիր: Տանի ախոռ կապակի հորթի կշտին՝ ձեն չէիր հանիլ ասածո կամքն էր:*

Տ և ր Դ ա շ ո ւ ն ի.— *Պառմության կամքը, Եկատերինա Պարսամովնա, պառմության սոցիալական տնզուշաժների կամքը... Դա՞...*

...Այս պառմական րոպեյն սկսվից ուղիղ ժամը 11-ից 13 րոպե անց, վերջացավ 11 և կնսից մի րոպե անց... Մենք չէինք կարող անտնել կամ ի միջի այլոց արձանագրել այն, որովհետև այն, ինչ կոչվում էր Արարատյան միֆ, ձեռնարկություն, այդ ոչ ցնդարանություն էր, ոչ էլ պատահականություն: Դուք, խնդրում եմ, ուշադրություն դարձրեք վերջին «դա»-ի վրա: Այդ «դա»-ն հետազայո՞ւմ, քի՞ դրանից առաջ, խաղա՞ց, քի՞ խաղացել էր պառմական դեր... այդ «դա»-ն էր, որ շարժե՞ց, քե՞ շարժել էր մեծագույն ողերդակ-դիվանագետ Ահարոն Ավետիքյանի ոսկե գրիչը, երբ նա, վերա-ե՞ւմ, քե Սան-Ռեմոում, կամ դուցե Մոն-մարտրի կաֆեննե-

ին մնում, պատմության ոսկի մշուշում, առասպելց Արտաշատյան միջի ոսկե դարաշրջանը։

Ինչպես ինք ասից ոսկին խոխոջի ափսեի վրա, դասն զանգը զրնգաց։ Նկատելիս պարսամոլնան դիմաց դեպի դռներն ու վերադարձավ մի քաղաքացու հետ։ Մարդուն պետք է լիներ գուշակելու համար, որ դա ոչ այլ ոք էր, քան...

Սա պետք է որ մտավոր լիներ, սակայն հագնված էր ամենասովորական ճաշակով, ոչ գեղեցիկ էր նա, ոչ տգեղ և ոչ էլ համակրելի, ոչ անդամ անհամակրելի։ Սա պարզապես տասը տարի միմիայն հետո Գուրգեն Վահանյանն էր, որ իր բամբակի նման փափուկ ու սպիտակ ձորը պարից պարսն Դաշտունին, որը (պարսն Դաշտունին) մինից, մինից և որքան նա մինից, այնքան լուսավոր դարձավ Գուրգեն Վահանյանի դիմաց, որը վերջից սկսում է հիմնավոր կերպով նայել նաև Արտաշեսին։

Առաջին խոսքն արտասանեց նույն ինքը՝ պարսն Դաշտունին։

— Կառավարության պատմական, Արևելյան բյուրոյի և մի քիչ էլ արևմտյան պետությունների կողմից մեզ լացած եմ բել վրա։

— Ո՞ւ...— բարեմտիտ շարունակեց ժպտալ նորին, — տիկին Կատարին, մի բաժակ թեյ կխմե՞ս և խոսես... Ինչո՞ւ մեզ մոտ չեք գալիս, տիկին Կատարին, իմ վինը ձեզ, տիկին Կատարին, շա՞տ ես վրդովված։

Եվատարին Պատրամոլնան պատ, որ իրեն պատիժին պատասխանում է պետական հասարակության ինչ գերդաստանի մեկուսում ապրելու անհրաժեշտությա՞նը, հոնքերը կիտել և մինչև, քե՞ ժպտալ էր դեմքին և ինքնությանը վայել պատասխան կնոջ նորը բարեհամբույրության բայց պարսն Դաշտունին նին վրկից պրեթյանը։

— Կատյա, մի քիչ տար... Հիմա, երբ մենք նոր-նոր ամրացնում ենք մեր նորածին հանրապետության հիմքերը, երբ հրով և արով կռվում ենք ներքին և արտաքին թշնամի դեմ, աննկրելի է այնպես դողանալ, որ բոլորն էլ իմանան։

— Ինչը տեղական է, քե արտա...

— Արտաահմանում ենք տանում հակառակ ամպագանդա, Նորաբ փաշան որոշել է Վիլհիան էլ կցել

Հայաստանին իր բամբակի արտադրությունով... Իսկ հիմա, համեցեք, դուրս է գալիս որ... Հայաստանում բամբակ չեն ցանում...

— Պարոն Դաշունի՛,— ձևը սեղանին խփելով, մտավորապես «լա» նոտայով բացականչեց տասը հազար փթանոց հերոտա հերոսը՝ ոտքի կանգնելով։ Տիրեց խորհրդավոր լռություն, Պարոն Դաշունին փոքրացավ, փոքրացավ, այնքան փոքրացավ, որ նրան՝ պարոն Դաշունուն, թվաց, որ կարող է գետին մտնելու փոխարեն մտնել շրջացած թանաքամանի մեջ։ Իսկ տիկին Դաշունին արտարերն կտրվեց.

— Ինչո՞ւ արտասահմանյան է։ Կարիք չկա տեղական տանը խնդիրներով բեռնաված լինելու։

Բայց Գուրգեն վահանյանը չնահանջեց։

— Ստիպված եմ ձեզ հիշեցնելու, որ մեր պետականության վարկաբեկման գործում... դուք այն Դաշունին չե՞ք... ես այն ժամանակ լռեցի... այդ բոլորից հետո դուք համարձակվում եք...

Պապամենա, կարկուտ, Արևելյան շրջան...

2

...Իջնում է բանակը պիտակը փոդոցով, տրեխաններով արթնում գետինը,— քո՛ս, քո՛ս, քո՛ս,— հրացանները բռնած ըստ հարմարության, աջ ուսին, ձախ ուսին, վեր, վար, իսկ այն կարճիկ և նիհար ռադմիկը (հիշո՞ւմ եք, նա, որ սուս «ուռա՛» բոռաց) գնում է ուղղակի հրացանը գրկած, նրան նայելիս, մարդ ոչ մի, այլ երկու րոպե կարող է ննջատրել, — կամ նա այնքան շատ է սիրում իր հրացանը, որ ուղղակի գրկել է նրան (տես՝ «տամ հուրացանն եմ կրծիս սեղմել, տոռով սիրած յարի տեղ»), կամ նա ճնշվում, անչափ ճնշվում է նրա ծանրությունից և պատրաստ է դեն նետել այդ բեռը և թեթևացած սրտով գնալ, ո՞ւր, զորանո՞ց,— ոչ գյուղ, տուն։

Մրբ Կատարինեն (տիկին) պրպտված էր պետական երկու մեծ անձնավորությունների մեջ ընդհանուր լեզու տեղծելու ճարը և պատմական դերծով, երբ խոսակցություն էրջել էր «դո» նոտայի վրա, և երբ պարոն Դաշունին այլևս չէր կարող

տեղափոխել ցամաքած թանաքամանի նեղ սահմաններում, այդ միջոցին...

Արտաքին գործերի մինիստրը նստած էր իր առանձնասենյակում և քարտերի վրա մերթ կարմիր, մերթ կապույտ, մերթ սև և մերթ էլ սպիտակ մատիտներով նշաններ էր դնում այս գետի՛ ակունքին, այն լեռան ստորոտին, այս լճի ափին, ծովին ու ցամաքին։ Դիտելով նրան, մարդ տեսանում էր այն տպավորությունը, որ նա դրաված էր մեծագույն վիրահատությամբ, այո, վիրահատությամբ, երբ ձեռքի կես անգգուշ շարժումը կարող է հիվանդին Արարատյան միֆոլոգիայի հերոս դարձնել, իսկ մեկ այլ շարժումը կարող է նրան ուղարկել անդրաշխարհ, երկնային նիստերի արձանագրությունները համեմատարար կարդի բերելու համար, վիրահատությամբ, այս գործի բովանդակ նրբությամբ ու ցնծունիայով, այս գործի պատմական, միտական, հանրապետական մասշտաբի պատասխանատվությամբ։

Որքա՞ն կարող էր տևել այս կենսագրական գործողությունը, մեծ նեռալ ենթադրելն անգամ, որովհետև...

Դուռը բացվեց,— առանց զեկուցման,— և նույն պահվանից Արտաքին գործոց կանցնաց խորին և խոր խոհարհությամբ, տալա մեկնեց իր ձեռքը պետությունների մեծի (հզոր) ապագայության նկրտացողից մ-ր Փլշին, վերջինս չդարձրեց Արտաքին գործոց պատկած ձեռքին և պահց մի անպատճառաբար հայրենալ.

— Հասա՞մ, որ քո՛ հե՛ր...

— Գոհ ենք, նորին մրսարբ Փլշ, շատ պանց գոհ, հայ ժողովուրդը...

— Հաց ձեր փորի՛ն, անկախություն ձեր երկրի՛ն... ուրեմն դեռ նոր եք անկախություն, ուստի առանց մեր ձեռքի գործ ընելու չի՛ք, վաղուն Հիտլեր կրնա բարկանալ...

— Այդպես է, մրսարբ Փլշ,— պատասխանեց Արտաքին գործոց առաջին դառին վայել խոնարհությամբ։

— Պաշտոնյաներ առանց մեզի մի նշանակե՛ք։

— Այո՛։

— (Ավելի բարձր) Բոլշևիկ չտնանամ, չէ նե խիստ պիտի բարկանամ։

— Իշխան։

— Մենք եկած ենք ձեզի ասածու օգնությամբ օգտակար ըլլալո՞ւ։

— Պարտական ենք։

— Գուդ-բա՛յ...

— Բայ, բայ, ձերդ մեծություն... Թուլլ տվեք ձեզ ուղեկցել... մի վտքր վտքր չե՞ք գանում մեր երկիրը... Տիգրան Մեծի ժամանակ Հայաստանը...

— Ամբողջ Թուրքիան ձեզի կտանք,— ասաց բարեսիրտ և առատաձեռն մի պետության ապագլուխի նեղկացողությամբ, Արտաքին գործոց օգնությամբ ձիու վրա տեղավորվելով, ապա ավելացրեց.

— Գացեք և առե՛ք...

Նվ ձին ասպանդակով առաջ անցավ, քողնելով Արտաքին գործոցին կախարդված գրության մեջ։ Նրա ականջներում դնծության դանդր էին հնչում, սարսափների և վհատանների շաչյուն, սուսրնների շառաչյուն։

Այդ միջոցին էր, որ Գուրկեն վհատանյանը 50 դեղին Թուրքական ոսկիներ հնչեցնելով քսիեց Թնչի պարագաների սկուտեղի վրա, ու նրանց ձեռները միացան փոխադարձ սիրով ու պետական վստահությամբ։

Այն ժամանակ, երբ Արտաքին գործոցի ուղեղում սուսներ էին շաչում և պարտատու քաղաքի յոթհարկանի աշտարակի վրա կանգնած պահապան զինվորները շնփոում էին յոթներորդ գրոհի հարձանակը, այն ժամանակ, երբ Գուրգեն վհատանյանի ոսից ոսկիներ էին խոխոջում պարոն Գաշտունու սեղանի վրա դրված սկուտեղի վրա, ճիշտ այդ ժամանակ, մայրաքաղաքի մի մասում, ինչ-որ տեղ, ինչ-որ բան հնչում էր ծանր ու սրտամաշ։ Պողպատե զրահների շաչ չէր այդ, ոչ էլ Թուրքական ոսկիների խոխոջ, ոչ էլ դինվորական երաժշտության անհետաշնամ աղմուկը, որն այդ միջոցին քաղաքի հրապարակի վրա, կինո «Ապոլոն»-ի առաջ «Մեր հայրենիք» էր ծլրտում, խլացնելու համար կարծես պատերազմ Թափված զաղթականների համակատարար աչքի ներդաշնակ նվագը, որը հետապնդում դարձավ Արարատյան ձորավարության պաշտոնական հիմնը։

Քաղաքից դուրս, մոտ լուռ անտառ կամարնիրում, քանատակված բոլշևիկների հերոսական բաղուկներին հնչում էին ժանդուռ շղթաներ։

Էր առավոտ

. . . . . .

37. ԷՋԵՐ ՀՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Փոլոցում հանդիպեցի Սիրարխոն ու Զարիկին և առաջեցի Ծ. Սարյանի հոդվածի տպավորությանը։

Ոչ մի տպավորություն։

— Բարև,— ասացի ես, զսպելով ներքին հուզմունքս։

— Բարև,— պատասխանեցին նրանք։

Ես կանգնեցի։ Կանգնեցին և նրանք, կարծես սկսում Սիրարխին նայից ինձ ասել պետք, Մինչև պետս ոշինչ չըսած ուշադրավ, բայց ահա պետս...

— Այդ պետարկը Բիֆիա՞ն ես ասել,— հարցրեց նա։

— Այո,— պատասխանեցի ես շնչահեղձ։

— Գեղեցիկ պետարկ է,— հավանեց նա, Հետո պետը հանեց գետարկս, պտտեցրեց մատների վրա և նորից դրեց դրեց այնպես, որ գետարկը խորհրդանշում Պետրոսի էր որ ես բավականին ծիծաղելի կերպարանք ունենայի, Հայելու մեջ նայելու կարիք չկար նա ծիծաղեց, կշկշաց և Զարիկը։

— Յոնսություն,— ասացին նրանք։

— Յոնսություն,— արձագանքեցի ես խեղդուկ ձայնով։ Եվ մենք բաժանվեցինք։ Ամեն ինչ վերջացավ։

Ես ինձ նետեցի Անգլիական այդին, մտա խուլ ծառուղիներից մեկը, նստեցի մի նստարանի վրա և թափեցի իմ մենության արցունքները։

Իսկ երեկոյան Հայաստանին պատմեցի իմ հանդիպման մասին, թե ինչպես Սիրարխին բռնեց իմ ձեռքը և չէր ուզում բաց թողնել, թե ինչպես շնորհավորեց, որ կամաց-կամաց գրողների շարքն եմ անցնում, թե ինչպես գովեց բանաստեղծություններս և ասաց. «Ինչո՞ւ այդքան տխուր բանաստեղ-

ծուխ յուններ ես գրում, կարիք չկա ախրել.ու», և կարմրեց, իսկ ես գույնս գոնցի, հետո նա գլխարկս հանեց և իր գլխի սանրով սանրեց մաղերս...

— Փողո՞ւմ,— զոռաց Հայաստանը։

— Մի զոռա,— չեմ կորցնում ես ինձ,— մենք խոսելով գնացինք Անգլիական այգի, մտանք խուլ ծառուղիներից մեկը, նստեցինք մի նստարանի վրա, ես կարդացի իմ «Մենութեան արցունքներ»-ը, և նա հանեց իր գլխի սանրը...

— Երկա՞ր նստեցիք,— ընդհատեց Հայաստանը։

— Ո՛ւռա... մի ժամ։

— Մի ժամ,— փնշաց Հայաստանը,— մենակ դու և Մերարեմի՞ն կիք խոսում։

— Ինչո՞ւ... մեկ-մեկ Զարիկն էլ էր արտահայտում իր կարծիքները։

— Էլ ի՞նչ կարծիք ուներ նա։

Մեծ հոգեբան լինելու կարիք չկար գուշակելու համար Հայաստանի փորացավը։ Հիրավի, խոզուբայուն կլիներ իմ կողմից, իմ հաջողությունից բաժին չհանել մտերիմ ընկերոջս։

— Բաժանվելիս,— ասացի ես,— Զարիկն ասաց՝ բարևվիր Հայաստանին...

Հայաստանի դեմքը փայլեց, աչքերն ավելի փոքրացան և ծնոտը դողաց։

— Անխիղճ խո՞սք,— գոչեց նա ամբողջ ձայնով և առանց սպասելու իմ պատասխանին, ընկավ անկողնու վրա և դուրս.

— Ես երջանի՞կ եմ... ես գերերջանի՞կ եմ... ինձ նման երջանիկ՝ աշխարհում մի մարդ կա։

— Այդ մարդը ես եմ,— ասացի ես։

— Այո՛, այո՛,— հաստատեց Հայաստանը,— գուրգեն, մենք երջանիկ ենք։

Հայաստանի հախուռն և անկեղծ ուրախությունը այնպես վարակեց ինձ, որ ես մոռացա դառն իրականությունը և իմ միշտներին ինքս էլ սկսեցի հավատալ։ Ի նշան մեր առնական տրամադրության, մենք մի-մի հատ «Բան-կեֆի» պատվիրեց ծխեցինք և դուն մտանք երջանիկ և անխոով քնելու

Երազում տնաս Սիրարփուն, նա բռնել էր իմ ձեռքը և չէր ուզում բաց թողնել։

. . . . . .

Լույս տեսավ Չարենցի «Երկ ռադիո-պոեմներ» գրքույկը, որը պայթեց ռումբի պես։ Ես արդեն կարդացել եմ նրա «Երեք երգ տխրադալուկ աղջկան», «Սոմա», «Դանթեական առասպել», «Միածան» և «Ամրոխները խելագարված» գործերը։ Նրանք ինձ վրա թողել են անմոռանալի տպավորություն, բայց «Երեք ռադիո-պոեմներից» թողած տպավորությունը պերապանց է։ Արդեն պարզ է, որ Չարենցն իր վիթխարի ձայնով խլացրեց Քյալաշյանի, Արմենուհի Տիգրանյանի, Ջենիքսի և ժամանակակից բոլոր բանաստեղծների ձայները։ Իմ մասին խոսելն անգամ ավելորդ է, ես բոլորովին մեջ-մեջ եղա։

Դժվար, շատ դժվար գործ է Չարենցին հետո բանաստեղծ դառնալը։

Նա—ես եմ նորից.—
Դարերից եկած անհուն մի պոետ —
Ոգիշեն Չարենց —
Նախրի երկիր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու գավակը մեծ...

Իսկապես որ մեծ... Չէ, դժվար է Չարենցից հետո բանաստեղծ դառնալը։

. . . . . .

Կարան ընկավ։

Եվրոպական ազդեցիկ քաղաքական գործիչներից մեկը, կարծեմ Սան-Ռեմոում հայտարարեց, որ իզուր հայերը կախվում են այս ու այն մեծ պետության փեշից— «վերցրեք մեր մանդատը»։ Թող հայերը ինքնուրույն կերտում իրենց գլխի ճարը տեսանեն, ծլեն, ծաղկեն, բարգավաճեն և ապացուցեն, որ արժանի են մեծ պետությունների ուշադրությանը...

Այո, սատ ջուր լցվեց հայկական հարցի քրտնած գլխի վրա։ Թոքերի բորբոքում մը ապահովված էր։

. . . . . .

Բժի՛շկ, բժի՛շկ կանչեք։ Դավաճանից հայ բազմաչարչար ժողովրդին և՛ Սան-Ռեմոյի վհատեցուցիչը, և՛ ամերիկյան սենատը, և՛ Աղգերի լիգան։

Ջուրն ընկավ և խեղդվեց նաև ծուխից-ծուվի խմդիրը։

— Ինչպե՞ս կարող ենք էրզրումը, վանը, Բիթլիսը և այլն Հայաստանին տալ, երբ այնտեղ հայեր չկան։

— Այո, բայց...

— Ի՞նչ բայց։

— Էլ ինչո՞ւ խոստացաք...

— Մենք ինչ իմանայինք, որ հայերը չպիտի կարողանան իրենց վայելուչ պահել, մի մասը գնացել, առանց ծանր ու բարակ հշտապատկու կոտորվել է, ուրիշներն ընկել են թուրք չնթանների առաջ և Տևր-Զորի անապատները թաշվել, իսկ մյուս մասը Բողել փախել է Կովկաս և այլուր։

— Այո, բայց թուրքերը...

— Ջանըմ, հասկացանք, թուրքերը բարբարոս են, արյունռւշա են, սինչբոր են, դրա համար պիտի գնալ և կոտորվե՞լ։

— Բայց մենք մեզի չկոտորվեցինք, թուրքերը մեզի կոտորեցին...

— Ասա ինչո՞ւ մեզ չեն կոտորում։

— Ձեր երկրի սահմանները...

— Նորից սահմանների խնդիր... Թողնենք այս հարցը, ինչպե՞ս է ձեր առողջությունը։ Տիկինն ինչպե՞ս է։

— Շնորհակալություն, տիկինը լավ է, նա գլխի ցավ ունեմ։

— Է, լավ, մի հանձնաժողով կազմենք և քննենք հարցը։

— Գլխացավե՞ս հարցը։

— Ո՛չ, Ք֊ինչո՞ւ հայերը կոտորվեցին։

— Բայց հանձնաժողով կազմելու կարիք չկա, ուր իմ. Թուրքերը կոտորեցին։

— Այո, բայց ինչո՞ւ։

— Որպեսզի Հայաստանն իրենց մնա։

— Դուք գիտեի՞ք նրանց միտքը։

— Իհարկե։

— Ուրնմն չպետք է կոտրվեիր ճակատագրական սխալ նք գործել։

— Բայց մենք քանիցս խնդրեցինք ձեր բարձր միջամտությունը։

— Ջանըմ, մենք ինչո՞ւ պիտի միջամտենք Թուրքիո ներքին գործերին։ Այսօր եթե անգլիականն կատավարությունը որոշե իր հպատակներին Թնդանոթի քաշել, Թուրքիան իրավունք ունի՞ միջամտելու...

— Ո՛չ... բայց։

— Էլ «բայց» չկա, առնա՛ք, վերջապես ճշմարտությունը ճշտվեց և մենք սկսեցինք դիրար հասկանալ... բայց մենք խորապես կհարգենք հայ ժողովուրդը և եթե կուզեք, ապեքսիկ անձնից մի հանձնաժողով կազմել տամ, որ քննե միջամտության խնդիրը... է՛, ուրիշ ինչպե՞ս եք, տիկինն ինչպե՞ս է, բարևեք...

Ահա ասելով լորդը ոտքի կանգնեց, հոդաբաշխները ոտքերեն անցուց, մի կտոր թուղթ համրեց և գիշերապզնատի դրսալանը խոթեց, ոնմքը ծռմռեց և դրանով հասկացրեց, որ վիճանագիտական աուդիենցիան վերջացավ և որ ինքը անհետանձնի գործով ստիպված է բացակայել։

. . . . . .

Պատմանատի շենքի լորդի գնդատան մոտ հանդիպեցի Հզաստի խանջյանին։ Նա բարևեց և ուզեց շարունակել իր ճանապարհը Հրոմյանով վեր, բայց ես նո դարձա և միացա նրան։ Մենք մտանք բուլվարը և նստեցինք մի մենավոր նստարանի վրա։

— Կարդում եմ բանաստեղծություններդ,— ասաց նա ժպտալով,— ոչինչ, ոչինչ... բայց հոգվածներդ... դաշնակցականների դեմ գրածներդ էլի ոչինչ, արտիստ են, բայց ուրիշ խնդիրների մեջ մի մտնի...

Ես հասկացա նրա ակնարկը։

Նա գրպանից հանեց մի փոքրիկ ծոցատետր, այնտեղ նա մատր տառերով արտագրել էր Զարենցի «Մադիո-պոեմները»։ Նա թերթեց և կանգ առավ մի էջի վրա։— Լսիր.

Հեյ, հնոտ-մոտիկ
Հանքահորիդում,

Փորձարաններում,
Լայն ատելիքում ու անտառներում —
Բոլոր վայրերում, բոլոր կողմերում,
Արկածի, բռնության ու հանգի
Նպատակ օրորված իմ բոլոր եղբայրներ...

Ահա լենինը Զարենցի ասած այս «բոլոր եղբայրներից» առաջնորդն է։

Նա լուռ, կանաչ ակացիայից մի անժամանակ դեղնած տերև օրորվելով իջավ մեր նստարանի վրա։ Աղասին վերցրեց քաշված տերևը, ուշադրությամբ շուռումուռ տվեց և կարծես մի բան հիշեց։

— Տերյանին սիրո՞ւմ ես։

Ես հիշեցի վլադիկավկազը, Արբահամ Գալճյանին, նրա նույն հարցը։

— Սիրում եմ...

— Հիշիր, — շարունակելով խաղալ տերևի հետ՝ ասաց նա,— ժամանակակից երկու մեծ բանաստեղծներ՝ վահան Տերյանը և Զարենցը բոլշևիկներ են։

— Իսկ Թումանյա՞նը,— հարցրի ես։

Աղասին մոածեց։

— Չի կարող պատահել,— ասաց նա, կարծես ինքն իրեն,— որ Թումանյանը հետագայում չընդունի Սովետական իշխանությունը։

— Բահակյա՞նը,— առաջ գնացի ես։

— Բահակյանն էլ ժողովրդական բանաստեղծ է, նա էլ ուրիշ ելք չուներ, պետք անցնի մեր կողմը,— պատասխանեց Աղասին խոր, վարակիչ հավատով։ Հետո նա հարցրեց.

— Դու Զարենցի հետ ծանո՞թ ես...

— Մանոթ եմ,— պատասխանեցի ես, չկարողանալով չժպտալ։

— Ինչո՞ւ ես ժպտում, երևի հետաքրքի՞ր մարդ է։

— Վերին աստիճանի,— հաստատեցի ես։

— Կապ պահիր նրա հետ, փոած սիրացուներից ու բնամոլ վարժապետներից քեզ հետ պահիր։ Մի՛ հավատա ինչ որ պրծում է բոլշևիկների հասցեին։ Բոլորը լքեցին հա-

յերին, այժմ հայերը ոչ մի բարեկամ չունեն։ Մեր միակ բարեկամը Ռուսաստանն է, նոր Ռուսաստանը...

Նա մի կողմ շպրտեց քոշնած տերևը, նայեց ինձ, ժպտաց իր վարակիչ ժպիտով և հարցրեց.

— Սիրային գործերդ ինչպե՞ս են։

— Ի՞նչ սիրային գործեր,— փակվեցի ես,— ես սիրային գործեր չունեմ...

— Լա՛վ, մի քաքցնի,— ծիծաղեց նա,— գիտեմ, վարդանը պատմել է... Այդ Սիրարփին այնքան էլ դեղցիկ չէ, ինչպես կարծացել է քեզ կախարդել, անհասկանալի է։

Ես խոսք չգտա պատասխանելու։

— Աննք ո՞վ է հասկանում բանաստեղծներին,— ասաց նա, ոչխարյակս բռնելով քթիս վրա,— դե, գնանք... Այսօրվ բաժանվենք... լավ եղիր... դու ո՞ւր ես գնում։

— Որդանց։

— Որբանց,— կրկնեց նա և, չգիտես ինչու, ոտքից ետ գարձրեց.— դու էլի ամերիկյան որբանոցո՞ւմ ես.. գոնե պետական որբանոց անցնելիս... ասենք երկուսին էլ երեք անեծք... ոչինչ.— ծնծղեց նա իմ ուսը, ասես սրտապնդելու համար,— կգա ժամանակը, ամեն ինչ կգտնի իր տեղը... Դե, ցտ...

* * * * * * * * * * *

«Բայրերը պաշարված էր»

Ոչ, ամբողջ Հայաստանը պաշարված էր, Շարժվում է, քայլում կարա Ինքնի հորդան արյունարբու Հայաստանի վրա, հարավից ու արևելքից սեղմվում է արյունոտ աբյանը, ջելմերը լույս են տեսնում «Հայրենիքը վտանգի մեջ է» խոշոտառատ ոսոլանդով, տաղնապ է և խուճապ, խուճապ է և խառնաշփոթ, խրտնացում և դասալրության լույս տակ կատաղաբուքյան տգեղատեր կոչը, ավելի շատ կոչը,— Քինվորնե՛ր,— կոծում է կոչը,— փախչում են, ո՞ւր են փախչում, բոլոր դռները փակ են նրա համար, որին նա չհա՛ս

Այս կոչը չի վերաբերում բոլշևրդին. Անգլիական այդպես է Արևմտյան վրա ինչ նկող ապաներին Շրջում են

նրանք՝ ատամների մեջ սեղմած պապիրոսներով և աղգային օրիորդների հետ քևանցուկ։

Ռուսական նկնդնցու հետևը, քաղաքային բուլվարի մոտ երեկ կանդնեցրին մի կախաղան։ Այսօր լուրս տեսալ Չարենցի մի ցնցող բանաստեղծությունը՝ «Կախաղանը» վերնագրով։ Ոչ ոք քող շմոտենա կախաղանին, ես կբարձրանամ կախաղան, և քող բոլորը նայեն իմ սուտած աչքերին և այնտեղ տեսնեն.

Իմ Հայրենիք, քո ապագան...

Քինն-բերան լրջվում է անդադար մի բանաստեղծի երգը.

Ոչ չի տեսել ազատ երկիր,
Որտ դա Հայաստան,
Գաշնակներին ազատ մեյդան,
Իսկ մեզ կախաղան.

Վատ չէ, մինչև անգամ շատ լավ էլ։

Բուլվարի մեջտեղում քայլում է խմբապետը։ Նրա աջ ու ձախ կողքից քայլում են երկու շարքայիններ, ըստ երևույթին նրա թիկնապահները, խմբապետը հարբած է, արնակարած աչքերով, կարծես հանված լուսանկարից, խաշիկ փամիշտականներով, մատները կողքից կախած։ Անցնում է մի տող ու ցույց է տալիս, որ չի տեսնում նրան։ Խմբապետը անհասատատ քայլերով նա է դառնում ու կտրում է ամբի հանապարհը։

— Ինչի՞ չնստ չես ի տա,— հարցնում է նա խստորեն ատամնակրան։

— Ես ատա եմ,— լինում է պատասխանը։

— Ինձ կճանչնա՞ս։

— Ոչ։

— Շուն շան յակտա,— ֆշշում է խմբապետը և հանում է մատները։ Սպան սառնարյուն կերպով ձեռքը տանում է ատրճանակին, թիկնապահները միջամտում են, բռնում են իրենց մեծավորի ձեռքերը։ Սպան հետանում է, իսկ խմբապետը ապատում է իր ձեռքը և հինգ անգամ կրակում է օդի մեջ։

Ինձնում է երևան ամայի փողոցների վրա, բուլվարի և կախաղանի վրա։

. . . . . .

Օհանջանյանի կառավարությունը հրաժարական տվեց, կառավարության գլուխն անցավ Սիմյոն Վրացյանը։ Ե՛վ ժողովրդական կուսակցությունը, և՛ ռամկավարները, և՛ սոցիալ-դեմոկրատները, և՛ սոցիալիստ հեղափոխականները, և՛ Խրլեն նախկոպոսը, և՛ սափրիչ Ճոշապան— բոլորը, բոլորը խոստանում են օգնել կառավարությանը, ունենալով հանդիպ «ինչ-ինչ ակզումենտային տարաձայնություններ»։

Միայն լուռ մնաց «Հառաջ»-ը ոչ թե իր սովորական ինքնատիպ տարաղով և ոգեմսկան արթ ու սարքով, այլ համառ, բաղարջիական շրթով, հրացանի սեղ բաստոն ձևորին։

— Մենք պատրաստ ենք մեր գործուն հարևան թուրքերի հետ հաշտվելու,— խոթոտում է «Հառաջ»-ը, սպիտակ թաշկինակով քիթը սրբելով։

— Մենք ոսմանոսիկ անք եղել,— բողոքում է նույն «Հառաջ»-ը սլյոսիկ անմեղ ինքով, որ կարծես խոսքը վերաբերում է դրսեկան ուղղության և ոչ թե տասնյակ տարիներ ժողովրդի բախտի հետ խաղալու քաղաքականության։

Մեր արբանյակի կառավարությունն էլ փոխվեց։

— Այլևս ենք մեր հիանալի պատմությունը մեր ձևորով,— մրմնջաց պատռն Արշակը և գնաց դաշնակցության Երևանի կոմիտեն, նոսիֆ լինելու համար այլևս պատմության վրա։

— Էրթր,— բացականչեց Կարո Համազյանը, փինվորական շրթով և կարմիր, հնդամեն ատաղակիր գլխարկով արբանյակ մտավ։

. . . . . .

Ստեղծված արտակարգ դրության առնատա չմնացինք և մենք։ Հայաստանի և Գառնիկի հետ նստեցինք գիշերը և դրեցինք մեր հրաժարականը լիամկավար աշակերտական միության, բարեաթիվ «նկատի ունենալով»-ներով։

«Նկատի ունենալով, որ հանկատակ սպասողական սլյունդների, կյանքը դնում է ոչ թե ընդհատման (հիատուսիոն)։

ճանապարհով, այլ հեղաշրջման (revolution) ընթացքով։

«Նկատի ունենալով, որ արևմտյան բոլոր պետությունները խաբեցին Հայաստանի կառավարությանը, իսկ Հայաստանի կառավարությունը՝ հայ ժողովրդին.

«Նկատի ունենալով, որ Համկավար աշակերտական միությունը վաստորեն իր մայր կուսակցության ձեռքին մի զենք է, որը կոչված է ապահովելու դաշնակցական կառավարության գիծը, որը պարտության է մատնված ինչպես դե ֆաքտո, այնպես էլ դե յուրե.

«Նկատի ունենալով, որ Նուբար փաշան բուրժուա է, իսկ մենք ընչազուրկ որբեր,

Սրանով թույլ տվեք ձեր թերթի միջոցով հայտարարելու, որ մենք, ներքո ստորագրյալներս, հրաժարվում ենք հայ Համկավար աշակերտական միությունից։

Աճեմյան Գուրգեն
Երիտասարդյան Հայաստան
Խաչատրյան Գառնիկ»

Մեր այս նամակ խմբագրության ուղեց «չնչին կրճատումներով», ինչպես մեզ հավատացնում էր միության նախագահ Վահրամ Բեզեղյանը, այժինքն՝ տալեց միայն վերջին տողերը, որ մենք հրաժարվում ենք հիշյալ միությունից։

Եվ ստորագրությունները։

* * * * * * * * * * *

Հասունանում են դևպքերը, հասունանում է կյանքը, հասունանում ենք մենք։

Զարհնցը.— ահա Զարհնցը։

Որպես քուրմը Գանգեսի,
Երկատար քուրմը որպես,
Կյանքս ամբել եմ բեղի
Ու երգում եմ քեզ
Քեզ եմ երգում այս կարմիր
Ակիտաչյում Վիմա,
Քեզ եմ երգում, բարդը գույն,
Երկատար Վոմա...

* * * * * * * * * * *

Նոյեմբերյան երիկո։

Կարո Շամդիլյանի հետ դուրս ենք գալիս որբանոցից և ուղևորվում դեպի Արովյան։

— Ես ուզում եմ, որ այս օրը չմոռանաս դու,— ասում է Կարոն։— Տեսնո՞ւմ ես այս քարուքանդ մայթերը, այս հին, տալուկ կտուրներով տները։ Այս ամենը երազ կդառնա, ծանր, կոշմարային երազ։

Հանուքենների ծածկի տակ, մի խումբ անապաստան երեխաներ խարույկ են վառել, կծկվել են կրակի մոտ ու տաքանում են։

— Կհավաքվեն այս երեխաները փողոցներից, նրանք կդառնան առույջ ու ուրախ քաղաքացիներ խորհրդային Հայաստանի՛, այո՛, դուցի այս սրթսրթացող երեխաների մեջ գտնվեն և ապագա զինվարներ... կյանքը նրանցն է, ում կյանքը անիծել է, ով ճորտ է ու մերկ։

Արովյանի երկու կողմերում կանգնել է ժողովուրդը։ Նրանցից շատերը քնելին կարմիր շորեր են կապել։

Իջնում են Քանաքեռի բարձունքից ձիավոր կարմիր բանակայիններ։

Ահա քե ում մասին է գրել դեռ երկու տարի առաջ Նիշե Չարենցը.

Նրանց ձեռքեր մկաններում ուժն է նոսկ խոնավ հողի,
Նրա ոտին՝ արևներին նոր անմահ կտան ու նոր ոգի,
Նրա ոտին՝ արեգակներ կշողշողան երկինքն ի վեր,
Նրա ոտին՝ վար կրնկեն երկինքներից արեգակներ։

Հայաստանի երկինքներից արեգակներ վար բերելու կարիք չկա, որովհետև անուրև է Հայաստանի երկինքը, իսկ ինչ վերաբերում է երկինքն ի վեր արեգակներ շպրտելուն... օ, այդ անհրաժեշտ է և հատկապես արեգակներ, որովհետև մի արև չի կարող չորացնել նախկյան ալիր երկրի արյունն ու արյունքը, որ դարուներ նշանավորվել է կույր կռանկինությամբ, ամառը՝ հոսվար և ֆիզիկական ժանտախտով, աշունը՝ միլիոնավոր անտանուն շիրիմների վրա կոծող անձրևներով, ձմեռը՝ մահ ու սարսափով Չէ, մի արևը չի կարող հաղթել այնքան ծաղիկ, որ դոնե մի գերեզմանին մի ծաղիկ հասնի։

Ո՞ւր է Չարենցը, համաստեղ ընկերս չկա, դուշմանիս համար, որ նա կանդնած է մի տեղ, խռնված բազմու-

թյան մեջ, գլխարաց, կնպին երկու ձեռքով բռնած փորի վրա՝ նրա աչքերն ասում են.

— Սուկիասինն եր, ես չէի՞ ասում։

Ո՞ւր է պարոն Նշշշանը, գուցե նա փախել է քաղաքից կամ գուցե մի փակ պատուհանից դիտում է այս հեքիաթական մուտքը և մտածում. «Մի՞թե Եվրոպան չի միջամտի... այս ի՞նչ քաղաքական և ազգային խայտառակություն է»։

Իջնում, իջնում են քանաքեռի բարձունքից ձիավոր կարմիրբանակայինները՝ իրենց կապույտ աչքերը հառած կապույտ Մասիսներին։

38. ՎԵՐՋԵՐԴ

... Վերջացնում եմ։
Երեսունհինգ տարի է անցել այդ օրից։
Նորից նոյեմբեր է գրևանում։
Վերջին խաղողի պես քաղցրացած արևը թափում է իր շուքն ու փայլը պոեմահյուս և պոեմանման Երևանի վրա։

Վերջացրո՛ւ,— ասում եմ ես ինձ,— դրծի վախճանն է գալիս։ Դու գրեցիր քո «Մանվոսիկյուն»-ը, հետո՝ «Պատանեկոսիկյուն»-ը, դողալով մի օր սկսեցիր քո «Երիտասարդուհյան սամին»-ը և ահա վերջացրիր այն, վերջացրիր 1955 թվի նոյեմբերին, 1920 թվի նոյեմբերով։ Այդ օրվանից նոր օր բացվից ազգերի և ժողովուրդների համար և քեզ համար, իմ սիրական երկիր Նաիրի։

Արևավոր իմ պատանի,
Կարմիր է քո հարևանցուն։

Հառնեց երկիր Նաիրին՝ ավերներից և մոխիրներից, և հնամյա ու հավերժական Մասիսների առաջ պարզեց իր դրոշակը զարդարված Մուրճ ու Մանգաղով և Արարատից ծագող արևով։

Երեսունհինգ տարի է անցել այդ օրից և դու դեռ ապրում ես։ Քո կյանքի ճանապարհը ուղիղ չեղավ ինչպես լեռնախաղացի ճանապարհը, ոչ էլ միշտ փշոտ ու տաժանակոտ,

ինչպես մարգարենների ճանապարհը։ Հաճախ դու մեղանչեցիր քո դեմ, քո պատգամների դեմ, քո սրտի, հոգու, խղճի դեմ, բայց հավատաս, ոչ դու, որ նայում ես ինձ հայելու միջից տխուր աչքերով, քո ժողովուրդը քեզ կնկերի, որովհետև դու մարդ ես եղել և այն ամենը, ինչ մարդկային է, խորթ չի եղել քեզ համար։ Մեծ ու փոքր ընկերներ ունեցար դու, մեծ ու փոքր սխալներ, մեծ ու մանր կրքեր, կորցրիր ու գտար, հաճախ, երբ կորցրիր՝ ուրախացար և երբ գտար՝ տխրեցիր։ բայց դու անկոտրում եղար, քո մարդկության մեջ անպատանեկություն։

Մորս եմ տեսնում հաճախ երազում։ Տարիս վաղուց է որ չեմ տեսնում։ Բայց ի՞նչ կապ ունի այս պրկածքիս վերջաբանի հետ։ Ոչ մի կապ։ Ես ուզում էի միայն ասել, որ հաճախ մորս տեսնում եմ երազում։ Իսկ կողքի սենյակում, ննջարանում, զարթնել է շորս ամսական երեխաս և խոսում է... Ի՞նչ է խոսում, ի՞նչ լեզվով։ Հասատատ կարելի է ասել, որ դա ապագիտների բարբառն է,— զո՜ւ-զո՜ւ... և պետք է ենթադրել, որ նա պատմում է իր հարուստ կենսափորձը— «ծնվել եմ շորս ամիս առաջ, Երևան քաղաքում»։

Այսպե՛ս էլ է սկսվում մանկությունը, ո՛չ դու, որ հայելու միջից նայում ես ինձ թափված զանգուրներով, այնհեր մատիտով պատկված ճաղատով և այնուամենայնիվ ժպտուն։

Ժպտալով էլ կմնանես, Ես գիտեմ քո անտանելի բնավորությունը։

1952—1955